

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ
ՄԱՆԿԱՆՆ ԵՒ ԱՂԶԿԱՆՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ
ՓԱՀԼՈՒԼ ԹԱԳԱԽՈՐԻՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА

ПОВЕСТЬ О ЮНОШЕ И ДЕВУШКЕ
ПОВЕСТЬ О ЦАРЕ ПАХЛУЛЕ

Подготовка текста и предисловие
АРМЕНУИ СРАПЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1983

892.7 + 808.03 (շ Ք. 99)

✓

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՄԱՆԿԱՆՆ ԵՒ ԱՂԶԿԱՆՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՓԱՅԼՈՒԼ ԹԱԳԱՒՈՐԻՆ

A II
69719

Աշխատասիրությամբ
ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍՐԱՊՅԱՆԻ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1983

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան զբաղակալության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատ. խմբագիր՝ բան. գիտ. թեկնածու Հ. Մ. Փենդեժյան

Աշխատությունը տպագրվում է և երաշխավորել զբաղակալության բան. գիտ.
դոկտոր Ա. Շ. Մեմեյանի և բան. գիտ. թեկնածու Ա. Ա. Ղևնդյանի

Պ 306

Պատմությունն իման մանկանն և աղջկանն Պատմու-
թիւն յաղագս Փաշուլ թագաւորին յԱշխատասիր. Ա. Սրապ-
յանի; Պատ. խմբ. Հ. Մ. Քենդեժյան. — Եր. ՀՍՍՀ ԳԱ հրատ.,
1983. 236 էջ.

«Պատմութիւնն իման մանկանն և աղջկանն» գրույցը հայ իրա-
կանութիւնն է մօտք գործել X դարում՝ թագաւորար. Հետագա դարերի
ընթացքում այն ազգայնացել է, առաջացնելով մի բանի խմբագրութիւնն
Պաշտպանութիւնն ստեղծագործութիւնն կոչւում՝ հարց-հանելուկներով զարգա-
ցող գործողութիւնը, հայ հեղինակները նրա մէջ են ներառել բաղաձայն
նոր՝ արձակ ու շաղկապ հանելուկներ՝ ինչ որ իրատեսական և ինչ որ աշխար-
հիկ բնույթով: Այդպէս է ստեղծվել նաև «Պատմութիւնն յաղագս Փաշուլ
թագաւորին» գրույցը: Այս երկերի գիտահամեմատական բնագրերը և շորս
առանձին խմբագրութիւնն հրատարակվում են առաջին անգամ:

Պ 4702080000 46—82
703 (02)—83

ԳՄԴ 84.21
Ար 1

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Թարգմանական ստեղծագործությունները միջնադարյան արձակում նշանակալից տեղ են գրավում: Կոշված լինելով ծառայելու հայ հոգևոր ու մշակութային կյանքի տարբեր ոլորտների, դարերի ընթացքում նրանք ազգայնացել են և դարձել հայ գեղարվեստական գրականության անկապտելի մասը: Ի թիվս այլ ժանրերի և այլ գրականությունների, միջնադարյան Հայաստանում հատուկ ուշադրության են արժանացել հնդկական, պարսկական և արաբական աղբյուրներից ծագող զրույց-պատմությունները, որոնց մի մասը հայ իրականություն է մուտք գործել X—XIV դարերում: Թարգմանվելով որպես ինքնակա ստեղծագործություններ, ժամանակի ընթացքում դրանք ամփոփվել են առանձին փոքրիկ ժողովածուների մեջ: Հետագայում վերջիններս համալրվել են ազգային ու թարգմանական նոր նյութերով, որոշակի բնույթ ստացել ու մի ընդհանուր անվանումով կոչվել «Պատմութիւն Պղնձի քաղաքին որ է օրինակ աշխարհիս»: Այդ անվանումով էլ դրանք բազում անգամ տպագրվել են մինչև XX դ. առաջին կեսերը:

«Պատմութիւն Պղնձի քաղաքին» խորագրով այս ժողովածուները հայ իրականության մեջ, համեմատաբար փոքր շափերով, փոխարինել են նույնատիպ զրույցների հրատարակություններին, որոնք համաշխարհային գրականության մեջ ճանաչված են «Հաղար ու մեկ գիշերներ» վերտառությամբ:

Հայկական ժողովածուի փոքրածավալությունը բնական է: Միջնադարյան Հայաստանի հասարակական-քաղաքական միտքն հուզող հարցերն իրենց նպատակամղումով բավականաչափ հեռու էին «Հաղար ու մեկ գիշերներ» ժողովածուի բուն միտումից, ուստի և սրանից փոխ էին առնվում այնպիսի դործեր, որոնք կարող էին եթե ոչ ուղղակի, ապա գեթ հարմարվելով ծառայել հայ իրականության աշխարհայացքային և սոցիալ-տնտեսական պահանջներին:

Դիտելով իրողության հոգեբանական կողմը, Արշակ Զուպանյանը նկատել է, թե «Հաղար ու մեկ գիշերներ» ու զվարթ, հեշտալից

լուսապանծ հեքիաթներու մեջնն թարգմանելու համար երթալ մարդկային կյանքի դադիադիտությունը ցույց տվող այդ մռայլ, թախծադին պատմությունն ընտրելու դադափարն իսկ հալածված, ցավի մեջ եփած, քրիստոնեական վանականության ոգվովն ալ տողորված «հայկական» հոգեբանության բնորոշ մեկ զիծը չէ՞ միթե»:

Ահա թե ինչու այդ աղբյուրից Հայաստան թափանցած զրույցները ո՛չ միայն փոքրաթիվ են, այլև շատ փոփոխված, երբեմն և անհանաշնչելիորեն հեռացած բնօրինակից:



«Հաղար ու մեկ զիշերներ» անունով հռչակված ժողովածուից հարյուրամյակներ առաջ՝ IX—X դդ., երբ նոր էր սաղմնավորվում նրա հիմնական կորիզը, երբ պարսկերենից արաբերենի էին թարգմանվում նրա առանձին տարրերը, որպես առաջին արձագանք, որոշ ստեղծագործություններ իրենց մայրենի լեզվով են թղթին հանձնում և հայերը՝ արաբերենից: Դրանց թվում է իմաստուն աղջկա և երիտասարդի մասին X դարում թարգմանված մի զրույց, որ հայ միջնադարում հայտնի է «Պատմութիւն վասն մանկանն և աղջկանն» կամ «Հարցմունք աղջկան ընդ մանկան» անվանումներով: Իր աշխարհիկ ոգով, ուսուցողական բնույթով, ստեղծագործական ու կառուցվածքային յուրահատկություններով «Վասն մանկանն և աղջկանն» պատմությունը հայ միջնադարյան գեղարվեստական արձակի հիմնքն է, լայնորեն տարածված ու արժեքավոր նմուշներից է: Նրա հարյուրամյակներ շարունակվող (X—XIX դդ.) հետաքրքրածնությունը ուշ դարերում ո՛չ միայն չի մարել, այլև զրդել է բազմակի գրչագիր ընդօրինակությունների, նույնիսկ այն ժամանակ, երբ զոյություն ունեին զրույցի երկու տասնյակի հասնող հրատարակություններ: Չնայած սրան, վերջիններս չեն սպառել ձևադրական այն հարստությունը, որ բերել են զրույցի տարբեր խմբագրությունները թե՛ բնագրային և թե՛ պատմական առումով:

«Վասն մանկանն և աղջկանն» պատմությունը մասնագետների ուշադրություն է գրավում դեռևս դարասկզբին: Ի թիվս այլ ստեղծագործությունների, այն համարվում է ուղղակի կամ միջնորդաբար թարգմանված արաբերենից:

Զրույցի իրեն հայտնի բնագիրը համեմատելով Թավադդուզ անունով իմաստուն աղջկա մասին արաբական հեքիաթի հետ, Ն. Անդրիկյանը բերում է Հարցմունքի 7 կետերում համընկնող զուգահեռներ և

¹ Ա. Չոպանյան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 50:

անկարելի է համարում, որ «այս երկու վեպերն իրարու հետ աղերս մը չունենան, թեև իրենց ամբողջական հյուսվածքը... բոլորովին իրարմե տարբեր են»²։ Եվ քանի որ նրան մի երրորդ աղբյուր անհայտ է, որից օգտված լինեն երկուսն էլ, ապա ուրեմն եզրակացնում է, թե «Հարց-մունք աղջկանը հազար ու մեկ գիշերներու շարքին կպատկանի, բնա-գիրը արաբերեն գրված է ԺԴ դարուն սկիզբները, հեղինակը նույնն ըլլալու է Թեվետտուտի գրողին հետ, հայերենը թարգմանություն է արաբերենէն...», այն ծագել է Թեվետտուտի մասին գոյություն ունեցող գրույցի արաբական պատումից³։

Զրույցի մասին մոտավորապես նման եզրակացություն է հանդուս-
և Ա. Չոպանյանը։

«Հարցմունք աղջկան», որ ձեռագիրներու մեջ շատ տարածված է, նույնպես Հազար ու մեկ գիշերներու մեկ գլուխն է (դէտ. Մարտիրոսի թարգմանության մեջ անոր վերնագիրն է Paroles sous les quatre-vingt-dix-neuf lèthes coupées), կարծեմ դեռ չէ հրատարակված այդ հայերեն թարգմանությունը, որ շատ կտարբերի ֆրանսիական թարգմանությունէն. հարցումներու շարքը քրիստոնեական աշխարհէն առնված է հայ թարգմանության մեջ, մինչ արաբականին մեջ մահ-մեղական գույն ունին անոնք. պատմվածքն ալ, ընդհանուր գծերով նույն ըլլալով հանդերձ, մանրամասնության շատ տարբերություններ կներկայացնէ»⁴։

Սակայն եթե և՛ Անդրիկյանը, և՛ Չոպանյանը որոշակի կովաններ չունենին իրենց եզրահանգումների համար, ապա հետագայում՝ 1958 թ. այդ հնարավորությունն ընձեռում է Ակինյանին՝ Հոռում իր հայտնաբերած ձեռագիրը։ Այն ուղղում է մտցնում սկզբնաղբյուրի գոյության ու թարգմանության ժամանակի, ինչպես նաև հեղինակի մասին եղած կարծիքների մեջ։ Թարգմանության ակունքի մասին հետևությունը մնում է նույնը։ Զրույցը դասվում է ի շարս այն պատմությունների, որոնք «...մեծավ մասամբ հնդկական են և պարսիկներու միջնորդու-թյամբ գրավոր կամ բերանացի անցած արաբներու, անոնցմէ ոմանք

² Զ. Ն. Անդրիկյան, Միջին դարու վեպերն, «Բաղմավէպ», 1906, № 8, էջ 344։ Համեմատության համար նա օգտագործել է «Հազար ու մեկ գիշերների» իտալական թարգմանությունը (Վենետիկ, 1832, հ. Ի)։

³ Տե՛ս անդ., էջ 347։ Անդրիկյանը կարծում է, թե գրույցի թարգմանիչը Կոստանդին Նրզնիկացին է։

⁴ Ա. Չոպանյան, Հայ էջեր, էջ 14—15։

մուտք գործած են, ապա, Հաղար ու մեկ գիշերներու հալաքածոյին մեջ»⁵։

Հայտնի է, սակայն, որ այդ ժողովածուն չի կազմավորվել միանգամից։ Որքան էլ այս հարցում մասնագետների կարծիքները տարբեր, այնուամենայնիւ կրակացութիւնը հիմնականում այն է, թե հեքիաթների շարքը միշտ համալրվել է հնդկա-պարսկական, արաբական, այլև հունական նմանատիպ ստեղծագործութիւնների նոր պատմմաներով։ Ըստ Յոն Համմերի, ժողովածուի շատ նյութեր թարգմանված էին սլաւ-լավերենից արաբերենի դեռևս 813—833 թթ.⁶։ էդուարդ Լենը և Ս. Մյուլլերը ենթադրում են, թե պարսկական «Հաղար հեքիաթ» ժողովածվի արաբական թարգմանութիւնն արդեն զոյւլթիւն է ունեցել X դարում և հետագայում համալրվել է պարսկական, հնդկական և արաբական խրատական գրույցներով⁷։

Այլ մասնագետներ ևս ժողովածուի հնագույն կորիզը համարում են IX կամ X դարում պահպանված կատարված «Հաղար հեքիաթի» արաբական թարգմանութիւնը, որը կարող է և ամբողջութեամբ ներառված չլինել «Հաղար ու մեկ գիշերների» մեջ⁸։ Հեքիաթների թիվն ավելացնելու համար հետագայում Եգիպտոսում ևս գրիչները ժողովածուի մեջ են մտցնում տեղական առանձին գոյութիւն ունեցող պատմութիւններ⁹։

Ճիշտ և ճիշտ այս դարերում, Պղնձէ քաղաքի և Ֆարման մասնական մասին եղած պատմութիւնների կողքին* հայ իրականութիւն է մուտք գործում նաև «Վասն մանկանն և աղջկանն» գրույցը։ Սրան ուղղագիր՝ ակունքներ թարգմանաբար կամ արաբերեն առայժմ երևան չեն եկել։ Զրույցի տարածվածութեան մասին այլ երկրներում հնարավոր է դատել սոսկ նրա հեռավոր մի պատմմը նկատի ունենալով, որ հայտնի է որպէս իմաստուն աղջիկ Թավաղզուդի մասին հարց ու պատասխանի կիրառումով պատմվող մի ստեղծագործութիւն։ Սա բավական ծավալուն մի երկ է, որ պարունակում է թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ անհրաժեշտ իմացութիւններ, ընդգրկում գիտութեան տարբեր ճյուղեր,

* Այս մասին տե՛ս «Հանդէս ամսօրեայ», էջ 23—24։

⁵ Ն. Ալիբեյաև, Զրոյց Պղնձէ քաղաքի, «Հանդէս ամսօրեայ», 1958, էջ 24։

⁶ S⁶ u «Исследование о 1001 ночи, ее составе, возникновении и развитии И. Эструпа. Перевод с датского Т. Ланге, со вступительным историко-литературным очерком А. Крымского (издана Эструп), М., 1904, էջ XV—XVI.

⁷ S⁶ u անդ, էջ XXI, XXVIII։

⁸ S⁶ u անդ, էջ XXXIII։

⁹ S⁶ u անդ, էջ XXXVII։

ինչպես և բժշկության, արվեստների, կենցաղավարության, բարոյագիտության և այլ բնագավառներ:

Հարուստ ու բազմակին մուսուլման վաճառականն աստծուց խնդրում և ունենում է մի արու գավակ, որ հոր մահից հետո վատնում է ամբողջ ունեցվածքը: Նրան փրկում է իր իմաստուն ու զեղեցիկ ստրկուհին: Պատասխանելով Հարուն-ալ-Ռաշիդի բոլոր իմաստունների հարցերին, Ռավադդուդը պարտության է մատնում նրանց, շահում թագավորի բարեհաճությունը, դրամական մեծ պարգև ստանում ու իր տիրոջ հետ մշտապես մնում պալատում:

«Հազար ու մեկ դիշերները» եվրոպացիներին ծանոթ է դարձել ու աշխարհով մեկ տարածվել XVIII դ. սկսած, 1704—1707 թթ. Դալանի կատարած ֆրանսերեն թարգմանության միջոցով և իր այն տեսքով, որ ձեռք է բերել 1517 թ. հետո միայն¹⁰: Այս թարգմանությանը հետևում են բազում լեզուներով այլ տպագրություններ, որոնք հրատարակվում ու վերահրատարակվում են դանիերեն, անգլիերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, շվեդերեն, մալթուսերեն, ռուսերեն, հայերեն և այլն: Հայերեն լույս է ընծայվում 1871 թ. Զմյուռնիայում, Տ. Հ. Տեսեյանի թարգմանությամբ: Գրեթե այս բոլոր լեզուներով ժողովածուն ունեցել է նորանոր թարգմանություններ, սակայն բոլոր հրատարակություններում չէ, որ գետնից է վերցրել Դրա պատճառը մասամբ ձեռագրական տարբեր խմբագրություններն են, մասամբ էլ այն, որ նրանցում եղած ոչ բոլոր հեքիաթներն են թարգմանվել ու հրատարակվել:

Չնայած այն հանգամանքին, որ Ռավադդուդի մասին զրույցը, կամ նրա նախօրինակը, գոյություն է ունեցել X դ. էլ առաջ, ինչպես վկայում է և նրա հայերեն թարգմանությունը, զրույցը եվրոպա մուտք է դործում ու ճանաչում գտնում XVIII դ. միայն՝ «Հազար ու մեկ դիշերների» միջոցով¹¹, այնինչ նրա տարբերակը հայ իրականության մեջ գրեթե ավարտում էր իր երթը, ուներ մի քանի տասնյակի հասնող ձեռագիր ընդօրինակություններ ու հրատարակություններ:

Հարատեւելով X—XIX դդ., հայկական զրույցն ապրել է թե՛ բանահյուսական և թե՛ գրական կյանքով, շարունակել է փոփոխվել ու բնօրինակվել ձեռագիր ժողովածուներում նույնիսկ ա՛յն ժամանակ, երբ արդեն կային նրա բազմաթիվ հրատարակությունները:

¹⁰ Տե՛ս անդ, էջ VII, XVI:

¹¹ «Այս զրույցի հիման վրա հորինած է F. Schiller իր Turandot, Prinzessin von China, Ein tragikomisches Märchen nach Cozzi». Տե՛ս Ն. Ակիմյան, «Հանդէս ամսօրեայ», 1958, էջ 28:

Ինչպես «Հաղար ու մեկ գիշերների» տարբեր ժողովածուների մեջ միեկնույն ստեղծագործությունն ունեցել է տարբեր պատմամենք, այնպես էլ մեր զրույցը տարբեր ժողովածուների մեջ է մտել տարբեր խմբագրություններով: Հայ իրականության մեջ «Հաղար ու մեկ գիշերների» դերն, ինչպես նկատեցինք, իր վրա է վերցրել մի այլ ժողովածու, որ նախ կազմավորվել է ձևագիր վիճակով, ապա՝ տպագրի: Այն հայտնի է արաբական մի ուրիշ զրույցի անունով և կոչվում է «Պատմութիւն Պղնձէ քաղաքին» կամ «Գիրք պատմութեան, որ կուչի Պղնձէ քաղաք»: Աստիճանաբար սա իր մեջ է առել ոչ միայն թարգմանական, այլև ազգային ստեղծագործություններ ու քրիստոնեական հոգևոր պատմություններ, ուշ դարերում տարածվելով նաև տասնյակների հասնող հրատարակություններով:

Զրույցն ունի հետևյալ կառուցվածքը.

Սկիզբ կամ առաջին մաս—այստեղ պատմվում է աղքատացած մեծատան որդու արկածալի թափառումների մասին, մինչև մի հարուստ երկիր հասնելը և տեղի թագավորի դստեր գեղեցկության ու իմաստություն լուրն առնելը:

Հարցմունք կամ միջին մաս—սա հարց ու պատասխան է մեծատան որդու՝ մանկան և թագավորի դստեր միջև, արձակ կամ շափածո հանելուկների, երբեմն և կաֆաների միջոցով:

Ավարտ կամ երրորդ մաս—հարցմունքն ավարտվում է մանկան հաղթանակով, որին հաջորդում է յոթ օր ու գիշեր տևող հարսանիքի և ըստեղծված երջանիկ կյանքի համարումը:

Ինչ հարաբերության մեջ են «Թավադդուհն» ու «Վասն մանկանն և աղջկանն» զրույցը: Արդյո՞ք հայկական զրույցն ուղղակի ծագում է Թավադդուհի մասին հայտնի այն պատմությունից, որ այսօրվա վիճակով գտնվում է «Հաղար ու մեկ գիշերների» շարքում: Անշուշտ ոչ: Սյուժեի ընդհանուր գծերով միայն ունեցած նմանությունը, կառուցվածքային սկզբունքը՝ հարց-հանելուկներով դարգացող գործողությունը, Հարցմունքի յոթ կետերի նույնիմաստությունը, երիտասարդի աստվածատուր ծնունդը, հայրական ժառանգության վատնումը չեն պարտադրում այդպիսի եզրակացության հանդեպ: Այդչափ նմանություն կարող էր առաջանալ նաև անկախաբար, կամ մի այլ աղբյուրի ազդեցությամբ:

Ըստ հետազոտությունների, հայկական զրույցը և նրա վրացական թարգմանությունը մի քանի առանձին հարցերով նույնանում են նաև ռուսական «Беседа трех святителей» պատմության հետ: Սակայն դրանց համեմատությունը թե՛ վերջինիս, և թե՛ սրա հոմական, լատին-

նական ու սլավոնական տարբերակների հետ չի լուծում այդ պատմության նախօրինակի հարցը¹²:

Հնում հարցմունքի ձևով կառուցված ստեղծագործությունները մեծ կիրառում ունեին թե՛ արևելյան և թե՛ եվրոպական գրականության մեջ, որպես դյուրեմբոսների միջոց, որ հիմնականում հետապնդում էր ճանաչողական, խրատատեսացողական նպատակ: Ռուս գրականության մեջ ևս նման գործերը հայտնի էին որպես Հարցմունք կամ Գիրք հարցմանց (Книги вопросов): Ամենուր դրանք պարունակում էին համառոտ հանրագիտական տեղեկություններ, որ պարտադիր էր իմանալ ուսյալ մարդուն¹³:

Սա մի մատչելի գեղարվեստական հնարանք էր, որ տարածված էր նաև քրիստոնեական Հայաստանում: Գրեթե մինչև XX դ. առաջին կեսերը այդպիսի հարց-հանելուկներ առաջագրվում էին լուծելու նաև ղանաղան հավաքույթներում ու ասուլիսներում, այլև առօրեական խոսակցությունների ընթացքում:

Այն հանգամանքը, որ հայկական դրույցը X դ. թարգմանություն է, արգեն իսկ մերժում է նրա «Թավադդուդից» ուղղակի ծագած լինելու վարկածը: Այն պետք է որ հիմք ունենա մի շատ ավելի վաղ շրջանի խմբագրություն, քան «Թավադդուդն» է իր այսօրվա վիճակով:

Արդեն ասացինք, որ «Հաղար ու մեկ գիշերների» աստիճանաբար ձևավորված ժողովածուների մեջ մտել են բանավոր թե՛ գրավոր ճանապարհով բաղում փոփոխությունների ենթարկված հին դրույցներ: Մասնադետները նկատել են նաև, որ հրատարակված բոլոր դրույցների բնագրերն էլ նկատելիորեն տարբերվում են միմյանցից ձեռագրերից եկող տարբերությունների հետևանքով¹⁴: Սակայն պետք է նշել, որ այդ տարբերություններն ունեցել են ո՛չ միայն ձեռագրական, այլև տպագրական տարբեր հիմքեր: Դրա պատճառն այն է, որ ոչ բոլոր հրատարակություններն են եղել գիտական թարգմանություններ: Հատկապես Գալանի

¹² См. Ал. Хаханов, Очерки по истории грузинской словесности, вып. I, М., 1895, էջ 175; Н. С. Тихонравов, Памятники отеч. русской литературы, II, М., 1863, էջ 429—432; Мочульский, Следы народной Библии в славянской и древнерусской письменности, Одесса, 1893 և ուրիշներ, Հմմտ. П. Мурадян, Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке, Ереван, 1966, հր. 59. «Ստուգյալն, «Պատմութիւն Պղնձէ բաղարի» դրույցի հայկական և վրացական պատմությունների և նրանց փոխհարաբերության շուրջը, «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 249:

¹³ Հմմտ. Книга Тысячи и одной ночи в восьми томах, перевод с арабского М. А. Салье, т. V, ночи 434—606, М., 1959, էջ 14, ծնր. № 1:

¹⁴ См. Эстрин, էջ XLIII—XLV.

և նրա հաջորդներն կատարածը թարգմանություն չէր, այլ աղատ, սեփական ճաշակով արած փոխադրություն¹⁵:

Եթե այս ամենին ավելացնենք և այն հանգամանքը, որ շատ զրույցներ մինչև ժողովածու մտնելն իսկ կրել են մեծ փոփոխություն, ապա բեր երկրներում ենթարկվել տեղայնացման, ազգայնացման ու անհատականացման, ապա ավելի պարզ կլինի, թե ինչքան և ինչպիսի փոփոխությունների կարող է ենթարկված լինել դրանցից յուրաքանչյուրն իր գոյության ընթացքում, և որքանով կարող է հարադատ մնացած լինել բուն աղբյուրին:

Այս ամենից հետո անհնար է մտածել, թե դարերով ճանապարհ անցնելուց հետո՝ մինչև «Հաղար ու մեկ զիշերներ» հասնելը «Թավադդուդը» մնացել է անաղարտ: «Թավադդուդը» չէր կարող բացառություն կազմել, մանավանդ որ սյուժեն թափառիկ է և բանահյուսական¹⁶:

Այդ են հաստատում ոչ միայն «Թավադդուդի» հին ու բոլորովին հեռու պատումի գոյությունը հայ իրականության մեջ, այլև հայկական զրույցի ինքն իր մեջ կրած փոփոխությունները, շարունակաբար նոր խմբագրությունների ու պատումների առաջացումը:

Զրույցը «Պատմութիւն Պղնձէ քաղաքին» հայտնի ժողովածուի մեջ է մտել իր երկու, համեմատաբար իրար մոտ խմբագրություններով միայն, մինչդեռ ձեռագրերում գոյություն ունեն խստորեն միմյանցից զատվող, առայժմ՝ հայտնի յոթ խմբագրություն և բանավոր պատումներ:

Ինչպիսին է եղել «Թավադդուդի» նախնական բնագիրը, արդյոք ո՞չ ավելի համառոտ, ուղղագիծ, դանաղան գուգահեռներով ու հարցմունքով շատ չծանրաբեռնված, որ ավելի հավանական է: Զրույցի սյուժեն ու կառուցվածքը հնարավորություն են տվել ընդարձակել ծավալը, ամեն անգամ իր ժամանակին ու տեղին անհրաժեշտ թվացող նոր հանելուկ-հարցերով, ինչպես այդ կատարվել է հայկական խորգմանության հետ: Զրույցը բնականաբար հարմարվել է հայ կյանքին բնորոշ պայմանների, դուրս թողնելով Հարուն-ալ-Ռաշիդին, նրա պալատն ու պալատականներին, մուսուլմանությանը բնութագրական կենցաղավարությունն ու բարքերը, դարձել ավելի ուղղագիծ. աղքատացած մեծատան որդին իր խմացություններով հաղթում է թագավորի իմաստուն ու գեղեցիկ աղջկան և ամուսնանում:

¹⁵ Տե՛ս անդ, էջ XLIV:

¹⁶ Հմմտ. Յէտրյոն, էջ XXI.

Ղրուլցի հետագա ընդօրինակութունները պնալով ավելի ու ավելի են ազգայնանում թե՛ բովանդակությամբ և թե՛ հնարանքներով ու գեղարվեստականությամբ։ Որոշ խմբագրութուններ տեղայնանալով ընդարձակվում են ոչ միայն հայրեն կաֆաների հավելումով ու Հարցմունքի փոփոխութուններով, այլև սրանց թիվը բազմապատկելով ներսև Շնորհալու 100-ի հասնող չափածո հանելուկներով, ինչպես նաև ամբողջ ստեղծագործութունը կաֆաների միջոցով ևս վերաշարագրելով։

Հնարավոր է ենթադրել, թե և՛ մեր ղրուլցը, և՛ «Բավաղդուղը» ծագում են մի երրորդ աղբյուրից ու իրարից ալղչափ հեռացել են տեղայնացման ու ազգայնացման հենց վերը հիշած ճանապարհներով։ Թարգմանվելով՝ ղրուլցը դարձել է նույն հիմքի վրա ստեղծված զուտ հայկական պատում, հեռացել նրանից բովանդակությամբ, կառուցվածքով, գաղափարական նպատակագրումով։ Արաբականից հիմնականում փոխառվել է ստեղծագործական եղանակը՝ շրջանակը, որի մեջ հարց ու պատասխանով են դարգանում գործողութունները։

Հնարավոր է ենթադրել նաև, թե «Բավաղդուղն» ու մեր ղրուլցը միևնույն սկզբնաղբյուրի դարերի ընթացքում փոփոխության ենթարկված, ժամանակի ու տարածության մեջ արդեն բավականաչափ հեռացած երկու տարբեր խմբագրութուններից առաջացած ստեղծագործութուններ են։ Ինչպիսին է եղել այս երկուսի նախօրինակը, այժմ դժվար է ասել։ Ամենայն հավանականությամբ իմաստուն ու գեղեցիկ աղջկա մասին հարց ու պատասխանի ձևով կառուցված մի հնագույն ղրուլց, որի տեղայնացման երկու տարբեր օրինակների հետ զործ ունենալ։

«Պղնձե քաղար» ղրուլցի մասին եղած ուսումնասիրութուններից ելնելով, Ակինյանը նկատում է, թե «Ղրուլցս տեսած է աստիճանական զարգացում, մինչև Հաղար ու մեկ գիշերներու հավաքումի մեջ առնելիլը»¹⁷։ Անհավանական չէ կարծել, որ իմաստուն աղջկա և մանկան ղրուլցը ևս նման փոփոխությամբ է մտել «Հաղար ու մեկ գիշերների» մեջ, և մեր հին օրինակները, որ թարգմանվել են X—XIV դդ., այսինքն՝ մինչև այդ ժողովածուի կազմավորումը, ավելի նախնական տեսք ունեն։

* * *

Նրևանի Մաշտոցյան մատենադարանում պահպանվել է ղրուլցի 33 ընդօրինակութուն՝ XVI—XIX դդ. ղրուլցյամբ։ Քանակով շատ են XVII դ. ընդօրինակութունները. սրանց թիվը հասնում է 18-ի։ XIX դ. է պատկանում 8 օրինակ, մնացածներից 3-ը՝ XVIII, 4-ը՝ XVI դդ. են։

¹⁷ Ն. Ակինյան, Քրիտորիս Ա. կաթողիկոս Աղթամարի, Վիեննա, 1958, էջ 59։

Պատմության շատ օրինակներ դառնում են Սփյուռքի գրապահոցներում և մասնավոր անձանց հավաքածոներում: Դրանցից առանձնապես կարևոր են երկուսը: Առաջինը XIV դ. գրչություն է և, համաձայն հիշատակարանի, X դ. Թարգմանության ընդօրինակություն¹⁸: Ըստ Ակինյանի այն գտնվում է Հոռում¹⁹: Սա չափազանց արժեքավոր է ոչ միայն հուշարձանի Թարգմանածին լինելը և հայ իրականություն մուտք գործելու ժամանակն ու վաղեմությունը վկայող իր հիշատակարանով, որ առ այսօր հայտնի ամենահին աղբյուրն է, այլև նրանով, որ պարզում է, թե «Վասն մանկանն և աղջկանն» ղրույցը, ի թիվս այլ պատմությունների, X դ. Թարգմանվել է արաբերենից՝ Դավիթ Կյուրապաղատի պատվերով²⁰:

Երկրորդ ձեռագիրը, որ պահպանվում է Վիեննայի գրապահոցում, մեծ արժեք է ստանում իր ղեղարվեստական մշակմամբ, կառուցվածքային յուրահատկություններով ու շարադրանքով²¹:

Մեզ հայտնի բոլոր ձեռագրերի համեմատությունը վկայում է, թե հայ իրականության մեջ Պատմությունը տեղացնացել է՝ ենթարկվելով մի քանի մշակումների: Սրա հետևանքով ոչ միայն փոխվել ու ավելացել է հարցերի քանակը, համալրվել բաղամթիվ չափածո հանելուկներով ու կաֆաներով (որ թույլ էր տալիս ղրույցի հարց ու պատասխաններով դարգացող գործողությունը), այլև փոխվել է շարադրանքը, հարց-հանելուկների տեսակը, ժանրը, արձակ և չափածո հատվածների հա-

¹⁸ Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1958, № 1—4, էջ 23:

¹⁹ Տե՛ս Ն. Ակինեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Հոռմի Հայոց հիւրանոցի ի Ս. Վլաս և քահ. Լեոնեան հայ վարժարանի, Վիեննա, 1961, էջ 24:

²⁰ «Զրոյց և խաւք առաջին թաղստորացն և իշխանացն, զոր թարգմանեցին Դավիթ Կուրապաղատին ի հայ լեզու ի տաճիկ լիզվէ», տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1958, № 1—4, էջ 23:

Ձեռագրում կան հետևյալ հայկական և թարգմանածին ստեղծագործություններ. ա. Զրոյց «Պղնձէ քաղաք», էջ 3ա—15բ:

բ. Խօսք Անդամալուծին ընդ Քրիստոսի, էջ 15բ—22ա:

գ. Պատմութիւն Մարխայ վաճառականին, էջ 28բ—33ա:

դ. Գիր հանհանելուկի (Հարցմունք աղջկան ընդ մանկան), էջ 33ա—40բ:

ե. Վարք Յովհաննու կամաւոր աղբատի, էջ 40բ—48ա:

զ. Պատմութիւն Ալեքսիանոսի կամաւոր աղբատի, էջ 48ա—65ա:

է. Իմաստութիւն մեծ թաղաւորին Զարմանազանայ և որդւոյ նորին Յարմանի Ասմանին վարուցն, էջ 48բ—65ա (sic):

ը. Ոտանաւոր Յրիկի (Յորժամ մահն մատենայ...), էջ 65բ—73բ (sic):

թ. Վիճակախաղը, էջ 74ա—80բ (sic):

²¹ Վիեննայի Մխիթարյան Մատենադարան, ձեռ. № 671 (1668 թ. առաջ), էջ

րաբերակցությունը, դադարաւորական նպատակադրումը, ծավալը և այլն: Սա առաջացրել է ոչ միայն շատ տարբերութեամբներ, այլև առանձին տարբեր խմբագրութիւններ: Սրանց գոյութիւնն, անշուշտ, արդէն է նաև զրուցի բանավոր ճանապարհով կրած մեծ փոփոխութիւնների: XVI դ. սկսած արդեն կան նրա բանահիշուածական պատումների գրառումները, որոնք ավելի ևս հնուաւորվում են XVII—XVIII դդ.: Թեև զրուցի բուն բովանդակութեան ու էութեան մեջ սրանք նշանակալից փոփոխութիւններ չեն մտցնում, սակայն շարադրանքի մեծ շեղումներով անհամեմատելիորեն հեռանում են միմյանցից:

Ձևագրերի մանրագնին բնութիւնն ու բաղդատութիւնը հանգեցնում է բնագրերի հետեւյալ ստորաբաժանմանը՝ ըստ խմբերի ու խմբագրութիւնների.

I խումբ (a)—Սրա մեջ են Մաշտոցյան մատենադարանի այն ձեռագրերը, որոնք ունեն հարաբերականորեն փոքր ծավալ՝ հիմնականում պայմանավորված աղչկա՝ տղային ուղղած հարցերի թվով և օրերի տևողությամբ (3-ի փոխարեն 2 օր): Սրանք հետեւյալ ձեռագրերն են. №, № 697, 2168, 3081, 3237, 5985, 6686, 7047, 7050, 7227, 7709, 8076, 8456, 8708, 8968, 9124, 10333. Ընդամենը 16 ձեռագիր, որոնք գերազանցորեն (13) XVII դ. ընդօրինակութիւն են, մնացած երեքը (№, № 5985, 6686 և 8968) ունեն XVI դ. գրչութիւն: Այս խմբին պատկանող ձեռագրերը, թեև մեծ տարբերութեամբներով, բնագրական առումով միասնական են և պատկանում են մեկ խմբագրութեան: Առանձնապէս բնութեանութեան մեծ շեղումներ է առաջացնում № 10333 ձեռագիրը, սակայն սկզբի մասով միայն՝ մինչև Հարցմունքին հասնելը, և 9124-ը: Առաջին խմբին է պատկանում Պոլսի Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցու № 30 անթիվակիր ձեռագիրը ևս, որի մանրածաւալները Մաշտոցյան մատենադարանում կրում է 504 համարը: Սրանք բանահիշուածական ճանապարհով փոփոխված ազատ պատումներ են:

Այս խմբի ամենահին ընդօրինակութիւնը, որ հայտնի է 1556 թվից, պահպանվում է Երևանի Մաշտոցյան մատենադարանում՝ 8968 համարի տակ: Սա մշուա խմբագրութիւններից է՝ ապա զատվում է իր Հարցմունքի հատվածով և համառոտությամբ: Հարցերի թիվն աչտաչ ընդամենը 21-ն է. դրանք մշուաներից մասամբ տարբերվում են նաև դասավորութեամբ: Այս խմբագրութիւնն հիմնականում աղգայնացվել է տեղանշանային՝ հայ իրականութեանը հարմարվելու և միջնադարյան քրիստոնեական դադարները ներառելու ճանապարհով:

Առաջին ձեռագրախմբի բնագրերն անտիպ են:

II խումբ (b)—Սա առաջինից տարբերվում է Հարցմունքի հատվածով՝ հարցերի քանակով, տեսակով, դասավորությամբ և հայրենիների հավելումով: Խմբի մեջ են հետևյալ ձեռագրերը. № № 1682, 6092, 6451, 7027, 7076, 7723, 8443, 8483, 8724, 8963, 9265, 9428, 9516, 10107, 10166, ընդամենը 15, որոնք XV—XIX դդ. գրչության են: Գեղադանցում են XIX դ. ընդօրինակությունները. սրանք թվով 8-ն են, այսինքն բոլորը, ինչ պահպանվել է Երևանի Մաշտոցյան մատենադարանում: Այս ձեռագրախմբում XVI դ. գրչություններ չկան:

Ի տարբերություն a խմբի ձեռագրերի, սրանք բնագրական տոտմով միասնական չեն և բաժանվում են երեք խմբագրության:

Առաջին խմբագրությանը պատկանող ձեռագրերը (№, № 6092, 7027, 7723, 8483 և 8963) a խմբից հիմնականում տարբերվում են զրույցի միջին մասով, Հարցմունքով՝ հարց-հանելուկների քանակով, տեսակով, հերթականությամբ և անհամեմատելի հատվածների գոյությամբ: Սկզբի և Ավարտի հատվածներում սրանք կարևոր փոփոխություններ չեն առաջացնում: Այս խմբագրությունը տպագրված է: № 8963 (XIX դ.) ձեռագիրը լրիվ համընկնում է 1792 թ. Պոլսում կատարված հրատարակությանը: Զեռագիրը վերջինիս և կամ նրա սկզբնաղբյուրի ընդօրինակությունն է:

Երկրորդ խմբագրության մեջ մանող ձեռագրերը (№ № 1682, 6451) նախորդից էապես տարբերվում են կաֆաների հավելումով, այսինքն Ավարտի հատվածով: № 1682 ձեռագիրը ծագում է այն աղբյուրից, որին պատկանում են առաջին խմբագրության օրինակները՝ առանց կաֆաների. Սկզբի և Հարցմունքի հատվածներում նրանք համեմատելի են: № 6451 ձեռագիրը, որքան էլ կաֆաներով, որոշ շեղումներ ունի № 1682-ից՝ ի հաշիվ շարադրանքի ազատության:

Այս խմբագրությունը կրել է ավելի էական փոփոխություն: Այստեղ անհամեմատ որոշակի է դարձել աղղային մշակույթի ազդեցությունն ու ժամանակի կնիքը: XIII—XIV դդ., երբ հայ գրականության մեջ արդեն գերիշխում էր աշխարհիկ ոգին ու կենսասիրությունը, առաջանում է զրույցի այնպիսի մի խմբագրություն, որ սիրային կաֆաներ է ներմուծում պատումի մեջ: Երբ թագավորի դուստրն ընդունում է իր պարտությունը, նրա և երիտասարդի միջև ծագում է մի սիրային զրույց-բացատրություն, որ արտահայտվում է չափածո՝ հայրեն քառատող կաֆաներով: Սա առաջին փորձերից մեկն է զրույցի արձակ հատվածները բանաստեղծությամբ ընդհանրելու, որ հետագայում ավելի լայն կիրառություն է գտնում: Այս խմբագրությունը սկզբնաղբյուրի հետ ավելի

քիչ առնչվող օրինակ է, հայ հեղինակի ստեղծագործական մտքի արգասիք, որ պատմությունը դարձրել է ավելի գեղարվեստական ու բանաստեղծական, մոտեցրել ժողովրդին, զրույցի զաղափարները դարձրել ավելի մասշնչի ու դյուրահաս: Սրանից առաջմ հայտնի են երկու քիչ առնչվող օրինակ է, հայ հեղինակի ստեղծագործական մտքի ար-


Երբեք խմբագրության մեջ դասվող ձևագրերը (№, № 7076, 8724, 10107) մինչև Հարցմունքն ըստ էության բաղդատելի լինելով մյուս խմբագրությունների հետ, շարունակության մեջ բոլորովին հեռանում են, դառնում անհամատեղելի մինչև վերջ: Հարցմունքի հատվածն ընդարձակվում է, հանելուկների թիվն ավելի քան կրկնապատկվում, հասնելով մոտ 50-ի, ավելանում են աշխարհիկ բնույթ կրող նոր հանելուկներ, փոխվում է հեղածների հերթականությունը, պակասեցվում դրանցից մի քանիսը: Բնագրական առումով այս խմբագրությունը շեղվում է թե՛ ա և թե՛ Ե խմբի ձևագրերից ո՛չ միայն հարց-հանելուկների քանակով ու դասակարգությամբ, այլև շարադրանքով. մշակվում է լեզուն, դառնում համեմատաբար կանոնական, մոտ գրաբարին, հանելուկները բացատրվում են մանրամասն, պարզաբանվում մինչև վերջ: Այս խմբագրությունը ևս տպագրված է:

Ե խմբին պատկանող ձևագրերը բնագրային առումով միասնական չեն նաև բանահյուսական պատումների գրառումներ լինելով: Սրանցից են №, № 8443, 9428, 9516, 10166 ձևագրերը, որոնք պահպանում են առաջին և երրորդ խմբագրությունների թե՛ գաղափարական բովանդակությունը և թե՛ կառուցվածքը, փոխելով միայն շարադրանքը: Սրանք անտիպ են:

Բնագրային ճյուղավորումները Ե խմբի մեջ առկա են գրեթե միաժամանակ: №, № 1682, 8443, 8483 ձևագրերը նույն՝ XVII դ. ընդօրինակություն են: Միայն երրորդ խմբագրության ձևագրերն են XIX դ.:

III խումբ (Ե)—Սա ևս կաֆայավոր օրինակ է, սակայն, ի տարբերություն նախորդ խմբի երկրորդ խմբագրության, սկզբից և՛ լուսնալույս Պատմության չափածոյի վերածած շատ հատվածներ ու տարբերություններ, անհամեմատելի է առհասարակ և չի պատկանում վերոհիշյալ խմբերին: Սրանից առաջմ հայտնի է միայն մեկ օրինակ, որ գտնվում է Վիեննայի Սխիթարյան մատենադարանում, 671 համարի տակ (Մաշտոցյան մատենադարանում նրա մանրածապավենը կրում է 707 համարը): Ձևագիրն ընդօրինակված է 1668 թ. առաջ, անտիպ է:

Իր կառուցվածքային առանձնահատկություններով զրույցը հայ հե-



զինակին ծավալվելու է՝ ավելի լայն հնարավորություն է ընձեռել: Նրա աշխարհիկ բնույթը, սիրային բովանդակությունն ու մանավանդ հարց-հանելուկներով զարգացող գործողությունը ստեղծագործական շարժի թռիչք են ծնել: Այս հողի վրա առաջացել է մյուսներից արմատապես տարբերվող մի խմբագրություն, որ մեծ արժեք է ստանում իր գեղարվեստական մշակման յուրահատկությամբ, լիովին հաշվական շաղախով: Ի տարբերություն հայտնի բոլոր ձեռագիր ընդօրինակությունների ու տաշագրերի, այս օրինակն, ինչպես նկատեցինք, սկզբից եթե պատմվում է արձակով ու շափածոյով խառը: Եթե նախորդ խմբագրության մեջ կաֆաներ միայն սիրային էին ու զրված լուկ մեկ տեղ՝ Հարցմունքի վերջում, ապա աչստեղ շափածոյով են բացահայտվում Պատմության թե՛ գեղարվեստական և թե՛ գաղափարական բովանդակությունը, թե՛ սիրային զգացումներն ու փիլիսոփայական իմաստասիրական մտքերը: Զրույցի առանձին հատվածներ ուղղակի հայրենի շափով զրված քառատողեր են, որոնց երբեմն միանում են Պատմության գաղափարական բովանդակությանը համընկնող կամ բացահայտող հայտնի հայրեններ: Այս նշանակում է, թե ձեռագիրն իր խրատական, խոհափիլիսոփայական ու սիրային բառչափներով ոչ միայն բաղմապատկում է կաֆաների քանակը, այլև հիմք է տալիս ենթադրելու, թե զրույցի շաղախոված, կամ դեռևս անհայտ ընդօրինակություններում կարող են դրանք ավելի շատ եղած լինել²²: Մենք նկատի ունենք այն հնարավորությունները, որ ընձեռում էր Պատմությունը հայ հեղինակներին թե իր աշխարհիկ բնույթով ու սիրային բովանդակությամբ և թե կառուցվածքով՝ հարստացնելու և հայացնելու զրույցը կաֆաներով, ինչպես վարվել են նրանք նույնատիպ այլ հուշարձանների հետ²³:

IV խումբ (Վ)—Այս խմբից ևս առաջմ հայտնի է միայն մեկ օրինակ: Սա ձեռքի տակ կրած խմբագրություններից ամենաընդարձակն է և հայտնի է XVI դ.: Ձեռագիրը Մաշտոցյան մատենադարանում կրում է 33 համարը, անտիպ է:

Զրույցի ազգայնացման ու վերամշակման մի բոլորովին այլ ճանապարհով է ընթացել սրա հեղինակը: Օգտվելով զրույցի կառուցված-

²² Ձեռագրից վերջին ևս պակասում հենց այն տեղերից մեկում, ուր կաֆաներն են, որոնք մնում են վերի և լրացման կարոտ:

²³ Տե՛ս Պատմութիւն Աղեկսանդրի Մակեդոնացոյ, Վենետիկ, 1842. Պատմութիւն վասն Պննձ, քաղաքին, որ է օրինակ աշխարհիս, տպագրված՝ Գիրք պատմութեան, որ կոչի Պննձ, քաղաք ժողովածի բոլոր հրատարակություններում: Նույն տեղում նաև՝ Պատմութիւն Փաշույ թագաւորին, Պատմութիւն Աբղճաֆարի և Ընմիլայի (Վիեննայի Միլիարյան մատենադարան, ձեռ. № 671, էջ 127 բ) և այլն:

քայլին հնարավորությունից, նա ընդարձակել է ծախվալը՝ ժամանակին ու տեղին թվացող նոր հանելուկ-հարցերով: Այս օրինակն առհասարակ տնհամեմատելի է դարձել որևէ խմբագրության հետ ոչ միայն գրանով, այլև իր ազատ շարադրանքով, բովանդակության մանրամասներով ու չափածո քառատող հանելուկների ընդլուզումով: Առանձնապես ուշագրավ է երկու առանձնահատկություն:

Ն տարբերություն մյուս օրինակների, այս խմբագրության հեղինակն սկզբից ևեթ, այսինքն՝ մինչև Հարցմունքին հասնելը, Պատմությունը տալիս է քրիստոնեական թեքում և մասամբ փոխում բովանդակությունը: Որգին չէ, որ վատնում է հոր ունեցվածքը: Մեծատունն աղքատանում է «աստմանէ շարին», որից դուրս գալու ելքը միայն Հին և Նոր կտակարանների խմաստությանը հետևելն է: Եվ մեծատունն իր որդուն տալիս է «ի յուսում աստուածային սուրբ գրոցն»: Երիտասարդն իմաստուն չէ առհասարակ, ինչպես մյուս խմբագրություններում: Նա կատարյալ իմաստուն է դառնում այն բանից հետո միայն, երբ ուսանում է «զաստուածային դիրն Հին և Նոր կտակարանին»: Դրա շնորհիվ է, որ նա կարողանում է փրկել և՛ իր կյանքը, և՛ ծնողներին:

Հաջորդ և ուշագրավ նորությունը սրա մեջ, ինչպես ասացինք, չափածո հանելուկների հավելումն է Հարցմունքի համավածում, ի տարբերություն մյուս բոլոր խմբագրություններում գոյություն ունեցող միայն արձակ Հարցմունքի: Այդ հանելուկները գերազանցորեն պատկանում են Ներսես Շնորհալու գրչին, թվով հասնում են մոտ 100-ի և ունեն թե՛ կրոնական, թե՛ աշխարհիկ բովանդակություն:

Դրչությունից երևում է, որ այս խմբագրությունը բանահյուսական պատմւմի ուղղակի գրառում է մեկի ձեռքով, որ ուղղագրության մեջ այնքան էլ գրագետ չէ, ոչ միայն չի պահպանում միօրինակություն, այլև Եւայ գրում է նաև ևայ:

V խումբ (e)—Անտարակույս առանձին խումբ է կազմում նաև Հոռմում եղած և մեզ հայտնի ամենահին ձեռագիրը, որ X դ. կատարված Թարգմանության XIV դ. ընդօրինակություն է: Սրա մեջ ամբողջովին բացակայում է վրույցի առաջին մասը, որով, առանց բացառության, սկսվում են մյուս բոլոր խմբագրությունները, նույնիսկ նրա արաբական հեղափոխ դուղահեռը՝ իմաստուն աղջիկ Թավագդուղի մասին: Այստեղ չկան ոչ անժառանգ մեծատունը և աստծուց նրա որդի խնդրելը, ոչ երիտասարդի ծննդյան ու դաստիարակության պատմությունը, իմաստության հասնելը, ծնողների հարստությունը վատնելը, նրանց վաճառելն ու հետագա արկածները: Զրույցն սկսվում է բուն պատ-

մությանն ու հարցմունքին վերաբերող անմիջական և ուրույն մուտքով: Թագավորի գեղեցիկ և իմաստուն դուստրը հանելուկներ է առաջադնում կտրիճներին և շպառասխանողներին զլխաբել տալիս: Նրան տեսնել է կամենում հեռուներից եկած մի հոյժ իմաստուն իշխանազն և այլն:

Այս խմբագրությունը բնօրինակից ուղղակի կատարված թարգմանությունն առաջիմ հայտնի հնագույն օրինակն է, որ, համահամար, շատ չի հեռացել իր սկզբնաղբյուրից. հետագա X—XIX ձիգ դարերի կնիքը գեղես չի դրոշմվել նրա վրա: Հնարավոր է, որ այս խմբագրությունն ունենա թարգմանական այլ հիմք, իսկ եթե սրանից են ծագել մյուս ընդօրինակությունները, ապա շատ են հեռացել նրանից: Նշան բոլոր ձևագրերի ու տպագրերի համեմատությունը դրա սկզբնատեղերի հետ, որ բերում է Ակինյանը, ակներև է դարձնում, թե վերջինս բոլորովին այլ և ոչ մի խմբագրության հետ ամբողջությամբ չհամընկնող օրինակ է: Այն, թերևս, թարգմանությունը հարադատ մնացած, էս:մ գեղես քիչ մշակումների ենթարկված փոխադրություն է, որ ունի նաև ուրույն, բոլոր մյուս խմբագրություններից տարբերվող վերնագիր՝ «Իր հանհանելուկի»: Սա ունի հետևյալ մուտքը.

«Թագավոր մը կար և ունէր դուստր մի գեղեցիկ յոյժ. և ասէր հանձանելուկ ընդ կտրեճերն և որ չի տար պատասխանի՝ հատանէին զգլուխն հրամանաւ թագաւորին: Եւ էր բանն այս աղչիկան. և էր խիստ գեղեցիկ ... և լուեալ զբան զայս որդի մի իշխանի ի հեռաւանէ, և էր իմաստասէր յոյժ և ցանկալի տեսանել զաղջիկն զայն...»²⁴:

Ակինյանի հետևյալ տողերը կասկածից վեր են դարձնում. թե Պատմության առաջին հատվածն իրոք բացակայում է այդ ձևագրումն առհասարակ. «Դուրս ձգուած է զրոյցիս առաջին մասը, ուր կը պատմուէր կտրիճ իշխանի թագաւորական ծաղումն և անկումը և իր արկածախնդիր ձեռնարկները»²⁵:

Այս խմբագրությունն անտիպ է և հատկապես արժեքավոր նաև իր հիշատակարանով, ուր, ինչպես նշվեց, ծանուցվում է հուշարձանի հայ իրականություն մուտք գործելու ժամանակի և որ լեզվից թարգմանված լինելու հանդամանքը ևս: Սրա բնագիրն առաջիմ ձևով տակ չկա:

Խմբագրական զանազան շեղումներ ունեն և այլ ձևագրեր, որոնք հիմնական պատումի զաղափարական բովանդակության կամ գեղարվեստականության մեջ առանձին էական փոփոխություններ չեն առա-

²⁴ Ն. Ակինյան, Յուդակ հայերէն ձևագրաց Հոմերի հայոց հիւրանոցի, էջ 24, «Նանդէս ամսօրեայ», 1958, № 1—4, էջ 27:

²⁵ Անդր.

հաշվում, սակայն իրենց գոյությամբ հաստատում են միջնադարյան նմանատիպ հուշարձանների փոփոխված լինելու իրողությունը, ընդգծում նրանց ավելի ու ավելի հայտնալու՝ ազդայնանալու և տեղայնանալու ուղիների բաղադրանությունը ոչ միայն գաղափարական բովանդակությամբ, այլև գեղարվեստական մշակման ուղիներով՝ հայ միջնադարյան մտքի ու մշակույթի մշտական ներգործության ներքո:

Ինչպես արդեն երևում է ձեռագրախմբերի նկարագրությունից, զրույցի միայն մեր օգտագործած բնադրերը պատկանում են վեց որոշակիորեն միմյանցից զատվող խմբագրություն.

ա խմբի մեջ մանող բոլոր 17 ձեռագրերը ներկայացնում են մեկ անտիպ խմբագրություն և անհամեմատելիորեն հեռացած երեք բունավոր պատում:

բ խմբի 15 ձեռագրերը (կաֆայավոր և առանց կաֆաների)—3 խմբագրություն, որից երկուսը տպագրված, մեկն անտիպ, և բունավոր պատումներ:

գ խմբից առայժմ հայտնի միայն մեկ՝ կաֆայավոր ձեռագիրը՝ մեկ անտիպ խմբագրություն:

դ խմբից հայտնի, դարձյալ միայն մեկ՝ չափածո հանելուկներով համալրված ձեռագիրը՝ մեկ խմբագրություն, անտիպ:

Իհե ինչ հնություն ունեն Պատմության բոլոր այս խմբագրությունները, դժվար է ասել: Պարզ է, սակայն, որ մինչև XVII դ. զրույցն արդեն ձյուղավորվել է և կայունացել մի քանի առանձին խմբագրություններով, հարստացել չափածո հանելուկներով, սիրային ու խրատափիլիսոփայական կաֆաներով: Համեմատության մեջ դրված ձեռագրերի պատկերը ցույց է տալիս, որ այն երկար ժամանակ հարատևել է նաև բանահյուսական ճանապարհով և մինչև XVI դ. հասնելը առաջացրել մեծ տարընթերցումներ, այլև նոր, երբեմն լրիվ անհամեմատելի պատումներ: Սրանց մեջ հատկապես առանձնանում է Կ. Պոլսի 1861 թ. հրատարակությունը, որի նախագաղափար հանդիսացող ձեռագիրն առաջժամ երևան չի եկել:

Ձեռագրերում Պատմությունը խորագրված է տարբեր վերնագրերով: XIX դ. հիմնականում տարածված է «Պատմություն աղջկան և մանկան և հարցմունք նոցա ընդ միմեանս» վերնագիրը (ձեռ. №, № 8724

Մաշտոցյան մատենադարանի (այսուհետև Մատենադարան) № 5969 (XVII դ.) ձեռագրում զրույցից սոսկ մի պատումով է պահպանվել, ուստի և հնարավոր չէ այն որևէ խմբագրության մեջ կարգել: № 9265 (1869 թ.) ձեռագիրը վրացատառ հայերեն է և պատկանում է Ե խմբին:

(XIX դ.), 8963 (XIX դ.), 9428 (1864 թ.), 9516 (1831 թ.), 10107 (1869 թ.), 10166 (1840 թ.): Մյուս և ավելի վաղ շրջանի ձեռագրերում վերնագրերը տարբեր են:

«Պատմութիւն գեղջուկ և ոճով բանիւ» (№№ 2168, 3237, 8076), «Պատմութիւն վասն մանկան և աղջկան, ասալ վասն ուրախութեան» (№ 3081), «Պատմութիւն աղջկան մանկան» (№№ 7027, 7076), «Պատմութիւն վասն մանկան և աղջկան վասն ուրախութեան մարդկան» (№№ 7050, 8968), «Պատմութիւն մանկան և աղջկան» (№ 8443), «Պատմութիւն դստեր թագաւորին և մանկան իմաստնոյ» (№ 8708), «Պատմութիւն աղջկան և կտրճին» (№ 9124) և այլն: Որոշ ձեռագրեր վերնագրերում բացում են Պատմութեան բովանդակութիւնը, երբեմն բավական ընդարձակ. «Պատմութիւն մեծատան որդուն, որ զհայր և զմայր վաճառեաց և զնացեալ օտար աշխարհն հարցաքննութեան» (№ 33), «Պատմութիւն գեղեցիկ, որ կտրիճն զաղջիկն յաղթեց և էառ իւր ի կնութիւն և յետոյ եղև թագաւոր և եբեր իւր մօտն զհայրն և զմայրն և ուրախացան» (№ 1682, գրեթէ նույնն է և № 6451 ձեռագրում), «Պատմութիւն վասն մանկան և աղջկան և հարցաքննութեան ընդ միմեանս և միաբանութեան նոցա» (№ 7047) և այլն: Կան նաև ամբողջութեամբ կամ մասամբ անընթեռնելի, ջնջված վերնագրեր (№№ 697, 7709): Այլ ձեռագրերում վերնագիր չկա Պատմութեան սկիզբը թերի լինելու պատճառով (№№ 5968, 6092, 7227): №№ 8456 և 3483 ձեռագրերում ազատ տեղ է թողած՝ վերնագիրն ու առաջին տողը ծաղկազրով կամ կարմրատառով լրացնելու, որ չի արված: № № 5985, 6686, 7723, 10333 ձեռագրերը պարզապէս վերնագրեր չունեն:

Այլ են վերնագրերը Հայաստանի ներկա սահմաններից դուրս լքու-նըվող որոշ ձեռագրերում: Հոռմի Հայոց հյուրանոցի № 33/24 ձեռագրում զրույցը կոչվում է «Գիր հանհանելուկի» (էջ 28 բ)²⁷, Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի № 671 ձեռագրում՝ «Պատմութիւն աղքատ թագաւորին» (էջ 143 ա)²⁸, Կ. Պոլսի Պալատի «Ս. Հրեշտակաւետ» եկեղեցու № 30 ձեռագրում՝ «Պատմութիւն գեղջուկ բառով վասն կտրիճի և աղջկան միոյ»²⁹ և այլն: Ակիմյանին հաշտնի են եղել նաև հետևյալ վերնագրերը. «Պատմութիւն գեղեցիկ վասն առակի իմաստութեան», «Պատմութիւն և առակաբան»³⁰:

²⁷ Տե՛ս Ն. Ակիմյան, Յուցակ հայերէն ձեռագրաց Հոռմի հայոց հիւրանոցի, էջ 24:

²⁸ Տե՛ս Մատենադարան, մանրածապակն № 707, էջ 143 ա:

²⁹ Տե՛ս Մատենադարան, մանրածապակն № 504, չէջակալված:

³⁰ Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1958, № 1—4, էջ 27:

«Վասն մանկանն և աղջկանն» զրույցը շունի առանձին տպագրություններ: Խրատական բնույթ կրող այլ ասեղծագործությունների հետ մեկտեղ այն ղեկավարած է «Գիրք պատմութեան, որ կոչի Պղնձէ քաղաք», կամ «Պատմութիւն Պղնձէ քաղաքին» վերտառութեամբ հայտնի ժողովածուի տարբեր հրատարակություններում: Սրանց մեջ պատահում են հետևյալ հուշարձանները. «Պատմութիւն Պղնձէ քաղաքին, որ է օրինակ աշխարհիս», «Խրատք օգտակարք արարեալ բանաստեղծ թագաւորին, որոյ անունն է Նուշէփան», «Խրատք պիտանիք և օգտակարք, զոր ասացեալ է Խիկարայ իմաստնոյ», «Պատմութիւն աղջկան և մանկան և հարցմունք նոցա ընդ միմեանս», «Վարք և պատմութիւն Ալեքսիանոսի ճղնավորին», «Պատմութիւն տէր Յուսկան և որդւոյ նորին Ստեփանոսին», «Վիճակահան» կամ «Վիճակախաղը», այլ ձեռագրերում նաև «Պատմութիւն յաղագս Փահլու թագաւորին», «Պատմութիւն Աբգըլ-ճաջարի և Զամիլայի», «Պատմութիւն Մարխայ վաճառականին», «Վաքք Յովհաննու կամստոր աղբատի», «Իմաստութիւն մեծ թագաւորին Զարմանաղանայ և որդւոյ նորին Յարմանի Ասմանին վարուցն» և այլն:

Ինչպես արդեն երևաց խմբագրությունների պատկերից, տպագրերը պատկանում են միայն ի խմբին և հիմնականում բաժանվում երկու խմբագրության. մեկը համապատասխանում է այդ խմբի առաջին, մյուսը՝ երրորդ խմբագրությանը: Առաջինին են համընկնում Պոլսի մեզ հայտնի 1696—1710 թթ. միջև ենթագրվող, 1731, 1749, 1792, 1820 թթ., Կալկաթայի՝ 1814 թ. և Երևանի Մատենադարանում ու Ե. Զարենցի անվան զրականության և արվեստի թանգարանում պահպանվող (առանց տիտղոսաթերթի) երկու հրատարակությունները: Երրորդ խմբագրության հրատարակություններն են՝ Կ. Պոլիս, 1834, 1850 թթ., Թիֆլիս՝ 1857, 1911 թթ.: Բացառություն է կազմում Պոլսի 1861 թ. հրատարակությունը, որը լեզվաբանական առումով հիմք ունի բանավոր պատումից ծագած այլ նախօրինակ: Թեև նշանակալի տարբերություններով, սա էս, այնուամենայնիվ, կապես պատկանում է ի խմբին:

Ըստ մեր ձեռքի տակ եղած հրատարակությունների, զրույցի մյուս բոլոր խմբագրություններն անտիպ են:

Ինչպես ձեռագրերում, տպագրերում ևս վերնագրերը տարբեր են: Նրանց մի զգալի մասն ունի միևնույն ձևակերպումը, որ հայտնի է ձեռագրերից՝ «Պատմութիւն աղջկան և մանկան և հարցմունք նոցա ընդ միմեանս»: Սրանք հիմնականում XVIII—XX դդ. հրատարակություն-

ներ են (1749—1911 թթ.): Ավելի վաղ շրջանի տպագրություններում կան այլ վերտառություններ. «Պատմութիւն աղջկան և մանկան հարցմունք», «Պատմութիւն աղջկան և մանկան և հարցմունք»: Սրանք 1698—1710 թթ. միջև կատարված և 1731 թ. հրատարակություններ են:

* * *

«Հաղար ու մեկ գիշերներին» ստեղծման պատմությունից, բազում հմուտ ու նշանավոր մասնագետների ուսումնասիրություններից երևում է, որ ժողովածուի սկզբնական կազմի մեջ եղել են անհամեմատ ավելի քիչ թվով ստեղծագործություններ, որոնք աստիճանաբար ոչ միայն շատացել են, այլև փոփոխվել: Մոտավորապես IX—X դդ. սաղմնավորված այդ ժողովածուի մեջ հետագայում ավելացել են մեծ քանակությամբ նոր զրույցներ, առաջացել են նոր շերտավորումներ հնգկապարակական, արաբական, նույնիսկ հունական համանման ստեղծագործությունների ներառումով: Ըստ Օյստրուպի (Oestrup), այդ զրույցներից մի քանիսը եղել են առանձին ինքնակա գրքեր, առանձին գոյություն ունեցող խրատատեսուցողական պատմություններ, որոնք հետո են մտել ժողովածուի մեջ, չեն պատկանել «Հաղար ու մեկ գիշերներին» շարքին³¹: Այդ է պատճառը, որ եղած բոլոր հրատարակություններին բնագրերը նշանակալիորեն տարբերվում են միմյանցից:

Նկատի ունենալով այն փոփոխությունները, որ կատարվել են այս տիպի ստեղծագործությունների հետ համաշխարհային գրականության մեջ, աչքի առաջ ունենալով «Հաղար ու մեկ գիշերներին» հրատարակություններում եղած միևնույն ստեղծագործության տարբեր պատումներն ու տարբեր խմբագրությունները, հնարավոր է ենթադրել, թե պարակա-արաբական զրույցներից մեկի հեղինակը ու տեղայնացված փոփոխակներից է և «Յաղագս Փահլուլ թաղատրին» զրույցի հայկական խմբագրությունը: Հայտնի է, որ «Հաղար ու մեկ գիշերներին» ձեռագիր հավաքածուներից ոչ բոլոր զրույցներն են մուտք գործել հրատարակություններ:

«Փահլուլի» արաբական նախօրինակը, որ առաջմ մեկ հայտնի չէ, թերևս գտնվում է ձեռագրական հինգ այգալիսի մի հավաքածուի մեջ:

Ենթադրվում է նաև, թե ժողովածուի հնագույն կորիզը, որ «Հաղար հեքիաթի» IX—X դդ. պահլավերենից կատարված արաբական թարգմանություն է, կարող է և ամբողջությամբ ներառված չլինել «Հաղար ու մեկ գիշերներին» մեջ³²: Արդյո՞ք «կորիզում» եղած զրույցներից մեկը է:

³¹ Эструп, էջ XXXI.

³² Տե՛ս անդ, էջ XXXIII.

Փահլուլ թաղավորի պատմության այն տարբերակը, որից ծագել է հայերենը, որպես ազատ, հեղինակի սեփական ճաշակով կատարված փոխադրություն:

Հոգուտ այս ենթագրության է խոսում և այն հանգամանքը, որ զբոսայգիների թարգմանության մասին եղած հայտնի հիշատակագրություններում ոչ մի տեղ չի վկայակոչվում «Հաղար ու մեկ գիշերները» որպես սկզբնաղբյուր: Այսպիսի մի նշանավոր հուշարձանի գոյությունը չէր կարող անտեսվել, ուստի հնարավոր է, որ Փահլուլի պատմությունը ևս, ի թիվս «Պղնձե քաղաքի», «Մանկան և աղջկան», Ֆարմանի ու այլ պատմությունների, հայ իրականություն մուտք գործած լինի X դ., աչխնքն՝ ալեկի վաղ, քան «Հաղար ու մեկ գիշերները» կկազմավորվերին որպես ալպիսին³³: և քանի դեռ հետազայում միայն նրա մեջ մտած զբոսայցիները շրջում էին իբրև ինքնակա գործեր:

Այդ է վկայում և հայկական «Պղնձե քաղաք» ժողովածուի կազմավորման պատմությունը: Որպես առանձին միավոր թարգմանված զբոսայցիներն ի մի են հավաքվել հետազայում՝ աստիճանաբար, և նման այլ ստեղծագործությունների հետ մեկտեղ ընդօրինակվել մի ձեռագրում, ապա ուշ դարերում դարձել գրեթե զբոսայց-պատմությունների, վարք-պատմությունների ժողովածուներ, ինչպես են № № 8724, 8963, 9428, 9516, 10107 և այլ ձեռագրեր:

Խոսելով զբոսայցիների իրեն հայտնի մի հնագույն հայկական ժողովածուի մասին, որի մեջ կան X դ. կատարված թարգմանություններ, ներսես Աղիսյանը դրանք համարում է «մեծավ մասամբ հնդկական», «պարսիկներու միջնորդությամբ պրավոր կամ բերանացի անցած արաբներու»: Ըստ նրա, «այս զբոսայցիներու շարքեն են նաև Աբդլ-Ճաֆարի, Փիր Փահլուլի պատմությունները»³⁴, որոնք ևս Պղնձե քաղաքի, Աղջկան և մանկան, Խիկարի և այլ պատմությունների հետ մեկտեղ թարգմանվել և մուտք են գործել հայ իրականություն:

Ձեռագրական աշխարհին լավատեղյակ և բանասիրական բաղում ճշգրտումների հեղինակ Աղիսյանին հայտնի է դառնում մեզ հետաքրքրող զբոսայցի Տյուրինգենի հայկական ձեռագրերում պահպանվող մի այլ խմբագրություն (№ 70, էջ 392 ա—395 բ) «Պատմութիւն Փիր Փահ-

³³ Ըստ մասնագետների իր ներկա տեսքը ժողովածուն ստացել է հիմնականում XIII—XVI դարերում՝ Եգիպտոսում, տե՛ս Эсрун, էջ XXXII:

³⁴ Ն. Աղիսյան, Գրիգորիս Ա. կաթողիկոս Աղթամարի, էջ 51, Զրոյց Պղնձե քաղաքի, «Հանդէս ամսօրեայ», 1958, № 1—4, էջ 24:

լուին» վերնագրով: Սրան անմիջապես հետևում է, հավանաբար թարգմանչի, հետևյալ ծանուցումը.

«Յանունն աստուծոյ ողորմածին և յիշումն առաջին ժամանակաց, զոր են ի դբաւսանս մարդկան, որ է փոխած ի տաճիկ լեզուէ ի հայ տֆթար այսպէս, զոր արարաբ սկիզբն Փահլուլ թագաւորին պատմութեանս»³⁵:

Բուն Պատմությունն սկսվում է այսպես.

«Որ (սա) էր այր իմաստուն և առաքինի. կին և որդի ոչ ունէր, և ասէին զնմանէ թագաւոր Արեւելեան աշխարհին...»:

Զրույցի վերջին տողերն են.

«Ով աստ բարի գործեր է, նա յանդէն զայն գտանէր. և ապա դառնոյց զխալիֆայն և հաւատաց յամենասուրբ երորդութիւնն...»:

Տյուբինգենի ձեռագիրն ունի հետևյալ նորությունները.

ա. Հիշատակություն Պատմության արարերենից թարգմանված լինելու մասին:

բ. Զրույցի հնության՝ «առաջին ժամանակաց» զոյովյան մասին:

գ. Զրույցի գեղադիրտական նպատակներ հետապնդելու՝ «ի դբաւսանս մարդկան» ծառայած լինելու մասին:

դ. Փահլուլի ընտանեկան վիճակի մասին՝ «կին և որդի ոչ ունէր»:

ե. Փահլուլի մականվան մասին՝ Փիր Փահլուլ:

զ. Խալիֆայի և Փահլուլի հավատափոխության՝ քրիստոնեություն ընդունելու մասին, որ նշանավորում է զրույցի հայ իրականության մեջ է՛լ ավելի երկար ճանապարհ անցած լինելը, առավել ևս հարմարվածությունը հայկական-քրիստոնեական միջավայրին:

Դժվար է ասել, թե ինչ այլ տարբերություններ կարող էր տալ բուն բնագիրը մեզ հայտնի օրինակների համեմատությամբ, եթե այն ձեռքի տակ լիներ:

Ցավոք նրա մեջ հիշատակություն չկա թարգմանության ժամանակի մասին, որ շատ մութ հարցերի լուսաբանման բանալի կարող էր հանդիսանալ:

* * *

Թարգմանական համանման զրույցների օրինակով, Փահլուլի Պատմությունը ևս ընդելուզված է կաֆաներով՝ հիմնականում քառատող հայրեններով: Նման, հատկապես, «Պղնձէ քաղաքի» պատմության կաֆաներին, զրանք խոհեր են կյանքի ու մարդու, այս աշխարհի անցավորության վերաբերյալ և զրանից բխող հորդորներ՝ հավիտենական

³⁵ «Հանդէս ամսօրեայ», Լջ 29:

կյանքի արժանանալու գնդեցիկ մղումով, այսինքն՝ խրատներ իմաստության ձգտելու, հոգեւոր մեծության հասնելու, նյութական հարստություն, փառք ու գանձ մերժելու, բարիք ստեղծելու, այս կյանքում անմոռաց անուն վաստակելու, բարի ու անանց հիշատակ թողնելու մասին:

Հայագիտության մեջ կաֆաների ծագման վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Այսպես, օրինակ, Արշակ Զոպանյանը եզրակացնում է, թե դրանք «Հայկական բանաստեղծություն են օտար գործի մը հետեղութեամբ գրված: Նկատելի է արդեն, որ բոլոր այդ տաղերը երկրավոր մեծության ունայնությունը կերպեն, մոթիֆ մը՝ քրիստոնեական դրականության ընդհանրապես և հայոց հին գրականության մասնավորապես շատ սիրելի»³⁶:

Նույնը կարելի է ասել և «Փահլույի» կաֆաների մասին, սակայն չի կարելի բացառել որպես բանաստեղծություն դրանց արաբական աղբյուրից ևս ծագած լինելու հնարավորությունը:

Զափածոյի ազդեցումով հորինված խրատառուցողական արձակը նոր երևույթ չէր գրականության մեջ: Նույնիմաստ, համառոտատող շափածոյի օգտագործումը, որ երևացել է հնդկական հնագույն գրականության և բուդդայական առակաների ժողովածուների մեջ մինչև «Պանչատանտրան», հին հնդկական գրական ավանդույթ է³⁷: Մեր թվականության IV դարում արդեն իսկ գոյություն ունեցող այդ հայտնի հուշարձանը ևս, որ գործնական նպատակներով ստեղծված առակաների, զրույցների ու ղանաղան իմաստասիրական ասուլիսների մի խրատական ժողովածու է, ունի կառուցվածքային նույն սկզբունքը: Այստեղ նույնպես արձակ խոսքով ասված իմաստասիրական խրատին, զրույցին կամ առակին հաջորդում է շափածոն՝ նույն միտքը, կենսափորձով հաստատված նույն իմաստությունը մի քանի տողի մեջ ամփոփված (երկտող, քառատող, ութնյակ): Ամեն անգամ շափածոյով ամբողջացվում է միտքը, ինչպես այդ արվում է և մեր զրույցում, որ շատ հարմարում էր ժամանակի խրատառուցողական նպատակներին: Ամենայն հավանականությամբ, թե՛ մեր զրույցի հեղինակը և թե՛ հայ տաղերգուները ծանոթ էին «Պանչատանտրային» ու նրա ստեղծագործական ոճին արաբերենի կամ հունարենի միջոցով, որ լայնորեն հայտնի էր XI դ. սկսած: Դրա հետ-

³⁶ Ա. Զոպանյան, Հայ էջեր, էջ 16: Հայագետը դրանց շարքից դուրս է համարում «Աղեքսանդրի Պատմության» կաֆաները, որպես բնագրից բոլորովին անկախ և հայ հեղինակների գործ:

³⁷ Śrī Լանչատանտրա, перевод с санскрита и примечания А. Я. Сыркина, ст. В. В. Иванова, М., 1968, էջ 311—312:

քերը կան առականերում, զրույցներում, տաժներում, խոհախրատական հայրեններում³⁸ և XI դ. նշանավոր մտածող Գրիգոր Մագիստրոսի Թղթերում:

Титтибха лапки протянул, чтоб небо не обрушилось.
Да! У какого существа не знает сердце гордости?

Այսպես է հնչում հայարա, իր ուժերի մասին մեծ կարծիք ունեցող՝ փլշող երկինքն իր ոտքերով պահել հավակնող ճնճղուկի առակը «Պանշատանտրա»-ում³⁹ (ըստ ուսերեն թարգմանության), որ օգտագործել է Մագիստրոսը հետևյալ կերպ.

«...ըստ որում, որ ի գոհիկս պատմին առական արտուտի զգուշութիւն երկնի ստորս կործանիլ, յոտն ի վեր երկին ջանայ կարկատել, զի մի՛ երկին յերկիր անկցի խափուցեալ. ի պարսաւս առեալ ոմանց, թէ որո՞ւ ծղէ ծնգօք ծառանաս ծտիկ քո ծովդ խելօք: Պատասխանեալ հաւն ասէ. Որքան կարեմ զայն առնեմ»⁴⁰:

Այս ամենից զատ, հետաքրքիր է նկատել նաև, որ ինչպես հայերենում, այնպես էլ հնդկերենում արձակի բովանդակությունը հաստատող և խորացնող չափածոյի տեսակը կոչվում է հատուկ տերմինով: Հայկական կաֆա անվանումը հնդկերենում արտահայտվում է Kathāsamgrāha բառով, որ նշանակում է ընդգրկող, շրջառող, պարփակող⁴¹: Հնարավոր է, որ հայկական տերմինը ես, քառյակի կիրառական նշանակությունից ելնելով, ունեցած լինի նույն՝ միտքը պարփակող, շրջառող կամ մի միտք ամբողջացնող իմաստը, ծագած լինի նույն արմատից:

Քանի որ «Փահլուլի» թարգմանական ակունքին՝ հնդկա-արաբական գրականությանը ևս հատուկ էր արձակը չափածոյով ընդելուզել՝ հարստելով կամ երանգավորելով Պատմության տվյալ հատվածի դադափարական բովանդակությունը բանաստեղծությամբ, ապա ուրեմն կարելի

³⁸ «Ոսկերիչ, կապիկ, օձ և վագր ի ջրհորն», «Կապիկ և կրիա», «Առիւծ հիւանդացեալ և էջ առանց սրտի և ականջից», «Օձ և հողադործ», «Էծվար և օձ», «Զորս քնկերք ճանապարհորդը» և այլն, տե՛ս «Պանշատանտրա», էջ 76, 249, 257, 217—219, «Կալիլա և Դիւնա» (Մ., 1957, ուսու.), էջ 213, 183, 248, Ն. Մառ, Ժողովածոյ առակաց վարդանայ (մասն Բ, Պետերբուրգ, 1894), էջ 189, № ՃՄԼա, էջ 5, № Ե, էջ 90, № Ա՝ 2, ՀԱ, էջ 154, №ԺԳ, էջ 130, № ՃԺ, էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից (Երևան, 1957), էջ 32, № 38, էջ 243, ծնթ. № 38, էջ 28, № 36, էջ 242, ծնթ. № 36, էջ 48, № 45, էջ 254, ծնթ. № 45 և այլն:

³⁹ Панчатантра, էջ 101:

⁴⁰ Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, ԱզԼքսանդրապոլ, 1910, էջ 13:

⁴¹ Տե՛ս Պանշատանտրա, էջ 311:

⁴² Տե՛ս Պանշատանտրա, էջ 311: Կաֆան հայերեն թարգմանվել է երգ, որ նշանակում է, թի ալն նաև երգվել էն. տե՛ս սույն գիրքը, էջ 257—263:

է մտածել նաև, թե կաֆաները զրույցում կարող են և զուտ հայկական չլինել:

Հնարավոր է ենթադրել, թե վերջինիս չափածո հատվածներն ազգայնանալով դարձել են հայերեն կաֆաներ՝ XIII—XIV դդ. հայ բանաստեղծական արվեստին բնութագրական ստեղծագործություններ, հայրենի շափով ասված երկարատող քառյակներ:

Հօգուտ այս եզրակացության են խոսում և «Պղնձէ քաղաքի» կաֆաների մեջ պահպանված բնագրային օրինակները: Ինչպես համոզիչ վկայակոչումներով ցույց է տալիս զրանց ուսումնասիրության հեղինակ Հ. Սիմոնյանը, այդ կաֆաների «մի մասը հարազատ թարգմանություն է, մյուսներում առկա են փոփոխություններ, մնացածներն էլ փոխադրություն են հիշեցնում»⁴²:

Ավելին, հեղինակը նկատում է, թե կոնկրետ դեպքերում «հայկականին շատ ավելի մոտ է զրույցի արաբական այն խմբագրությունը, որից կատարված է ուսական թարգմանությունը»⁴³, Ի վերջո նա եզրակացնում է, թե նկատված «շեղումները կրկին համոզում են, որ կաֆաների թարգմանության հարցում հայ թարգմանիչներն իրենց բավական ազատ են զգացել»⁴⁴:

Արգյո՞ք նման եզրակացության հիմքեր չէր տա և «Փահլուլի» պատմության արաբական նախօրինակը, եթե հայտնվեր: Սրա բացակայությունը և «Պղնձէ քաղաքի» պատմության կաֆաներից առնվազն տասի արաբական հիմքերը թույլ չեն տալիս միակողմանի եզրակացության հանգել՝ կաֆաները զուտ հայկական կամ թարգմանածին համարել:

«Փահլուլի» կաֆաների հայ հեղինակը որոշելու հարցը ևս տարակարծությունների տեղիք է տվել: «Այս տաղիկները շատ մոտեն կհիշեցնեն Մկրտիչ Նաղաշի, Ֆրիկի, Կոստանդին Երզնկացվո և այլ միջնադարյան բանաստեղծներու նույն ոգով տաղերը, մերթ գրեթե նույն բառերով, նույն պատկերներով»,— գրում է Զոպանյանը⁴⁵, իսկ Գարեգին Հովսեփյանին ավելի որոշակի է մոտենում հարցին. «Ո՞վ է այս կաֆաների հեղինակը՝ Ֆրի՞կ, Գր. Աղթամարցի՞, թե մի այլ անհայտ անձնավորություն, առ այժմ զժվար է որոշել մեր ձեռքը եղած տվյալներով,

⁴² Հ. Սիմոնյան, Հայ միջնադարյան կաֆաներ, Երևան, 1975, էջ 147:

⁴³ Անդ, էջ 148:

⁴⁴ Անդ, էջ 149:

⁴⁵ Ա. Զոպանյան, Հայ էջև, էջ 40:

թեև հակված ենք ընդունելու, որ Գր. Աղթամարցին է»⁴⁶: Հարուժյուն Քյուրտյանը թե՛ այս զրույցի և թե՛ «Պղնձե քաղաքի» թարգմանության ու կաֆաների հեղինակ է կարծում նույն անձնավորությանը՝ Առաքել Անեցուն կամ Շիրակլանեցուն (1222 թ.), չբացատրելով նաև, թե դրանք կարող են նրան ժամանակակից մի այլ հեղինակի դործ լինել⁴⁷:

Ասատուր Մնացականյանը և Հասմիկ Սիմոնյանը, փոքր վերապահությամբ, «Փահլուլի» կաֆաները վերագրում են Ֆրիկին⁴⁸: Հատկապես հիմք է ընդունվում Ֆրիկի «Տեսե՛ք թէ քանի մարդիք յաշխարհէս դատարկ մնացին» սկսվածքով տաղը, որի վերջին չորս տները (3—6), որոշ տարբերություններով, համապատասխանում են «Փահլուլի» կաֆաներից չորսին: Սակայն Ֆրիկի կյանքի ու ստեղծագործության հմուտ մասնագետ Տիրայր Արքեպիսկոպոսը ճշտորեն նկատում է, որ վերոհիշյալ տաղն «այլահանգ քառյակների շարք»⁴⁹ է և որպես այդպիսին բացառություն Ֆրիկի գործերում: Եվ, իրոք, քերթվածն իբրև տաղ ամբողջական ստեղծագործություն չէ, քառատողերը միմյանց հետ կապվող տներ չեն: Շարքում պարզապես ի մի են բերված մարդու և երկրայինի անցավորությանը վերաբերող խոհեր ու խրատներ պարունակող անկախ հայրեններ, որոնք հոգեհարազատ են ո՛չ միայն Ֆրիկին, այլև միջնադարյան տաղերգուներից շատերին, մասնավորապես նրա ժամանակակից, նշանավոր իմաստասեր Հովհաննես Երզնկացի Պլուլին: Վերջինիս քառյակներից ևս առանձին տողեր ներառված են «Փահլուլի» պատմության մեջ⁵⁰:

Ուշագրավ է այս առումով «Փահլուլի» կաֆաներից հետևյալ տողի առկայությունը փաստը մի շարք հեղինակների անունով, որին անգրագարձել է և Գ. Հովսեփյանը.

Ֆրիկ Խէ. Զանա ու բարի գործէ, որ յանդէն չլինիս ետին: Պլուլ, ԾԴ. Զան արա գործէ բարի, որ յետոյ չլինիս փոշիման: Տիրայր Եպիսկոպոսի ձեռագիր. «Սորանից է առել «Պղնձե քաղաքի» հեղինակը. Զանա, որ բարի գործես, որ անդէն չլինիս փոշիման: Նույն «Պղնձե քա-

⁴⁶ Գ. Հովսեփյան, Յովասափ Անաստացի, «Արարատ», 1918, ապրիլ—դեկտեմբեր, էջ 249:

⁴⁷ Հ. Քյուրտյան, Պատմութիւն Փահլուլ թագաւորին, Հայ միջնադարյան ռամկերեն գրականություն, «Անահիտ», 1946, № 1, էջ 19:

⁴⁸ Ա. Մնացականյան, Հայրենների և Նահապետ Քուշակի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 245, «Հայ միջնադարյան կաֆաներ», էջ 177: և հալ.

⁴⁹ Ֆրիկ, Դիւան, ի լոյս ընծայեց Տիրայր Արքեպիսկոպոս, Նիւ-Նորք, 1952, էջ 484—485:

⁵⁰ Տե՛ս Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 157, № ՄԳ—ՄԴ:

ղարի» մեջ Գր. Աղթամարցին. Զանա բարի գործել, որ չլինի ի հուրն առաքիաւ Իսկ «Փաճուլի» մեջ. Զանա և բարի գործէ, զի կարանըն քեղ կու հայի⁵¹: Եվ, վերջապես, Հովասափ Սեբաստացու մոտ՝ Զանա և բարի գործէ...⁵² կիսատողը: Բացի սրանից, ամբողջական կաֆաներ ևս անցել են XVI դ. այս տաղերգուին, կցվել նրա բարոյախոսական բանաստեղծություններին⁵³, որոնցից մեկը, թեև թերի, Ֆրիկի անունով ևս պահպանված աներից է:

Եթե այս ամենին ավելացնելու լինենք և այն հանգամանքը, որ քառյակների հեղինակների հարցն առհասարակ դեռևս որոշման կուրոտ է, ապա ավելի ևս թեական կդառնա Փաճուլի Պատմության մեջ եղած կաֆաները Ֆրիկին վերագրելու վարկածը:

«Փաճուլի» շափածո հատվածները զուտ ազգային կամ թարգմանածին համարելու հարցը բարդ, առանձին ուսումնասիրություն պահանջող և դեռևս դժվար լուծելի խնդիր է, քանի դեռ մեջտեղ չեն եկել նրա բնօրինակը, կամ մի ավելի վաղ թարգմանության հետքեր: Զրույցի գեթ թարգմանության հնությունը հաստատող որևէ հիշատակություն կարող էր լույս սփռել ոչ միայն կաֆաների բնագիր կամ թարգմանածին լինելու, այլև հեղինակի հարցը ճշտելու գործում: Իսկ առայժմ հնարավոր է անել միայն մի քանի ենթադրություն: Այսպես, օրինակ.

ա. Կաֆաները բնօրինակին են և թարգմանածին. դրանք զատվել են զրույցից, ընկալվելով որպես առանձին հայրեններ⁵⁴, կցվել տարբեր հեղինակների համանման ստեղծագործությունների ու վերագրվել նրանց:

բ. Նույն վարկածը կարող է լինել և այն դեպքում, եթե կաֆաները հավելում են՝ զրված հատկապես «Փաճուլի» պատմության համար, մի հայ հեղինակի ձևերով (այդ կարող է լինել և ինքը՝ թարգմանիչը): Հարմար զարկով այս կամ այն տաղերգուի ստեղծագործական ոգուն, դրանք հետադաշում կցվել են նրանց երկերին, վերագրվել նրանց:

գ. Զի բացառվում և հակառակ վարկածը. հայրենները պատկանում են ոչ թե մի, այլ մի քանի որոշակի հեղինակների. թարգմանիչն ինքն է դրանք օգտագործում «Փաճուլի» պատմության համար՝ ըստ տեղի ու նյութի համապատասխանություն:

⁵¹ «Արարատ», 1918, էջ 249:

⁵² Անդ.

⁵³ Տե՛ս Հովասափ Սեբաստացի, Աշխատասիրությանը վ. Գեորգյանի, Երևան, 1964, էջ 124, 128:

⁵⁴ Տե՛ս ձեռ. № 4285, ժէ, էջ 94 ր, որտեղ զրույցի կաֆաներից յոթը ներկայացվել են որպես հայրենների շարք՝ «Ողբ այլ իմն կերպիւ» վերնագրով:

դ. Կարելի է մտածել նաև, թե զրույցի կաֆաներն աղգային՝ հայկական ստեղծագործություններ են. դրանք հեղինակներին կորցրած հայրեններ են, որ երբեմն կցվել են Ֆրիկի տաղին (չդառնալով նրա օրգանական մասը), երբեմն Պլուզի կամ ուրիշների: Նշենք մասնավորապես Հովասափ Սեբաստացու «Յիշէ զբան Աւետարանին» սկսվածքով ստեղծագործությունը, որի բարոյախրատական բնույթը «հիմք է տվել, որ հետագայում աստիճանաբար նրա վերջից կցվեն համանման նորանոր տներ»⁵⁵:

Իրենց գաղափարական բովանդակությամբ համընկնելով «Փահլուլում» արժարժված մտքերին, նույն հայրենները մտել են նաև զրույցի մեջ, այս դեպքում դարձել նրա օրգանական մասը: Դա ևս կարող էր ի սկզբանե արած լինել թարգմանության հեղինակն ինքը:

Պատրաստի հայրենների այսպիսի կիրառումները չեն բացառված, մանավանդ, եթե նկատի ունենանք, թե իբրև կաֆա են օգտագործվել նաև ժողովրդական երգերը⁵⁶:

ե. Որպես հինգերորդ վարկած կարելի է ենթադրել, թե «Փահլուլի» կաֆաների մեջ կան թե՛ բնօրինակից ծագող և թե՛ հայ գրչի ձեռքով հավելված հեղինակային կամ անհեղինակ գործեր: Այս ենթադրությունը թվում է ավելի հավանական, որ իբրև եզրակացություն ձևակերպում ենք այսպես.

«Փահլուլի» պատմության կաֆաները, եթե ոչ ամբողջությամբ, ապա մի մասով թարգմանական են՝ որպես շափածո հատվածներ, իսկ կառուցվածքային առումով բոլորն էլ հայրենի շափով գրված խոհափիլիսոփայական քառյակներ են:

* * *

«Պատմություն վասն Փահլուլ թագաւորին» զրույցն ավելի գրքային է, այն տարածվել ու պատմական ուղի է անցել ավելի դրավոր, քան բանավոր ճանապարհով: Հուշարձանի բովանդակության խոհական, փիլիսոփայական բնույթը, որքան էլ խրատական, դժվարացրել է այն մտաբերել անգիր, վերհիշել, պատմել ու վերապատմել, ուստի ձեռագրերում, ինչպես և հրատարակություններում, համեմատաբար քիչ է երևան եկել, քան, ասենք, «Վասն մանկանն և աղջկանն» զրույցն իր աշխարհիկ բնույթով ու սիրային թեմայով, կամ «Պղնձէ քաղաքի» պատմությունն իր արկածային ոգով:

⁵⁵ Մանրամասն տե՛ս Հովասափ Սեբաստացի, էջ 217 և հտլ.:

⁵⁶ Տե՛ս Ա. Մնացականյան, Հայկական դարդարվեստ, Իրևան, 1955, էջ 99, «Հայ միջնադարյան կաֆաներ», էջ 38:

«Փահլուլի» պատմությունը գրեթե շունի այլ խմբագրություններ, քիչ են նման զրույցի համար բնութագրական բնագրային շեղումներն ու տարբերությունները: Տպագրերն էապես համընկնում են ուշ դարերի գրչագիր ընդօրինակություններին⁵⁷, հին ձեռագրերն ըստ էության անտիպ են:

Փահլուլի զրույցը հայտնի է XVI—XIX դդ. ձեռագրերից⁵⁸: Այն պահպանվել է ինչպես Մաշտոցյան մատենադարանի, այնպես էլ արտասահմանում պահվող ձեռագրերում: Մեր տրամագրության տակ են գտնվել Մաշտոցյան մատենադարանի բոլոր 11 օրինակները, Վիեննայի ձեռագրերից մեկը, Կոստանդնուպոլսից՝ մեկը և Հ. Քյուրտյանի անձնական հավաքածուում եղածի տպագիրը⁵⁹. սրանցից չորսը՝ XVII, երկուսը՝ XVIII, վեցը՝ XIX դդ. գրչություն են, իսկ երկուսն՝ անթվակիր: XVI դ. ձեռագիր ձեռքի տակ չի եղել: Օգտագործված բնագրերից ամենահինը 1652—1655 թթ. գրչություն է, իսկ ամենանորը՝ 1869-ի: Կան XIX դ. նաև այլ անթվակիր ընդօրինակություններ:

Գիտահամեմատական բնագրի համար հիմք է ընդունվել 1660 թ. հետո գրված № 512 (ա) ձեռագիրը: Սա ավելի վստահելի է դառնում զրչի երբեմն-երբեմն կատարած շտկումներով: Այսպես, օրինակ, ընդօրինակելով «որ ի ձև մարդոյ էր» բացատրականը, նա անիմաստ է համարում ուղտապանի՝ այսինքն մարդու մասին տեսել «ի ձև մարդոյ էր» և հանում է տողը, մինչդեռ մյուս գրեթե բոլոր ձեռագրերը պահպանել են այդ: Կամ՝ «Աշխարհիս սահմանն է հանց» սկսվածքով կաֆայի երկրորդ տողում ձեռագիրն ունի՝ «Կու թեթևցնէ զիւր բեռն, որ ով գայ շալկել կարենայ» տրամաբանական ընթերցումը, ի հակադրություն Ը ձեռագրին հետևող ամբողջ շարքի (cŭgijBC) առաջադրածի՝ «Կու թեթևցնէ զիւր բեռն, թէ ով շալկել որ կարենայ»: Սա ուշ դարերում (XVIII—XIX) առաջացած և մեկը մյուսից բխող գաղափարում է:

Թեև որոշ տարբերություններով № 512-ի հետ մի խումբ են կազ-

⁵⁷ Զեռ. № 8724, (ԺԹ), 10107 (1868) ձեռագրերը՝ տարբերություններով հանդերձ համապատասխանում են 1834 թ. Պոլսի հրատարակությանը, № 2939 (1779—1799), 8963 (ԺԹ), 9428 (1846) և 9516 (1831) ձեռագրերը՝ 1731, 1749 թթ. հրատարակություններին:

⁵⁸ 1588 թ. գրված № 150 ձեռագիրը գտնվում է Բրիտանական թանգարանում, տե՛ս «Անահիտ», 1946, № 1, էջ 19:

⁵⁹ Վիեննայի և Պոլսի օրինակները մանրաժապավեն են՝ № 707 (Վիեննա, Մխիթարյան մատենադարան, ձեռ. № 671): № 504 (Կ. Պոլիս, Պալաթի ս. Հրեշտակապետ եկեղեցի, ձեռ. № 30): Ձեռագրի իրավունքով է օգտագործվել նաև Հ. Քյուրտյանի «Անահիտում» հրատարակածը, որ ներկայացնում է իր սեփական հավաքածուում եղած միակ օրինակը՝ 1695 թ. գրչությամբ. տե՛ս «Անահիտ», 1946, № 1, էջ 20:

մում № № 1495 (1674—1684 թթ.), 8605 (1652—1655 թթ.), 671 (անթվակիր, Վիեննա) և 30 (անթվակիր, Պոլիս) ձեռագրերը: Բացի ժամանակագրական առումով ունեցած նախապատվությունից, այս ձեռագրախումբն անտիպ է, հաճախ է առաջադրում նախընտրելի շտկումներ, ունի կաֆաների արձակին համընկնող ավելի ճիշտ ընթերցումներ, համեմատելի է բոլոր ձեռագրերի ու տպագրերի հետ:

Ձեռագրերի ընդհանուր շարքից ավելի հաճախ են շեղվում e, l և m օրինակները, երբեմն յուրաքանչյուրն առանձին-առանձին տալով ընդհանուրից տարբեր ընթերցումներ: b-ն և m-ը միասին ունենում են նաև բոլորից հեռացող բացառիկ այլընթերցումներ: a ձեռագիրը մերթ մոտենում է b, l, m, մերթ e ձեռագրերին: F, K-ն որոշակի կայուն խումբ է, ունի չափածոյի՝ մյուսներից դատվող ամբողջական տողեր: Թե՛ այս երկուսը և թե՛ մնացած ձեռագրերը (cgij) համընկնում են տպագրերի հետ (ABC): Այսպիսով, համեմատական բնագրի համար օգտագործվել է 12 ամբողջական ձեռագիր: Մատենադարանի օրինակներից մեկը պարունակում է Պատմության միայն չափածո հատվածները՝ 7 տուն (ձեռ. № 4285), իսկ մյուսը վրացատառ հայերեն է (ձեռ. № 9265): Վերջինս չի համեմատվել, լինելով 1869 թ. հայերենից կատարված ընդ-օրինակություն, որ համընկնում է տպագրերի A խմբին:

Համեմատական բնագրի համար օգտագործվել են նաև Մատենադարանում ու Երևանի այլ գրադարաններում պահպանված 15 հրատարակությունները՝ տպագրված 1696—1710-ից 1911 թվերի միջև, գերազանցապես Պոլսում:

Փահլուվ թագավորի դրույցն ամենուրեք տպագրված է «Պատմութիւն պղնձէ քաղաքին, որ է օրինակ աշխարհիս» ժողովածուի մեջ, ի թիվս նման այլ երկերի ու ազգային ստեղծագործությունների: Դրանց համադրությունից պարզվում է, որ մի բանիսը վերատպություն են նախորդներից, երբևէ ուղղակի պատճենահանություն տողերի ու էջերի պահպանություն: Մատենադարանում, Երևանի տարբեր գրադարաններում ու թանգարաններում եղած հրատարակությունների համեմատությունը ցույց տվեց, որ Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի 1696—1710 թթ. համարվող հրատարակությունը թերթ առ թերթ և էջակալումով համընկնում է Կ. Պոլսի 1731 թ. հրատարակությանը: Պոլսի 1792 թ. հրատարակությունը նույն սկզբունքներով կատարված արատապություն է 1749 թ. հրատարակությունից: Վերջինիս վերատպություն է նաև 1814 թ. կալվաթայում լույս ընծայված օրինակը: Այստեղ ծանուցվում է, թիւ «Տպագրեալ էր ի թուին Հայոց 1198 ի տպարանի շնչին

Ոհաննէսի, իսկ այժմ վերստին տպագրութեամբ ի լոյս ածաւ արդեամբ և ծախիւր յատուկ օգնական լինողացն մեր Աղնէից» (էջ ա): 1807 թ. լոյս տեսած ժողովածուի նույնպիսի մի վերատպութիւն է նաև 1820 թվականինը: Այս համագամանքը և կատարված համեմատութիւններն օգնում են մասամբ ճշտելու կամ ավելի հավանական դարձնելու անխորագիր պահպանված ժողովածուների հրատարակութեան ժամանակը: Այսպես, օրինակ, Փահլույի Պատմութեան մեղ հայտնի հնագույն հրատարակութիւնը կատարվել է 1708 թ. Կ. Պոլսում, որ ըստ Շաշյանի նույնանում է 1731 թ. տպագրութեան հետ: Վերնագիրն է՝ «Գիրք պատմութեան վասն Պղնձէ քաղաքին և Հարցմունք աղջկանն և մանկանն և Պատմութիւն խիկարայ և Փահլույ թագաւորին» և այլն⁶⁰:

Ինչպես ասացինք վերը, ձեռքի տակ եղած օրինակներից մեկը ևս, որ Մյասնիկյանի անվան զրադարանում պահպանվում է իբրև 1696—1710 թթ. հրատարակութիւն, նույնպես լիովին համընկնում է 1731 թ. Պոլսի տպագրութեանը՝ էջ առ էջ: Եթէ իրոք սրանք տարբեր հրատարակութիւններ են և չկա մի այլ՝ ավելի հին տպագրութիւն, ապա ուրեմն Հանրային զրադարանի հնատիպը նույն 1708 թ. այն հրատարակութիւնն է, որ նշում է Շաշյանը:

Զրույցի հրատարակութիւնները ծագում են ձեռագրական տարբեր հիմքերից: Ըստ այսմ ստացվում են հետևյալ խմբերը.

Ա. Համեմատովող թվակիրներից ամենահները՝ Կ. Պոլսի 1708 և 1731 թվականների հրատարակութիւնները: Սրանց հետ համընկնում են Հանրային զրադարանի 1696—1710 թթ. և 1731 թ. համարվողները, Գրականութեան և արվեստի թանգարանում 21803 համարի տակ պահպանվող անխորագիրը (Գ. Սունդուկյանի ֆոնդ), ընդամենը հինգ օրինակ:

Բ. Կ. Պոլիս, 1749. սրա արտատպութիւնն են, ինչպես ասացինք, 1792 թ. Պոլսի և 1814 թ. Կալկաթայի հրատարակութիւնները: Այս խմբի հետ է համընկնում Պոլսի 1807 թ. հրատարակութիւնը ևս, որից ծագում է վերն արդեն նշված 1820 թ. տպագրութիւնը: Այս խմբին է հարակցում Մատենադարանի 1809 թ. Լեթադրվող անխորագիրը ևս: Ընդամենը վեց օրինակ:

Գ. Տպագրերի երրորդ խումբն սկսվում է 1834 թ. Կ. Պոլսի հրատարակութեամբ, որից ծագում են Տփլիսի 1857 և 1911 թթ. տպագրութիւնները: Այս խմբի մեջ են մտնում ընդամենը երեք հրատարակութիւն:

⁶⁰ Տե՛ս Շ. Շաշյան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, մասն երկրորդ, է—Ժ, Վիեննա, 1901, էջ 5, ձևթ. Ա՝ 1:

Կ. Տպագրական շորրորդ օրինակը. որ լույս է ընծայվել դարձյալ Պոլսում, 1850 թ., իր նախորդներից ու հաջորդներից ոչ մեկի հետ չի համադրվում, սակայն համընկնում է Մատենադարանի № 10107 ձեռագրին, ուստի և նրա հետ մեկտեղ դրվում է մի պայմանական նշանի տակ՝ Կ:

Ք. Վերջին՝ հինգերորդ խմբի մեջ է 1861 թ. Պոլսում կատարված հրատարակությունը, որ տարբերվում է ձեռքի տակ եղած բոլոր ձեռագիր ու տպագիր օրինակներից, ներկայացնում է մի բոլորովին այլ, դրանցից ոչ մեկի հետ բնագրագիտորեն չհամընկնող խմբագրություն: Սա զրույցի ազատ փոխադրություն է:

Ըստ այս ամենի, զրույցը ներկայացվում է երկու խմբագրությամբ. առաջինը՝ գիտահամեմատական քննական բնագրով, որ ներառում է 14 ձեռագիր և 14 տպագիր, երկրորդը՝ 1861 թ. Պոլսի հրատարակությունը միայն:

ԲՆԱԳՐԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵԾՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Այս զրույցները չեն ունեցել «հրատարակություն մը այնքան խընամյալ և ամբողջական, որքան ցանկալի է. մեկ կամ երկու ձեռագրի վրայն եղած են այդ տպագրությունները: Անհրաժեշտ է, որ նոր հրատարակություններ փորձվին՝ բազմաթիվ ձեռագիրներու համեմատությամբ: Մեծ աշխատանք կա կատարելու, ձեռագիրները շատ տարբեր են իրարմե, աղավաղումներ, հավելումներ, ուրիշ քերթվածներն կտորներու խառնուրդներ շատ կան (մանավանդ կաֆաներուն մեջ), պետք է ղտել, բուն բնագիրը վերակազմել», գրել է Արշակ Զոսմանյանը դեռևս 1912 թ.⁶¹:

Հայաստանի Մաշտոցյան մատենադարանում ի մի բերված ձեռագրերն ու մանրաթուղթայինները, ինչպես նաև ձեռքի տակ եղած հրատարակությունները հնարավորություն են տալիս համեմատել «Վասն մանկանն և աղջկանն» զրույցի 35 գրչագիր ու 14 տպագիր օրինակ: Սրա շնորհիվ է, որ երևան են եկել վերը նշված խմբերն ու խմբագրությունները, համեմատելի ու ոչ համեմատելի տարբերակներ, բոլորովին նոր ու անբաղդատելի մշակումներ, բազմաքանակ լեզվաոճական, շարադասական ու շարահյուսական տարբերակներ, այլև բանահյուսական պատումներ:

Զրույցի խմբագրությունների վերհանման ու տպագրության արժեքն ինքնաբերվ չէ, չի սահմանափակվում միմիայն նրա ծագման, անցած ճանապարհին առաջացած փոփոխությունների ու զարգացման ուղիների բացահայտումով. այն օգնում է նաև լրացնելու միջնադարյան ղեղարվեստական արձակի պատմության ուսումնասիրությունն ընդհանրապես և թարգմանական զրականությանը՝ մասնավորապես, հետադրուհելու նրա ակունքների, բնույթի (աշխարհիկ կամ սիրային ոգու), ժանրի հետ կապված մի շարք հարցեր:

Զրույցի խմբագրությունների բացահայտման կարևորությունն անյ-

⁶¹ Ա. Զոսմանյան, Հայ էջեր, էջ ԽԱ:

նում է նաև ազգային նշանակության շրջանակներից. այն կարող է օգնել ճշգրտելու ոչ միայն արևելյան ու հվրոպական դանադան փոփոխականների հետ հայկականի ունեցած առնչությունները, այլև թարգմանածին հուշարձանների միջազգային կապերն ու տարածման ուղիները, թարգմանության վաղեմությունն ու ակունքները (պարսկական կամ արաբական), կարող է օգնել հարստացնելու «Հազար ու մեկ գիշերների» ուսումնասիրության պատմությունը, նրա բաղկացուցիչ տարրերի տարածման ու զուգահեռների առաջացման մասին գոյություն ունեցող հայեցակետերը:

«Վասն մանկանն և աղջկանն» դրույցը հայերենից թարգմանվել է այլ լեզուների: Առաջմ հայտնի են վրացերենը, թուրքերենը, հայատառ թուրքերենը:

Հայկականից ծագող վրացական օրինակի սկզբնաղբյուրը ճշտելու գործում հետադոտողները որոշակի եզրակացության չեն հանդել⁶²: Նրանք արդարացիորեն նկատում են, թե հայկական և վրացական համեմատական բնագրերի առկայության պայմաններում անհամեմատ հեշտ կլինեի լուծել այդ հարցը⁶³: Նշանակում է, թե զրույցի տարբեր խմբագրությունների պատկերը կարող է օգնել օտար զրականությունների պատմության մեջ զանազան ճշգրտումներ կատարելու: Հնարավոր է, որ հայերենից թարգմանված վրացերեն օրինակն ուղղակի ծագի կամ համընկնի բերված հայկական խմբագրություններից որևէ մեկի հետ:

* * *

Սույն աշխատության մեջ առաջին անգամ ներկայացվում են «Վասն մանկանն և աղջկանն» դրույցի շորս անտիպ և մեկ տպագիր այնպիսի խմբագրություններ, որոնք էպոսն տարբերվում են միմյանցից թե՛ զաղափարական բովանդակությամբ ու գեղարվեստական մշակումով և թե՛ կառուցվածքային ու ժանրային առանձնահատկություններով ու ծավալով:

Զրույցը հրատարակության պատրաստելու մեր սկզբունքն է եղել համադրել ձեռքի տակ եղած բոլոր 35 ձեռագրերն ու 14 տպագրերը, յուրաքանչյուր խմբագրության համար ընտրելով հարաբերականորեն հին ու լավ պահպանված մեկ օրինակ:

⁶² Տե՛ս Ա. Խախոն, Очерки по истории грузинской словесности, вып. 3, էջ 162, ծնթ. № 1, Ս. Մյրադյան, Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке, էջ 60—61.

⁶³ Տե՛ս Ս. Մյրադյան, անդ, էջ 64:

Ամենահին խմբագրությունն ընագիրը, որ, ինչպես նշվեց, X դ. թարգմանություն է, ձեռքի տակ չլինելու պատճառով չի տպագրվում: Ի՞նչ ճակատագիր է ունեցել սրա ձեռագիրը 1961 թ. հետո, երբ Ակինյանը նկարագրել է այն, ի թիվս այլ ձեռագրերի⁶⁴, որ գտնվելիս են եղել «Հռոմի հայոց հյուրանոցի ի ս. Վլաս և քահ. Լեոնյան հայ վարժարանի» գրապահոցում, հայտնի չէ: Ձեռագիրը գտնելու և նրա բնագիրն ունենալու մեր բաղմակի փորձերն ապարդյուն անցան:

Երևանի Մաշտոցյան մատենադարանի ձեռագրերում ամենից շատ տարածված է զրույցի համառոտ խմբագրությունը՝ ա խումբ: Ինչպես նշվել է, մեզ հայտնի 35 ձեռագրից 17-ում ընդօրինակված են այս խմբագրությունն ու սրանից ծագող պատումները: Բնագրի ընտրության համար առաջնություն է տրվել առաջմ մեզ հայտնի ամենահին գրչությունն ունեցող № 8968 ձեռագրին (1556 թ.), հետևյալ նկատառումներով.

ա. Ձեռագիրը պահպանում է զրույցի համառոտ, հարաբերակա-
նորեն քիչ փոփոխությունների ենթարկված օրինակ:

բ. Սրա հետ, սկզբի և ավարտի հատվածներում, թեև մեծ տաղ-
ընթերցումներով, բաղդատելի են նաև Ե խմբի մեջ մտնող առաջին և
երկրորդ խմբագրությունների ձեռագրերը:

գ. Ձեռագիրը լավ է պահպանված, գաղափարված է ընտիր օրինա-
կից, գրադեմ ու գրեթե անսխալ ուղղագրությամբ:

դ. Իր ընդօրինակման ժամանակով խմբագրության մեջ եղած ձե-
ռագրերից ամենահինն է: Սա անտիպ խմբագրություն է:

Ե խմբի առաջին խմբագրությանը պատկանող բնագրերի պատկերը
հիմնականում արտացոլվում է երկրորդ խմբագրության մեջ, ուստի այս
խմբագրությունն առանձին չի ներկայացվում: Սա տպագրված է:

Երկրորդ խմբագրությանը պատկանող ձեռագրերը երկուսն են՝
№, № 1682, 6451: Սա կաֆայավոր խմբագրություն է: Ձեռագրերից ա-
ռաջինը, որ համեմատաբար լավ օրինակ է, հիմք է ընդունվել բնագրի
համար: № 6451-ը միջին մասերում թերի է (ձեռագրից թերթեր են ըն-
կած), կաֆաները պակասավոր են և աղավաղված: Չնայած սրան, ըստ
այս օրինակի կարելի է որոշ ուղղումներ մտցնել նաև կաֆաների մեջ,
№ 1682 ձեռագրի այլընթերցումները ցույց տալով տողատակում: Այս
խմբագրությունն անտիպ է:

⁶⁴ Ակինյանին հայտնի են եղել և հետևյալ ձեռագրերը. Վիեննա՝ №№ 976, էջ 209, 977, էջ 55 ա. Վենետիկ՝ № 246, էջ 151 ա, 256, էջ 104 բ. 283, էջ 554 բ. Երուսա-
ղեմ՝ № 726, էջ չիթ, Ջմաթ՝ № 404, էջ 8 ա, Անտոնյանց՝ №№ 77, էջ 236 ա, 92, էջ
53 բ, 110, էջ 1 ա, 125, էջ 198 բ, Հալեպ՝ Բ. 28, էջ 380 և այլն: Տե՛ս «Հանդէս ամ-
սօրեայ», 1958, № 1—4, էջ 27—28:

Երբորդ խմբագրությունը թե՛ ա և թե՛ Ե խմբի ձեռագրերից հեռանում է ոչ միայն Հարցմունքի հատվածով՝ հարց-հանելուկների հավելումով ու հերթափոխությամբ, այլև ավարտով: Այս խմբագրությանը պատկանող ձեռագրերից № 7076-ը թերի է: Մյուս երկուսից առաջնություն է տրվել № 8724-ին, որպես լավ պահպանված ընդօրինակություն: Սա տպագրված խմբագրություն է:

Անտիպ են Ե և Վ խմբին պատկանող երկու տարբեր խմբագրություններ: Սրանցից առաջիմ հայտնի են միայն մեկական ձեռագրեր. № 671 (Վիեննայի Մխիթարյան մատենադարան) և № 33 (Երևանի Մաշտոցյան մատենադարան), որոնք և ներկայացվում են առանձին-առանձին: Մաշտոցյան մատենադարանի № 1682 ձեռագրում հղած կա-ֆաների հիման վրա որոշ ուղղումներ են կատարվում Վիեննայի № 671-ի համապատասխան հատվածներում և այլընթերցումները ցույց տրվում տողատակ: № 33 ձեռագրի բնագրում ուղղումները կատարվել են ըստ Ա. Մնացականյանի «Միջնադարյան հանելուկներ» տպագրվող ժողովածուի*:

* * *

«Պատմութիւն յաղագս Փահլու թագավորին» զրույցի գիտահամեմատական բնագիրը քննական է: Շտկումներ են կատարվում բոլոր ձեռագրերի ու տպագրերի օգտագործումով, եթե հիմք ընդունված օրինակի մեջ կան սխալներ, աղավաղումներ, թերի տեղեր: Այլ զեպերում բնագրի արձակ հատվածները էական միջամտություն չեն պահանջում և գրեթե մնում են անփոփոխ: Պահպանվում է գրչի շարագրանքը, լեզուն, ուղղագրությունը: Թեև ձեռագրերի մի ամբողջ՝ գրեթե կայուն խումբ երբեմն ունենում է ձ ձեռագրից շեղվող ընթերցումներ, սակայն գերադասվել է պահպանել հիմք ընդունված տարբերակը, նկատի ունենալով մի շարք զեպերում նրա պահպանած ավելի ճիշտ և դյուրահաս ըմբռնումները: Անճշտություններ առանձնապես նկատելի են զրույցի չափածո հատվածներում, որոնք ենթարկվել են որոշ փոփոխությունների ու աղավաղումների, թերևս բանավոր տարածման հետևանքով: Ուստի քննական մոտեցում է ցուցաբերվել հատկապես կաֆաների գիտահամեմատական բնագիրը կազմելիս: Դրանցից շատերի մեջ կա՝ բառերի կամ տողերի բացթողումներ, նախադասարից եկող բացակայումներ, ինչպես նաև իմաստային աղավաղումներ: Ուղղումներ են կատարվել բոլոր ձեռագրերն ու տպագրերը նկատի առնելով. ըստ այդմ

* Մինչ սույն աշխատության լույսընծայումը, ժողովածուն հրապարակ եկավ «Հայ միջնադարյան հանելուկներ» վերտառությամբ, Երևան, 1980:

Հիմք ընդունված օրինակի տողեր կամ հատվածներ երբեմն փոխարինվել են մյուս ձեռագրերի առաջադրած ընթերցումներով: Այսպես՝ ա ձեռագիրը «Թէ շատ և թէ քիչ զրկես» սկսվածքով քառյակի համար երրորդ տողում ունի «Որ հոս տայ նայ ի յայն կեանքն առնու» թերի ընթերցումը: Ըստ իր խմբին պատկանող մյուս ձեռագրերի սա ուղղվում է հետևյալ կերպ. «Որ ի հոս տայ՝ հոն առնու, ստեղծօղէն սլարգն գտանէ»: Ձեռագրերի մյուս խմբերը թե՛ այս, և թե՛ հաջորդ՝ չորրորդ տողի համար առաջադրում են տարբեր ընթերցումներ, որ տրվում են տողատակ:

Որոշ կաֆաներ մի քանի ձեռագրերում բաղկացած են վեց տողից՝ նկատի ունենալով կաֆաների հիմնական առանձնահատկությունները, որոնք 15—16 վանկանի մի հատածով հայրեն քառատողեր են, ինչպես նաև բուն զրույցում եղած կաֆաների գերազանցորեն քառյակ լինելը, համեմատական բնագրում պահպանել ենք ընդհանրությունը և սամենուր վերակազմել ու պահպանել քառատող կաֆաներ (միայն չորսական տողերով), որով չի աղավաղվել բովանդակությունն ու նրանց հիմնական իմաստը՝ զրույցի կառուցվածքային սկզբունքը:

Բնագրային և գրչության տարբերությունները հատկապես շատ էն կաֆաներում, ուստի սրանք ներկայացվել են բոլոր տարբերություններով: № 10107 ձեռագրի և նրա հետ ուղղակի համընկնող Կ. Պոլսի 1850 թ. հրատարակության համար պահպանվել է մեկ պայմանական նշան՝ Կ:

Համեմատական բնագրից ամբողջությամբ հեռացող Կ. Պոլսի 1861 թ. հրատարակության բնագիրը դրվել է որպես առանձին՝ անհամեմատելի խմբագրություն: Սրա ձեռագիր հիմքն օգտագործված օրինակների մեջ չի պահպանվել:

Համեմատաբար հին ձեռագրերն ունեն «Վարք և ճգնութիւն Փահլուլ թաղաւորին» վերնագիրը՝ ձեռ. №№ 150, 1588 թ., էջ 159 Բ, 108, 1660 թ. առաջ, էջ 120 Բ (Բրիտանական թանգարան)⁶⁵, 8605, 1652—1655 թթ., էջ 125 Բ (Մաշտոցյան մատենադարան), թերևս նաև «Վարք և պատմութիւն Փահլուլ թաղաւորին...», ձեռ. № 671, անթվակիր, էջ 135 Բ (Վիեննայի Մխիթարյան մատենադարան): Այս օրինակներն են, ինչպես նաև XVII դարից հայտնի ձեռագրերը (№№ 512, 1660 թ. հետո, էջ 270 ա, 1495, 1674—1684 թթ., էջ 100 ա, Քյուրտյանի Հավաքածո, 1695 թ. և № 30,

⁶⁵ Տե՛ս «Անահիտ», 1946, № 1, էջ 19:

անթվակիր, Կ. Պոլիս, Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցու դրասպանոց), որ ունեն փաշուլ անվան կամ միայն Պաշուլ դրուվյունը (№ 512 և 1495) կամ խառը՝ Պաշուլ, Փաշուլ, Պէշուլ, Փէշուլ: XVII դ. երկրորդ կեսից սկսած երևան է գալիս միայն Փաշուլ ձևը⁶⁰: Գերագույնի է պահպանել անվան, ինչպես և վերնագրի ավելի տարածված դրուվյունը՝ «Պատմութիւն յաղագս Փաշուլ թագաւորին»:

* * *

Բնագրերում բացվել են ձևագրերում եղած բոլոր սղումներն ու գաղափարանշանները:

Օտար բառերը, եթէ նույնիսկ այլ օրինակներում եղել են դրանց հայերեն համադրոները, չեն փոխարինվել դրանցով (ղիպն, մսքնութիւն և այլն):

Բնագրերը տողատվել են ըստ ժամանակակից քերականական կանոնների ու կետագրութան:

Բնագրի արձակ հատվածներում ուղղումներ են կատարվել ըստ մյուս ձևագրերի միայն բացթողումների, միտքը թերի կամ աղճատ լինելու և տառասխալների դեպքում. ինչն՝ փխ. ինքն, հաց՝ փխ. հանց, ցայք՝ փխ. ցայդ, խնեց՝ փխ. խմեց, գտրինճն՝ փխ. կտրինճն և այլն:

Համեմատվող բոլոր բնագրերի տարբերությունները դրվել են առանձին՝ վերջում, Տարբերությունների վերնագրի տակ՝ տվյալ ձևագրի պայմանական նշանով: Նույնությամբ պահպանվել է տվյալ ձևագրի գրությունը, եթէ նույնիսկ սխալ է:

Մի քանի ձևագրերի մեջ համընկնող տարբերությունները դրվել են մեկտեղ՝ տվյալ ձևագրերի պայմանական նիշերի ցուցումով: Փակագծերում են այն տառերը, որ նշված ոչ բոլոր ձևագրերում կան: Օր. befgijknABC-(ի) (յ) էշս իմ. այս նշանակում է, թէ ձևագրերից մի մասում գրված է «ի յէշս իմ», մյուսում՝ «ի էշս իմ», և երրորդ խմբում՝ «յէշս իմ»:

Ընդարձակ տարբերությունները բերվել են միանգամից՝ մեկ կամ մի քանի տողով, փակագծում նշվել են տողերը (17—18, 24—26 և այլն):

Միայն մեկ ձևագրով հայտնի բնագրերը, չնչին բացառությամբ, գրվել են այնպես, ինչպես կան, առանց ուղղումների, եթէ նույնիսկ կան

⁶⁰ باهلول (bahlu) — ծաղրաժու, խեղատակ, զվարճախոս, տե՛ս Арабско-русский словарь, сост. Х. К. Баранов, Изд. 3-е, М., 1962, ձ. Անադյան, Հայոց անձանանունների բառարան, հատ. Ա, Եր., 1942, էջ 371:

սխալներ կամ ուղղագրութիւնը միասնական չէ: Բացառութիւն են կազմում շափածո հատվածները, որոնք ճշտվել են միայն աղավաղումների դեպքում, եթե եղել են նրանց համադրոներն ակ ձեռագրերում: Տվյալ բնագրի պատկերը ցույց է տրվել Տարբերակներում:

Առ, ի, ընդ և ակ նախդիրներ համարվել են առանձին բառային միավորներ և համեմատութեան մեջ դրվել ըստ ակում:

Միևնույն խմբագրութեանը պատկանող տպագրերի համար ընդունվել է մեկ պայմանական նշան:

Ձեռագրերի հետ ուղղակիորեն համընկնող որոշ հրատարակութիւնների համար պահպանվել է տվյալ ձեռագրի պայմանական նշանը:

Հիմք ընդունված բնագրերի վերնագրերը դրվել են ըստ տվյալ ձեռագրերի, մյուսները ցույց են տրվել ծանոթագրութիւնների մեջ:

Ձեն նշվել զրոյութեան հետևյալ տարբերակները.

աւ-օ—առաւօտ=առօտ, անցաւոր=անցօր, շարաւ=շարօ:

Օ-աւ—օտար=աւտար, խօսել=խաւսել:

Օ-ո—հօր=հոր, խօսեցայց=խոսեցայց, հոռոմք=հօռոմք:

Եաւ-հօ-եո-եաւթ=եօթ=եոթ:

Բ-պ—բաղնիք=պաղնիք, ըմբել=ըմպել:

Գ-ք—թարգման=թարգման, հազաւ=հաքաւ:

Դ-թ—ղերգ=ղերթ, մարգ=մարթ:

Դ-տ—խղճուղ=խղճուտ, ընդիր=ընտիր, անդ=անտ, Էդ=ետ:

Տ-թ—թախտ=թախթ:

Ե-է—սեկէ=սէկէ, Կայեն=Կայէն, ոսկեկար=ոսկէկար, տարէն=տարեն:

Ղ-խ—թուղթ=թուխտ, խաղաղութիւն=խախտութիւն:

Յ-հ—յաղթէ=հաղթէ, յայի=հայի:

Ջ-չ—աղջիկ=ախշիկ, իջեան=իշեան, մրջիմ=մրշիմ:

Ջ-ճ—խարջի=խարճի, ասպնջական=ասպնճական:

Վ-ոււ—լուացվեցաւ=լվացվեցաւ, տուին=տվին=տւին:

Ու-ի և Ե-ի տարբերակները:

ը նայնավորը

Հայցական հոլովից առաջ—զամօթ=ըզամօթ, զմեր=ըզմեր:

Բայասկզբում—սպանեց=ըսպանեց:

Բառամիջում—ճրճի=ճճի, խարճիւ=խարճլիւ:

յ կիսաձայնը

Բառավերջում—ապայ, հապայ, նայ, վրայ, քոյ, նայ:

Սեռական հոլովի վերջում—Աբէլա=Աբէլայ:

Բայական երրորդ գեմքի վերջում—ուրախանայ=ուրախանա, խընդայ=խնդա:

Հրամայական եղանակի վերջում—գնա=գնայ, խաւսեա=խաւսեայ:

Բառամիջում—անուշայհոտեցաւ=անուշահոտեցաւ, միայբան=միաբան:

«Պատմութիւն յաղագս Փահլուլ թագաւորին» գրույցի տարբեր-
ցումներում չեն նշվել իմաստային և ոճական փոփոխություններ չա-
ռաջացնող նաև հետևյալ շեղումները.

Բայի ժամանակային տարբերություններ՝ է—էր, ասէր—ասաց:

զ նախդիրի բացակայությունը՝ զիւր—իւր:

և որոշիչ հոգի բացակայությունը, եթե չի փոխարինում գոյական-
նին (խումար մարդ=խումարն)—անունն—անուն:

ս գիմորոշ հոգի բացակայությունը՝ անձինս—անձին:

Հոգնակի հայցական հոլովի ս մասնիկի բացակայությունը կամ
հավելումը՝ հնարք—հնարս—հնար:

և-ի և ու-ի տարբերությունները:

Գրչության պատկերն ու տարբերացումների տեսակներն ավելի
մանրամասն նշվել են ձեռագրերի նկարագրությունների մեջ:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՄԱՆԿԱՆՆ ՆՎ ԱՂԶԿԱՆՆ»

Ձ ե ո ա գ ր ե ր

սլայմանու- կան նշան	ձ ե ո . № №	տարեթիվ կամ դար	էջ	ծանոթագրութիւններ
a	8968	1556	222բ	
b	6686	1582	250ա	
c	5985	ԺԶ	130ա	
d	697	1631	3ա	
e	1682	ԺԷ	5բ	
ē	6451	1708	178ա	
f	2168	ԺԷ	71բ	
g	33	ԺԶ	174բ	
h	3081	1617	214բ	
i	6092	ԺԷ	1ա	
j	7027	1760	72ա	
k	7047	1683	96բ	
l	7076	ԺԹ	30ա	
m	7709	1608—1620	209բ	
n	7723	ԺԸ	78ա	
o	8076	ԺԷ	43բ	
p	8443	1687	23ա	
q	8456	ԺԷ	309ա	
r	8483	ԺԷ	124ա	
s	8708	ԺԷ	48ա	
t	8963	ԺԹ	70ա	
t'	8724	ԺԹ	25ա	
u	9428	1864	62բ	
u'	9124	1644	9ա	
v	9516	1831	15ա	
w	10166	1840	27բ	
w'	10107	1869	51ա	
x	10333	ԺԷ	27ա	
x'	7227	1603*	67ա	
y	3237	ԺԷ	69ա	
y'	5969	ԺԷ	220ա	
z	7050	1646	26ա	
z'	9265	1869	66ա	
S	30	—	—	

Կ. Պոլիս, Պալաթի ս. Հրեշ-
տակապետ Եկեղեցի, Մաշ-
տոցյան մատենադարանի
մանրամուկեն №504, էջա-
կալած չէ:

Տ ւ չ ա գ ր ե ր

սլալմանա- կան նշան	հրատարակու- թյան տեղ	հրատարա- կության թիվ	էջ	ծանոթագրութիւն
A	Կ. Պօլիս	1696—1710*	49	Առանց տիտղոսաթերթի
—>—	—>—	1731	57	—>—
—>—	—>—	1749	133	
—>—	—>—	1792	135	
—>—	—>—	1807	106	
—>—	—>—	1809*	181	Առանց տիտղոսաթերթի
—>—	Կալկաթայ	1811	86	
—>—	Կ. Պօլիս	1820	106	
—>—	անհայտ	անհայտ	55	Առանց տիտղոսաթերթի
t', w'	Կ. Պօլիս	1831	105	
—>—	—>—	1850	102	
—>—	Տփլիս	1857	114	
—>—	Թիֆլիս	1911	128	
P	Կ. Պօլիս	1861	106	

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՓԱՀՆՈՒԼ ԹՍԳԱՆՈՐԻՆ»

Ձ ե ո ա գ ր ե ր

սլալմա- նական նշան	ձեռ. № №	տարեթիվ կամ դար	էջ	ծանոթագրութիւններ
a	512	1660-ից հետո	270ա	
b	1193	1674—1684	4ա	
c	2939	1779—1799	529ա	
d	4285	ԺԼ	94բ	
e	8605	1652—1655	125բ	
f	8724	ԺԹ	106ա	
g	8963	ԺԹ	30ա	
h	9263	1860	30ա	
i	9128	1846	77ա	
j	9516	1831	12բ	
k	10107	1868	24ա	
l	671	1668-ից աւաջ	135բ	Վլեննաւ Մաշտոցյան մատե- նագրանի մանրամասնական № 707
m	30	—	—	Կ. Պոլիս, Պալաթի ս. Հրեշտա- կապետ Եկեղեցի Մաշտոցյան մատենագրանի մանրամասնական № 504, էջա- կալած չէ:
n	—	1693	—	Հ. Քյուրտյանի հավաքածո (ԱՄԵՅ), էջակալած չէ: Տե՛ս «Անահիտ», 1946, № 1, էջ 20: Օղտագործված է ձեռագրի իրա- վունքով:

Տ ւ յ ա գ ր ե ր

պատմական նշան	հրատարակ- ված թվա- նակ	հրատարակ- ված թվա- թիվ	էջ	ծանոթագրություններ
A	Կ. Պոլիս	1708	"	Հստ չ. Տաշյանի
—>—	"	1696—1710*	135	Առանց տիտղոսաթերթի, Հանրային գրադարան, հետախույզ, № 1084
—>—	Կ. Պոլիս	1731	135	
—>—	"	1731*	160	—>— —>— —>— —>— № 3081
—>—	"	1731*	154	Առանց տիտղոսաթերթի, Գրականու- թյան և արվեստի թանգարան, Սուր- դուկյանի ֆոնդ, № 21803
B	Կ. Պոլիս	1740	61	
—>—	—>—	1702	61	
—>—	—>—	1807	48	
—>—	"	1808*	82	Առանց տիտղոսաթերթի, Մատենա-
—>—	Հայկաթա	1814	38	դարան
—>—	Կ. Պոլիս	1820	48	
C	—>—	1834	49	
—>—	Տփլիս	1857	52	
—>—	Թիֆլիս	1911	57	
κ	Կ. Պոլիս	1850	47	
ρ	—>—	1861	51	

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՄԱՆԿԱՆՆ
ԵՒ ԱՂԶԿԱՆՆ**

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՄԱՆԿԱՆՆ ԵՒ ԱՂԶԱՆՆ ՎԱՍՆ
ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ*

Այր մի էր իշխան ի քաղաքի մի և ունէր անշափ գանձ, որ շկալը
յայն աշխարհն քան զնա մեծատուն: Ինքն ծերացեալ էր և դաւակ
ոչ ունէր. հանապաղ աղաշէր զաստուած վասն դաւակի: Եւ աս-
տուած ետ նմա որդի աննման և գեղեցիկ: Երբ մեծացաւ, ետ հայրն
5 զնա յուսումն իմաստասիրութեան: Եւ ուսաւ զամենայն իմաստա-
սիրական գիրս, և եղև աստեղագէտ յոյժ և պատերազմող անյաղթ:
Բայց յետոյ յուտել և ի խմել անկաւ և հատոյց զգանձն հօրն: Հայրն
և մայրն մնացին դատարկ: Զտունն և զհայրենիքն ծախեց և կերաւ
և խմեց, որ բնաւ չի մնաց ալ ինչ: Ասաց որդին հօրն և մօրն, թէ՝
10 «կամի՞ր որ հեռանամք յայս երկրէս և երթամք հանց երկիր, որ
ոչ ճանաչեն զմեզ, և զղիպն ի յետ զնեմք, մուրամք և ապրիմք:
Ոչ մեք տրտմիմք և ոչ մեր թշնամին ուրախանայ ի վերայ մեզ»:
Ասացին ծնօղքն, թէ՝ «Դու գիտես, որդեակ»:

էառ կտրիճն զհայրն ու զմայրն և զնացին ի Հոռոմք, և հա-
15 սան ի քաղաք մի: Եւ կայր ի քաղաքին յայնմիկ թագաւոր մի
բարի և իմաստուն: Մտան ի քաղաքն և իջան ի տուն մի: Եւ այն
թագաւորն յորս էր ելեալ: Եկեալ թագաւորն, և եմուտ մանուկն առ
թագաւորն և կանգնեցաւ՝ ծունր էած թագաւորին: Եւ սկսաւ խօսել
թագաւորն ընդ մանկանն, և մանուկն պատասխան տայր թագաւո-
20 րին: Եւ թագաւորն հաւանեցաւ մանկանն, և ասաց թագաւորն.

— Զինչ խնդրես յինչն՝ պարգևեմ քեզ:

Ասէ մանուկն թագաւորին, թէ՝ «Ունիմ երկու ծառայ ծախու-
այր և կին»:
Ասէ թագաւորն.

— Բե՛ր ես գնեմ:

25 Գնաց մանուկն առ հայրն և մայրն: Ասէ մանուկն ի ծնօղան
իւր, թէ՝ «Ինչ պատեհ է ինձ, կամիմ հանց բան առնել, որ դուք
այլ ապրիք և ես ալ»:

* a խումբ, մեկ խմբագրութիւն, անտիպ.

Ասացին ծնողքն.

— Դու գիտես, որդեակ:

30

Ասաւ տա՛յ մանուկն, թէ՛ «կամիմ ծախել զձեզ այս թագաւորիս, որ հասնիք բարութեան, և ձեր գնովն ինձ բարի լինի, և ևս չանամ շուտով աղատել զձեզ: Դուք ի՞նչ կու հրամայէք»:

Ասացին ծնողքն.

— Որդեակ, դու գիտես:

35

էառ մանուկն զհայրն և զմայրն և զնաց առ թագաւորն: Ասէ թագաւորն ցմանուկն.

— Քանի՞ ծախես:

Ասէ մանուկն.

40

— Ըստ արժանեացն: Ի կին մարդուն գինն ձի մի՛ իւր սուրօքն, և էրէկմարդուն գինն՝ ընտիր զգեստ և զէն:

Հրամայեաց թագաւորն, և տվին զսր ինչ խնդրեաց, և թուր մի՝ ոսկի գօտով:

Եւ էառ մանուկն, զոր պարդեաց նմա թագաւորն: Ասէ թագաւորն.

45

— Այլ ի՞նչ խնդրես:

Ասէ մանուկն.

— Հարիւր զեկան խարճի:

Հրամայեաց թագաւորն, և տվին: Ասէ թագաւորն.

— Այլ ի՞նչ ուզես:

50

Ասէ մանուկն.

— Հրաման տուր ինձ, որ խօսիմ ընդ քո ծառայքդ, որ գնեցեր յինչն, և վաղօթս առնում իւրեանց:

Հրամայեաց թագաւորն.

55

— Գնա՞ և խօսեալ: — Իմացաւ թագաւորն, որ իւր ծնողքն են: Գնաց մանուկն և անկաւ յոտս ծնողացն և տա՛յ.

— Մի՞ հօգայր: Բէ՛ կամի աստուած, շուտով թափեմ զձեզ:

Եւ ծնողքն օրհնեցին զզաւակս իւրեանց:

60

Եւ մանուկն յիշեաց զաստուած, զնաց երեք տիւ և երեք զիշեր ի մեծ դաշտ մի, և ի զնալն հանդիպեցաւ ընդ իր մանուկ մի: Բարեկեցին զմիմեանս և ընկերացան: Երբ լսեց մանուկն զմիւս մօնկան խօսքն, որ զհայրն և զմայրն ծախել էր, ասաց մանուկն ընդ միւս մօնկանն, թէ՛ «Գիտե՞նաս, որ թագաւորն զիս խիստ կու սիրէր, և թուխտ աւետեաց երես, որ տանիմ առ կղզեաց թագաւորն: Առ զթխտերս, դու տար: Նա շատ ինչք կու պարգե՛լ քեզ, զի դու

65 խելօք մարդ ես և լաւ ձիաւոր, քան զիս: Զոր աստուած տայ՝ ինձ և քեզ լինի: Ես մնամ քեզ յայս դաշտիս, մինչ դու գաս առ իս»:

էառ մանուկն զթխտերն՝ ի սեկէ քէսան եղիբ և գնաց ի դաշտ մի: Յիշեաց զհայրն և զմայրն և շատ ելաց, և ննջեաց ի վերայ ձիուն: Եւ ձին ելաւ ի ճանապարհէն և կորուս զճանապարհն: Եւ էր ծարաւաւ ինքն և ձին, և ջուր ոչ կայր: Մոլոր ի շուրջ դայր, և գտաւ ջրհոր մի հին ժամանակաց և ի ծարաւուն կամէր ի ջրհորն անկանիլ: Ապա եհան զսեկէ քսակն, որ թխտերն ի մէջն էր, և կապեաց զպարանն և եհան ջուր. և խմեց ինքն և ձին իւր և պահ մի հանգեաւ: Եւ ապա ասաց ի միտս իւր, թէ՝ «Կարդամ զայս թիւտերս»:

75 Եւ սկսեաւ կարդալ: Եւ էր այսպէս գրած.
«Այս անուն կղզեաց թագաւոր, ողջոյն սիրոյ: Գիտացիր, եղբայր, որ այս թխտաբերդ անհաւատ մարդ է և մեր նենգաւոր: Դա մեծ էր առ մեզ և մեր ամենայն գանձի հոգացող: Նա ելաւ առ դուստրլն իմ վնաս դործեաց, և ես կամեցայ զինքդ կորուսանել և պատրաստեցայ, որ մարդ չիմանայ զմեր խաղբութիւնս. առաքեցի առ ձեզ, որ կորուսանես զինքդ, թէ զմեր սէրս կուգես»:

80 Կարդաց և իմացաւ մանուկն, որ յիւր վերայ գալոց էր մահն: Պատառեց զթխտերն և գոհացաւ զաստուծոյ, և զիւր ծնօղքն օրհնեաց, որ զինքն ուսումնադէտ արարին և իւր գիտութեամբն ապրեցաւ: Եւ աղաչէր զաստուած, որ ճանապարհ գտանէր: Զտիւ և զգիշեր ի զնացման եկաց մոլոր, և հարցանէր զանուն թագաւորին և զայն քաղաքն, որ զնալոց էր. եգիտ և մտաւ ի քաղաքն:

85 Եւ էր քաղաքն մեծ և բարելի: Եւ իջեանեցաւ մանուկն ի պառաւի մի տուն, հանդեաւ սակաւիկ մի, և սկսաւ հարցանել և քննել զքաղաքն և զքաղքի գնացքն և զթագաւորն: Եւ պառաւն ասաց զամէնն ի լման, թէ՝ «Դուստր ունի թագաւորն խիստ գեղեցիկ և զարմանալի իմաստուն, որ չկա իւր նման: Որչափ ի տարիք հասել է, իննսունինը թագաւորի որդի սպանել է»: Ասէ մանուկն.

— Ի՞նչ պատճառի է սպանել:

95 Ասէ պառաւն.

— Որդեակ, կասէ թէ՝ «Ուլ զիս յաղթէ իմաստութեամբ, ես զնա առնում ինձ այր, ուլ չկարէ յաղթել՝ զղուլին առնում»,— և այդ պատճառով յաղթէ զթագաւորաց որդիքն և սպանէ: Եւ իւր զուպպան կու հայի ի վերայ ամենայն քաղաքիս: Եւ ունի ոսկի թախտ՝ ակամբ և մարդարտով շարած. և անդ կու նստի և հայի ընդ մարդիկ ի մուշապախն ի վայր. մարդ զինքն չի կարել տեսանել: Եւ

ունի պառաւ մի թարգման, որ նա խօսի ի հետ մարդոյ, որ առ ինքն մտանէն:

105 Կսեց զայն խօսքն մանուկն ի պառաւէն և գիշերն ի քուն չեղաւ: Երբ լուսացաւ, գնաց ի բաղնիք և հագաւ զիւր հանդերձն, և անուշահոտեցաւ վարդէջրով և մշկով, և գնաց թաղաւորին զըստերն ի դուռն և ուղեց հրաման, և մտաւ առ թագուհին:

Եւ մարդիկն, որ ի դուռն էին, խրատ տվին նմա, թէ՛ «Պատրաստ կացիր, զի շատ թագաւորի որդոյ զլուխ առել է»:

110 Եւ մտաւ մանուկն, և բարև երեստ: Դրին աթոռ և նստաւ մանուկն: Դիտաց աղջիկն, որ վասն այն բանին էր եկել առ ինքն: Ղրկեց հօրն և նայիպնուն և իշխանացն խնդիր: Ժողովեցան միաբան: Ասաց աղջիկն ընդ իւր թարգմանն՝ ընդ մանկանն թէ՛ «Ուղեհ» որ տամ քեզ յայն կթխայէն, որ քո ընկերտացդ տվի»:

115 Ասաց մանուկն, թէ՛ «Աստուծոյ կամքն լինի»:

Ասաց աղջիկն ընդ հայրն և ընդ նայիպնին և ընդ իշխանսն, որ վկայ լինին բանին. թէ մանուկն յաղթէ՝ առնէ զթագաւորին դուստրն իւր ի կնութիւն, և թէ դուստր թագաւորին յաղթէ, դմանուկն առնէ որպէս զայլոցն:

120 Հաւանեցաւ մանուկն, և ամենեքեան վկայ կացին:

Ասէ աղջիկն.

— Յո՞ր տանուտէր է քո ծնունդն:

Ասէ մանուկն.

— Խոյն է:

125 Ասէ աղջիկն.

— Ո՞վ է քո հայրն:

Ասէ մանուկն.

— Օդն, ամպն և ամէրեն:

Ասէ աղջիկն.

130 — Ո՞վ է քո դայեկն:

Ասէ մանուկն.

— Այն է իմ դայեկն, որ նա զիս կու տեսնու և ես զինքն չեմ կարել տեսնուլ. նա զիմ ձայնն կու լսէ, և ես զնորա ձայնն չեմ լսել:

135 Ասէ աղջիկն.

— Այդ տղայոց զրուց է, թող վայդ:

Ասէ աղջիկն.

— Ո՞րն է առաջին արիւնն, որ անկաւ յերկիր:

- Ասէ մանուկն.
- 140 — Աբէլ էր, որ Կայէն հստան:
Ասէ աղջիկն.
— Ո՞րն է այն երեք իրքն, որ կերան և խմեցին և մեռան, և
չէր ծնեալ զիւրեանք մարդ:
- Ասէ մանուկն.
- 145 — Ադամ և Եվայ, և դառն Աբրահամու, և մէկ այն հաւն, որ
Քրիստոս արար զինքն:
Ասէ աղջիկն.
— Ո՞վ է այն, որ զինքն ի բերան դրին և նա չէր Ադամայ որ-
դի, ոչ քաջ և ոչ հրեշտակ:
- 150 Ասէ մանուկն.
— Գայլն Յովսէփայ, որ ի բերան դրին, թէ «Կերաւ զՅովսէփ»:
Ասէ աղջիկն.
— Ո՞րն է, որ քանի աստուած զաշխարհս արար, արեւ ի վե-
րայ չէր ծագել. մէկ օր անցել և այլ ոչ ծագէ:
- 155 Ասէ մանուկն.
— Ծովուն յատակն է, որ Մովսէս պատառեաց աստուծոյ
հրամանաւն:
Ասէ աղջիկն. —
— Ո՞վ է այն, որ կերաւ և խմեց ի կենդանութիւն, երբ մե-
160 ռաւ՝ կերակուր կերաւ:
Ասէ մանուկն.
— Այն Մովսէսի գաւաղանն էր, որ խմեց ջուր յանձրեոյ և ի
հիւթոյ հողոյ. երբ կտրեցաւ ի ծառէն՝ նա կտրեց զծովն և կերաւ:
Ասէ աղջիկն.
165 — Զի՞նչ է այն, որ խրատ ետ ժողովրդեանն, ոչ քաջ էր և ոչ
հրեշտակ և ոչ Ադամայ որդի, և խօսեցաւ զերգ մարդ:
Ասէ մանուկն.
— Մըջիմն է, որ աստուած յիշեաց զինքն ի դիրն և ասաց.
«Գնացէք ի ձեր դադարքն, Սողոմոն ժողովրդ է արել, որ ի յոտք
170 շերթայք»:
Աղջիկն վախեց յիւր միտքն: Ասէ աղջիկն.
— Ո՞վ է այն, որ կու կովի լսելով և զարնէ իւրով, և շունի ձեռք
և ոտք. երբ ի ջուրն մտանէ՝ ապրի, երբ ելանէ՝ մեռանի:
Ասէ մանուկն.
175 — Զուկն է:

Ասէ աղջիկն.

— Ո՞վ է այն, որ դադարեցաւ ի տապանն զերդ մեռեալ, և եղև ի կենդանութիւն դարան կենդանեաց, և յետոյ Գաբրիէլ հրեշտակն ողջացոյց զնա:

180 Ասէ մանուկն.

— Ընն Յոբ երանելին էր, որ ապրեցաւ զերդ մեռեալ և եղև կերակուր որդանց, և յետոյ աստուած ողջացոյց:

Ասէ աղջիկն.

185 — Ո՞վ է այն, որ շատ ապրին և քանի դահնան՝ մեծնան:

Ասէ մանուկն.

— Զկա մեծ իրքմն, քան զծուկն ի ծովն և զօձն ի ցամաքն:

Ասէ աղջիկն.

— Ի՞նչ է, որ չէ իրք՝ և լինի իրք ու զմարդն հարստցնէ և աղքատցնէ:

190 Ասէ մանուկն.

— Ապիրշումի ճիճուն է:

Ասէ աղջիկն.

— Ո՞ր էլշի առաքեաց աստուած, ոչ մարդ էր և ոչ հրեշտակ և ոչ քաջ:

195 Ասէ մանուկն.

— Գալլագոաւն էր, որ եկաւ առ Ադամ: Երբ Կայէն զԱբէլ հսպան, ոչ գիտէր, թէ զինչ առնէր. եկին երկու աղուս՝ մէկն զմէկն հսպան և թաղեաց: Ադամ ուսաւ և փորեաց զգետինն և թաղեաց զԱբէլ:

200 Ասէ աղջիկն.

— Ո՞վ է այն, որ վաղվնէն ցանեց զիր ցանն և յամէն ժամ երթալը յերևան և ասէր. «Մեծացիր զինչ տարենմն ցան»: Նորա հրամանաւն եղաւ ի տասներկու պահն զինչ տարենմն ցան, և մէկալլ օրն արար տանուտէրն զինչ իւրն սլիտէր:

205 Ասէ մանուկն.

— Այդ այն ծառն է, որ Նոյ տնկեաց աչի կիպարի: Զհունդն աստուած առաքեաց, և ասէ Գաբրիէլ, թէ՝ «Յանէ, լինի ծառ, կտրէ և տապան շինէ և մուտ ի ներս»: Եւ արար նա այնպէս, ապրեցաւ, և կենդանիքն ամենեքեան:

210 Ասէ աղջիկն.

— Ո՞վ է այն, որ մեռան և կային ընդ մահ և ընդ կեանք երեք-հարիւր տարի:

Ասէ մանուկն.

215 — Եփեսոսի մանկունքն էն, որ մեռան և յետ երեքհարիւր տարոյ յարեան:

Ասաց աղջիկն յիւր միտն, թէ՛ «Դա զիս կու յաղթէ»: Ասէ աղջիկն.

— Ո՞րն է այն արիւնն, որ հալալ է ուտելոյ և մեռելոտին: Ասէ մանուկն.

220 — Զուկն և մորեխն:

Ասէ աղջիկն.

— Ո՞վ են, որ երբ ի քաղաքն մտան հօթանասունչորս էին, և երբ ելան՝ վեցհարիւր հազար:

Ասէ մանուկն.

225 — Յակոբ նահապետին որդիքն էին:

Ասէ աղջիկն.

— Արի-գնա հանգիր. այսօր ղերծար յինէն, յեզուցն հասցնեմ զքեզ քո ընկերացն:

Ասէ մանուկն.

230 — Այն աստուածն, որ այսօր փրկեաց, կարող է որ վաղն այլ փրկէ:

Մանուկն զնաց յիւր իջեանն: Եւ ամէնքն զարմացան զնորա ապրիլն, զի անկից այլ մարդ չէր ղերծել: Բարով գնաց ի պառաւին տունն: Եւ պառան լայր դառնապէս, և երբ տեսաւ, ասէ.

235 — Որդեա՛կ, բարով եկիր, ահա ես ի քո խղճուդ կու մեռանիմ:

Ասէ մանուկն.

— Աստուած փրկէ զիս ի նմանէ:

Երբ վաղիւն լուսացաւ, գնաց ի դարպասն, երես բարե.

240 — Իմ պարոն, գիշերս բարով լուսացաւ ձեզ:

Հրամայեաց աղջիկն, և զրին ոսկի աթոռ և նստաւ: Եւ սկսաւ աղջիկն հարցանել: Ասէ.

— Ո՞րն է այն ծառն, որ ունի տասներկու ճիւղ, երեսուն տերև և պտղաբերէ սե ու սպիտակ:

245 Ասէ մանուկն.

— Ծառն տարին է, ճիւղն ամիսն է, տերևն աւուրքն է, պըտուղն սե ու սպիտակ՝ տիւ և զիշերն է:

Ասէ աղջիկն.

— Ո՞րն է այն թռչունն, որ ուտէ յերդ և գարի:

- 250 Ասէ մանուկն.
— Մորեխն է:
Ասէ աղջիկն.
— Զի՞նչ է այն, որ սիրեն զիրար և ատեն զիրար:
Ասէ մանուկն.
- 255 — Գիշեր և ցորեկն է, որ ոչ բաժանին ի միմեանց: Երկրորդ՝
մահ և կեանքն է:
Ասէ աղջիկն.
— Այսօր այլ պրծար. յեգուցն հասցնեմ զքեզ քո փառացն:
Մանուկն գնաց ի տուն, և պառաւ խիստ խնդաց:
- 260 Վաղիւն երբ լուսացաւ, գնաց ի դարպասն, երեւո բարեւ և նըս-
տաւ յոսկի աթոռն:
Ասէ աղջիկն.
— Գիշերս բարով լուսացաւ քեզ:
Ասէ մանուկն:
— Մեծ թագուհի, այլ հրամանք ունի՞ս, հրամէ:
- 265 Ասէ աղջիկն.
— Հիմի հրամանքն քո է:
Ասէ մանուկն.
— Ո՞վ է այն, որ հարուստ էր և աղքատացաւ, և յիւր մըս-
քընութիւն հազաւ զիւր հայրն, և հեծաւ զիւր մայրն և գնաց, ոո
զիւր ապրանքն գտանէր, նա մահն ի վերայ հասաւ, վերուց զմահն
յիւր ձիուն վրայ, խմեց մահովն ջուր և խմցուց ձիուն այլ, և ապ-
րեցաւ ինքն և ձին այլ:
- 270 Եւ աղջիկն շկարաց խօսել, զի ոչ զիտէր: Ասէ.
275 — Գնա ի քո օթեանն, վաղիւն քեզ ասեմ. այդ ի՞նչ զիծար
բան է:
Եւ գնաց մանուկն յիւր իջեանն:
Ասէ աղջիկն ի յիւր թարգմանն, թէ՛ «Այն մանուկն յաղթեաց
զմեղ, ապա այլ բան առնեմք, որ մեք յաղթեմք զնա»: Ասէ աղջիկն
- 280 քնդ թարգմանն.
— Գնա ի շուկան և առ սպիտակ հաց, և առ դէր սագ մի և
հաւ խորված, և զփորն լից շաքրով, և լից երկու խարապայ գինի
անուշ:
Գնացին ծառայքն և կատարեցին զհրաման նորին:
- 285 Երբ դառն ի քուն եղաւ մանուկն, աղջիկն հագաւ զիւր զգեստն
ոսկէկար և անուշահոտեցաւ: Եւ ծառայքն առին զկերակուրս անու-

շահամս և ըմպելիս, և գնացին լիջևանն մանկանն և դարկին՝
զգոռն:

Ասէ մանուկն.

250 — Ո՞վ ես դու:

Ասեն ծառայականքն.

— Պարոն, գիտենաս, որ աղջիկ եմք ի Թագաւորին դարպասէն: Զինչ որ լուսինն արեգականն սիրոյ տէր է, այնպէս և մեք անպատճառ կամիմք տեսանել զքեզ:

295 Ասէ կտրիճն.

— Գնա ի զատ: Աստուած գիտէ, որ շմտնէ նա առ իս, և հս ոչ դիտեմ զնա:

Եւ նոքա աղաշանօք պնդեցան, թէ՛ «Ո՞չ երթամք ի դրանէս, մինչև շտեպանեմք դրեզ»:

300 Եւ մանուկն եթող մտանել: Եւ երբ մտան, եբաց զերեսն: Եւ տեսաւ մանուկն զերեսն աղջկանն և վախեց ի սիրոյն: Եւ աղջիկն նստաւ և նստոյց ընդ իւր զմանուկն: Ասէ աղջիկն առ մանուկն.

— Ունի՞ս կերակուր ինչ, որ ուտեմք և անուշանամք: — Զձայնն՝ փոխել էր աղջիկն, որ մանուկն ոչ կարէր ճանաչել զնա:

305 Ասէ մանուկն.

— Աստուած գիտէ, որ շունիմ ինչ ի ժամոյս, զի չգիտէի, որ պատրաստութիւն էի արարել, զինչ վայելուչ է ձեզ:

Ասէ աղջիկն ընդ ծառայքն.

— Բերէք զինչ ուտելոյ ունիք:

310 Բերին դրին սեղան և լցին զանազան և անուշ կերակրօք, և նստան անուշ ի խում. և անպակ գինի արբուցին մանկանն: Եւ աղջիկն անուշ զրուց տայր և ժղլեցնէր:

Ասէ մանուկն, թէ՛ «Հրամէ, որ պառկեինք»:

Ասէ աղջիկն.

315 — Թէ զիս կուղն՞ս, դուն ասա զքո զրուցդ, որ այսօր Թագաւորին դստերն ես ասել:

Ասէ մանուկն.

— Զունիմ կարողութիւն, որ ասեմ, զի կու վախեմ, թէ մեռնիմ: Ապա այլ բան հարց, որ ասեմ:

320 Նա երգուաւ յաստուած կենդանին, թէ՛ «Զբանն որ չլսեմ ի քէն, ոչ կատարեմ զկամս քո», և սկսաւ խաղալ ընդ նմա:

Եւ մանուկն բորբոքեցաւ ի սիրոյն, և յաղթեց գինին, և ասէ ընդ աղջիկն.

— Արի, որ պառկինք:

325 Ելաւ աղջիկն և հճան զհալաւն ի սնարքն եղիւր, և շար շապկով ի գիրկն նստաւ և սկսաւ խաղալ: Եւ մանուկն մեկնեց զիւր խօսքն. և թմբբեցաւ ի գինոյն և ի քնոյն, և աղջկան ոչինչ չկարաց առնել:

330 Եւ աղջիկն խնդաց յիւր միտքն, սահեցաւ ի յանկողնոյն, ելաւ գնաց խնդալով, և հալվին պէտ շարաւ և խնդաց, թէ՛ «Ուսայ զայն հանելուկն և ինձ իրք մի չկարաց առնել. և ընդ լուսանալն սպանանել տամ զնա»:

335 Էգվնէն զարթեաւ մանուկն, և երեկ խելքն ի վերայ և իմացաւ, որ խաբած էր զինքն և տրտմեցաւ: Եւ ապա տեսաւ զհալաւն և շատ զոհացաւ և էառ պահեաց: Եւ զնաց ի դարպասն, երեսո րարեւ և նստաւ յոսկի աթոռն: Իմացաւ, որ թագաւորին դուստրն էր, որ առ ինքն երեկ երիկունն:

340 Աղջիկն զրկեց հօրն և մօրն և իշխանացն. և եկին մօտան: Եւ մանուկն յօտն ելաւ և ծունր էած թագաւորին, և նստան: Ասէ թագաւորին դուստրն.

— Ասեմ զերեկի բանն, որ յիս հարցար: — Սկսաւ և ասաց զամէնն կարգաւ, որ իրիկունն լսել էր:

Եւ զարմացան ամենեքեան ընդ նորա գիտութիւն:

345 Ասէ մանուկն ընդ թագաւորն և ընդ իշխանքն, թէ՛ «Տիեզերաւ կալ թագաւոր, երեք օր ձեր դուստրն բան հարցաւ ինձ, և ես ճշտապ տվի: Եւ ես ի յինքն մէկ բան հարցանեմ, թէ պատասխան տայ՝ նա զիս յաղթիլ է, և թէ ոչ՝ ես եմ յաղթել»:

Ասէ թագաւորն.

350 — Նիստ այդոր հաւան եմք: — Եվ վկայ կացուցին զամենայն իշխանքն, որ այլ տա և լիս չառնեն:

Ասէ մանուկն.

355 — Ասա ինձ, ո՞րն է այն թռչունն, որ զինքն կալայ և զինեցի, և զփետուրն պահեցի. զինքն խորվեցի և դրի յառջևս թէ ուտեմ: Եւ ունէր այն թռչունն ոսկի փետուր գեղեցիկ, և հետն այլ թռչուն, ապա նորա նման չէր: Ունէր այն թռչունն խորված սաղ մի և գեղմակ հաց և անուշ զինի: Կերաք և խմեցաք և առի զինքն ի ծոցս, նա յանկարծակի թռաւ և զնաց. և թէ ոչ հաւատայք ինձ, ես զփետուրն առ ձեզ բերեմ, որ գիտենաք որ ուղղորդ եմ:

360 Աղջիկն երբ զայն լսեց, վախեցաւ: Գիտէր, որ զիւր խապարն կու տար: Ասաց թէ՛ «Այդ դիժար դրուց է, զայդ չեմ կարէր հա-

ներ, դիտեմ, որ յաղթեցեր զիս. ուղէ զինչ որ պիտի տամ քեզ՝
Ասէ մանուկն.

— Ես ալ իրք չեմ ուղեր, քան զքեզ:

365 Եւ իշխանքն և նալիպին վկայեցին: Եւ հաւանեցաւ աղջիկն,
և պսակեցին և արարին եօթ օր հարսանիք: Եւ երես թագաւորն
զկէս թագաւորութեան և զկէս զանձին, և որքան աշխարհ ունէր:
Եւ ուրախացան յոյժ:

370 Ղրկեց մարդիկ և շատ զանձ այն թագաւորին, որ հայրն և
մայրն ի մօտն էր, և եբեր զիւր ծնօղքն մօտ ի յինքն: Նոքա տե-
սին և ուրախացան, և զոհացան զաստուծոյ: Եւ զասպնջակաւ
պառաւն տարաւ ի դարպասն և արար իւրն մեծ:

Եւ թագաւորն՝ յետ իւր մահուանն զանձին և հեծելին և աշ-
խարհին տէր կացոյց:

Եւ Քրիստոսի մարգասիրին փափք յաւիտեանս, ամէն:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԵՂԵՑԻԿ, ՈՐ ԿՏՐԻՃՆ ԶԱՂՋԻԿՆ ՅԱՂԹԵՑ
ԵՒ ԷԱՌԻ ԻՒՐ Ի ԿՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԵՏՈՅ ԵՂԵՒ ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԵԲԵՐ
ԻՒՐ ՄՕՏՆ ԶՀԱՅՐՆ ԵՒ ԶՄԱՅՐՆ ԵՒ ՈՒՐԱԽԱՅԱՆ*

Այր մի էր մեծատուն իշխան ի քաղաք մի և ունէր անշափ
զանձ և ոսկի և մարդարիտ անդին, որ շկայր այն յաշխարհն քան
ղնա մեծատուն: Ինքն ծերացեալ էր և զաւակ չունէր. հանապաղ
աղաչէր զաստուած վասն զաւակի: Եվ աստուած ետ նմա որդի
5 աննման և գեղեցիկ: Երբ մեծացաւ տղայն, ետ հայրն զնա յու-
սումն իմաստասիրութեան: Եվ ուսաւ զամենայն իմաստասիրա-
կան բանս, և եղև աստղագէտ յոյժ և պատերազմող անյաղթ: Բայց
յետոյ ուտել և ի խմել անկաւ և հատուց զգանձն հօրն, և հայրն և
մայրն մնացին դատարկ: Զհայրենի տունն այլ ծախեց, կերսաւ և
10 խմեց, որ այլ բնաւ իրբ մի չի մնաց: Ասաց որդին ընդ հայրն և
ընդ մայրն, թէ.

— Կամի՞ք, որ հեռանամք յայս յերկրէս և հրթամք հանց եր-
կիր, որ ոչ ճանաչեն զմեզ, և զղիպն յետ դնեմք, մուրամք և ապ-
րիմք. ոչ մեք տրտմիմք, և ոչ մեր շարկամն ուրախանայ ի վերայ
15 մեր:

Ասացին ծնողքն, թէ.

— Դո՛ւ գիտես, որդիակ:

Հառ կտրիճն զհայրն և զմայրն և գնացին ի Հոռմ, և հասան ի
քաղաք մի: Եւ կայր ի քաղաքին այնմիկ թաղաւոր մի բարի և ի-
մաստուն: Մտան ի քաղաքն, իջան ի տուն մի: Եւ այն թագաւորն
20 յորս էր ելեր: Երեկ թագաւորն ի յորսուն, և մտաւ մանուկն առ թա-
գաւորն, ծունր եղ և կանգնեցաւ:

Եւ սկսաւ խօսել թագաւորն ընդ մանուկն, և մանուկն պա-
տասխանի տայր թագաւորին: Եւ հաշեցաւ թագաւորն ի մանուկն
25 և ասաց.

* Խումբ, երկրորդ խմբագրութիւն, անտիպ.

— Զինչ խնդրես չինէն, պարզեմք քեզ:

Ասէ մանուկն թաղաւորին, թէ.

— Ունիմ երկու ծառայ ծախսու ալր և կին:

Ասէ թաղաւորն.

30

— Բեր, և ես դեմ:

Դնաց մանուկն առ հայրն և մայրն: Եւ ասէ մանուկն ընդ ծընօղան իւր, թէ.

— Ինչ պատեհ է ինձ, կամիմ հանց բան առնել, որ դուք ալլաւորիք և ես ալլ:

35

Ասացին ծնօղքն, թէ.

— Դո՞ւ գիտես, որդեակ:

Ապա ասէ մանուկն, թէ.

— Կամիմ ղձեղ ծախել այս թագաւորիս, որ հասնիմք բարութեան, և ձեր դնողն ինձ բարի լինի, և ես ջանամ շուտով ազատեմ ղձեղ: Դուք ի՞նչ կու հրամայէք:

40

Ասացին ծնօղքն, թէ.

— Դո՞ւ գիտես, որդեակ:

էսո մանուկն ղհայրն և ղմայրն և գնաց առ թագաւորն:

Ասէ թագաւորն ցմանուկն.

45

— Քանի՞ ծախես:

Ասէ մանուկն.

— Ըստ արժանեացն՝ ընդիր ղգեստ և ղէն. ի կին մարդոյն ղինն տուր ինձ աղեկ ձի և սլեհ, և ալր մարդուն ղինն տուր ինձ աղեկ հալաւ և ղգեստ պատուական:

50

Հրամայեաց թագաւորն, և տվին զոր խնդրեաց, և թուր մի ոսկի գօտով: Եւ էսո մանուկն, զոր պարգեւեաց նմա թագաւորն: Ասէ թագաւորն.

— Ալլ ի՞նչ խնդրես չինէն:

Ասէ մանուկն.

55

— Հարկւր ֆլորի խարճի:

Եւ հրամայեաց թագաւորն, և տվին:

Ասէ թագաւորն.

— Ալլ ի՞նչ ուզես:

Ասէ մանուկն, թէ.

60

— Հրաման տուր ինձ, որ խօսիմ ընդ քո ծառայքդ, որ գնեցեր չինէն, և առնեմ ղիւրեանց օրհնութիւն:

Հրամայեաց թագաւորն.

— Գնա՞ և խօսեա՛ւ: — Եւ իմացաւ թագաւորն որ իւր ծնօղքն էին:

65 Գնաց մանուկն և անկաւ յոտս ծնօղացն և ասէ.

— Մի՛ հոգայք. թէ աստուած կամենայ, ես զձեզ շուտով կու թափեմ:

Եւ ծնօղքն օրհնեցին զաւակս իւրեանց: Եւ մանուկն յիշեաց զաստուած և զնաց երեք տիւ և երեք դիշեր ի մեծ դաշտ մի, և ի գնալն հանդիպեցաւ ընդ իր մանուկ մի: Բարեկեցին զմիմեանս և ընկերացան: Եւ յերբ լսեց մանուկն զմիւս մանկան խօսքն, որ զհայրն և զմայրն ծախսեր էր, ասաց մանուկն ընդ միւս մանկան, թէ.

— Դիտենաս, որ իմ թագաւորն զիս խիստ կու սիրէր, և թուխտ աւետեաց երեստ, որ տանիմ առ կղզեաց թագաւորն: Ա՛ռ զթխտերդ զայդ և դո՛ւ տար. նա՛ քեզ շատ ինչք կու պարզէ, զի դու խելօք մանուկ ես և լաւ ձիաւոր, քան զիս: Զինչ որ աստուած ինձ տայ և քեզ լինիցի. ես մնամ քեզ այս դաշտիս, մինչև դու գաս առ իս:

80 Էառ մանուկն զթուխտն՝ ի սեկէ քէսան եղիւր և զնաց ի դաշտ մի: Եւ յանկարծակի յիշեաց զհայրն և զմայրն և շատ ի լաց, և ննջեաց ի վերայ ձիուն: Եւ ձին ճանապարհէն ելաւ և կորոյս զճանապարհն: Եւ յանկարծակի զարթեաւ ի քնուն. և էր ծարաւեալ ինքն և ձին, և ջուր ոչ կայր: Մոլոր ի շուրջ գայր, և գտաւ ջրհոր մի հին ժամանակաց, և ի ծարաւուն կամէր ի ջրհորն անկանիլ: Ապա եհան զսեկէ քէսան, որ թխտերն ի մէջն էր, և կապեաց զպարանն և եհան ջուր: Խմեց ինքն և խմցուց ձիուն և պահ մի հանգեաւ: Եւ ապա ասաց ի միտս իւր, թէ՛ «Կարդամ զայս թխտերս».

և սկսաւ կարդալ: Եւ գրած էր այսպէս.

90 «Այս անուն կղզեաց թագաւոր, ողջո՞յն սիրոյ: Դիտացի՛ր, եղբայր, որ այդ թխտաբերդ անհաւատ մարդ է և մեզ նենգաւոր: Դա մեծ էր առ մեզ և ամենայն զանձի հատցնող: Նա ելաւ առ դուստրն իմ վնաս դործեաց, և ես կամեցայ զինքն կորուսանել, և պատրաստեցի առ քեզ, որ մարդ զմեր խաղբութիւնս չիմանայ: Առաքեցի առ քեզ, որ կորուսանեւ զինքդ, թէ զմեր սէրն կուզես»:

95 Կարդաց և իմացաւ մանուկն, որ ի վերայ իւր գալոց էր մահն: Պատառեց զթխտերն և զոհացաւ զաստուծոյ, և զիւր ծնօղքն օրհնեաց, որ զինքն ուսումնագէտ արարին և իւր դիտութեամբն ապրեցաւ:

- 100 Եւ աղաչէր զաստուած, որ զճանապարհն գտանէր: Զտիւ և զգիշեր զնաց ման եկաց մոլոր, և հորցանէր վանուն թագաւորին և զայն քաղաքն, որ զնալոց էր: Եւ եգիտ և մտաւ ի քաղաքն:
- Եւ էր այն քաղաքին թագաւորն մեծ և բարեղի: Եւ իջևանեցաւ մանուկն ի պառաւի մի տուն և հանգեաւ սակաւիկ մի, և սկսաւ
- 105 հարցանել և քննել զքաղաքն և զքաղաքին զնացքն, և զթագաւորն: Եւ պառաւն ասաց զամենն ի լման: Ասաց, թէ՝ «Այս քաղաքիս թագաւորն զուստր մի ունի խիստ աննման գեղեցիկ և իմաստուն, որ չիկայ իւր նման: Որչափ որ ի տարիք հասեր է, իննսուներկու թագաւորի որդի սպանաներ է»:
- 110 Ասէ մանուկն.
— Ի՞նչ պատճառի համար կու սպանանէ:
Ասէ պառաւն.
— Որդեա՛կ, կասէ թէ՝ «Ուլ զիս կաղթէ իմաստութեամբ, հս
- 115 զնա առնում ինձ այր, ուլ չիկարէ յաղթել՝ զգլուխն առնում».— Եւ այդ պատճառովդ յաղթէ զթագաւորաց որդիքն և սպանանէ: Եւ իւր զուպպան ի վերայ ամենայն քաղաքին կու հայի: Եւ ունի ոսկի թաղթ՝ աւկամբ և մարգարտով շարած. անդ կու նստի և հայի ընդ մարդիք. ի մուշապախն ի վայր կու հայի, որ մարդ զինք չի կարեր տեսանել: Եւ ունի պառաւ մի թարքմանող, որ նա՛ խօսի ի հետ մարդոյ, որ
- 120 առ ինքն մտանեն»:
- Հսեց մանուկն զայն խօսքն ի պառաւէն և գիշերն ի քուն չեղաւ: Երբ լուսացաւ, զնաց ի բաղնիք, հագաւ զիւր հանգերձն, և անուշահոտեցաւ մշկով և վարդէջրով, և զնաց ի թագաւորին դստերն ի դուռն և ուղեց հրաման, և մտաւ առ թագուհին: Եւ մարդիքն,
- 125 որ ի դուռն էին, խրատ տվին մանկանն, թէ՝ «Պատրաստ կեցիր, զի շատ թագաւորի որդոյ գլուխ է առեր»:
- Եւ մանուկն մտաւ ի ներս, բարեւ երեստ: Դրին աթոռ և նստաւ մանուկն: Եւ զիտաց աղջիկն, որ վասն այն բանին էր եկեր առ ինքն: Ղրկեց հօրն և մորն և նայիպնուն և իշխանացն ի խնդի: Ժողովեցան: Ասաց աղջիկն ընդ իւր թարգման պառաւն, թէ՝ «Ասա՛
- 130 այդ մանկանդ, թէ՝ «Կուզե՞ս որ տամ քեզ ի յայն կթխայէն, որ քո ընկերացդ տվի»:
- Ասէ մանուկն, թէ.
— Աստուծոյ կամքն լինի:
- 135 Ասաց աղջիկն ընդ հայրն և ընդ մայրն և ընդ նայիպնին և ընդ իշխանսն, որ վկայ լինին բանին, որ թէ մանուկն յաղթէ զթա-

դատորին դուստրն, առնու զնա իւր ի կնութիւն, և թէ դուստր թա-
գաւորին յաղթէ զմանուկն, առնէ նմա որպէս զայլոցն: Հաւանեցաւ
մանուկն և ամենեքեան Վկայ կացին:

140 Ասէ աղջիկն.

— Ո՞վ է քո հայրն:

Ասէ մանուկն.

— Հովն և հուրն:

Ասէ աղջիկն.

145 — Ո՞վ է քո մայրն.

Ասէ մանուկն.

— Հոգն և անձրեն:

Ասէ աղջիկն.

— Ո՞ր կենդանակերպ ես ծնել:

150 Ասէ մանուկն.

— Խոյին տարին ևմ ծնել:

Ասէ աղջիկն.

— Ո՞վ է քո դայեակն:

Ասէ մանուկն.

155 — Այն է իմ դայեակն, որ նա զիս կու տեսնու, ես զնա չեմ
տեսնուր. նա զիմ ձայնն կու լսէ, և ես զնորա ձայն չեմ լսեր:

Ասէ աղջիկն.

— Այդ տղայոց զրուց է, թո՞ղ զայդ: — Ասէ աղջիկն. — Ո՞րն
է առաջին արին, որ յերկիր անկաւ:

160 Ասէ մանուկն.

— Աբելի արին, որ Կայէն էսպան:

Ասէ աղջիկն.

— Ո՞րն է այն երեք իրքն, որ կերան և խմեցին, և շէր ծնեց
զիւրեանք մարդ:

165 Ասէ մանուկն.

— Ադամ և Յեայ և դառն Աբրահամու, և մէկն այն հաւն էր,
որ Քրիստոս արար զինքն:

Ասէ աղջիկն, թէ՛ «Դու մէկ տելի տաացեր»: Ասէ աղջիկն.

— Ո՞վ էին, որ ծնեալ էին և ոչ մեռան:

170 Ասէ կտրիճն.

— Ենովք և Եղիա էին, որ ոչ մեռան, մինչև ի գալուստ նե-
ռին:

Ասէ աղջիկն.

- Այն ո՞ր թռչունն է, որ ծիծ կուտա ձագերուն:
 175 Ասէ կտրիճն.
 — Գիշերհասուունն է:
 Ասէ աղջիկն.
 — Այն ի՞նչ թռչունն է, որ ուտէ յերդ ու դարի:
 Ասէ մանուկն.
 180 — Այդ մորեխն է:
 Ասէ աղջիկն.
 — Ի՞նչ է այն, որ հրեք օր ճանճիւ կու շատանայ ու կապրի,
 յետ հրեք աւուրն մայրն զթայ ու դայ կերակրէ զնա:
 Ասէ մանուկն.
 185 — Գալլադուանն է, որ յորժամ կու բերէ զձագն, սպիտակ է՝
 կու փախչի ի նմանէ. հրեք աւուրն յետե կու սեանայ՝ դայ մայրն առ
 ձագն իւր:
 Ասէ աղջիկն.
 — Այն ի՞նչ էր, որ քանի ողջ էր, նա յերդ ու դարի ուտէր, երբ
 190 որ մեռանի, նա միս և արիւն կուտէ:
 Ասէ մանուկն.
 — Իշուն շահկանն է, որ Սամսոն մանուկն ի ձեռն առաւ ու ա-
 նով հաղար մարդ սպաննեց:
 Ասէ աղջիկն.
 195 — Այն ի՞նչ ծառ էր, որ ճիւղ ու տերեւ էր ու միս և արիւն եղեւ:
 Ասէ մանուկն.
 — Այն Մովսէսի գաւաղանն էր, որ քանի ի ծառն էր՝ ճիւղ ու
 տերեւ ունէր, երբ որ օձ դարձաւ՝ միս և արիւն եղեւ:
 Ասէ աղջիկն.
 200 — Այն ի՞նչ հրկու հակառակ են, որ զիրար կու սիրեն:
 Ասէ մանուկն.
 — Գիշեր ու ցորեկն է:
 Ասէ աղջիկն.
 — Այն ո՞վ էր, որ ի մամն մերձեցաւ, նա մամն ասաց, թէ
 205 «Կոյս եմ հա»:
 Ասէ մանուկն.
 — Աբելի մարմինն էր, որ ի հողն բերին:
 Ասէ աղջիկն.
 — Այն ո՞րն էր, որ 15 տարի թագաւորեց, տասնվեց մտաւ՝
 210 նա հլաւնդացաւ. երբ երեսուն մտաւ՝ նա մեռաւ, դարձեալ ողջա-

ցաւ:

Ասէ մանուկն, թէ՛ «Այդ լուսինն է»:

Ասէ աղջիկն.

— Ի՞նչ գերեզման էր շարժուն և գնալուն:

215 Ասէ մանուկն.

— Յունան մարդարէն էր, որ ձուկն կլաւ, շարժուն և գնալուն
եղև:

Ասէ աղջիկն.

220 — Այն ո՞վ էր, որ ջուր ու կերակուր առաւ ու քաղցելոց տա-
րաւ, նա զկերակուրն թողին ու զտանողն կերան:

Ասէ մանուկն.

— Դանիէլ, որ առիւծոցն տարան, զԴանիէլ թողին ու դա-
նողն կերան:

Ասէ աղջիկն.

225 — Այն ո՞վ էր, որ մեռաւ, ոչ մարմինն ի հող մտաւ և ոչ հո-
գին առ աստուած գնաց:

Ասէ մանուկն.

— Ղովտայ կիինն էր, որ ի քար դարձաւ՝ ոչ մարմինն ի հող
մտաւ և ոչ հոգին առ աստուած գնաց:

230 Ասէ աղջիկն.

— Այն ի՞նչ ծառ էր, որ ունի տասներկու ճիւղք և ամեն ճիւղք՝
երեսուն տերև, և պտուղ նորա սև ու սպիտակ էր:

Ասէ մանուկն.

235 — Ծառն՝ տարին, տասներկու ճիւղքն ամիսքն է տասներկու,
տերեւն երեսուն օրն է, պտուղն սև ու սպիտակ՝ զիշերն և ցորեկն է:

Ասէ աղջիկն.

— Այն ո՞րն էր, որ կու քարկոծէին, ոչ մարդ էր, ոչ քաջ և ոչ
հրեշտակ, և խօսեցաւ զերթ մարդ:

Ասէ մանուկն.

240 — Երեմիա մարդարէին վէմն էր, որ կու քարկոծէին՝ խօսեցաւ
զերթ մարդ, թէ՛ «Ահա Երեմիա կա ի միջի ձերում»:

Աղջիկն խիստ վախեցաւ ի չիւր միտքն, թէ «Դա զիս կու յաղ-
թէ»: Ասաց. «Արի ե՛լ ու գնա՛, այսօր զերծար ի ձեռացս, վաղին
հասցնեմ զքո փառացդ»: Վախ կու տար մանկանն:

245 Ասաց մանուկն, թէ՛ «Այն աստուածն, որ այսօր փրկեաց, կա-
րող է որ վաղին այլ փրկէ»: Ելաւ և գնաց:

Յորժամ տեսան, ամենեւեան զարմացան զնորա աւրիւն,

զի անկից ի զատ ալ մարդ չէր ապրել ու փրկել մինչև ի սա:

250 Գնաց մանուկն իւր իջեանն, տեսաւ պառան կու լար դառ-
նապէս: Տեսաւ զկտրիճն, խիստ ուրախացաւ և ասաց.

— Ուրդեա՞հ, դու բարով եկիր. այսօր նոր ծնար ի մօրէդ: Վա-
խեցայ թէ զքեզ սպանաներ 'ւ ես ի քո խղճող կու մեռնէի:

Ասաց մանուկն, թէ՛ «Աստուած փրկէ զիս ի նմանէ»:

255 Վաղիւն յերբ լուսացաւ, գնաց ի դուռն թաղուհոյն, երևա բարև
և ասաց, թէ՛ «Գիշերս բարով լուսացաւ քեզ»:

Դրին ոսկի աթոռ և նստաւ: Եւ սկսաւ աղջիկն.

— Ո՞վ էր այն, որ մէկն զմեկն սպաննեց, նա մեռնողն ի
դժոխքն գնաց ու սպաննողն ի յարքայութիւն գնաց:

Ասէ մանուկն. —

260 — Ղամէք թաղաւորն էր, որ զԿայէն սպաննեց, նա Կայէն ի
դժոխքն գնաց, ու Ղամէք ի յարքայութիւն գնաց:

Ասէ աղջիկն.

— Այն ո՞վ էր, որ բուսն ճերմակ էր և ի սև դարձաւ:

Ասէ մանուկն.

265 — Նոյեա որդին է, քանի որ զանէծքն ընկալաւ:

Ասէ աղջիկն.

— Ո՞վ էին, որ կերտն և խմեցին, և չէր ծնել զիրենք մայրն:

Ասէ մանուկն.

— Ադամ և Յևայ է:

270 Ասէ աղջիկն.

— Ո՞վ էր, որ էգն ի յորձուն ծնաւ:

Ասէ մանուկն.

— Եւայ ի յԱդամայ ծնաւ:

Ասէ աղջիկն.

275 — Ո՞վ է այն, որ ի դալուն բերան դրին, թէ կերաւ զնա զալն,
ոչ քաջ էր, և ոչ հրեշտակ և ոչ Ադամայ որդի:

Ասէ մանուկն.

— Յովսէփ զեղեցիկն էր, որ Էդրայրքն վաճառեցին ու յետոյ
զալուն բերանն դրին, թէ՛ «Կերաւ զալն»:

280 Ասէ աղջիկն.

— Այն ի՞նչ տեղ էր, որ քանի աստուած զաշխարհս ստեղծեր
էր, նա արեգակն ի վերան չէր դիպեր:

Ասէ մանուկն.

- Ծովուն յատակն էր, որ Մովսէս պատառեաց զաւազա-
 285 նան, և անցոյց զիսրաէլ ընդ այն:
 Ասէ աղջիկն.
 — Այն ի՞նչ երկու իրք է, որ քանի դահնան կու մեծնան:
 Ասէ մանուկն.
 — Զկայ մեծ իրք մի, քան զձուկն ի ծովն և զօձն ի ցամաքն:
 290 Ասէ աղջիկն.
 — Այն ի՞նչ երկու սիրելի է, որ զիրար կու ատեն:
 Ասէ մանուկն.
 — Հոգին ու մարմինն է, որ մարմինն ի հետ մեղաց է, հոգին
 կու ատէ զմարմինն:
 295 Ասէ աղջիկն.
 — Այն ի՞նչ է, որ զմարդն հարուստ կանէ ու դարձեալ աղ-
 քատ կանէ:
 Ասէ մանուկն.
 — Ծիճուն է և իւր խելքն:
 300 Ասէ աղջիկն, թէ՛ «Ի՞նչ արին է հալալ ուտելոյ»:
 Ասէ կտրիճն.
 — Զկան արինն է հալալ ուտելոյ և այլ պախի մեռելոտի
 կենդանեացն՝ հարամ է:
 Ասէ աղջիկն.
 305 — Այն ի՞նչ էր, որ ոչ կերաւ և ոչ խմեց ի կենդանութեան,
 երբ մեռաւ՝ կերակուր կերաւ:
 Ասէ կտրիճն.
 — Մովսէսի գաւաղանն էր, որ քանի ի ծառն էր՝ կերակուր
 ոչ կերաւ, երբ որ կտրեցաւ ի ծառէն ու օձ դարձաւ՝ կերաւ հող ու
 310 խմեց ջուր ու կտրեց զծովն:
 Ասէ աղջիկն.
 — Տուն մի կայ՝ մէջն ոսկի և դուրսն արծաթ. երբ որ պատն
 խոռի, նա ամէն յաշխարհս ի վերայ դան, նա շէն կարեր շինէր:
 Ասէ կտրիճն.
 315 — Այն հաւկիթն է, որ յերբ կոտորի, նա այլ չի շինվիր:
 Ասէ աղջիկն.
 — Իժնչ էր այն, որ խրատ երեստ մարդուն, ոչ քաջ էր, ոչ
 մարդ և ոչ հրեշտակ, և խօսեցաւ զերթ մարդ:
 Ասէ կտրիճն.
 320 — Մրջիմն էր, որ աստուած յիշեաց զինքն ի զիրն և ասաց.

«Գնացէ՛ք դուք ի ձեր դադարքն մտէք, զի Սողոմոն ժողովք է արարեալ, որ ի յոտք շերթայք»:

325 Ի հոն ալ վախեցաւ աղջիկն և ասաց ի կտրիճն, թէ՛ «Այսօր ալ ե՛լ ու գնա՛»: Վախ կու տար ու կասէր, թէ՛ «Վաղիւն տամ ասն կթխալէն, որ մեկալնոցն եմ տվել»:

Ասաց կտրիճն.

— Աստուած աջողէ,— ելաւ և գնաց խնդալով:

330 Երբ լուսացաւ, գնաց ի դուռն թաղուհոյն, երես բարեւ և ասաց, թէ՛ «Գիշերս բարով լուսացաւ ի վերայ ձեր»:

330 Եւ հրամայեաց աղջիկն. դրին ոսկի աթոռ և նստաւ կտրիճն:

Ասէ աղջիկն.

— Ո՞վ է ասն, որ կու կովի լսելովն և կու դարնէ իւրովն, չունի ձեռք և ոչ ոտք:

Ասէ կտրիճն.

335 — Զուկն է:

Ասէ աղջիկն.

— Ո՞վ էր ասն, որ կերակուր ուտէր՝ մինչև մեռեալ ի տապալան էր, և եղև տապալան կենդանոյ:

Ասէ կտրիճն.

340 — Յոր երանելին էր, որ քանի ցաւազար էր, նա մեռեալ էր ու կերակուր ուտէր, ու յետոյ առաւ զիւր գեղեցկութիւն կրկին:

Ասէ աղջիկն.

— Այն ո՞վ էր, որ խրատ ետ մարդոյն, ոչ մարդ էր, ոչ քաջ և ոչ հրեշտակ:

345 Ասէ կտրիճն.

— Էշն էր, որ ասաց Բաղաամայ, թէ՛ «Դարձիր ի յետս և մի՛ երթայր անիծանիլ Իսրաէլէ:

Ասէ աղջիկն.

350 — Երկու խաղըրբեր ուղարկեցին, ոչ մարդ էր և ոչ քաջ և ոչ հրեշտակ:

Ասէ կտրիճն.

— Աղուան ու աղաւնին էր:

Ասէ աղջիկն.

355 — Ո՞վ որ էին այնոքիկ, որ մեռան և կացին ընդ մահ և ընդ կեանքն:

Ասէ կտրիճն.

— Յեփեսոսի մանկունքն էին, որ փախեան ի թաղաւորէն և

ննջեցին ի յայրն երեքհարիւր ամ:

Ասէ աղջիկն.

360 — Ո՞վ որ էին, որ յԵփրատոս մտան Եօթանասունեօթ էին, երբ ելան, վեցհարիւր հազար էին:

Ասէ կտրիճն.

— Յակոբայ որդիքն էին, երբ որ ի յԵփրատոս մտան՝ Եօթանասունեօթ էին, Երբ որ ելան, նա վեց հարիւր հազար էին:

365 Ասէ աղջիկն.

— Անփոյթ անծնին բարձին, անդադրին երգօքն անցուցին: Ասէ կտրիճն.

— Անփոյտն տասական է, անդադար՝ ջուրն է, անծին՝ ջորին է:

370 Ասէ աղջիկն.

— Այն ի՞նչ էր, որ աստուած բան առաքեաց, ոչ մարդ էր, ոչ քաջ և ոչ հրեշտակ:

Ասէ կտրիճն.

375 — Գայլապուաքն էին, որ յորժամ կայէն զյԱբէլ սպաննեց, նա Ադամ ոչ զիրտէր զթաղելն. Եկին երկու ագուաքն ու մէկն զմէկն սպաննեցին զիմաց Ադամայ, և ճանկովն փորեաց զդետինն և թաղեաց: Տեսաւ Ադամ և Եվայն և այնպէս լալով թաղեցին զորդիս իւրեանց զյԱբէլ:

Ասէ աղջիկն.

380 — Այն ո՞վ էր, որ վաղվենէն ելաւ ցանեց զցանն և ամեն պահու երթայր յերևան և ասէր, թէ՛ «Մեծացիր աստուծոյ հրամանաւն, զինչ տարին կու մեծնայ ամմէն ցան»: Նա աստուծոյ հրամանաւն տասներկու պահն որ եղաւ, նա մեծացաւ, նա մէկալ օրն արար զինչ որ իրենն պիտոյ էր:

385 Ասէ կտրիճն.

— Այդ այն ծառն էր, որ տնկեցին յայգին կիպարի, զի աստուած առաքեաց ձեռօք Գաբրիէլի հրեշտակին առ Նոյ, և ասէ. «Տա՛ր, ցանէ՛ զայդ, լինի ծառ, կտրէ՛ և տապան շինէ, մուտ ի ներս դուն և որդիքն քո, և կանայք որդոց քոց և կին քո ընդ նոսա»: Եւ արարին այնպէս և ապրեցան ամենեքեան:

390 Ասէ աղջիկն.

— Երեք բանն ի՞նչ էր, որ խօսեցան, այն ի յայս յաշխարհս չկայ:

Ասէ կտրիճն.

395 — Երեք բանքն այս է. մէկն ծովն է, որ խուփ շունի, մէկն
երկինքն է, որ սիւն շունի, մէկն հաւն է, որ կաթ շունի և մէկն
մարդուն ձեռաց մէջն է, որ մաղ շունի:

Ի յայս ճուղապէս ալ վախեցաւ աղջիկն ի կտրճէն և ասէ.

— Այլվի դու մէկ անելի ասացեր,— և ասաց,— Արի և դնա,
400 այսօր այլ զերծար յինէն, վաղն հասցնեմ դքեղ քո լընկերացն, որ
ի բերթն ևն: — Այլվի վախ կու տար կտրճին:

Ասաց կտրիճն, թէ՛ «Յաստուած ևմ ապաւիներ, ինքն ողոր-
մած է և կուողորմի»: Ելաւ խնդալով և ուրախութեամբ դնաց ի իւր
իջևանն:

405 Յերբ վաղին լուսացաւ, նա եկաւ ի դուռն թագաւորին, բարե
երևաւ և ասաց մանուկն.

— Գիշերս բարով լուսացաւ քեզ:

Դրին ոսկի աթոռ և նստաւ: Ասաց մանուկն, թէ՛ «Հրամայէ՛,
մեծ թագուհի, այլ զի՞նչ կու հրամայես, հրամայէ՛»:

410 Ասաց աղջիկն, թէ՛ «Հիմի հրամանքն քո է»:

Ասէ մանուկն, թէ՛ «Ո՞վ էր, որ հարուստ էր և աղքատացաւ և
յիւր մաքնութիւն հագաւ զիւր հայրն, և հեծաւ զիւր մայրն և դնաց,
որ զիւր ապրանքն գտանէր, նա մահն ի վերայ հասաւ, առաւ
415 զմահ ի յիւր ձիուն վերայ, խմեց մահովն ջուր և խմցուց ձիուն,
ինք այլ ապրեցաւ և ձին այլ»: Եւ աղջիկն շի կարաց խօսել, զի ոչ
գիտէր: Ասէ աղջիկն ընդ մանուկն.

— Գնա՞ ի քո օթևանքն, վաղին տամ զայդ պատասխանիդ,
այդ ի՞նչ դիժար զրուց է:

Ելաւ մանուկն և գնաց իւր օթևանքն:

420 Ասէ աղջիկն ընդ իւր թարգման պառաւն, թէ՛ «Այն մանուկն
զմեզ յաղթեց, ապա այլ բան առնեմք, որ մեք զնա յաղթեմք»:
Ասէ աղջիկն ընդ իւր թարգման պառաւն, թէ՛ «Գնա՞ ի շուկան և
առ սպիտակ հաց, և առ գէր սագ մի և հաւ խորված, և զփորն լիջ
425 շաքրով, և երկու աման անուշ գինի խիստ ուժով»:

Գնացին ծառաւրքն և կատարեցին զհրամանքն: Յերբ դառն ի
քուն եղան, աղջիկն հագաւ զիւր զգեստն ոսկէկար և անուշաճո-
տեցաւ, և ծառայքն առին զկերակուրս անուշահամ և զքմպելիս և
երկու գեղեցիկ աղջիկ ի հետ իւրն, և գնացին իջևան մանկանն և
զարկին զգուռն: Ասէ մանուկն.

430 — Ո՞վ ես դու:

Ասեն ծառայականքն.

— Պարոն, գիտենաս, որ աղջիկ եմ ի թագաւորին դարպասէն: Զինչ լուսինն յարեգական սիրոյ տէր է, և մեք քեզ սիրոյ տէր եմք, այն պատճառին համար կամիմ տեսանել զքեզ:

435 Ասէ կտրիճն.

— Գնա՞ ի զատ, աստուած գիտէ, որ նա չիմտանէ առ իս, և ես ոչ գիտեմ զնա:

Եւ նորա աղաշանօք պնդեցան, թէ՛ «Ո՛չ երթամք ի զրանէս, մինչև որ տեսանեմք զքեզ»:

440 Եւ մանուկն եթող մտանել ի ներս: Եւ յերբ մտան ի ներս, աղջիկն եբաց զերեսն: Եւ կտրիճն յերբ տեսաւ զերեսս աղջկանն և վախեց ի սիրուն: Եւ աղջիկն նստաւ և նստոյց ընդ իւր զմանուկն: Ասէ աղջիկն ընդ մանուկն, թէ՛ «Ունի՞ս կերակուր ինչ, որ ուտեմք և անուշանամք»: Զձայնն փոխեր էր աղջիկն, որ մանուկն չի կարէր

445 ճանաչել զնա: Ասէ մանուկն.

— Աստուած գիտէ, որ չունիմ ինչ ի ժամուս, զի չիղիտէի զձեր գալոյ առ իս, որ պատրաստութիւն արեր էի, զինչ ձեզ վայել էր:

450 Ասէ աղջիկն ընդ ծառայքն, թէ՛ «Բերէ՞ք զինչ որ ուտելու ունիր»:

Բերին զրին սեղան զանազան անուշ կերակրով, և նստան անուշ ի խում, և անպակ զրին արբուցին մանկանն: Եւ աղջիկն անուշ զրուց տայր և ժղլեցնէր: Ասէ մանուկն, թէ՛ «Հրամայէ՞, որ պառկինք»:

455 Ասէ աղջիկն ընդ մանուկն.

— Ի՛նչ զիս կուզես, որ հետ քեզ մէկ լինիմ, դու պատմէ զայն խօսքն ինձ, որ յէրէկ թագաւորին դստերն ասեր ես:

Ասէ մանուկն.

460 — Զունիմ կարողութիւն, որ ասեմ, զի կու վախեմ, թէ մեռանիմ: Ապա այլ բան հարց, որ ասեմ:

Նա երգուաւ աստուած կենդանին, թէ՛ «Զբանն, որ ոչ լսեմ ի քէն, ո՛չ կատարեմ զկամս քո», և սկսաւ խաղալ ընդ նա: Եւ ասաց աղջիկն կաֆա զայս.

465 — Ես խիստ կու սիրեմ զքեզ, վասն սիրո ևս առ քեզ եկի, քեզ բազում խալաթ պիտի, լաշերուդ սիրտս կու աջրի. Եւ ուրախ կեցիր յանց սրտիս, որ և ես զքեզ սիրեցի, Զիս այլ մի՞ դատեր ի քէն, թէ չէ ինձ մեռնիլ կու հասնի: Կտրիճն ասէ.

— Հա՛յ իմ ողորմ ու սիրուն, ղետ հարբած եղայ քո սիրուն,
Ասի թէ՛ «Այս ի՞նչ բան է, պէկուման ինձ լոյս կու ցաթէ»:
Յիմ սիրտս կրակ լցիր, քո գալովդ գիս լափեցիր,
Արևկ, թէ՛ խայլալ հս դու, լույս էիր առ մեզ ծագեցիր:

Աղջիկն ճուապ ետուր կտրճին, թէ՛

ես գբեզ ի հոն սիրեցի,
Որ ղդուստրն թագաւորին իմաստուն բանիւք կապեցիր,
Լեզուտ հրեղէն քաղցր է, և զհոգիս առ քեզ գրեցիր,
Հոգիս ելած էր՝ դարձաւ, զիմ սիրտս ի հետ քեզ գիտացիր:
Կարիճն.

— Իմ սիրտս ի քո շատ սիրուդ խիստ խէվ է դարձեր արևուդ,
Աստուած գբեզ ինձի երես, յաւելի սիրեմ քան գբեզ, (Sic),
Ապա կու վախեմ, թէ՛ երթաս, նա կամ ալ չիշես դուն ըզզիս,
Դու քո սիրուդ հասանիս և յետոյ կրակն երես զիս:

Աւա՛խ, մեռանիմ ի դուր, և շունիմ մէկմ որ աւաղէր,
Քանի կենդանի կեցայ, նա ղարիպ, որ ոչ ճանաչէր.

Եւ խիստ եմ կարօտ իմ ծնողացս, մէկ մի աշս ղնոքա
տեսանէր,

Այսօր է հասէր ինձ մահ, իմ խելացս է այս ինձ եղեր:

Եւ մանուկն բորբոքեցաւ ի խիստ սիրուն, և յաղթեց զինին, և
ասէ աղջկանն, թէ՛ «Արի՛ որ պառկիւք»:

Ելաւ աղջիկն և հհան ղհալաւն ի սնարքն եղիր և շար շապ-
կովն ի գիրկն նստաւ և սկսաւ խաղալ: Եւ մանուկն ի յաղջկան սի-
րուն և ի գինուն թմրեցաւ և մեկնեց զխօսքն, և աղջկանն ոչինչ
կարաց ատենէ: Եւ աղջիկն խնդաց ինքն ի յիր միտքն, սահեցաւ ի
յանկողնոյն և ելաւ և գնաց խնդալով, և շապկին պէտ շարաւ, և
խիստ ուրախացաւ, թէ՛ «Ուսայ ղայն հանելուկն, և ինձ իրք մըն
չկարաց անել. և ընդ լուսանալն սպաննել տամ զինքն»:

Վաղվնէն ղարթեաւ մանուկն, և երեկ խելքն ի վերայ. իմա-
ցաւ, որ խափած էր զինքն, և խիստ տրամեցաւ: Եվ յետոյ տեսաւ
ղհալաւն և շատ ղոհացաւ աստուծոյ և էտռ պահեաց:

Գնաց ի դարպասն, երես բարե և նստաւ ի յոսկի յաթոռն: Ի-
մացաւ, որ թագաւորին դուստրն էր, որ իրիկունն ի մօտն էր գնա-
ցեր:

Աղջիկն ղրկեց հօրն և մօրն և իշխանացն, և եկին միաբան:
Եւ մանուկն յօտն ելաւ, ծունր էած թագաւորին, և նստան:

Ասէ թագաւորին դուստրն, թէ՛

505 — Ասեմ ղչերեկի բանն, որ յիս հարցար: — Եւ սկսաւ տառց
զամենն կարգաւ, որ իրիկունն լսեր էր: Եւ ամենեքեան զարմացան
ընդ գիտութիւն աղջկանն:

Ասէ մանուկն ընդ թագաւորն և ընդ իշխանքն, թէ.

510 — Տիեզերակալ թագաւոր, երեք օր ձեր դուստրն ինձ բան
հարցաւ, ես պատասխան տվի: Ապա ես ալ յինքն մէկ բան հար-
ցանեմ, թէ պատասխանի տայ, նա զիս յաղթեր է, և թէ ոչ՝ ես եմ
յաղթեր:

Ասէ թագաւորն, թէ.

515 — Խիստ այգոր հաւան եմք: — Եւ վկայ կացուցին զամենայն
իշխանքն, որ այլ աւելի ասուլիս չառնեն:

Ասէ մանուկն ընդ աղջիկն, թէ.

520 — Ո՞րն է այն թռչուն, որ կալայ զինքն և զինեցի, և զփետուրն
պահեցի. զինքն խորվեցի և դրի յառջևս, թէ ուտեմ: Եւ այն թռչու-
նըն ի հետն ունէր այլ ցեղ թռչունք, և իւր փետուրն էր զեղեցիկ,
որպէս զոսկի, և միւս թռչունքն իւր նման չէին: Եւ ունէր ի հետն
գէր սագ մի և ճերմակ հաց և անուշ գինի, և խորված հաւ: Կերաք
և խմեցաք և զինքն ի ծոցս առի և պառկեցայ. նա յանկարծակի
թռաւ և գնաց, ապա զփետուրն պահեր եմ, թէ չէք հաւատար, նա
զփետուրն բերեմ, որ տեսնուք, որ ուղորդ եմ:

525 Աղջիկն յերբ զայն լսեց, խիստ վախեցաւ. գիտէր, որ զիւր
յսապարն կու տար: Ասաց թէ.

— Այդ գիծար զրուց է, զայդ չեմ կարեր հաներ, գիտեմ, որ
յաղթեցեր զիս, ուզէ զինչ որ կուզես, տամ քեզ:

Ասէ մանուկն.

530 — Ես այլ իրբ չուզեմ, քան զքեզ:

Եւ իշխանքն և նաչիպանին վկայեցին: Եւ հաւանեցաւ աղջիկն,
և պսակեցին և արարին հօթ օր հարսանիք: Եւ հետուր թագաւորն
զկէս թագաւորութեան և զկէս դանձին, և որքան յաշխարհ ունէր:
Ամենեքեան ուրախացան յոյժ: Դրկեց մարդիկք և շատ զանձ այն
535 թագաւորին, որ հայրն և մայրն ի քովն էր, և երեւր զիւր ծնողքն
մօտ ի յինքն: Նորա տեսին զմիմեանս և ուրախացան և գոհացան
զաստուծոյ: Եւ զասպնջական պառուան տարուա ի դարպասն և ա-
րար իւրն մեծ: Եւ թագաւոր յետ մահուն զանձին և հեծելին և
յաշխարհին տէր կացուց զմանուկն:

540 Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս, ամէն:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂԶԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՆ ԵՒ ՀԱՐՑՄՈՒՆՔ
ՆՈՐԱ ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍՍ^{*}

Այր մի էր մեծատուն և իշխան ի քաղաքի միում և ունէր բա-
զում դանձս, ոսկի և մարգարիտ անզին և պատուական աւուհի, և
նշ գոյր ի մէջ քաղաքին այնմիկ քան զնա աւելի մեծատուն: Եւ
ինքն ծերացեալ էր և զաւակ ոչ ունէր և հանապազ աղաչէր վասն
զաւակի առ աստուած, որ ետ նմա որդի աննման և գեղեցիկ: Երբ
մեծացաւ տղայն, ետ զնա հայրն յուսումն յիմաստութեան, որ ու-
սաւ զամենայն իմաստասիրական բանս: Եւ էր պատերազմող ան-
յաղթ, բայց յետոյ անկեալ ի գեղխութեան՝ սպառեաց զգանձս
հօրն և մօրն, որք մնացին դատարկք: Ասաց որդին ընդ հօրն և
մօրն.

— Կամի՞ք հետանալ յայս երկրէս և երթալ յօտար երկիր, յո-
րում ոչ ճանաչեն զմեզ. և անդ զամօթն ի բաց թողեալ մուրանամք
և ապրիմք, և ոչ մեք արտմիմք, և ոչ մեր շարկամն ուրախանայ ի
վերայ մեր:

Ասացին ծնողքն.

— Դո՞ւ գիտես, որդեակ:

Էսո մանուկն զհայրն և զմայրն և զնաց ի Հոօմ քաղաք, յո-
րում կայր թագաւոր մի բարի և իմաստուն: Եւ թագաւորն այն
յորս էր ելեալ. և երբ եկն յորսոյն, եմուտ մանուկն առ թագա-
ւորն, եղ ծուռ և կանգնեցաւ: Եւ սկսաւ թագաւորն խօսիլ ընդ
մանկանն և ասաց.

— Զի՞նչ խնդրես յինէն, զոր տացից քեզ:

Ասաց մանուկն.

— Թաղաւոր, յաւիտեան կաց. ես երկու ծառայ ունիմ՝ այր և
կին, զոր կամիմ վաճառել, բայց խնդրեմ, զի առցես զնոսա:

Ասաց թագաւորն.

— Բեր և ես առից:

* Ի խումբ, Երրորդ խմբագրութիւն, ապազրկած.

Գնաց մանուկն առ հայրն և մայրն և ասաց ցնոսա թէ՝ «Ինչ պատէ՞հ է ինձ՝ այնպէս առնեմ, աշխինքն՝ դուք զատ ապրիք և էս զատ»:

30

Ասացին ծնողքն.

— Դո՛ւ գիտես, որդեակ:

Ասաց մանուկն.

35

— Կամիմ վաճառել դձեղ այս թագաւորիս, որ հասուցանէ ձեզ բարի, և ինձ ևս բարի լինի, բայց ջանամ շուտով ազատել դձեղ: Արդ, զի՞նչ հրամայէք, ո՞վ ծնողք իմ:

Եւ նոքա ասացին.

— Դո՛ւ գիտես, որդեակ:

Եւ էառ մանուկն զհայրն և մայրն և զնաց առ թագաւորն:

40

Ասաց թագաւորն ցմանուկն, թէ՝ «Քանի՞ վաճառես»:

Ասաց մանուկն.

— Տո՛ւր ինձ վասն այս կին ծառայիս զին լաւ ձի և զէն իւր սարօքն, և վասն այր մարդոյն զին՝ տուր ինձ հանդերձ և զգետտ պատուական:

45

Հրամայեաց թագաւորն, զինչ որ մանուկն խնդրեաց վասն իւր ծառայիցն զին, լրապէս ետուն նմա, և թուր մի ոսկի գօտով: Եւ էառ մանուկն զամենայն, զոր պարգեւեաց նմա թագաւորն: Ապա ասաց թագաւորն մանկանն.

— Զայլ ի՞նչ կամիս խնդրել յինէն՝ խնդրեա, զոր տաց քեզ:

50

Ասաց մանուկն.

— Հարիւր ֆլորի ևս տուր ինձ վասն ծախուց ճանապարհի: Հրամայեաց թագաւորն, և ետուն նմա: Դարձեալ ասաց թագաւորն.

— Զայլ ի՞նչ խնդրես յինէն:

55

Ասաց մանուկն.

— Հրաման տուր ինձ, որ խօսիմ ընդ քո ծառայիցն, զոր յինէ գնեցեր, և առնում զօրհնութիւնս ի նոցանէ:

Յայնժամ ծանեաւ թագաւորն, թէ՛ նորա ծնողքն են ծառայքն այնոքիկ: Եւ հրաման մանկանն, և նա զնաց և անկաւ յոտս ծնողացն և ասաց.

60

— Մի՛ հոգայք, եթէ աստուած կամենայ՝ դձեղ շուտով ազատեմ:

Եւ ծնողքն օրհնեցին զգաւակն իւրեանց: Եւ մանուկն յիշեաց զաստուած և մեկնեցաւ ի ծնողացն լալով: Եւ զնաց զերիս տիւս

65 և գերիս գիշեր ի մեծ դաշտ մի, և ի դնալն հանդիպեցաւ ընտիր մանկան միոյ: Բարեկեցին զմիմեանս և ընկերացան ի ճանապարհին: Եւ երբ ընկերացան, միւս մանուկն ծանեաւ զսորհորդ մանկանն, որ զհայրն և զմայրն վաճառեալ էր, և ասաց նմա.

70 — Դիտացիր, եղբայր, զի իմ թագաւորն զիս խիստ սիրէ, վասն որոյ թուղթ աւետեաց ետ ինձ, զոր տանիմ առ կղզեաց թագաւորն և առնում ի նմանէ պարգևս մեծամեծս: Այլ տեսանեմ դքեղ, զի դու խոհեմ մանուկ ես և լաւ ձիաւոր, քան զիս. առ ըզթուղթն և դու տար զայն թագաւորին, զի քեզ շատ բարիս պարգևէ: Եւ զինչ աստուած ինձ արժանի արարեալ է՝ քեզ լիցի. բայց ես աստ սպասեմ, մինչև զու գաս առ իս:

75 Էառ մանուկն զայն թուղթն և էդ ի մէջ ի սեկէ գործեալ քսակին և գնաց ի ճանապարհն իւր ի մեծ դաշտ մի: Եւ յանկարծակի յիշեաց զհայրն և զմայրն իւր և ելաց, և ի շատ հառաջանացն ննջեաց ի վերայ ձիոյն: Եւ ձին ի ճանապարհէն ելեալ ի դուրս՝ կորոյս ի քնոյն զճանապարհն: Եւ յանկարծակի զարթեալ ի քնոյն. և էր ծարաւեալ ինքն և ձին, և ջուր ոչ գոյր, այլ մոլորեալ շրջէին: Եւ եգիտ ջրհոր մի հին ժամանակաց, և ի ծարաւոյն կամէր ի ջրհորն անկանիլ: Ապա եհան ի սեկէ գործեալ քսակն՝ յորում եղեալ էր զթուղթն, կտպեաց ի նա պարան և եհան նովար ջուր ի ջրհորոյ. և 85 ըմպեաց ինքն և արբոյց ևս ձիոյն իւրոյ: Եւ ապա սկսաւ ինքնին կարդալ զթուղթն զայն, որ գրեալ էր այսպէս.

«Այս անուն կղզեաց թագաւորի ողջոյն սիրոյ: Դիտացի՛ր, եղբայր, զի այդ թղթաբերդ անհաւատ մարդ է և մեզ նենգաւոր: Դա մեծ էր առ մեզ և ամենայն զանձուց սպառող. մերձեցաւ 90 առ դուտոր իմ և վնաս դործեաց ընդ նմա, և ևս կամեցայ զինքն կորուսանել, այլ պատրաստեցի քեզ, զի մի՞ որ խաչատառակութիւնն մեր իմաստէ աստ: Վասն որոյ առաքեցի առ քեզ կորուսանել զսա, ի սէր և դրայրութեան մերոյ»:

Երբ ծանեաւ մանուկն զայս՝ պատառեաց զթուղթն և գոհացաւ զաստուծոյ և օրհնեաց զիւր ծնողքն, որ զինքն ուսումնադէտ արարին, զի զիտութեամբն իւրով ապրեցաւ ի մահուանէ: Եւ աղաչեաց զաստուած ցոյց տալ ինքեան զճանապարհն, զի մոլորեալ շուրջ գայր զտիւ և զգիշեր, և հարցանէր զանուն թագաւորին և զայն քաղաքն, յոր գնալոց էր: Եւ առաջնորդեաց աստուած նմա զճանապարհն, և ևմուտ ի քաղաքն յայն: 100

Եւ էր այն քաղաքին թագաւորն մեծ և քաղաքն բարեիլ, յո-

որում իշխանեացաւ մանուկն ի տան պառաւի միոյ: Եւ յետ հանդէ-
լոյ սակաւիկ ինչ, սկսաւ հարցանել ցալառաւն զորպիսութենէ քա-
ղաքին և թագաւորին: Եւ պառաւն ասաց, թէ՝ «Այս քաղաքիս թա-
գաւորն զուտոր մի ունի խիստ աննման և զեղեցիկ և իմաստուն,
որ ոչ գոյր իւր նման. բայց ի մանկութենէն մինչև ցայժմ զիննսո:ն
և ինն որդի թագաւորի ետ սպանանել»: Ասաց մանուկն.

— Վասն ի՞նչ պատճառի ետ սպանանել:

Ասաց պառաւն.

- 110 — Որդեակ, զուտորն այն ասէ, թէ՝ «Ով զիս յաղթէ իմաս-
տութեամբ, ես զնա առնեմ ինձ այր, և եթէ ես յաղթեմ զնա, տա՛մ
սպանանել զինքն»: — Եւ այդ պատճառաւ յաղթէ զթագաւորաց որ-
դիսն և սպանանէ և զգլուխսն նոցա ի վերայ բարձրաւանդակէ
իւրոյ ցցեալ կանգնեցուցանէ, զի բարձրաւանդակն իւր զբոլոր
115 քաղաքն տեսանէ: Եւ ի նմա ունի աթոռ ոսկի՝ աւկամբ և մարգա-
տով շինեալ. անդ նստի և հայի առ մարդիկ ի տեղւոջն ի վայր:
զի մարդ բնաւ զինքն չկարէ տեսանել: Եւ ունի պառաւ մի թարգ-
ման, նա խօսի զհետ մարդոյ, որ առ ինքն մտանեն:

- Եւ ի լսել մանկանն զբանն զայսոսիկ ի պառաւոյն, զգիշերն
120 ողջոյն ոչ ննջեաց ի քուն: Եւ երբ լուսացաւ, գնաց ի բաղանիք, և
զգեցաւ զիւր ոսկեկար հանգերձն և անուշահոտեցաւ մշկով և
բուրկենիւ, և գնաց ի թագաւորի դատեր դուռն և խնդրեաց հրաման
մօտ առ թագուհին մտանել:

Եւ մարդիքն, որ ի դուռն էին, խրատ ետուն մանկանն թէ՝

- 125 «Պատրաստ կաց, զի շատ թագաւորի որդի ետ սպանանել»:

- Եւ երբ եմուտ մանուկն ի ներս, բարեկաց զաղջիկն: Եւ նա
հրամայեաց սպասաւորացն իւրոց. հոգին զուսկեղէն աթոռ, յորոյ
վերայ նստաւ մանուկն: Եւ գիտաց աղջիկն, թէ վասն պատասխա-
նի տալոյ հարցմանն իւրոյ եկեալ է մանուկն այն: Վասն որոյ ազդ
130 արար հօրն և մօրն իւր և կարգացողաց և իշխանաց քաղաքին, որք
եկեալ ժողովեցան ի միասին անդ: Եւ ասաց աղջիկն իւր պառաւ
թարգմանին, թէ՝ «Ասա մանկանդ աչգորիկ. կամի՞ ըմպել զբաժակ
մահու ի կթղայէն յայնմանէ, յորմէ ետու ըմպել ընկերացն իւրոց»

- Եւ ասաց մանուկն ցթարգմանն այն, թէ՝ «Եղիցին կամք տէ-
135 առն օրհնեալ, զի որպէս կամի, այնպէս տունէ տէր»:

Յայնժամ ասաց աղջիկն առաջի հօրն և մօրն և կարգացո-
ղաց և իշխանաց քաղաքին.

— Եթէ մանուկս այս տացէ պատասխանի հարցմանս իմոյ.

առցէ դիս ի կնութիւն իւր, ապա թէ ոչ՝ ես տալից սպանանել զնա,
140 վասն որոյ և դուք ամենեքին եղերուք վկայ բանիցս այսոցիկ:
Եւ մանուկն եւ հաճեալ հաւանեցաւ խօսից աղջկանն և կացոյց
զնոսա վկայս:

Հարցմունք Ա.

- Ասէ աղջիկն.
145 — Ո՞վ է քո հայրն:
Ասէ մանուկն.
— Հոգմն և հուրն:
Ասէ աղջիկն.
— Ո՞վ է քո մայրն:
150 Ասէ մանուկն.
— Հոգն և ջուրն:
Ասէ աղջիկն.
— Յորում կենդանակերպի ծնեալ ես:
Ասէ մանուկն.
155 — Ի հոյ կենդանակերպի:
Ասէ աղջիկն.
— Ով է քո դայեակն:
Ասէ մանուկն.
— Այն է իմ դայեակն, որ զիս տեսանէ, և ես զնա ոչ տեսա-
160 նեմ, նա զիմ ձայնն լսէ, և ես զնորա ձայնն ոչ լսեմ:
Եւ ասաց աղջիկն, թէ՝ «Հարց-պատասխանիքս, զոր արա-
բաք, եւ իաղալիք տղայոց, ապա թողցուք զայնպիսիս և նորոգ
սկսեսցուք առնել հարց ու պատասխանիս»:
Ասէ աղջիկն.
165 — Որո՞ց արիւնն էր այն, որ անմեղ սպանութեամբ հեղաւ ի
վերայ երկրի:
Ասէ մանուկն.
— Աբելի արիւնն էր այն, զոր Լղբայրն իւր Կայէն սպան,
Ասէ աղջիկն.
170 — Ո՞ք էին, որք ոչ ծնան ի մօրէ, բայց ողջ մնացին ի վերայ
երկրի և յետոյ մեռան:
Ասէ մանուկն.
— Ադամ և Եւայ էին և խոյն այն կախեալ ի սաբեկայ ծա-

- 175 ասյն, զոր առեալ Աբրահամ փոխանակ որդւոյ իւրոյ Իսահակալ ա-
 րար ողջակէզ:
 Ասէ աղջիկն.
 — Ո՞չք էին, որք ծնան ի հօրէ և ի մօրէ և ոչ մեռան:
 Ասէ մանուկն.
 — Ենովք և Եզրա էին, որք մարմնով վերացան յերկինս և
 180 կան անդ կենդանի մինչև յաւուրս նեոին:
 Ասէ աղջիկն.
 — Այն ի՞նչ ծառ էր, որ ունէր ճիւղ և տերև և յետոյ ի միս և
 յարիւն փոխեցաւ:
 Ասէ մանուկն.
 185 — Այդ Մովսէս մարգարէի դաւադանն էր, որ մինչ ծառ էր,
 ունէր ճիւղ և տերև, և երբ օձ դարձաւ՝ միս և արիւն եղև:
 Ասէ աղջիկն.
 — Ո՞վ էր այն, զոր առաքեաց աստուած որպէս դեսպան առ
 Ադամ, որ ոչ հրեշտակ էր և ոչ մարդ:
 190 Ասէ մանուկն.
 — Երբ Կալէն սպան զեղբայրն իւր զԱբել, Ադամ հայրն իւր
 ոչ գիտէր, թէ զինչ արասցէ զմարմինն մեռելոյն, վասն որոյ ա-
 ռաքեաց աստուած զերկու ազգաւ իւր դեսպան, որ և կեալ առ Ա-
 դամ մինն զմիւսն սպան և թաղեաց ի հող, ապա և Ադամ ունեալ
 195 ի նմանէ՝ փորեաց զգետինն և թաղեաց զմարմինն որդւոյ իւրոյ
 Աբելի:
 Ասէ աղջիկն.
 — Ո՞վ էր այն, որ մեռաւ և մարմինն իւր ոչ թաղեցաւ ի հող,
 և հողին ոչ գնաց առ աստուած:
 200 Ասէ մանուկն.
 — Այդ Ղովտայ կինն էր, որ յելանէլն յերկրէն սողոմացուց,
 բնդդէմ հրամանին աստուծոյ դարձաւ և հայեցաւ յետս և ևղև ար-
 ձան աղի, վասն որոյ ոչ մարմին նորա ի հող եմուտ և ոչ հողին
 առ աստուած գնաց:
 205 Ասէ աղջիկն.
 — Ո՞վ էր այն, զի երբ տարան զնա լինել կերակուր գազա-
 նաց, զազանք թողեալ զնա՝ զտանողն կերին:
 Ասէ մանուկն.
 — Այդ Դանիէլ մարգարէն էր, զոր տարան կերակուր տոհմ-
 210 ծոց, ալլ գազանքն թողեալ զնա՝ զտանողն կերին:

Ասէ աղջիկն.

— Ո՞վ էր այն, որ իբր ի գերեզմանի թաղեցաւ և ինքն ողջ մնաց:

Ասէ մանուկն.

215 — Այդ Յովնան մարգարէն էր, զոր ձուկն եկուլ, բայց ինքն ի փոր ձկան ողջ մնաց և եղև շարժուն և զնայուն:

Ասէ աղջիկն.

— Ո՞վ էր այն, որ մինչ կենդանի էր, յարդ և գարի ուտէր և ջուր ըմպէր, և երբ մեռաւ՝ միս և արիւն մարդոյ կերաւ և ըմպեց:

220 Ասէ մանուկն.

— Այդ այն իշոյ ծնօտն էր, զոր մանուկն Սամփօսն էառ ի ձեռին իւր և նովաւ սպան զհաղար մարդ:

Ասէ աղջիկն.

225 — Որո՞յ մարմինն էր այն, զոր եղին ի հող, հողն ասաց, թէ՝ «Ես կոյս եմ»:

Ասէ մանուկն.

— Այդ Աբելի մարմինն էր, որ եղև սկիզբն մտանելոյ ի հող, զի մինչև ցայն չե էր թաղեալ ի վերայ երկրի մարմին մարդոյ:

Ասէ աղջիկն.

230 — Ո՞վ էր այն, որ ոչ հրեշտակ է և ոչ մարդ և ոչ կենդանի, բայց ի տասն և հինգ ամ թաղաւորէ և ի տասն և վեց ամին թաղաւորութեան իւրոյ հիւանդանայ և յերեսուն ամին մեռանի և դարձեալ ողջանայ:

Ասէ մանուկն.

235 — Այդ լուսին է, որ մինչ օրն ամսոյ լինի տասն և հինգ՝ լըրումն առնու, և ի տասն և վեց օրէն սկսանի սակաւ առ սակաւ նուազիլ մինչև ի քսան և ինն օրն. և ի լրանալ երեսուն աւուր ամսոյն՝ ոչ երևի պայծառ լոյս նորա, որպէս զառաջինն, իբր թէ մեռանի և ապա անդէն սկսանի կենդանանալ:

240 Ասէ աղջիկն.

— Այն ի՞նչ ծառ է, որ ունի երկոտասան ճիւղս և իւրաքանչիւր ճիւղք՝ երեսուն տերեւս, և պտուղն իւր սեաւ և սպիտակ է:

Ասէ մանուկն.

245 — Այդ ծառն ցուցանէ զտարին, և երկոտասան ճիւղքն՝ զերկոտասան ամիսս տարւոյն, և երեսուն տերեւքն՝ զերեսուն օրն ամսոյն, և պտուղն իւր սեաւ և սպիտակ՝ զգիշերն և զտիւն:

Ասէ աղջիկն.

— Այն ի՞նչ երկու իրք են հակառակք միմեանց՝ և զկնի միմեանց ընթանան, և ոչ կարէ մինն զմիւսն ըմբռնել:

250 Ասէ մանուկն.

— Այդ տիւն և զիշերն է, որ միշտ ներհակք են միմեանց, շի մինն զմիւսն ի բաց վարէ յինքենէ՝ կամ ծագմամբ արևու յուսուտընելով զոլորտս ամենայն տիեզերաց և կամ խաւարաւ ծածկելով զերևսս երկրի:

255 Ասէ աղջիկն.

— Այն ի՞նչ թռչուն է, որ ուտէ զգալարիս զյարդ, զցորան և զգարի և սպառէ:

Ասէ մանուկն.

260 — Այդ մորեխն է, որ է փոքր կենդանի ինչ թևաւոր և թռչի և ոստոստէ և ճարակեալ ծախէ զգալարիս և թռուցեալ ծածկէ զերևսս երկնից բազում մղոնիք:

Եւ ապա տեսեալ աղջիկն զհամարձակութիւն մանկանն, զոր աներկիւղ տալը պատասխանի հարցմանն իւրոյ, ասաց ցնա.

265 — Արի ե՛լ և ցնա աստի, ով մանուկ դու, զի թէպէտ այսօր ազատեցար ի ձեռաց իմոց, այլ ի վաղիւն տեսցուք, թէ զիս՞րդ կարես ազատիլ:

270 Եւ մանուկն ասաց նմա, թէ՝ «Նոյն աստուածն, որ փրկեաց զիս այսօր ի ձեռաց քոց, կարող է ևս ի վաղիւն փրկել»։ Զայս ասացեալ զնաց խնդալով առ իջեանսն իւր՝ մօտ առ պառան, որ լայր և կոծէր զանձն դառն արտասուօք, զի կարծէր, թէ մանուկն մեռեալ է, ապա երբ ետես զնայ ողջ, խիստ ուրախացաւ և ասաց ցմանուկն.

— Բարի եկիր դու, որդեա՛կ, ահա այսօր նոր ծնար յարգանդէ մօր քո:

275 Եւ ամենեքին, որ տեսին զմանուկն, զարմացան յոյժ, զի մինչև ցալն ոչ որ էր ի մարդկանէ ապրեալ ի ձեռաց թագուհոյն:

280 Եւ ի լուանալ առաւտտուն զնաց մանուկն ի դուռն թագուհւոյն և բարեկաց զնա: Եւ նա հրամայեաց սպասաւորացն իւրոց, Եղին զնոյն զոսկեղէն աթոռն, յորոյ վերայ նստաւ մանուկն: Եւ ասաց աղջիկն.

— Բարի եկիր դու, մանուկ. ունի՞ս այսօր ևս կարողութիւն տալ պատասխանի հարցմանս իմոյ:

Եւ նա ասաց, թէ՝ Մեծ է զօրութիւն և կարողութիւնն աստու-

285 ծոյ, զի անհնարինք ի մարդկանէ, հնարաւորք են առ աստուած,
վասն որոյ հրամայեալ, ո՞վ թագուհի, զի՞նչ և կամիս հարց:

Հարցմունք Բ.

Ասէ աղջիկն.

— Ո՞վ էր էգն այն, որ ծնաւ յորձէն:

Ասէ մանուկն.

290 — Այդ եւայ էր, որ ծնաւ հրամանաւն աստուծոյ ի կողիցն
Ադամայ:

Ասէ աղջիկն.

— Ո՞վ էր այն, որ սպան զմարդ, դնաց հոգի իւր յարքայու-
թիւն, և մեռնողին՝ ի դժոխքն:

295 Ասէ մանուկն.

— Այդ Ղամէք է, որ սպան զկայէն, զհոգի իւր դնաց յարքա-
յութիւն, և Կայէնին՝ ի դժոխքն, զի անմեղ սպանութեամբ սպա-
նեալ էր զեղբայրն իւր զԱբէլ:

Ասէ աղջիկն.

300 — Ո՞ր էր այն, զոր արկին ի դուր կերակուր զազանաց և
նոքա ոչ կերին զնա:

Ասէ մանուկն.

305 — Այդ Յովսէփ զեղեցիկն էր, զոր եղբայրքն իւր տարեալ
ընկեցին ի գուր՝ լինել կերակուր զազանաց, բայց գազանքն ոչ
կերին զնա, և ինքն ողջ մնաց:

Ասէ աղջիկն.

— Ո՞վ էր այն, որ զմերկութիւն հօրն յայտնեաց եղբարցն
իւրոց և յետոյ ընկալաւ ի հօրէ իւրմէ զանէծս:

Ասէ մանուկն.

310 — Այդ Քամ էր, որ հտես զնոյ զհայր իւր արբեալ ի գինւոյ,
զի մերկ ննջէր ի տան, և ոչ ծածկեաց զմերկութիւն, այլ հայտ-
նեաց եղբարցն իւրոց, վասն որոյ ընկալաւ ինքն զանէծս ի հօրէն,
և եղբարքն իւր՝ զօրհնութիւնս, զի նոքա զերեսս իւրեանց յետս
ունելով՝ ծածկեցին զմերկութիւն հօրն իւրեանց:

315 Ասէ աղջիկն.

— Ո՞վ էր մանուկն այն, զոր մայրն իւր եղեալ ի մէջ տապա-
նակի ընկեց ի գետն, և նա ողջ մնաց:

Ասէ մանուկն.

— Այդ Մովսէս մարգարէն էր, զոր մինչ մանուկ էր իրր շորից

320 ամսոց, մայրն իւր վասն ահին փարաւոնի եդ ի մէջ պրտուեայ տապանակի ծեփեալ կպրաձիւթով՝ ընկեց զնա ի գետն, զոր տեսեալ դուտորն փարաւոնի հանեալ ի դետոյն, երաց զտապանակն և էառ զմանուկն ի միջոյ նորա, յորում լայր:

Ասէ աղջիկն.

325 — Ո՞ւլ էր այն, որ փոքր էր մարմնով և մանուկ հասակաւ, և քան զինքն զօրեղն և մեծն՝ միով քարամբ սպան:

Ասէ մանուկն.

330 — Այդ Դաւիթ մարգարէն էր, զի երբ փոքր էր ի մէջ Լղբարց իւրոց, եւ ընդդէմ Գողիաթո՝ առն զօրաւարի և հսկայի, և միով պարսաքարիւ եհար զճակատ նորա, և ընթացեալ ի վերայ նորա՝ էառ զսուսեր նորին, և եհատ զգլուխն:

Ասէ աղջիկն.

— Այն ի՞նչ ստորին տեղի է, որ ի սաեղծմանէ աշխարհիս ոչ տեսեալ է զլոյս արեւո:

335 Ասէ մանուկն.

— Այդ ծովու յատակն է, յորում ժողով բազմութեան ջուրց կուտակեալ ոչ երբէք տեսանէ զճառագայթս արեւո:

Ասէ աղջիկն.

340 — Այն ի՞նչ երկու իրք են, որք քանի տպրին՝ այնքան մեծանան, մինչ զի ոչ գտանի աւելի մեծ, քան զնոսա:

Ասէ մանուկն.

— Մինն ձուկն է և միւսն օձն, զի ձուկն որքան սնանի ի ջուրս, այնքան մեծանայ, և ոչ գտանի աւելի մեծ, քան զնա: Նոյնպէս և օձն, մինչ սկսանի սողալ ի վերայ երկրի, այնքան առաւել աճի և մեծանայ, և ոչ գտանի քան զնա աւելի մեծ:

345 Ասէ աղջիկն.

— Այն ի՞նչ երկու սիրելիք են, որք ատեն զմիմեանս:

Ասէ մանուկն.

350 — Այդ հոգին և մարմին մարդոյ է, զի մինչ միաւորեալ են ընդ միմեանս՝ սիրեն զիրեարս, բայց երբ բաժանին ի միմիանց՝ ատեն զիրեարս:

Ասէ աղջիկն.

— Այն ի՞նչ երկու իրք են, որք առնեն երբեմն զմարդն ազատ և դարձեալ հարուստ և փարթամ:

355 Ասէ մանուկն.

— Ապրշմի ճճին է և խելքն մարդոյ, զի ճճին այն երբեմն

տայ սակաւ զապրշում, որով տեարքն իւրեան լինին աղքատ, բայց
երբեմն տայ առատ, քան զոր ակն ոչ ունին, և լինին անդրէն հա-
360 տայ վնաս բազում և առնէ զմարդն աղքատ, այլ անդրադարձ
խորհրդով ուղղեալ՝ առնէ հարուստ և փարթամ:

Ասէ աղջիկն.

— Այն ի՞նչ տուն է, որոյ մէջն լի է ոսկւով և դուռն նորա
365 շրջապատեալ է արծաթով, բայց երբ մի կողմ որմոյ իւրոյ արատա-
ւորի և քակի, ոչ կարեն շինել զնա, թէ և ճարտարք ամենայն աշ-
խարհի ի մի եկեացեն:

Ասէ մանուկն.

— Այդ ձուն է, յորոյ մէջն եղեալ զեղնուցն նման է ոսկւոյ
և ի վերայ նորա շրջապատեալ կեղնն նման է արծաթոյ, սակայն
370 երբ խորտակի ինքն, ոչ ոք ի մարդկանէ կարէ շինել զայն:

Եւ ապա հայեցեալ աղջիկն ի համարձակութիւն և յաներկիւզ
պատասխանիս մանկանն, ասաց ցնա.

— Արի ե՛լ և գնա՞ աստի, մանուկ դու. և թէպէտ այսօր աղա-
տեցար ի ձեռաց իմոց, բայց ի վաղիւն տամ քեզ ըմպել զբաժակ
375 մահու, որպէս ետու ըմպել ընկերաց քոց: — Եւ այսպէս կամէր ահ
արկանել նմա:

Եւ մանուկն, որպէս յառաջագոյն ասաց աղջկանն, զնոյն
ալժմ երկրորդեաց և ել անդի և գնաց խնդալով ի տեղի իւր:

Եւ ընդ առաւօտն, յորժամ արեգակն յերկիր ծաւալեաց զլուս
380 իւր, զնաց մանուկն ի դուռն թաղուհոյն և ետ բարե նմա և ա-
սաց, թէ՛ «Դիշիրս այս բարեաւ լուսացաւ քեզ»:

Եւ հրամայեաց աղջիկն և եղին զոսկեղէն աթոռն, նստաւ մա-
նուկն: Եւ ասաց աղջիկն.

— Ափսոսամ և ցաւիմ ի վերայ զեղեցիկ մոռկութեան քո, զի
385 այսօր եթէ ոչ կարիցես տալ պատասխանի հարցմանս իմոյ, վաղ-
վաղակի տամ ածել զսուր ի պարանոց քո:

Եւ մանուկն յաւէտ, քան զառաջինն, համարձակ և աներկիւզ
ասաց ցնա.

— Հրամայեա՛, ո՛վ թագուհի, զինչ և կամիս հարց:

390

Հարցմունք Գ.

Ասէ աղջիկն.

— Ո՞րք էին, որք անվնաս անցին զնացին ընդ մէջ ծովու, իբր

ընդ ցամաք, բայց զկնի նոցա եկողքն ընկղմեցան ի խորս ծովու և ոչ մնաց ողջ ի նոցանէ և ոչ մի:

395

Ասէ մանուկն.

— Իսրայէլացիք էին, զոր առեալ ընդ իւր մարգարէն Մովսէս ձգեաց զգաւազան իւր ի վերայ Կարմիր ծովուն և պատառեալ ըղջուրն՝ անցոյց ընդ ցամաք, այլ զկնի նոցա մտին եղիպտացիքն, և ծածկեաց զնոսա ջուր ծովուն և ընկղմեցան ամենեքին, որպէս կապար ի ջուր սաստիկս:

400

Ասէ աղջիկն.

— Ո՞չք էին, զորս արկին ի մէջ հրոյն բորբոքելոյ, և ոչ մեծ-ձեցաւ ի նոսա հուրն, և մնացին ողջ:

Ասէ մանուկն.

405

— Երեք մանկունքն էին, այսինքն՝ Սեղրաք, Միսաք և Նաբեղնագով, որք ոչ երկրպագին պատկերին ոսկւոյ, վասն որոյ ետ նաբուգոդոնոսոր կապել զձեռս և զուտս նոցա և արկանել ի հնոյ հրոյն բորբոքելոյ, յորում զնային նոքա և օրհնէին և փառաւոր առնէին դաստուած, որ ապրեցոյց զնոսա ի հնոցէ անտի:

410

Ասէ աղջիկն.

— Ո՞վ էր այն, զոր աստուած ի ձեռն սատանայի փորձեաց յոժ, և նա տանէր համբերութեամբ այնպիսի անլմբերելի արկածիցն սատանայի, զոր ածէր ի վերայ նորա, և ոչ երբէք մեղաւ ընդդէմ կամացն աստուծոյ:

415

Ասէ մանուկն.

— Այդ Յուր երանելին էր, առ որ թոյլ տալովն աստուծոյ եկն սատանայ և քանիցս անգամ փորձեաց զնա պէս պէս մահաբեր վնասիւք. զովեաց զնա յընչից և ի ստացումածոց, յորդոց և ի դրստերաց և մերկ կողոպուտ նստոյց զնա շարաշար վիրօք յաղբիւսս արտաքոյ քաղաքին և ոչ կարաց տալ մեղանչել ընդդէմ օրինացն աստուծոյ, զի երանելին այն զայս ասէր, թէ՛ «Ջամեհայն ինչ, զոր ունէի ես, տէր ետ ինձ, և այժմ ես տէր էաւ ի ձեռաց իմոց, վասն որոյ եղիցին կամք տեսուն օրհնեալ»:

420

Ասէ աղջիկն.

425

— Ո՞վ էր այն, որ ոչ հրեշտակ էր և ոչ մարդ, և ետ խրատ մարդոյ:

Ասէ մանուկն.

— Այդ Բաղաամու էն էր, զի մինչ երթալոյ Բաղաամ անիծանել զԻսրայէլ, տեսեալ իշոյն զհրեշտակ աստուծոյ, զարձաւ ընդդէմ

430 Բաղաամու, և նա եհար ղնա գաւազանսուն իւրով, յայնժամ երաց
աստուած զբերան իշոյն, որ սկսաւ խրատ տալ և ասել ցԲաղաամ.
«Դարձիր յետս և մի՞ երթար անիծանել զԻսրայէլ»:

Ասէ աղջիկն.

— Ո՞րք էին, որք ոչ հրեշտակ էին և ոչ մարդ, և առաքեցան
435 նման մարդոյ՝ բերել յաշխարհէ զլուր աւետեաց.

Ասէ մանուկն.

— Աղոսան և աղանին էր, զորս Նոյ ի տապանէ իւրմէ արձա-
կեաց ի ցամաք՝ տեսանել թէ իցէ՞ ցածուցեալ ջուրն ջրհեղեղին
յերեսաց երկրէ. բայց աղանին միայն ունելով շիղ ձիթենոյ ի բե-
440 րան իւր, դարձաւ առ Նոյ տալով զաւետիս նուազելոյ ջրոյն յերե-
սաց երկրէ:

Ասէ աղջիկն.

— Ո՞վ էր այն, որ էր մեծ և անդրանիկ, բայց միով ոսպնա-
թանիւ վաճառեաց զանդրանկութիւնն իւր կրտսեր եղբոր իւրում:

445 Ասէ մանուկն.

— Այդ Իսահակայ որդին՝ Նսաւն էր, որ մինչ եկն ի դաշտէն
քաղցեալ, ասաց ցՅակոբ կրտսեր եղբայր իւր, որ եփեալ էր զթան,
թէ՞ «Տ՛ուր ինձ ճաշակել յայնմանէ»: Եւ նա ասաց ցնա. «Եթէ ոչ վա-
ճառեսցես ինձ զանդրանկութիւնս քո, ոչ կարես ճաշակել ի նմանէ»:
450 Եւ Նսաւ, ոչ երբէք համբերելով, վաճառեաց միով ոսպնաթանիւ
զանդրանկութիւնն իւր Յակոբայ եղբոր իւրոյ:

Ասէ աղջիկն.

— Ո՞րք էին, որք երբ մտին յԵգիպտոս՝ Եօթանասուն և հինգ
ոգիք էին, բայց հրբ անտի շուեցին՝ վեցհարիւր հազար ոգիք
455 եղին:

Ասէ մանուկն.

— Յակոբ Նահապետն և ամենայն որդիքն և դստերք իւր, և
որդիք որդւոց իւրոց՝ հանգերձ ընտանեօքն իւրեանց, երբ ելեալ
յերկրէն Քանանացւոց մտին յԵգիպտոս, էին ոգիք Եօթանասուն
460 և հինգ, այլ երբ անտի շուեցին յանապատ ի Սոկքովթ, եղևն վեց-
հարիւր հազար այլ:

Ասէ աղջիկն.

— Զանբոյսն ի վերայ անծինն բարձին և անդադարին երդովքն
անցուցին:

465 Ասէ մանուկն.

— Անբոյսն աղն է, անծինն ջորին է, անդադարն՝ ջուրն է,

երդիքն՝ կամուրջն է, քանզի զաղն երբ բառնան ի վերայ ջորոյն, եթէ իցէ յանցս ճանապարհի գետ ջրոյ, անցուցանեն զջորին ընդ կամուրջն ջուրց ի ցամաք:

470 Ասէ աղջիկն.

— Այն ի՞նչ երեք իրք են, յորոց մինն խուփ շունի, երկրորդն՝ սիւն, երրորդն՝ կաթն:

Ասէ մանուկն.

475 — Այդ երեքին բանքդ են այսորիկ. առաջինն ծովն է, որ ոչ ունի ի վերայ իւր խուփս, այսինքն ծածկոցս. երկրորդն երկինքն է, որ առանց սեան հաստատեալ կայ. երրորդն՝ հաւն է, որ շունի զկաթն: Բայց ընդ սոսին գոյ մի կս, և է այն մարդոյ ձեռաց մէջն, յորում ամենեկին ոչ բռտանի մաղ:

480 Եւ աղջիկն յայտոցիկ պատասխանեացս մանկանն երկեաւ և ասաց ցնա, թէ՝ «Դու մի աւելի ասացեր, զի ես երիս բանս հարցի քեզ, և դու զջորս ետուր պատասխանի. արդ՝ արի ե՛լ և զնա՞, զի այսօր ես ազատեցար ի ձեռաց իմոց, բայց ի վաղիւն տամ՝ զպատիժն մահու կենաց քոց, որպէս ետու ընկերացդ»:

485 Եւ մանուկն ասաց ցնա, թէ՝ «Ես յարարիչն երկնի և երկրի միայն ապաւինեալ եմ և ոչ ի մարդ յուսացեալ, զի որպէս կամի տէր, նոյնպէս առնէ»: — Եւ զայս ասացեալ եւ անտի և գնաց խընդալով յիւր իջեանքն:

490 Եւ ընդ լուսանալ առաւօտուն եկն մանուկն ի դուռն թաղուհւոյն և բարեկաց աղջիկն, և նա հրամայեաց և եղին զոսկեղէն տթոռն, և նստաւ մանուկն: Եւ ասաց աղջկանն.

— Հրամայեա՛, ո՞վ թաղուհի, զայլ ինչ կամիս հարց:

Եւ նա ասաց ցնա.

— Ո՞վ մանուկ դու, այժմ կարդն հարցման քո է, վասն որոյ հարց զինչ և կամիս, և ես տացից քեզ պատասխանի:

495 Ասէ մանուկն.

500 — Ո՞վ էր այն, որ հարուստ էր՝ աղքատացաւ և չիւր աղքատութեանն զգեցաւ զհայրն իւր, որպէս զհանդերձ, և հեծաւ ի վերայ մօրն, որպէս ի վերայ ձիոյ, և գնաց զտանիւ զինչսն և զապրանքն իւր, զոր կորուսեալ էր: Եհաւ ի վերայ իւր մահն, և նա էառ զմահն ի վերայ ձիոյն, և նովաւ էարբ զջուր և արբոյց ես իւր ձիոյն, բայց ինքն և ձին ես երկոքին ի միատին ողջ մնացին»:

Եւ աղջիկն ոչ կարաց տալ պատասխանի այսմիկ հարցման մանկանն. ասաց ցնա.

- Այսօր գնա աստի և ի վաղիւն տամ պատասխանի, զի այդ
 505 դժուար զրուց է, զոր ասացեր:
- Եւ մանուկն ելեալ անտի՝ գնաց խնդութեամբ ի տեղի իւր:
 Ապա ասաց աղջիկն իւր սլառաւ թարգմանին, թէ՝ «Առ ընդ
 քեզ երկուս կամ երիս ի հաւատարիմ ծառայիցս և զնա ի շուկայն,
 և առ զսպիտակ հացս և զգէր սագ մի, և զքանի ինչ պարարտ
 510 հաւս: Զսագն լից բրնձով խառնեալ շաքարօք և զհաւսն խորովեա
 և առ ընդ սոսին զերկու մաքուր ամանս և տուր ընդ ի նոսա զա-
 նուշ և զանսպակ զինի, և պատրաստեա զայսոսիկ ի ծածուկ»:
- Եւ առեալ ընդ իւր թարգմանն այն զծառայսն՝ գնացին և զհրա-
 մանսն թաղուհտն կատարեցին:
- 515 Եւ երբ ամենեքին ի խոր քուն եղեն, զգեցաւ աղջիկն զիւր
 պատուական ոսկեկար հանդերձն, և անուշահոտեցաւ մշկով և
 բուրկենիւ և վարդէջրով: Եւ առեալ ընդ իւր զերկու ևս գեղեցիկ
 աղջկունս, հրամայեաց ծառայիցն այնոցիկ, և բարձին զոր ինչ
 հրամայեալն էր նոցա, և եկին առ իջևան մանկանն և բաղխէին
 520 զգուռն:
- Եւ մանուկն ասաց.
 — Ո՞վ էք, որք բաղխէք զգուռն:
- Եւ նորա ասացին, թէ՝ «Մեր աղջկունք եմք ի դարպասէ թա-
 դատրի, և որպէս լուսինն արեգական սիրոյ տէր է, նոյնպէս և
 525 մեք քո սիրոյ տէրն եմք, վասն որոյ կամիմք տեսանել մի անգամ
 զքեզ»:
- Եւ ասաց մանուկն.
 — Գնացէ՛ք ի բաց յինչն, գիտէ տէր, զի նա ոչ երբեք մտեալ
 է ընդ այս, և ես ոչ գիտեմ և ոչ ճանաչեմ զնա:
- 530 Եւ նորա յաւէտ աղաչանօք պնդեալ զերեսս իւրեանց՝ ասացին
 ցնա, թէ՝ «Ո՞չ երթամք աստի, մինչև ոչ տեսանիցեմք զքեզ և
 զերեսս քո»:
- Եւ մանուկն ոչինչ կարացեալ համբերել ողորմագին աղերսա-
 նաց նոցա, թուլ ետ մտանել ի ներս:
- 535 Յայնժամ աղջիկն հանեալ ի գլխոյն զվարշամակս, եբաց զե-
 րեսս իւր, զոր մինչ ետես մանուկն՝ վառեցաւ ի սիրոյ նորա: Եւ
 աղջիկն նստաւ և նստոյց ընդ իւր զմանուկն և ասաց ցնա:
- Ունի՞ս կերակուր ինչ ուտելոյ և զինի ինչ ըմպելոյ, բե՛ր
 զնոսա, զի կերիցուք և արբցուք և ուրախ լիցուք: — Բայց զձայնն
 540 իւր փոխեալ էր, զոր ոչ կարաց ճանաչել մանուկն: Եւ նա ասաց.

— Գիտէ՛ տէր՝ ո՛չ ունիմ ի ժամուս յայսմիկ պատրաստեալ,
զի ոչ գիտէի զգալուստն ձեր առ իս:

Եւ ասաց աղջիկն ծառայիցն իւրոց.

— Բերէ՞ք զոր ինչ ունիք դուք:

545 Եւ նոքա բերին զոր ինչ զհետ իւրեանց առեալ էին և պատ-
րաստեցին սեղան, յորում նստան երկոքին և սկսան ուտել և ըմ-
պել և ուրախ ըլլալ: Բայց աղջիկն աւելի արբոյց մանկանն զա-
նապակ գինիս և առնէր ընդ նմա քաղցր և մեղմ խօսակցութիւնս
և խտղեալ զնա՝ առաւել բորբոքեցուցանէր զհօր ցանկութեան նո-
550 րա առ ինքն, մինչ զի այլ ոչ ևս կարացեալ համբերել, ասաց աղ-
ջրկան.

— Հրամայեա՛, զի ննջեսցուք ի միասին:

Յայնժամ ասաց աղջիկն ցմանկանն.

— Եթէ սիրես զիս՝ պատմեա՛ ինձ զբանն զայն, զոր յերեկն
555 ասացեր դատերն թագաւորին:

Եւ նա ասաց, թէ՝ «Չունիմ աչժամ կարողութիւն մեկնելոյ քեզ
զայն, մանաւանդ երկնչիմ իսկ, զի յասին իմում զայն, մահու
մեռանիմ, վասն որոյ զայլ ինչ բանս հարց, զորոյ տացից պատաս-
խանի»:

560 Եւ աղջիկն երգուա յաստուած, թէ՝ «Մինչ ոչ լսեմ ի քէն զբանն
զայն, ոչ կատարեմ զկամս քո», և սկսաւ խաղալ և կատակ ընել
զհետ նորա:

Եւ մանուկն առաւել, քան զհօր, վառեալ-բորբոքեալ ի սիրոյ
աղջկանն և արբեալ ի գինոյ՝ յաղթեցաւ և սկսաւ ասել զպատաս-
565 խանին հարցմանն իւրոյ, և ասաւ ասաց.

— Արի՛, զի ննջեսցուք ի միասին:

Յայնժամ աղջիկն հհան զհանդերձսն, ընդ նմին և զշարեշա-
պիկն, զոր եղ ի ներքոյ սնարից զլիւոյն, և սկսաւ խաղալ զհետ
նորա: Եւ մանուկն թմբեալ ի սիրոյ և ի գինոյ անտի, ի քուն եղէ
570 և ոչինչ կարաց առնել նմա: Եւ աղջիկն խնդալով ի միտսն իւր,
սահեցաւ յանկողնոյն, առեալ ընդ իւր զծառայսն, զնաց ուրախու-
թեամբ ի տեղի իւր: Բայց յառաւել խնդութենէն մոռացեալ էր անդ
զշարեշապիկն, քանզի ասէր ի մտի իւրում, թէ՝ «Ես յաղթեցի
նմա, ուսեալ ի նմանէ զբանն զայն, և նա ոչինչ կարաց առնել ինձ,
575 վասն որոյ և ընդ լուսանալ առաւօտուն տացից սպանանել զնա»:

Եւ երբ մանուկն ուշաբերեալ ի քնոյն և սթափեալ ի գինոյ
զարթեաւ, իմացաւ, թէ աղջիկն այն դուստր թագաւորին էր, որ

580 Ննարիւք եկեալ առ ինքն՝ պէս պէս խաբեութեամբ ուսաւ զբանն զայն, տրտմեցաւ յոյժ: Բայց ի տեսանելն իւրում զշարեշապիկն նորա, զոր մոռացեալ էր անդ, անդէն ուրախութեամբ ուրախ եղև և էառ պահեաց զայն յինքեան: Եւ ընդ առաւօտն ել գնաց ի դուռն թագուհւոյն և բարեկեաց զնա և նստաւ ի վերայ ամթոռոյն այնմիկ:

585 Եւ աղջիկն աղղ արար հօրն և մօրն և կարգացողաց և իշխանաց բազաքին, որք միաբանս եկեալ ժողովեցան անդ: Եւ մանուկն յոտն կացեալ խոնարհեցոյց զծունր առաջի թագաւորին և նստաւ դարձեալ ի վերայ ամթոռոյ իւրոյ: Եւ սկսաւ աղջիկն տալ կարգաւ պատասխանի երեկեան հարցման մանկանն, քանզի ուսեալ էր ի նմանէ ի գիշերին յայնմիկ խաբեութեամբ: Եւ ամենեքին այնորիկ, որք լսեցին զայն, զարմացան ընդ գիտութեան աղջկանն, զի բանն

590 այն յոյժ զծուար էր:

Յայնժամ ասաց մանուկն ցթագաւորն առաջի ամենեցուն.

— Ո՛վ տիեզերակալ արքայ, դուստրն քո յաւուրս երիս եհարց ինձ զբանս, և ես հոռւ զպատասխանիս, բայց այժմ ես հարցից ցնա ես զմի բանս, եթէ գիտասցէ՞ նա ինձ յաղթեալ է, և ես ո՛չ

595 նմա:

Ասաց թագաւորն.

— Այդմ բանի և մեք ամենեքին վկայ լինիմք, զի մի՞ ալլաւ աւելի զրոյցս լիցի ի մէջ երկոցունցդ:

600 Ասաց մանուկն առ աղջիկն, թէ՛ «Թո՛նջ թռչուն էր այն, որ ունէր ընդ իւր զայլ տեսակ թռչունս, և իւր փետուրն զեղեցիկ էր որպէս զոսկի, և կալայ ես զնա և զենի և զփետուրն պահեցի առ իս և զմիսն նորա խորովեալ մինչ եղի առաջի իմ ուտել, նա յանկարծակի թռեաւ և փախեաւ չինէն, բայց եթէ ոչ հաւատալք բանից իմոց, զփետուրն զայն բերեմ առաջի ամենեցունդ, զոր տեսանիցէք»:

605 Եւ երբ աղջիկն լուաւ զբանս զայս՝ երկեաւ յոյժ, զի գիտաց, թէ աղղ առնելոց է առաջի ամենեցուն զգնալն իւր առ նա ի գիշերին յայնմիկ, վասն որոյ աճապարեալ ասաց ցնա.

610 — Այդ կարի իմն զծուար հարցմունք է, և ոչ կարեմ փետել զպատասխանիս դորա. արդ այժմ յաղթեցեր ինձ, խնդրեա՛ դու չինէն զինչ և կամիս:

Եւ մանուկն ասաց, թէ՛ «Քան զքեզ աւելի բանս ոչ խնդրեմ ի քէն»:

Յայնժամ ամենեքին վկայեցին և հաւանեցան խնդրանաց

- 615 մանկանն և պսակեցին զաղջիկն ընդ նմա և արարին զեօթն օր հարսանիս: Եւ ետ թագաւորն զկէսն թագաւորութեան և ընչից և գանձուց իւրոց, և նա տիրեաց նոցա: Եւ ապա առաքեաց մանուկն զմարդիկ բազում գանձիւք առ այն թագաւորն, որում վաճառեալ էր զհայրն և զմայրն իւր: Եւ զնացեալ նոքա բերին զը-
- 620 ծնօղսն իւր առ ինքն, որք տեսեալ զմիմիսանս ուրախացան և գոհացան զաստուծոյ, որ արժանի արար վերստին տեսանել զիրարսն: Եւ զասպնջական պառաւն զայն տարեալ ընդ իւր ի դարպասն՝ կացոյց մեծ ի վերայ նաժշտացն:
- Եւ թագաւորն կարգեաց զնա տէր և իշխան ի վերայ բոլոր գանձուց և քաղաքաց իւրոց, որ զկնի մահուն իւրոյ իշխեսցէ ի վերայ նոցա և նստի փոխանակ նորա յաթոռ թագաւորութեան իւրոյ: Բայց մանուկն այն, զօր ամենայն միոյն իմաստնոյն աստուծոյ յերկիր խոնարհեալ կանխէր յաղօթս ի բոլոր սրտէ և գոհութիւն և փառս մատուցանէր անբաւ խնամոցն աստուծոյ մարդասիրին, որ փրկեաց զանձն իւր ի մահուանէ և արժանի արար զինքն այնպիսի փառաց և իշխանութեան: Ամէն:
- 630

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՔԱՏ ԹԱԳԱՒՈՐԻՆ *

Կայր թագաւոր մի շարկամ, զարացաւ ի վերա աշխարհն, զամէնն առաւ, և ինքն կովկելով ոչ ելնէր ի հունս: Օր մի խնդրեաց աստղաբաշխ և հարցաւ, թէ՝ «Ի՞նչ տի լինույ իմ հալսս»: Նա քննեաց աստղադէտն և ասաց, թէ՝ «Թագաւոր, քեզ ի՞նչ պահեմ, նորա աստղն զօրաւոր է և քեզ փախստական տի առնէ: Դու շատ նեղութիւն կրես և աղքատութիւն, և ի ձեռն որդոյ քո հասանիս ի փառս քո»:

Լսեց թագաւորն, ձգեց զատունն և զաշխարհն, և էառ ըռզակէ և ի ծառայէ և փախեաւ անծանօթ աշխարհ, և շարկամն թագաւորեց զիւր աշխարհն: Եւ ի փաղշերն անկաւ հարամիքն ի վրան, և առին զապրանքն, և սպանեցին զորդին և զծառայքն, և հանց եղան, որ մուրալու եղան: Գնացին հեռուստ տեղ, յօտար և անծանօթ աշխարհ: Ինքն և կիւնն ոչ ունէին զաւակ, զի մէկ որդի մի ունէին՝ հարամիքն սպանեցին: Եւ լալին զիշեր ու ցերեկ զիւրեանց թագաւորութիւնն և զանորդութիւն և խնդրէին աստուծոյ, թէ՝ «Ողորմի աստուած և տա մեզ զաւակ մի բարի, որպէս Յոբալ, զի մխիթարեցուք ի նաջ»: Եւ ասէր աղբատ թագաւորն կաֆալք:

Լացէք զիս, զաղքատութիւնս, որ շունիմ մէկ մի՛նձ բարեկամ, Որ յամէն զանձէս ելայ ու խիստ խեղճ՝ և ի լաց կու կենամ, Զունիմ ես այսօր հաց մի ուտելու և ես կու մուրամ, Այսօր կարենամ մուրալ, վաղն ծերս ես ի՞նչ տի լինամ:

Եւ թագուհին ասէր իւր տնձին ի վերա կաֆալք:

Ես կին թագուհի[ի] էի, ունէի բազում ծառանի, Շատ մարդ ի հրամանս կայր, և զայսօրս ի միտ չաճէցի, Զինչ տէրն տուեր է մեզ, քան զամէնն աւել ջանացի, Հիմալ եմ ես խեղճ եղեր, և ես անտէր և անօգնական ի:

* Ե խումբ, մեկ խմբազրութիւն, անտիպ.

Բազում ողբով լային ղիւրեանց թազաւորութիւնն և զանաթի-
րութիւն: Եւ ասէր աղքատ թազաւորն կաֆալք:

30 Աստուած, դոհանամ զքէն, թէ տաս մեզ վաւակ մի բարի,
Որ մխիթարինք ի նայ ու շիշենք զթաղն՝ որ կորուսաք,
Ընդակ և դանձ աշխարհիս, երբ յուսայ մարդ՝ շուտ կորնչի,
Բայց յոյս ես զքեզ ունիմ, ողորմիս շուտով ինձի մի:

Եւ այլ բազում ողբս ասէին.
35 Երբ շարին դառնայ մարդուն, ի յամէն տեղիքն անիծել,
Զինչ որ այս մարդուս եղել, որ յամէն իրաց է զրկել,
Իր սիրտն է նայել աստուած և վատով է զինք խրատեր,
Տեսաւ որ յաստուած դարձաւ, նայ շթող որ ինքն էր կորել:

Ողորմածն աստուած ողորմեցաւ նորա և երեսո բարի զա-
ւակ մի գեղեցիկ՝ արեգական նման, հանց մ՝որ տսէին զտրմաց-
40 մամբ, թէ՛ «Այս աղքատիս այսպէս սղայ տվէր է աստուծոյ,
փառք արարչին»: Եւ ասէ.

Ով զյոյսն ի յաստուած դնէ, նա ամէն բանն կաջողի,
Թէպէտ փորձանայ զիսի, իմաստնոց խրատ կու լինի,
Բայց այն, որ անգէտ լինի, կարճամիտ, սղալով ի լի,
45 Ինքն ինքն զլորի գնալն կամ քիչ մի բանով կորնչի:

Արհնեմք զքեզ տէր աստուած, ողորմած ես դու աղքատին,
Որ զքո զողորմութիւն ցօղեցեր, որպէս զանձրեին,
Որ թէ յաթոռոյս ելայ՝ և ի դանձուս՝ նա զքեզ կալայ,
50 Յոյս իմ ես դու՝ տէր աստուած, դու սլահէ զտղայս ծառայի:

Եւ զարգացաւ մանուկն, եղև եօթ տարու, և տուին յուսումն
գրոց, և ուսաւ զամենայն իմաստութիւն և զպատճառ: Եւ երբ կըտ-
րիճ եղաւ տասնեհինգ տարու, օր մի խիստ արտմեցաւ, թէ՛ «Այս
յէ՞ր է, որ աղքատ եմք և անօգնական»: Եւ ցանկայր ի ձի հեծնու
և ուրախանալ ի հետ մանկանց, հագնիլ և կապիլ և ճեմիլ, և ոչ
55 կար ի կարիքն, և եղև սղութիւն: Եւ օր մի գնաց ի դարպաս թա-
զաւորին կտրիճն և էած ծունր թազաւորին և կանգնեցաւ: Եւ
սկսաւ խօսիլ, թազաւորին այլ և այլ պատասխանի տայր, յոր
թազաւորն հաւանեցաւ: Եւ ասէ թազաւորն.

— Ո՞վ կտրիճ, զի՞նչ խնդրես յինէն, ասայ որ տամ քեզ:
60 Ասէ կտրիճն.

— Ունիմ երկու ծառայ ծախու, այր և կին:

Ասէ թագաւորն.

— Բե՛ր, որ գնեմ:

Եւ գնաց կտրիճն առ հայրն և մայրն և ասէ.

65 — Ինչ պատեհ է ձեզ, կամիմ հանց բան առնել, որ դուք ապ-
րիք և ես այլ:

Եւ ասացին ծնողքն, թէ՛ «Դու դիտես. թէ տանիս ի ծովն այլ
ձգես, նայ քոյ եմք»:

Ասէ կտրիճն.

70 — Կամիմ ծախել զձեզ թագաւորին, որ հասնիք ապրանաց,
և ձեր գնովն ինձի բարի լինի, և ես ջանամ, որ շուտով խալսեմ
զձեզ: Դուք ի՞նչ կասէք:

Ասէ ծնողքն.

75 — Այս ի՞նչ կարիք. ելաք ի թագաւորութենէ, ի դանձէ և ի
շատ բարութենէ, այս ա՞յլ գրած էր, որ ծախւէաք զինչ գերի: Եւ
նա, ի մեր ափուցն ինչ կու գայ՝ ի քո հրամանքն են, ո՞վ որդեակ:

Եւ էառ կտրիճն զնոսա և գնաց առ թագաւորն: Եւ թագաւորն
ասէ.

— Քանի՞ ծախես:

80 Ասէ կտրիճն.

— Երկանըն տուր հալաւ, որ հագնիմ, և աղէկ սլեհ, և կը-
նոշն՝ աղէկ ձի և սարաւքն աղէկ թուր մի, և ոսկի գօտի մի:
Հրամեց թագաւորն, որ տրւին: Եւ ասէ թագաւորն.

— Այլ ի՞նչ պիտի:

85 Ասէ կտրիճն.

— Հարիւր սակ այլ խարճի տուր:

Եւ ասէ կտրիճն.

— Հրաման տուր, որ խօսիմ ի ծառայքն քո, զոր գնեցիր յի-
նէն:

90 Եւ հրաման ետ թագաւորն, թէ՛ «Գնա՛յ, խօսէ»: Եւ ապա ի-
մացաւ թագաւորն, որ իր ծնողքն էին:

Եւ գնաց կտրիճն, անկաւ հօրն և մօրն ի յոտքն և ասէ.

— Մի՛ հոգայք, թէ աստուած կամի, շուտով կու խալսեմ քզ-
ձեզ:

95 Եւ ծնողքն արհնեցին զնա, և ասէ կաֆայք.

Գնայ դու որդի բարով, շար ի զատ լինի ի քէնէ,

Բայց մի՛ մոռանար զմեզ, ան աստուածն, որ զքեզ ստեղծել է,
Զի մեր ժամանակն անցաւ և ատուրքս ի մահ մօտեցիր,

Եւաք ի յամէն բարոյ, շմեռնինք կարօտ ի քէնէ:

- 100 Կտրիճն պատասխան երևա ծնողացն թ'աստուած վկայ է,
Քանի կենդանի մնամ, առանց ձեզ սիրես մեռած է,
Յաստուած յուսանամք հաւատար, արհնեսացուք ի ձեր բերանէ,
Որ ճարն անճարկին ցուցնէ և զլարին ինքն յաջողէ:

- 105 Եւ լալով համբուրեցաւ ի ծնողացն, և նա պատուած յիշէց և
գնաց երեք օր և երեք գիշեր ի պոխ դաշտ մի ներս: Յետեւ ձայն
110 Եղև. հալեցաւ ի յետեն, տեսաւ ձիաւոր մի: Բարենցին զիրար և
ընկեր եղան և գնացին: Երբ լսեց կտրիճն զմանկան բանն և հաւա-
նեցաւ, և ասաց յետի կտրիճն ընդ առաջինն, թէ՝ «Գիտե՞ս, որ
115 թագաւորն իմ զիս խիստ կու սիրէ, և յիս թուղթ ևտ աւետեաց, որ
տանիմ ի կղզեաց թագաւորն: Ա՛ն զթուղթս, դո՛ւ տար, զի դու լաւ
ձիաւոր ես, քան զիս, և զինչ տայ ինձ, նա քեզ լինի. և ես քեզ
կու մնամ յայս նիշ տեղիս»:

Էաւ կտրիճն զթղթերն և ի սեկէ քեսան իղիր և գնաց ի պոխ
դաշտ մի ներս: Յիշեց զծնողքն և շատ մի լաց, և ասաց կաֆայք.

- 115 Տէ՛ր աստուած երկնի՛ւ և երկրի, որ բարուն պատճառ դու

լինիս,

Զծնողս իմ յիշեմ, վայ զիս, նուաղի սրտիկս ի փորիս,
Որ քան զՅուդայ եղայ վսճառող զտէրն արծաթի,
Խնդրեմ ես ի քէն աստուած, զիս դարձույ ի յիմ ծնողիս:

- Եւ ապա շատ մի լաց և քունն տարաւ ի վերա ձիուն, և ձին
120 Ելաւ ի ճանփուն և կորուս զճանփան: Եւ էր ծարւած ինքն և ձին, և
էր անջրգի: Գտաւ ջրհոր մի հին ժամանակէ, ևհան զքսակն, որ
զթղթերն էր գրեր, կախեաց գօտսին ի ջրհորն և ևհան ջուր, և խմեց
ինքն և խմցուց ձիուն, և պահ մի հանկաւ. և ապա սկսաւ զթըղ-
125 թերն յաման դնել, և ասաց յիր մօխն, թէ՝ «Յէ՛ր շեմ կարդար դույս
թուղթս»: Եւ սկսաւ ընթեռնուլ: Եւ էր գրած այսպէս.

- «Այս անուն թագաւորէ առ կղզեաց թագաւորդ, ողջուն սիրոյ:
Եղբայր, գիտացիր, որ թղթաբերտ այդ անհաւատ մարդ է: Դայ
մեծ էր առ մեզ և մեր ամէն գոնձին հոգացող: Դայ ելաւ առ իմ
դուստրն վնաս գործեց, և ես կամեցայ զդայ կորուսանել: Եւ պատ-
130 րաստեցայ, որ այլ մարդ չիմանայ զմեր խաղբութիւնն, առ քեզ
զրկեցի, որ զգա կորուսանես, թէ զմեզ կու սիրես»:

Յորժամ որ կարդաց զթուղթն, իմացաւ, որ իր վնաս էր, կա-

մէր դալ մահն. պատառեց զթուղթն և արհնեց զաստուած և
 135 զծնողքն, որ զինք յուսումն էին տվեր դրոց, որ իր գիտութեամբն
 ապրեցաւ, և աղաչեաց զաստուած, որ ճանփայ ցուցանէր: Զօրն և
 զղիշերն զինչ ի շուրջ եկաց և հասաւ ի յայն թագաւորին աշ-
 խարհն, որ գնալոց էր: Եւ իջաւանեցաւ ի տուն պառաւի մի և հան-
 գեաւ սակաւիկ մի, և սկսաւ հարցանել զանուն թագաւորին և քնն-
 140 նեց զորպիսութիւն քաղաքին: Եւ պառաւն պատմեաց զամենայն
 մի ըստ միոջէ, թէ՛ «Դուստր մի ունի թագաւորն աննման և գե-
 ղեցիկ, որ իննսունինը թագաւորի որդու զլուի է առեր»: Ասէ կըտ-
 րիճն.

— Յի՞նչ պատճառի է սպաներ:

— Որդեակ, կասէ, թէ՛ «Ուլ զիս իմաստութեամբ յաղթէ հարց
 145 ու պատասխանի, նա զիս առնու ի կնութիւն, թէ չկարէ յաղթել զիս,
 ես զնորա զլուին կառնեմ»: Եւ իր զուպայն կու հայի ի վերա յամե-
 նայն քաղաքի, և ունի ոսկի աթոռ և ոսկի թաղթ՝ յականց մարգար-
 տաշարաց. ի հոն կու նստի և կու հայի ի փէնճէրէն, որ մարդ վինք
 չի կարեր ճանչնալ և կամ տեսնուլ: Եւ ունի թարքման և վերակա-
 150 ցու պառաւ մի:

Եւ երբ վայն լսեց պառաւէն, պիշերն քունն շտարաւ: Երբ լու-
 սացաւ, գնաց ի բաղնիք, անուշահոտեցաւ վարդէջրով և մշկով և
 հագաւ զհալաւն և գնաց ի թագաւորին դստերն ի դուռն, և ուզեց
 հրաման, որ մտանէ ի ներս: Եւ մարդիքն, որ ի դուռն կային,
 155 խրատ տուին, թէ՛ «Պատրաստ կեցիր», զի շատոց գէշ տեսել էին:

Մտաւ և երեստ բարև: Դրին ոսկի աթոռ և ի վրան նստաւ: Եւ
 աղջիկն հայեցաւ և գիտաց, որ վասն այն բանին համար էր եկեր
 առ ինքն: Եւ զրկեց հայրն և նայիպնուն խնդիր. ժողվեցան և
 նստան: Եւ ապա սկսան աղջիկն և կտրիճն հարց ու պատասխանի
 160 առաջի մեծամեծացն: Ասէ աղջիկն, թէ՛ «Կուղե՞ս, որ տամ քեզ
 կթղաչ ի յայն աշխէն, որ քո ընկերացն տուի»:

Ասէ կտրիճն.

— Այնէ, զինչ աստուծոյ կամքն լինի:

Ասէ աղջիկն.

165 — Ա՛յ կտրիճ, իսղճայ քեզ, զայդ բանդ, որ դու կուղես,
 յարևալտ ելնես:

Ասէ կտրիճն.

— Արիւն հեղուլն վստահ ես, բայց ի յաստուած յուսանամ,
 զինչ որ դու կասես:

- 170 Ասէ աղջիկն ընդ հօրն և նայիպնուն, որ վկայ լինին. թէ կըտ-
րիճն յաղթէ՝ զինքն առնու ի կնութիւն, և թէ ինք զկտրիճն յաղթէ,
նա զնորա գլուխն առնու: Եւ ամենեքեան վկայ եղան, որ այլ ա-
սուլիս չանեն:
- Ասէ աղջիկն.
- 175 — Ո՞րն է տանուտէր ծննդեան քո:
Ասէ կտրիճն.
— Խոյն է:
Ասէ աղջիկն.
— Որն է հայրն քո:
180 Ասէ կտրիճն.
— Օդն և անձրեն:
Ասէ աղջիկն.
— Ո՞վ է քո դայեկն:
Ասէ կտրիճն.
- 185 — Այն է, որ նոքա զմեզ կու աւանուն, և մեք զնոսա ոչ, և
նոքա զմեր ձայնն կու լսեն, և մեք զնոսա ոչ:
Ասէ աղջիկն.
— Զայս տղայոց զրուցն թողունք: — Ասէ աղջիկն.
— Որն է յառաջի արիւնն, որ անկաւ յերկիր:
190 Ասէ կտրիճն.
— Կայէն, որ զԱբէլ սպանեց:
Ասէ աղջիկն.
— Ո՞վ է այն երեք իրքն, որ կերան և խմեցին և մեռան և
չէր ծնեալ զնոքա մարդ:
195 Ասէ կտրիճն.
— Ագամ և Եւայ և մէկ հաւն, որ Քրիստոս արար զինքն:
Ասէ աղջիկն.
— Ո՞վ է այն, որ զսուրն ի բերանն զրին, չէր աղամորդի, ոչ
քաչ և ոչ հրեշտակ:
200 Ասէ կտրիճն.
— Որ ի բերանն զրին, թէ կերաւ զՅովսէփ:
Ասէ աղջիկն.
— Զի՞նչ է այն, որ աստուած քանի զաշխարհս արար, մէկ օր
ծաղեաց արև:
205 Ասէ կտրիճն.

— Մտի՛ն, որ պատահեցա՛մ Մովսէս, մէկ օր ծագեցա՛յ արեգակն յատակս:

Ասէ՛ աղչիկն.

— Ո՞վ է՛ ա՛յն, որ կովի լսելով և զարնէ՛ իւրով, շունի ոտք և
210 ձեռք, ի ջուրն կու ապրի:

Ասէ՛ կտրիճն.

— Ձուկն է:

Ասէ՛ աղչիկն.

— Ո՞ր դադարեցաւ զէտ մեռել և կենդանի դարեան կենդա-
215 նեաց, և յետոյ Գարբիէլ հրեշտակն ողջացոյց զնա:

Ասէ՛ կտրիճն.

— Այն Յոբայ մարմինն էր, որ ապրեցաւ զինչ մեռել և ևղև
կերակուր որդանց, և յետոյ աստուած ողջացոյց զնայ:

Ասէ՛ աղչիկն.

220 — Ո՞րն է, որ քանի դահնայ՝ մեծանայ:

Ասէ՛ կտրիճն.

— Ձուկն՝ ի ծովն, և օձն՝ ի ցամաքն:

Ասէ՛ աղչիկն.

— Զի՞նչն է, որ հարստացնէ և տառակեցնէ:

225 Ասէ՛ կտրիճն.

— Ապրշուամին ճճին է:

Ասէ՛ աղչիկն.

— Ի՞նչ է՛ ա՛յն ևլչին, որ առաքեաց աստուած, ոչ հրեշտակ, ոչ
մարդ և ոչ քալ:

230 Ասէ՛ կտրիճն.

— Գալազուսն երեկ առ Ադամ, երբ Կայէն զԱբէլ սպան: Ա-
դամ ոչ զհիտէր զինչ առնէր. եկին երկու ագուաւ, մէկն զմէկն սպա-
նեցին և թաղեցին, Ադամ ուսաւ, փորեց զգետին և թաղեց զԱբէլ:

Ասէ՛ աղչիկն.

235 — Ո՞րն է, որ վաղվնէ ցանեց զցանն և ասէ. «Մեծացիր զինչ
տարու մի ցան»: Եւ մէկալլ օրն տարաւ տանուտէրն զինչ որ պի-
տոյ էր:

Ասէ՛ կտրիճն.

— Այն ծառն, որ նոյ տնկեաց ալգին կիպարի, հունդն ա-
240 ռաքեաց Գաբրիէլ և ասէ. «Յանէ՛, լինի ծառ, կտրէ՛ և տապան շի-
նէ և մուտ ի ներս, աշխարհս ջրով անցնի». և կենդանիքն այնով
ապրեցաւ:

Ասէ աղջիկն.

— Իրաւ էս:

245

Ասէ աղջիկն.

— Ո՞րն է, որ մեռան և կացին կաշքն ընդ մահու երեքհարիւր տարի:

Ասէ կտրիճն.

250

տարու յարեան:

Ասէ աղջիկն ընդ միտս իւր, թէ՛ «Սա զիս յաղթեց»:

Ասէ աղջիկն.

— Ո՞րն է հալալ արիւն և մեռելոտին:

Ասէ կտրիճն.

255

— Հալալ արիւնն լերդն է, և մեռելոտին՝ փայծեղն է:

Ասէ աղջիկն.

— Ո՞ր ի քաղաքն մտան՝ Եօթանասունչորս հոգի էին, Երբ ելան՝ վեց հազար հոգի ելին:

Ասէ կտրիճն.

260

— Այն Յակոբ նահապետն էր, Երբ Ելան վեց հազար էին:

Ասէ աղջիկն.

— Գնայ, հանդիր, այսօր դերժար յինէն, վաղն հասցնեմ զքեզ քո ընկերացն:

Ասէ կտրիճն.

265

— Այն աստուածն, որ այսօր պահեց, կարող է որ վաղն ալլ փրկէ:

Եւ ասէ. Գնայ դու կտրիճ հանգիր,

Խնդայ՝ թէ խալսեցայ և ալլ մի խօսիլ,

Երբ վաղն հարցանեմ քեզ բան, դու զիտացիր,

270

Գիտես թէ յաղթեցի՞ր, միտքդ խնդացիր:

Ասէ կտրիճն. Տէր աստուած մեծ [է],

Այն որ այսօր փրկեց, վաղն ալլ կարող է,

Բայց խիստ փափաքեր եմ ու սիրտս կուղէ,

Դու զէտ վարդի ծաղիկ, հոգիս պլպուղ է:

275

Եւ զնաց կտրիճն իւր օթեանն: Եւ ամենեքեան զնորա ապրիլն հիանային, զի յանկից ալլ մարդ չէր ապրեր:

Գնաց կտրիճն պառաւուն տունն, և պառաւն կու լայր դառնապէս: Երբ տեսաւ ասաց.

- 280 — Ո՞վ սրգեակ, բարով Լկիր: Դու աշնոր համար Լկիր, որ սպանանել տաս քեզ աշն նենդաւորին. և ես քո խղճուն կու մեռանիմ:
- Ասէ կարիճն.
- Տէր աստուած փրկէ ի նմանէ:
- 285 Երբ լուսացաւ, զնաց ի դարպասն, Երևտ բարև.
- Իմ պարոն, զիշերս բարով լուսացաւ քեզ:
- Հրամեց աղչիկն, զրին ոսկի աթոռ, նստաւ և սկսաւ խօսիլ:
- Ասէ աղչիկն.
- Ո՞րն է աշն ծառն, որ ունի տասներկու ճիւղ, ամէն ճիւղ՝
- 290 Երեսուն տերև, պտուղ ունի սև և խապիտակ:
- Ասէ կարիճն.
- Մառն տարին է, տասներկու ճիւղն՝ տասներկու ամիսն է, պտուղն ունի սև և խապիտակ՝ ցորեկն ու գիշերն է:
- Ասէ աղչիկն.
- Ո՞րն է աշն թռչունն, որ ուտէ յէրգ ու դարի:
- 295 Ասէ կարիճն.
- Մորեխն է:
- Ասէ աղչիկն.
- Մառ մի ունի տերև՝ միս և արիւն:
- Ասէ կարիճն.
- 300 — Այն Մովսիսի գաւաղանն է:
- Ասէ աղչիկն.
- Զի՞նչ են, որ խիստ սիրելիք են և խիստ շարկամ են:
- Ասէ կարիճն.
- Գիշերն ու ցորեկն, ու մահն և կեանքն:
- 305 Ասէ աղչիկն.
- Ո՞վ է աշն, որ ոչ կերաւ և ոչ խմեց ի կենդանութեան, և յետ մահուան կերաւ կերակուր:
- Ասէ կարիճն.
- Այն Մովսէսի գաւաղանն էր, քանի ծառն էր՝ անձրեւէն
- 310 խմեց, երբ կտրեցաւ՝ զծովն խմեց:
- Ասէ աղչիկն.
- Իրաւ ես:
- Ասէ աղչիկն.
- Ո՞վ էր աշն, որ խրատ մարդուն երիտ, ոչ մարդ էր և ոչ
- 315 հրեշտակ և ոչ քաշ:

Ասէ կտրիճն.

— Այն էշն էր, որ խրատ երես Բահաղու, թէ՛ «Դարձիր ի ճանփուտ», յորժամ անիծել երթար զԻսրաէլ:

Ասէ աղշիկն.

320 — Ո՞րն է այն արիւնն, որ հալալ է, և ո՞րն է, որ հարամ է: Ասէ կտրիճն.

— Արիւնն, որ հալալ է՝ ձուկն է, և այլ կենդանեաց մեռելոտին հարամ է.

Ասէ աղշիկն.

325 — Ո՞րն է այն մամուն անկողինն զնաց, մամն ասաց, թէ՛ «Յիս մի մերձենար, դեռ ես կոյս եմ»:

Ասէ կտրիճն.

— Աբէլի մարմինն էր, յորժամ թաղեցին զնա՝ դեռ հօրէ մօրէ կոյս էր:

330 Ասէ աղշիկն.

— Ո՞րն է այն, որ տասնհինգ տարի թաղաւորեց զաշխարհս, երբ տասնվեց մտաւ՝ հիւանդացաւ, երեսուն մտաւ՝ մեռաւ, երեսուն որ անցաւ՝ նոր կենդանացաւ:

Ասէ կտրիճն.

335 — Լուսինն է:

Ասէ աղշիկն.

— Ո՞րն էր, որ ունէր զերեզման շարժուն և զնայուն, և ճնունդն քառասուն ամ է:

Ասէ կտրիճն.

340 — Յունան մարգարէն է ի փոր կետին:

Ասէ աղշիկն.

— Ո՞րն է այն կենդանին, որ քանի կենդանի էր՝ խոտ կերաւ, երբ մեռաւ՝ մարդու միս կերաւ և արիւն խմեց:

Ասէ կտրիճն.

345 — Այն իշուն կղակն էր, որ Սամսոն մանուկն այնով հաղար մարդ սղանեց:

Ասէ.

— Որն է, որ յառաջ քաղցելոցն կերակուր տարաւ, զկերակուրն թողին՝ զբերօղն կերան:

350 Ասէ կտրիճն.

— Դանիէլ մարգարէն է, որ կերակուր տարաւ քաղցելոցն, նա զկերակուրն թողին և զբերօղն կերան:

Ասէ աղչիկն.

355 — Ո՞րն է, որ մեռաւ, նա ոչ մարմինն ի դերեզման մտաւ և ոչ հոգին առ աստուած գնաց:

Ասէ կտրիճն.

— Այն Ղովտայ կինն է, որ քար դարձաւ:

Ասէ աղչիկն.

360 — Ո՞րն է այն հաւն, որ ունի քառասունութ բուն, կու աճէ տասներկու ձու և ի տարին երկու ձագ կու հանէ:

Ասէ կտրիճն.

— Հաւն տարին է, քառասունութ բունն՝ քառասունութ շաբաթն է, տասներկու ձուն տասներկու ամիսն է, երկու ձագն՝ մէկ տօնն է և մէկ դատրիկն է:

365 Ասէ աղչիկն.

— Ո՞րն է այն, որ հարն և որդին ի մէկ մօրէ ծնան և սուրբ կոչեցան:

Ասէ կտրիճն.

370 — Այն լատինացին է, որ հայրն մեռել էր և որդին է զինուորել, այլ աշխարհ գնացել է, յետոյ եկեր ժամանակաւ ի մօրն տունն դռնուի է եղեր, շեն ճանաչեր՝ զիրար առեր են, երբ իմացեր որդի եղեր է:

Ասէ բողն.

— Իրաւ հս:

375 Ասէ աղչիկն.

— Ո՞րն է այն ծաղիկն, որ համ մահու պէտք է և համ կենաց:

Ասէ կտրիճն.

— Բամպակն է:

Ասէ աղչիկն.

380 — Ո՞րն է այն, որ ի լուսն շերտին և ի մութն կերեին:

Ասէ կտրիճն.

— Աստեղքն է:

Ասէ աղչիկն.

385 — Տուն մի՝ մէջն ոսկի, դուան արծաթի, որ թէ սակաւ մի խոռ, նա զեղ ու քաղաք ի վերա գան՝ շինել շեն կարեր:

Ասէ կտրիճն.

— Հաւկիթն է:

Ասէ աղչիկն.

— Այսօր զերծար յինչն, վաղն հասցնեմ զքեզ քոյ ընկերացն,

390 որ յառաջ քան զքեզ զնացին, թէ չէ դու մի՛ պարծենար և ասեն,
թէ՝ «Զիս շխարհցիր»:

Կտրիճն ճուղապ Երեստ. — Յուսացայ տէր ամենայնի,
Շատ շարէ փրկեաց զիս, աստուած շտայ քո վատին,
նս միտք ունիմ յաղթելու, զի հրամայես ճուղապ,

395 Միթէ արժանի առնէ զիս տէր աստուած քո աթոռին:

Կտրիճն զնաց ի տուն: Երբ լուսացաւ, զնաց ի դարպասն, է-
րեստ բարեւ և նստաւ ոսկի աթոռ:

Ասէ թագուհին.

— Գիշերս բարով լուսացաւ քեզ:

400 Ասէ Կտրիճն, թէ՝ «Մեծ թագուհի, հրամանք առնես՝ նա հրա-
մայէ»:

Ասէ աղչիկն.

— Հիմայ հրամանքն քոյ է:

Ասէ Կտրիճն.

405 — Հարուստ էր և տառապէլացաւ, իր իմաստութեամբ հաղաւ
զիր հայրն և հեծաւ զիր մայրն և զնաց, որ իւր ապրանքն դտանէր,
նա մասն ի վերա հասաւ, վերուց զմասն ի ձիուն վրայէն, խմեց
մահովն ջուր և խմցուց ձիուն և ապրեցաւ:

Եւ աղչիկն շկարաց խօսիլ, զի ոչ գիտէր: Եւ ասէ.

410 — Գնայ ի քո օթեանն, և վաղն ասեմ քեզ, այդ ի՞նչ դժար
բան է:

Եւ զնաց Կտրիճն իւր օթեանն:

Ասէ աղչիկն իւր ծառանուն, թէ՝ «Այն Կտրիճն յաղթեց զիս,
այսա հանց բան առնեմք, որ մեք զնա յաղթեմք»: Նա ասացին
415 ծառայքն, թէ՝ «Այդպէս առնեմք. զէր սագ մի խորված և փոքն
լցած շաքրով, Երկու խարապայ անուշ զինք»:

Երբ դառն ի քուն եղան, աղչիկն հագաւ զիր ոսկէկար հալան
և ծառայն առնու զհացն և զզինին, և զնացին յիջեանք մանկանն:

Եւ զնաց աղչիկն էզարկ զդուռն: Եւ ասէ Կտրիճն.

420 — Դու ո՞վ ես:

Եւ ասէ ծառայն.

— Գիտացիր, պարոն, որ աղչիկ մի՛ ի պարոնին դարպասէն,
զինչ արեգական սիրու աէր եղեր է ի քեզ և կամի անպոտճառ տե-
սանել զքեզ:

425 Ասէ Կտրիճն.

— Գնա՛, աստուած գիտէ, որ շմտանէ նա առ իս, ես զնա ոչ գիտեմ:

Եւ աղաչանօք պնդեցին, թէ՛ «Ո՛չ երթանք ի դրանէս, մինչ որ զքեզ տեսանեմք»:

430 Եւ յերբ մտաւ, եբաց զերեսն, և տեսաւ կտրիճն և վախաց ի սիրուն: Եւ զնաց աղչիկն ի մօտ կտրիճն նստաւ և ասէ.

Ես խիստ կու սիրեմ զքեզ, այնոր համար ես առ քեզ եկի իրք զալատ շատա սիրտդ, յիրաւի սիրտս կու աչրի,
...արայ և ուրախ կեցիր, վանց սրտիս, որ զքեզ սիրեցի,
435 Եւ այլ մի զատէր ի քէն, թէ չէ ինձ մեռնիլ հասանի:

Կտրիճն հայի ողորմ, ի սիրուն զինչ հարբած լինի,
Ասէ թէ՛ Այս ինչ բան է, պէկուման ինձ լոյս կու ցաթէ,
Իմ սիրտս կրակ լցիր, քո գալովդ զիս լափեցիր,
Արեկ, թէ ի յայլ է լուսդ, որ երկիր առ մեզ ծագեցիր:

440 Աղջիկն ճուղապ երեստ կտրճին, թէ՛ Ըզքեզ ի հոն սիրեցի,
Որ զդուստրն թագաւորին իմաստուն բանիւ կապեցիր,
Լեզուտ հըրեղէն քաղցր է, և զհոգիս առ քեզ զրեցիր,
Հոգիս ելած էր դարձաւ, զիմ սիրտս ի հետ քեզ գիտացիր:

Եւ կտրիճն ասաց. Ի սիրուդ զիս խէվ արիր քան զքեզ,
445 Երբ աստուած ինձ երեստ խօսիլ, յաւելի սիրեմ քան զքեզ,
Ապա կու վախեմ՝ թէ հընես անկուման ու այլ զիս չիշնես,
Դու քո սիրուդ հասանիս և յետոյ կրակն երէ զիս:

Եւ մանուկն բորբոքեցաւ ի խիստ սիրուն և յաղթեց գինին և ասէ աղչկանն, թէ՛ «Արի որ սլառկինք»:

450 Ելաւ աղջիկն և եհօն զհալան ի սնարքն եղիր և շար շապկովն ի գիրկն նստաւ և սկսաւ խաղալ: Եւ մանուկն ի յաղչկան սիրուն և ի գինուն թմրեցաւ և մեկնեց ղխօսքն, և աղչկանն ոչինչ կարաց առնել: Եւ աղջիկն խնդաց ինքն ի յիւր միտքն, սահեցաւ ի յանկողնոյն և ելաւ և զնաց խնդալով և շապկին պէտ շարաւ, և խիստ ուրախացաւ, թէ՛ «Ուսայ զայն հոանելուն և ինձ իրք մըն չկարայ անել. և ընդ լուսանալն սոյանանել տամ զինքն»:

Վաղվնէն զարթեաւ մանուկն և երեկ խելքն ի վերայ, իմացաւ, որ խաբած էր զինքն և խիստ տրտմեցաւ:

460 Աւա՛խ, մեռանիմ ի զուր և շունիմ մէկ մ'որ աւաղէր,
Քանի կենդանի կեցայ, նա զարիպ, որ ոչ ճանաչէր,

Եւ խիստ եմ կարօտ իմ ծնողացս, մէկ մի աշխ զնոքա տեսանէր,
Այսօր հասեր եմ ի մահս, ի խելացս է աշխ ինձ եղեր:

Ապա տեսաւ զշապիքն եւ շատ՝ զսհացաւ, եւ էառ զշապիքն եւ
պահէց: Եւ գնաց ի դարպասն եւ երես բարեւ, նստաւ ոսկի աթոռ:
465 Եւ իմացաւ թագաւորին զուստրն, որ առ ինքն եկեր է: Եւսաւ աղչիկն,
ղրկեց խնդիր հօրն եւ իշխանացն, եւ եկին: Եւ ծռնր էաժ եւ ասէ.

— Ասեմ զիրիկի բանն:

Եւ սկսաւ ասաց զամենայն, եւ զարմացան ամենեքեան:

Ասէ կարիճն.

470 — Ա՛յ թագաւոր, քո զուստրն երեք օր չիս բան յարցաւ եւ ես
պացխտուն տվի, բան մի ալլ ասեմ, թէ գիտենայ՝ նա զիս յաղթել է:
Եւ վկայեցին, որ ալլ ասուլիս շանեն:

Ասէ կտրիճն.

— Ո՛ւր է այն թռչունն, որ զինք կալայ ու գէնեցի, խորվեցի՝
475 դրի յառջեւ. կայր ալլ թռչուն, բացց իր նմանակ չէր, զի ոսկի
թեպրով էր: Կերաք, խմեցաք եւ առի զինքն ի ծոցս, եւ թռեր էր. թէ
չէք աւտար՝ զթեպուրն առ ձեզ բերեմ:

Նա աղչիկն իմացաւ, որ զիր խապարն կու տայր եւ շխօսեցաւ:
Եւ ասին թէ՝ «Խօսէ» եւ ասաց.

480 — Զայտ բանդ հանել ոչ կարեմ:

Եւ երես թագաւորն զզուստրն իւր ի կնութիւն աղքատ թագա-
ւորի որդոյն եւ արար վերակացու աշխարհին: Եւ յետ աւուրց ինչ
բերել ետուր զհայրն եւ զմայրն յիր մօտն, եւ յետոյ աղչկան հայրն
մեռաւ եւ ինքն նստաւ յաթոռ եւ թագաւորեաց:

485 Եւ Քրիստոսի փառք յաւիտեան.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԵԾԱՏԱՆ ՈՐԴՈՒՆ, ՈՐ ԶՀԱՅՐ ԵՒ [Զ]ՄԱՅՐ
ՎԱԾԱՌԵԱՑ ԵՒ ԳՆԱՑԵԱԼ ՕՏԱՐ ԱՇԽԱՐՀՆ
ՀԱՐՑ[Ա]ՔՆՆՈՒԹԵԱՆ*

էր մեծատուն այր մի և ունէր ինչս բազում, ոսկի և արծաթ,
և վայելեց բազում ժամանակ: Եվ որդի ոչ ունէին, այր և կին խրնդ-
րեցին աստուծոյ և արարին ընծայս բազում և ողորմութիւն աղ-
քատաց: Եվ ետ նմայ աստուած որդի մի, և յետոյ, վերջին ժամա-
5 նակ՝ աստմանէ շարին անկաւ մեծատունն ի յաղքատութիւն: Եւ
վայս ի միտ ածին, թէ՝ «Մենք բազում ժամանակ վայելեցաք փար-
թամութիւն և ոչ իմացաք զՀին, զնոր կտակարան իմաստութեանն,
զի՞նչ շահեցաք անցաւոր աշխարհիս, որ մեծութիւն մեզ դէմ չեկաւ»: Խորհուրդս արարեալ հայրն և մայրն և տվին զորդին ի յուսում
10 աստուածային Սուրբ գրոցն: Եւ ուսաւ որդին զաստուածային գիրն,
Հին և Նոր կտակարանքն և եղև իմաստուն կատարեալ: Եւ յաւոր
միում որդին հարցաւ առ հայրն և մայրն իւր և ասէր.

— Ընդէ՞ր աղքատացաք: Ոմանք ասեն, թէ՝ «Քո հայր խիստ
մեծատուն էր, ի քո ժամանակն աղքատութիւն անկաւ», և ես ա-
15 մաշեմ:

Դարձեալ ասէ առ հայրն և մայրն.

— Թէ կամիր, որ փարթամանալք, ելէք ի քաղաքէս, որ երթանք
աւտար աշխարհ, որ մտրդ չի ճանաչէ զմեզ: Թէ լինայ, որ մու-
րանք, ոչ աւսանեն զմեզ, սիրելիք տրտմին և թշնամիքն ուրախա-
20 նան ի վերայ մեզ:

Հայրն և մայրն հաւանեցան խաւաց որդուն և ծախեցին բղ-
հայրենի տուն և ելեալ հետ որդուն զնացին ի Հոռմաց աշխարհ:

Եւ կայր յայն քաղաք բարի թաղաւոր մ: Եւ իջան իրեք միա-
սին մէկ տուն մի և օթեցին: Եւ միտ ածեալ մանուկ և ասէ ցհայր
25 և մայրն իւր.

* Վ խումբ, մեկ խմբագրութիւն, անտիպ.

— Կամիմ ձեզ մէկ խաւսք ասել, կու վախեամ, թէ բարեկանաւք
և անիծանէք զիս, և հս լինիմ ամօթալից:

Եւ ասեն հայրն և մայրն.

30 — Մի՛ վախէր, որդեակ, ասայ, մենք քեզ հնազանդ ենք,
լսաւ լինանք խրատից քոց:

Մանուկն համարձակեցաւ խաւսել առ հայրն և մայր.

— Թէ հարստանալ կամիրք, ես ձեզ տանիմ այս քաղըրիս թա-
գաւորին ծախսմ և ձեր զին առնեմ և երթամ շահեցնեմ, դառնամ
զամ զձեզ աղատեմ:

35 Յայնժամ հայր և մայր գիրկս անկեալ համբուրէին զորդին և
ասէին.

— Դու գիտես, կամք քո եղիցին:

Եւ ելեալ մանուկն, առ զհայրն և զմայրն և զնացեալ առ թա-
գաւորն ծունսր էած և կանկնեցաւ առաջի նորայ: Եւ թագաւոր
40 խաւսել ցմանուկն և մանուկ իմաստութեամբ տայր զաղատասխա-
նին: Ասէ թագաւոր.

— Զինչ խնդրես և ես տաց:

Ասէ մանուկն.

45 — Ես երկու ծառայ ունիմ, մինն այր և մինն կին, քեզ լայելիս
են, կամիմ քեզ վաճառել:

Ասէ թագաւորն.

— Գնայ բեր:

Եւ զնացեալ մանուկն առ հայրն և մայրն և անկաւ առ ոտս
ծնաւաղացն և ասէ.

50 — Մի՛ անիծէք զիս, այլ աւրհնեցէք: — Պատվէր տայր և ա-
սէր. — Թէ հարցանէ թագաւոր, թէ՛ «Մտաւ էք մանկանդ», և զուր
ասէք՝ «Այոյ»:

Եւ առեալ զհայր և մայր և զնաց առ թագաւորն:

— Գին ուղէ ծառանուտ, ես տաց քեզ:

55 Ասէ մանուկ.

— Հստ արժանեաց դոցայ՝ տո՛ւր այս այր ծառայիս մէկ ձի՝
իւր ըստխտով և զէն տուր այս կին ծառայիս, հարիւր ֆլորի և ինձ
ըսգէստ:

— Թող քեզ լինայ:

60 Հրամայեաց թագաւորն, բերին տվին ձին ու խարճլին: Յայն-
ժամ ասէ մանուկն առ թագաւորն.

— Տաստուր տուր, որ երթամ խաւսիմ ընդ քո ծառայքն և զօրհնէնք առնեմ:

Հրամայեաց թագաւորն:

65 — Ե՛րթ և խաւսեայ: — Իմացաւ թագաւորն, որ մանկանն ծնաւոյն էին և ոչ յայտնեաց մանկանն:

Գնաց մանուկ, անկաւ առ ոտս ծնաւոյաց, լայր և արտասուէր և ասէր.

70 — Բողոքիւն արէք մեզ. թէ ժամանակ մի ծառայութիւն կու քաշէք, մի՛ նեղանաք, արհնէցէք զիս, թէ աստուած որ աջողէ, ու զորմութեամբ Քրիստոսի շուտով կու ազատեմ զձեզ:

Եւ ծնօգք արհնեցին զաւակս իւրեանց և ասեն.

— Տէր ընդ քեզ եղիցի:

75 Եւ համբուրեաց զձեռն հար և մօրն և ելեալ գնացր ի ճանապարհ մի: Երեք տիւ, երեք զիշեր հեռացաւ և մտաւ ի դաշտ մի կու երթայր, հանգիպեցաւ ալլ ուրիշ մանկան մի: Բարեւ տղին ընդ միմեանս, ընկերացան և կերթային: Այն որ զհայրն և մայր ծախէր էր, խոստովանեցաւ զիւր զիւր և կամ բաներն: Ընկեր ափսոսաց և ասաց, թէ՛ «Քեզ ինչ խեղճ բաներ եղեր է»: Դարձեալ ասէ, թէ՛ «Ես թագաւորին խաղնատարալաշին եմ, խիստ կու սիրէր զիս: Եւ ինձ խղմաթ երեւո՞ւ առ կղզեաց թագաւորն. այս թուխտս առ նայ կու տանիմ, ինձ շատ խաղնայ և փէշքաշ կուտայ, ապալ իմացայ, որ քո զիւրս փորձանք շատ եկեր է, խղճացի քեզ. ա՞ռ զայս թուխտըս ի քեզ և տար ի կղզեաց թագաւորն, զինչ որ փէշքաշ տայ, բեր որ կիսենք, տար զքո հայրն և մայրն ապասէ»:

85 Եւ տուեալ թուխտն ի մանուկ, ինքն մնաց տնտեղն: Եւ առեալ մանուկ զթուխտ և համբուրեաց զձեռն և եզ ի քսակն և զնացեալ հեռացեալ, մտաւ ի դաշտ մի, հայր և մայրն ի միտն տնկաւ, շատ իլաց և ննջեաց ի վերայ ձիուն: Եւ ձին ելաւ ի ճանփուն և կորուց զճանապարհ, և յետոյ զարդեցաւ, տեսաւ խիստ ծարաւած էր ինքն և իւր ձին, և ջուր ոչ կայր: Եւ շուրջ եկեալ մինչև կէսաւր, գտաւ ջրհոր մի: Եւ աման ոչ ունէր, կամէր որ ջրհորն անկաներ, ապալ միտք արաւ, զվրայի քսակն կախեց ի ջրհորն, հանեց ջուր, խմեց ինք և խմցուց ձիուն, և մոռացեալ էր զթխտեր ի մէջ քսակին: Տե-
95 սեալ զթխտերն թրջեալ, շատ իլաց, փոնց արեղական, որ շուրջաւ, և յետոյ առեալ ծալեր և զներ ի քսակն, և ասէր ի միտս իւր, թէ՛ «Իմ ծնաւոյք էրախտիք աշխատանք քաշեր են ու զիս կարողացուցեր են

ղայսպիսի գիրս կարդամ»: Բացեալ ղթուխտ կարդայ: Եւ դրած էր այսպէս.

- 100 «Այսինչ թագաւորէ ողջոյն սիրոյ առ կղզեաց թագաւորն: Գիտացիր, որ այտ թխտիտ բերողն ինձ խաղնատարպաշի էր, յետոյ հետ իմ դստերն շար դործեաց: Կամլի ղղայ սպանանել, չի սպանեցի, թե մեր խաղկութիւն երկիր շիմանայ, վասն ալդ պատմառիդ համար առ քեզ ուղարկեցի. ղատ աներկեղտ, ղատ անհաւատ, որ թուխտն բերէ առ քեզ, առնես ղթուխտ, ղինքն մասնընմաս կտրատէս և խապարն առ իս ուղարկես»:

- 110 Կարդաց մանուկ ղթուխտն և անկաւ ի վերայ յերեսին և արհեսաց ղաստուած, և յիշեց զծնօղս իւր, որ կարդացուցեր էին ղինքըն, իւր կարդալովն ղինքն մահվանէ ազատեաց, պատտուաց ղթուխտ, և չեծաւ ի ձին և գնաց երեք տիւ և երեք ղիշեր, և հանդիպեցաւ քաղաքի մի և իջաւ մէկ պառաւի տուն և գիշերն օթեցաւ: Խաւսակցէին առ միմեանս, և ասէր պառաւ ցմանուկն.

- Կայ այս քաղաքս թագաւոր մի և ունի դուստր մի գեղեցիկ և իմաստուն, լեղուաւ ճարտար, և ունի հարցաքննութիւն: Գային որդիք թագաւորաց, ուղէին ղթագաւորին դուստր ի կնութիւն: Եւ կոչէր ղորդիք թագաւորաց. «Եկէ՛ք, ինչ մանուկ որ հարցաքննութեամբ յաղդէ, ղդուստրն իմ ես տաց ի կնութիւն, թէ դուստրն իմ յաղթեացէ ղձեղ, կտրեցից ղգլովս ձեր»: Այսպէս հարցաքննութեան համար իննսունինը թագաւորի որդոյ գլովս կտրեալ էր, և կտխեր 120 են ի պարիսպն ի վար: — Զայս ասէր պառաւն:

Իմացաւ մանուկն և արհեսաց ղաստուած և ասէ.

— Ոչ կարեմ ի քուն լինար, միթէ թեղ լուսանայր, երթայի հարցաքննութիւն այնէի ի հետն:

- Երբ լուսացաւ, ելաւ մանուկ, գնաց ի բաղանիս, վրացվեցաւ 125 վարդէջրով և մշկով, և հագաւ ղիւր հանդերձն և և ղ գնաց ի թագաւորի դստր ի դուռն դարպասին: Եւ տեսանէր բարձր շարտախ մի ոսկով և մարգարտով ղարդարած: Անդ կու նստի ի մէջ: Եւ ունէր փանճարայ, ի դէմ կայր ոսկի մուշապախուն ղաւաղ, որ աղչիկ ղեկող մանուկ տեսանէր, և նոքայ ղաղչիկ ոչ տեսնէին, միայն 130 ղձայնն կու լսէին:

Եւ ուղեց հրաման ի թագաւորէն, թէ՝ «Երթամ հետ քո դստեր հարցաքննութիւն անենք»:

Հրաման ետ, թէ՝ «Գնայ»:

Եւ գնաց: Մարդիք, որ ի դուռն կային, խրատ տային մանկան,

- 135 Թէ՛ «Պատրաստ կացիր, զի շատ Թագաւորի որդոց գլիւխ է կտրեր, զաւիլ մի՞ լինար»:
- Մտեալ ի դարպասն և բարեւերն դստեր Թագաւորին: Դրին ռսկի աթոռ և նստաւ մանուկ ի վերան: Դիտաց աղչիկն, որ այն բանին համար եկիւ է:
- 140 Արկեց աղչիկ հօրն և մարն, վաղիրնուն և իշխանացն, խընդ-րեց, որ եկան հաւաքեցան ի միասին: Եւ ասէ մանուկ.
- Դուք վկայ եղիք, թէ բան հարցանեմ, յաղգեմ, առնեմ ի կնութիւն, թէ դուստր Թագաւորին զիս յաղթէ, թող կտրէ զգլիւս իմ, արիւնսն հալալ թող լինայ:
- 145 Հաւանեցաւ խօսաց աղչիկն և ասէ.
- Թող վկայ կենան:
- Ասէ աղչիկ ընդ մանուկ.
- Եկիր ընդ իս, այն կթխայէն տամ քեզ բաժակ, զոր քո ընկերացաւ արբուցի:
- 150 Ասէ մանուկն.
- Աստուծով պարծեցարուք. զինչ որ աստուծոյ կամքն է, այն կու լինայ:
- Ասէ աղչիկն.
- Ո՞վ է քո հայրն և մայրն:
- 155 Ասէ մանուկն.
- Ամպն և անձրեւն է:
- Ասէ աղչիկն.
- Ո՞րն է առաջի արիւն, որ յերկիր անկաւ:
- Ասէ Մանուկ.
- 160 — Կայեն, որ զԱբել ըսպան:
- Ասէ աղչիկ.
- Ո՞վ է քո դայեակն:
- Ասէ մանուկն.
- Այն իմ դայեակն, որ նայ զիս տեսանէ, ևս զնայ ոչ տեսա-
- 165 նեմ և զձայն միայն լսեմ:
- Ասէ աղչիկ.
- Այդ տղայոց զրուց է:
- Ասէ աղչիկն.
- Ո՞րն է այն երեք, կերան և խմեցին, մեռեան և չէր ծնեալ
- 170 զիրն մարդ:
- Ասէ մանուկ.

- Աղամ, Եվայ և գառն Աբրահամու:
Ասէ աղչիկն.
- 175 — Ո՞րն է այն տեղն, որ քան աստուած աշխարհս րստեղծեր,
նայ մէկ հետ արեղակ է ծագեր:
Ասէ մանուկն.
- Մոլին Կարմիր, որ Մովսէս պատառեաց և անցոյց զխորալէլ:
Ասէ աղչիկն.
- 180 — Զի՞նչ է այն՝ կեանքն արեւն, մահն ի ջրէն:
Ասէ մանուկն.
- Կալէքարն է:
Ասէ աղչիկն.
- Այն ի՞նչ, որ զադրեցաւ ի տապան զերդ զմեռեալ և եղև կեն-
դանութիւն կենդանեաց, յետոյ հրեշտակ ողջացոյց:
185 Ասէ մանուկ.
- Այն Յոր երանելին է, որ ապրեցաւ զերդ մեռեալ և եղև
կերակուր սրդանց և յետոյ աստուած ողջացոյց զնայ:
Ասէ աղչիկն.
- Երկու իրք կայ՝ մեծնան զահնան:
190 Ասէ մանուկն.
- Զկայ մեծ իրք՝ ձուկ ի ծովին և աւծն ի ցամաքին:
Ասէ աղչիկն.
- Ո՞րն է այն իրք, և շէ իրք, և լինի իրք. զմարդն հարստցնէ
և աղքատցնէ:
195 Ասէ մանուկն.
- Ապրըշումի ճիճին է:
Ասէ աղչիկն.
- Ո՞րն է, որ վազնէն տնկեց, արհասըրկին ժողովեց, յետի
ժըմուն ճմլեց, իրիկուն գին[ի] ևղաւ խմեց և ուրախացաւ:
200 Ասէ Մանուկն.
- Նոյ, երբ որ տապանէն ելաւ, խիստ տրտում էր: Հրամա-
յեաց աստուած Նոյի՝ «Տնկեայ աչգի»: Եւ տնկեց Նոյ, օրէ զի՛նչ
հասաւ, խմեց և ուրախացաւ:
Ասէ աղչիկն.
- 205 — Այն ո՞վ էր, աշարք զաշխարհ շէր տեսեալ, ոտիւր զերկիր
շէր կտիսեալ, աւտուծոյ երկիր էպագ:
Ասէ մանուկն.
- Սուրբ Յովհանէս է:

- Ասէ աղչիկն.
- 210 — Ո՞րն մեռան և որ կային անմահ երեքսարիւր տարի:
Ասէ մանուկն.
- Եփեսոսի մանկունքն էին, որ մեռան և յետոյ հազար տա-
րոյ յարեան:
- Ասէ աղչիկ.
- 215 — Հացն և զինին ուստի՞ց, և մահն և ձմեռն ուստի՞ց վեր
եղաւ:
- Ասէ մանուկ.
- Նոյ, որ իւր տապանէ ելաւ:
- Ասէր աղչիկ իւր մօտին, թէ՛ «Այդ մանուկդ զիս կու յաղթէ»:
- 220 Ասէ աղչիկն.
- Ո՞րն էր, որ քաղաքն մօտին Խօթանաստնշորս էին, երբ որ
եկան՝ վեցհարիւր հազար էին:
- Ասէ մանուկն.
- Յակոբ նահապետ և իւր տասներկու որդուքն էին:
- 225 Ասէ աղչիկն.
- Արի գնայ հանգիր, զի շատ աշխատեցար, վաղն արեկ, որ
զրեւդ քո ընկերտացաւ հասուցանեմ:
- Ասէ մանուկն.
- Այն աստուած, որ այսար ի ձեռաց քոց աղատեց, կարող
- 230 է վաղին ալ ազատէ:
- Եւ և զնաց: Ամենեքեան տեսին զմանուկն և զարմանային,
թէ որպէս զերծաւ ի ձեռաց աղչկան: Փառս տային աստուծոյ:
- Եւ զնաց ննջեաց ի տուն պառաւին:
- Պառաւն երբ տեսաւ զտղան, խիստ ուրախացաւ, փառք երեստ
- 235 աստուծոյ, թէ՛ «Որպէ՞ս զերծար, որդեակ: Բարի եկեր: Սա քո
խղճոյդ մինչև հիմի մահ էի գնացեր»:
- Ասէ մանուկ.
- Լստուած փրկեաց զիս ի նմանէ:
- Ննջեաց զիշեր: Երբ վաղնէն, որ լուսացաւ, եւ և տրհնեց զաս-
- 240 տուած, և ասէ պառաւին.
- Զիս յաղօթից մի՞ մոռանար, աստուծոյ ողորմութեամբ հս
կու յաղթեմ զնայ:
- Եւ զնաց ի դարպասի դուռն, մտաւ ի ներս և երեստ բարեւ: Հրա-
մայեց աղչիկն.
- 245 — Գիշերս բարով լուսացաւ ի վերայ քո:

- Եւ դրին ոսկին աթոռ:
 Ասէ աղչիկ.
 — Ընդէ՞ր ոչ վախեցար ի մահվանէ եւ եկար կրկին:
 Ասէ մանուկ.
 250 — Սէր քո ծագեալ է առ իս, սէր ոչ տայ կրել զերկիրդ:
 Ասէ աղչիկն.
 — Կա՞յր խաշն յառաջ, քան զՔրիստոսի գալուստն:
 Ասէ մանուկ.
 — Կար, զի խաշածն էր աթոռն աստուածութեան՝ մարդ, ա-
 255 ռիւծն, եղն, արծիւն:
 Ասէ աղչիկն.
 — Քանի՞ ժամ եկաց Ադամ ի գրախան:
 Ասէ մանուկ.
 — Ընդ յառաւատս ստեղծաւ յաւոր ուրբաթի եւ ընդ յերեկո
 260 ելաւ: Դրախտ լոյս էր, երբ որ ելաւ՝ եղև գիշեր:
 Ասէ աղչիկն.
 — Ո՞րն ը՛քաղաք առանց հիման, անխօս առաքեալ կա՞ւ
 թուխտ առանց գրոյ.
 Ասէ մանուկն.
 265 — Քաղաք առանց հիման նոյի տապան է, անխառ տառ-
 քեալն աղանին է, թուխտ առանց գրոյ՝ տերև ձիթենուն է:
 Ասէ աղչիկն.
 — Տապան նոյի քանի՞ տուն եւ կամ քանի՞ սենյակ:
 Ասէ մանուկն.
 370 — Տուն երեք եւ սենեակ՝ երեքհարիւրվաթսուն հինգ:
 Ասէ աղչիկն.
 — Տապանին լայնութիւն կամ երկայնութիւն կամ բարձրու-
 թիւն որչա՞փ են:
 Ասէ մանուկ.
 275 — Երկայնութիւն երեքհարիւր կանկուն, լայնութիւն հիստուն
 կանկուն, բարձրութիւն՝ երեսուն կանկուն:
 Ասէ աղչիկն.
 — Քանի՞ ոգիք են, որ ի տապան մտան:
 Ասէ մանուկն.
 375 — Նոյ եւ իւր կին, երեք որդին, իւրեանց կանայքն:
 Ասէ աղչիկ.
 — Ո՞վ էր, որ զործեաց եւ ոչ ապրեցաւ:

Ասէ մանուկ.

285 — Տապան շինող Անոսիմայ էր, որ շինեց և ոչ ապրեցաւ:
Ասէ աղչիկն.

— Ո՞ր յերկիր զնաց Ադամ:

Ասէ մանուկն.

— Երկիրն Մադիամու, անդիման դրախտ:

290 Ասէ աղչիկ.

— Ո՞վ է անժին, կամ ո՞վք են անմահ:

Ասէ մանուկն.

— Ադամ է անժին, Ենովք, Եղիայ են անմահ, մինչ ի դալ
Նևոինն:

Ասէ աղչիկ.

295 — Տեսանեմ այլ մի վերայ իշոյ, տեսանեմ այլ մի վերայ
ուղտոյ:

Ասէ մանուկն.

— Ի վերայ իշոյ Քրիստոս է, ի վերայ ուղտոյ՝ սուրբ Յովնէս է:

300 Ասէ աղչիկն.

— Զի՞նչ ծառ է, որ Յուդայ կախվեցաւ:

Ասէ մանուկ.

— Մոշի ծառն է, որ կախվեցաւ:

Ասէ աղչիկն.

305 — Զի՞նչ է այն, որ աղայցեն ի մի Երկանք, մինն առնուցու և
միւսն թողցի:

Ասէ մանուկ.

— Հոգին և մարմին են, ի միասին աճին, հոգին առնէն և
մարմինն թողուն:

310 Ասէ աղչիկն.

— Ուստի՞ց էր խոյն, որ հրեշտակ իշուց ի ծառէն սարեկայ
փոխանակ Սահակայ:

Ասէ մանուկ.

— Աբելի խոյն էր, որ աստուծոյ պատարագ մատուց:

315 Ասէ աղչիկ.

— Զի՞նչ է կափարիչ վէմն:

Ասէ մանուկն.

— Այն վէմն է, որ Աբրահամ թաւալեցոյց և ել վրուն և էառ
դիտոյն սաբեկայ ծառէն:

- 320 Ասէ աղչիկ.
— Ծառն սաբեկայ զի՞նչ է:
Ասէ մանուկ.
— Այն, որ խաշափայտ եղաւ Քրիստոսի:
Ասէ աղչիկ.
325 — Զի՞նչ են թակոյքն:
Ասէ մանուկ.
— Քարեղէն կժերն է:
Ասէ աղչիկ.
— Ո՞ր ամիս քստեղծ զԱդամ, կամ զի՞նչ օր:
330 Ասէ մանուկ.
— Մարտ քսանհինգ, արն ուրբաթ:
Ասէ աղչիկ.
— Զի՞նչ է եաւթն վրէժ Կայենի:
Ասէ մանուկ.
335 — Զի աստուած բարկացոյց, զմայրն առորդի արար, զգոյթն պակասեցոյց, եղբայրբնական եղաւ, զերեսս երկրի պղծեաց, զարիւնն հհեղ և այսու դժոխք ամենիւ նորոգեաց:
Ասէ աղչիկ.
— Ո՞ւլ են, որ ասէ մարգարէն՝ երկինք պատմեն զփառս աս-
340 տուծոյ:
Ասէ մանուկ.
— Ոմանք զառաքեալս ասեն, այլ սոքայ են Սէթ, Ենոք, Ենոք, Նոյ, Աբրահամ, Սահակ, Յակոբ:
Ասէ աղչիկն.
345 — Վասն յէ՞ր եաւթ արարեալ ի շաբաթ:
Ասէ աղչիկն.
— Վեց օր գործ արարչութեան, Եաւթ հանդաւ:
Ասէ աղչիկն.
— Վասն յէ՞ր գրեցաւ աւետարանն շորս, ոչ հինգ կամ տաս-
350 ներկու:
Ասէ մանուկն.
— Յորժամ զոհեցին զգլխն հորթոյ և խոզիցաւ Մովսէս և խորտակեաց զտախտակն, շորս մասն եղաւ խաշանման, և որպէս տախտակ զրեալ է արէնք տեառն, նոյնպէս և աւետարանն շորս
355 զլիւիս է:
Ասէ աղչիկն.

- Զի՞նչ էր Սիրոն, կամ յառաջ կոչեցաւ Սիրոն:
Ասէ մանուկն.
- 360 — Ուստի ստեղծաւ Ադամ, աչն կոչեցաւ Սիրոն:
Ասէ աղչիկն.
— Ուստի առաւ հողն Ադամայ:
Ասէ մանուկն.
— Յերկրէն Մադիամու, ուր բնակեցաւ Ադամ և անդ խաչեցաւ Քրիստոս:
- 365 Ասէ աղչիկն.
— Քանի՞ գործս արար Քրիստոս իւր ձեռօքն:
Ասէ մանուկ.
- ԶԱդամ և զդրախտն և զքարեղէն տախտակ, զոր գրեաց Դովսէսի:
- 370 Ասէ աղչիկ.
— Ո՞ր արուէստ է առաջի:
Ասէ մանուկն.
— Կարկատն է:
Ասէ աղչիկն.
- 375 — Զի՞նչ է այն՝ երեք բան ի ջրին դէմ առին, մէկ տեսաւ մտաւ ջուր անցաւ, մէկ շմտաւ ու տեսաւ անցաւ, միւսն ոչ մտաւ, ոչ տեսաւ, ան ալ անցաւ:
Ասէ աղչիկն.
— Զի՞նչ են դարազլիւիսքն:
- 380 Ասէ մանուկն.
— Առաջին դարն այս է, որ Ենովք մարմնով երկինս փոխեցաւ. երկրորդ դարն այն է՝ ջրհեղեղն. երրորդ դարն այն է, որ աշտարակ շինեցին. չորրորդ դարն այն, որ հիւր երեկ առ Աբրահամ և խոստացաւ Սահակ որդի. հինգերորդ դարն այն է, որ Մովսէս զծովն սլատառեաց և անցուց զիսրայէլ. վեցերորդ դարն այն է՝ Գալուստն Քրիստոսի, որ մարմին էառ ի սուրբ կուսէն. եաւթներորդ դարն այն է՝ վախճան լինի ամենայն տիեզերաց. ութերորդ դարն այս է՝ յարութիւն լինի ամենայն հոգոց:
- Ասէ աղչիկ.
- 390 — Զաւակ ծնաւ այն մեծ այգին,
Ծառն հտուր ծիծ՝ և իսպան զորդին.
Նորայ իսպիտակ ըսգեստ ունէին,
Հանին ազան այծու մորթին:

Ասէ մանուկ.

395 — Դրախտն, Ազամ է:

Ասէ աղչիկ:

— Եկեղեցին բարձր էր և լան,
Անսուն շինած էր 'ւ անգերան,
Կանթեխն ի կախ առանց շուան,
400 Զահերն անձէթ, որ լուս կու տան:

Ասէ մանուկ.

— Երկինք և աստեղքն:

Ասէ աղչիկ.

— Պանդոկ մի կայր վերայ երկրի
405 Ի յանցաւոր ճանապարհի,
Որ անծանօթքն ի նայ գային
Եւ ծանօթեալքն գնային,
Մինչ հիւր որ գար մեծարէին,
Եւ մինչ գնայր՝ կողոպտէին.

410 Ինչ մասն ըսգեստ վրան ոչ թողէին,
Բովանդակ ըզնայ խլէին:

Ասէ մանուկ.

— Տղայոց ծնանիրն է և մարդկանց մեռնիր:

Ասէ աղչիկ ցմանուկն.

415 — Երթ հանդիր, յերեկոյ եղաւ, զի այսօր շատ աշխատացար,
գնայ հանգիր ի րո յաւթեանքն, վաղն արեկ, որ քեզ քո հասար-
թին հասուցանեմ:

Ել մանուկ և զնաց ի սրահաւի տուն: Ոմանք կայր ի թաղաւո-
րի դուռն, հիացան և զարմացան, թէ որպէ՞ս գերծաւ մանուկ ի
420 ձեռաց նորայ, փառք տային աստուծոյ:

Գոհացաւ աստուծոյ և ննջեաց մանուկն: Երբ լուսացաւ, ել և
օրհնեաց դաստուած և ել գնաց ի դուռն դասերին թաղաւորին:
Երևտ բարեւ, և բերին դրին ոսկի աթոռ, նստաւ ի վերան: Եւ ասէ
աղչիկ.

425 — Աւրս բարով լուսացաւ ի վերայ քո:

Ասէ մանուկ.

— Քո սէրտ ծագեալ է առ իս և քո խօսելն կյանք է ի յիս:

Ասէ աղչիկն.

— Երկու հովիւ ըստացան ոչխար,

- 430 Իւրեանքն էին աղատ եղբայր,
Մինն մատաղ առնէր արդար,
Միւսն եղև պեղծ բկահար:
Ասէ մանուկ.
— Արէլ և Կայեն:
- 435 Ասէ աղչիկն.
— Ելեալ երթար շորս տըռմով,
Զերդ օձ խաղայր հանց սահելով,
Եմուտ ի տուն շորս անկիւնով,
Այն տունն կար բաղում ժողով:
- 440 Ասէ մանուկ.
— Նոյի տապան է:
Ասէ աղչիկ.
— Անպոյ նըման էր նա սատակ,
Զերդ մնարայ էր հանց շիտակ,
Հանց հողմաբեր քաղցր ճաշակ,
Եաւթանասուներկու վիճակ:
- 445 Ասէ մանուկ.
— Աշտարակն:
Ասէ աղչիկ.
— Այր մի արդար երևեցաւ,
Հանց որ աստուած ինք հաճեցաւ,
Արքաութեանն տիրացաւ,
Բայց կարի շատ դար փորձեցաւ:
- 450 Ասէ մանուկ.
— Յոբ:
Ասէ աղչիկ.
— Կայր թագաւոր մի աղքատիկ,
՚ի էր քահանայ խիստ սպըրկիկ,
Ծընօղ շունէր ոչ մի ոքիկ,
Լեառն նստէր մերկ և բոկիկ:
- 455 Ասէ մանուկ.
— Մ'իւրքսէթ:
Ասէ աղչիկ.
— Անուն ունէր ի խունկ նըման,
՚ի էր հրեշտակաց ասպընճական,
Իւր աղչիկներըն հարրեցան,

Իւր կինն եղև աղի արձան:
Ասէ մանուկն.

— Ղովտ է:

470

Ասէ աղջիկ.

— Հիւրասէր խիստ ծերունի,
Զենէր խաւառն դառն ի սեռի,
Ունէր ամուլ կին մի բարի,
Խիստ ծիծաղկոտ և առաքինի:

475

Ասէ մանուկ.

— Արրահամ է:

Ասէ աղջիկ.

— Հանց դէտ զգաւն էր անմեղուկ,
Ի սպանողին առջև հեղուկ,
Որդիք ունէր երկու մանուկ,
Մինն յիմար, մինն խաբուկ:

480

Ասէ մանուկն.

— Սահակ է:

Ասէ աղջիկ.

485

— Գաւառէմարտն ճակատուն.
Յաղթահարեալ եղև նըկուն,
Եւնէր երթար կաղ-կաղ ի աուն,
Ոչխար և արջառ իւր խատատուն:

Ասէ մանուկն.

490

— Յակոբ նահապետն է:

Ասէ աղջիկ.

— Յարեգական նըման իշխան,
Եղբարք ունէր իւր մետասան,
Բէպէտ եկաց շատ ի զնտան,
Շատոց սովածի էարկ սեղան:

495

Ասէ մանուկ.

— Յովսէփ:

Ասէ աղջիկն.

— Հովիվ մի կար խիստ արմցարար,
Աստուածութեանըն կամարար,
Գնալուն աղբեր զվէմն արար,
Լեղի արբին հանց դէտ շաքար:

500

Ասէ մանուկ.

- Մովսէս է:
 505 Ասէ աղչիկ.
 — Անշափ նա սուրբ երեւցաւ,
 Որ դաւադանն ծաղկեցաւ,
 Քարձուն ապայ մորուք բուսաւ,
 Բայց կարի շատ ի լաց կեցաւ:
- 510 Ասէ մանուկ.
 — Ահարոն:
 Ասէ աղչիկ.
 — Հսքանչելագործ այր դարական,
 ԶԱստուած ետես դէմ անդիման,
 515 Արեգական ետ նայ հրաման,
 Զիւր թըշնամիք իսպառ ըսպան:
 Ասէ մանուկն.
 — Յեսու է:
 Ասէ աղչիկն.
 520 — Կինն մի պսոնիկ խիստ մեղաւոր,
 Զինք հանց դովեն զէտ հոգեւոր,
 Զպատճառն ասեմ ես վասն աշնոր,
 Աղգին հասաւ զէտ կարեւոր:
 Ասէ մանուկ.
 525 — Բախափ է:
 Ասէ աղչիկ.
 — Մանուկ մի քաջ, զերդ մոմեղէն,
 Խանկրէր հազար մանուկ ինքն մէն,
 Ծեծէր զառիւծն պէն ու պէն,
 530 Յետեւ ըսպանվաւ իւր կընոչէն:
 Ասէ մանուկ.
 — Սամսոն է:
 Ասէ աղչիկ.
 — Կար պատանեակ մի խարտիշուկ,
 535 Հանչաք փոքրիկ զէտ ըղթգուկ,
 Խոսրոովայէն առնույր թընպուկ,
 Իսպան զհսկան հաստաբաղուկ:
 Ասէ մանուկ.
 — Դաւիդ է:

540

Ասէ աղչիկ.

— Բարեկալաշտ տրբայ՝ և արդար,
Աստուածութեանն կամարար,
Հիւանդացաւ մահուան համար,
Բայց ասորեցաւ նայ շատ յերկար:

545

Ասէ մանուկ.

— Եղեկիայ է:

Ասէ աղչիկ.

— Գայր փախուցած մի խիստ գիտուն,
Գնաց մըխլուճ, ի մէջ ծովուն,

550

Արար իւրէն գնայուն տուն
Հօն աղօթէր զողջ օրն ի բուն:

Ասէ մանուկ.

— Յունան է:

Ասէ աղչիկն.

555

— Առաքինի մի պատուական,
Կայր ի զնտան զերդ մարդաստան,
Նայ ճաշակէր ըզմանանայն,
Բերողք ահա առջն գողան:

Ասէ մանուկն.

560

— Դանիէլն.

Ասէ աղչիկն.

— Էր գրագէտ աղ:լոր նաւտար,
Ինքն ասորեցաւ շատ մի յերկ[ար],
Հանց որ տեսաւ մանուկն արդար,
Վազեաց ի գիրկն էառ խաղալը:

565

Ասէ մանուկն.

— Սիմէոն է:

Ասէ աղչիկն.

— Սառն ծաղկեաց կաղնոյ նըման,
Ճիւղք բաժնեցան երկոտասան,
Ճղեր եհան իւր հեծելտան,
Ջաշխարհս եբեր ինրքն հաւան:

570

Ասէ մանուկ.

— Առաքեալք է:

575

Ասէ աղչիկ.

- Ի խրճկաբեր բըլբին վերայ,
 Չոր կիսարի ծառ մի տեսայ,
 Ոսկի խնձոր մի կայ ի նայ,
 Ով չի հաւատայ ինքն է Յուզայ:
- 580 Ասէ մանուկն.
 — Խաչն է:
 Ասէ աղչիկն.
 — Պըտուզ մի կայր յոյժ ցանկալի,
 Ի ինք գեղեցիկ տեսակ ունի,
 585 Հանչակ վայլելու՞ և ցանկալի,
 Որ հիւանդաց շարապ լինայ:
 Ասէ մանուկ.
 — Խնձորն է:
 Ասէ աղչիկ.
 590 — Բրուտ մի կալր խիստ պիտանի,
 Կուժն զուգեսց թուխտ ու նուկի,
 Խառնեաց ի նայ գեղ հիւանտի,
 Խըճեր և մեղր ի մէկ տեղի:
 Ասէ մանուկ.
 595 — Տանձ:
 Ասէ աղչիկ.
 — Յիւրմէն ամ ի՞նչ տամ քեզ նըշան,
 Որ չիշելոյ չէ ինքն արժան,
 Կախարդ մի կայր հանց ի նըման,
 600 Որ շատք արար իւրեան հաւան:
 Ասէ մանուկ.
 — Մահմէտն է:
 Ասէ աղչիկ.
 — Մերկ արապիկ մ'ես տեսայ,
 605 էր խանութպան ու ջամբըտայ,
 Զրուցեց մընճնակ որ հասկցալ,
 Շնքիթ ահեղ և մասխարայ:
 Ասէ մանուկ.
 — Մէյմունտն է:
 610 Ասէ աղչիկն.
 — Բաղաւոր տղայ աղվոր տեսակ,
 Զամեն հագնի կանանչ տիպակ,

- հաշինք ունի անթիվ բանակ,
 Շատ գէր ձիան որց ու մատակ:
 615 Ասէ մանուկ.
 — Գարունն է:
 Ասէ աղչիկ.
 — Տանուտէր խիստ ծերունի,
 2էտ նոյ ունէր իրէք որդի,
 620 Ունի շատ հաց ու շատ բարի,
 Անթիւ ունէր կարսով գինի:
 Ասէ մանուկն.
 — Ամառն է:
 Ասէ աղչիկն.
 625 — Մանուկ մի գայր զօրէղ հըրեղէն,
 Խմեց հատուց ջուրն ի գետէն,
 Զիուն 'ւ իշուն արար նայ քէն,
 Հնձեց վերուց զխստն ի դաշտէն:
 Ասէ մանուկ.
 630 — Աշունն է:
 Ասէ աղչիկն.
 — Բող մի կայր կաւատ շատոց,
 Ու ինք նըման էր դըժոխոց,
 Զարըն կենայր ինքըն լըլկոց,
 635 Զմիրգըն հատոց ամէն ծառոց:
 Ասէ մանուկ.
 — Ձմեռն:
 Ասէ աղչիկ.
 640 — Ձեռ միայնակեց հագնի խոշոր,
 Ինքն ի բընէ մաղեղնաւոր,
 Զորմէ ասեն, թէ չէ աղվոր,
 Զի Քրիստոսի կայ նենգաւոր:
 Ասէ մանուկն.
 — Խոզն է:
 645 Ասէ աղչիկն.
 — Մանուկ մի քաջ աղվոր հասակ,
 Կապէր կըրծոցըն դաստառակ,
 'Ի է բարի անմեղ տեսակ,
 Եւ Քրիստոսի ինքն արիւնակ:

Ասէ մանուկն.

— Եղն է:

Ասէ աղչիկն.

— Է նըման աղվոր տիկին,

Ինքն ծընանի գմալը աւծին,

Թէ փոկն ու մասն քեզ պիտին,

Դու լաւ սիրէ զորսորդին:

Ասէ մանուկն.

— Եղն է:

Ասէ աղչիկն.

— Զամեն շրջի ինքն ի քարեր,

Ունի ծախու մաղէ քրծեր,

Գինոյ ունի աղվոր տըկեր.

Օտտեր ձրի դանկի կոթեր:

Նսէ մանուկ.

— Այծն է:

Ասէ աղչիկն.

— Ի յատուածտրան է նըմանել,

Հերն վայելուճ և գրգռող Լկել,

Է բարի աղվոր քնկեր,

Բայց դաւձն ուտէ զինչ զխոտեր:

Ասէ մանուկ.

— Մաքին է:

Ասէ աղչիկ.

— Նայ կարմիր հագնի վարտիք,

Ու խառումատ ունի շապիք,

Բոլորի զինչ բղկըծիկ,

Կըռիւ առնէ դէտ զարատիկ:

Ասէ մանուկ.

— Կաքան է:

Ասէ աղչիկ.

— Մին ի յանդունդս տառապէր,

Մինն ի յերեսըն թըրանէր,

Գլտովըն ծափըս հարկանէր,

Զկենարարըն մեղ բերէր:

Ասէ մանուկն.

— Զաղացքն է:

Ասէ աղչիկ.

690

— Սպիտակ ձիակ գեղ ու գէր,
Աչեր սպիտակ փայլուն ունէր,
Ճորտ բղպախորացն կու քարշէր.
Խրխնձկնով ի վեր վազէր:

Ասէ մանուկ.

— Կանթեղն է:

695

Ասէ աղչիկ.

— Կուժն և բրուտն կուլեցան,
Կուժն զբրուտ արար կալման,
Բրուտ էած կժին սահման,
Զինքն խըղեց արար նշան:

Ասէ մանուկն.

700

— Յակոբ է:

Ասէ աղչիկ.

705

— Տեսայ մանուկ մ' որ ծընանէր,
Եւ ի նոյն արըն մեռանէր,
Յետ թաղելոյն դարձեալ առնէր,
'Ի ալլ գեղեցիկ դինք ցուցանէր:

Ասէ մանուկ:

— Արեգակն է:

Ասէ աղչիկ.

710

— Կայր նկանակ մի դեղադանձ,
Աշխարհաշէն փռան եփած.
Ի էփողէ իւրմէ խոռած
Եւ ի նմանէ դարձեալ լցած:

— Լուսին է,—ասէր մանուկ:

Դարձեալ աղչիկ ասէ.

715

— Կարի առսայ ես շատ քարուան,
Որ կու իջնոյր ի Խորասան,
Իշուին բոկիկ են 'ւ անկուտողան,
Մերկ և մերկիկ բառնան և դան,—ասէ աղչիկ:

Մանուկ ասէ.

720

— Մոջումն է:

Ասէ աղչիկ.

— Յորժամ դկովն քաշեցին,
Հորթն լինէր խիստ դիւրածին,

Բայց նայ շուտէր զմաւրն ըստին,
Փութով Լըթար արեան տեղին:

Ասէ մանուկ.

— Աղեղն է:

Ասէ աղշիկ.

— Թէպէտ դառն է և լեղի,

Ամենեցուն մեղ նայ պիտի,

Շատ ուատուական է, քան զոսկի,

Եղուկ մարդուն, որ նայ շունի:

Ասէ մանուկն.

— Ապաշխարանքն է:

Ասէ աղշիկ.

— Մէկ հաւուկ մի կայր փոքրիկ,

՚Ի ի գլխուն ունէր սեռակ թևորիկ,

Երթար նստէր ինքն լուկ,

Աղօթք առնէր իրստ սպըրկիկ:

Ասէ մանուկ.

— Աբեղան է:

Ասէ աղշիկ.

— Մեծ թաղաւոր մի իմաստուն,

Ունէր կանաչք հաղար և յիսուն,

Նայ վեց տարի և քառասուն,

Աղվոր շինեաց աստուծոյ տուն:

Ասէ մանուկ.

— Սողոմոն է:

Ասէ աղշիկ.

— Զհո զշահին հանց սուր երթար,

Համլայ կասէր դարտակ դառնայր,

Զհո զասորի էրեց կարդայ,

Ուտէ շոր քաք և թարխանայ:

Ասէ մանուկ.

— Ագոստին է:

Ասէ աղշիկ.

— Է մարդ, աւտայ դու ինձ զայս բան,

Զսուրն և քարինքն անդիման,

Կուտի բլուր սպիտակ արծան,

Խիստ պիտանի աղգի մարդկան:

Ասէ մանուկ.

— Աղն:

Ասէ աղչիկ.

765

— Կառ ի վար ջուրն է մեկնած,
Ներքոյ ամուր աւղով փակած,
Աւազն ամէն հրով լցած,
Մին քան զմին սլայծառացած:

Ասէ մանուկն.

770

— Աստեղքն է:

Ասէ աղչիկն.

— Լուսավորիչն մեր անմեղ,
Զինք կախեցին ընդ երեք ճեղ,
Զջուր կրակին դրին անթեղ,
Նւ կու սլահէ զօրն մէկտեղ:

775

Ասէ մանուկ.

— Կանթեղն է:

Ասէ աղչիկն.

780

— Յուշիկ Լրթար զինչ զտիկին,
Իւր սաօղոնած հանդերձ անձին,
Ոսկի փողնոց կայ ի վզին,
Բացուրացէր իւր աղին:

Ասէ մանուկ.

— Բաթն է:

Ասէ աղչիկ.

785

— Իրք մի կայ ինքն է ջրբեր,
Հանց զինեկոտմ՝ մարդու ընկեր,
Խմէ ձկն դառնայ ի վեր,
Դաւարիկ նայ չէ մարդոց ընկեր:

Ասէ մանուկ.

790

— Դդումն է:

Ասէ աղչիկ.

795

— Ոսկի խնձոր նրման լինի,
Իւր հոտըն դայ անսլակ մըշկի,
Ինքն է հագեր զեղին թաղի,
Նւ դայ առջև թագաւորի:

Ասէ մանուկ.

— Սերկեիլն է:

Ասէ աղչիկ.

- 800 — Որպէս նարինճ է հանց բոլոր,
Եւ երեսփին կարմիր աղվոր,
Քան զվարդի հոտն է յորդոր,
Յեղբ կոչին զնայ թագաւոր:

Ասէ մանուկ.

- 805 — Խնժոռն:
Ասէ աղչիկ.
— Զարմանք մ' ասեմ քե՛ղ, սիրելի,
Կին մի ծընաւ գըռուղ որդի,
Տղայ սնէր, ալիքն էր ծերի,
Երբ ծերանայ դառնայ սեխ:

- 810 Ասէ մանուկ.

— Խաղողն է:

Ասէ աղչիկ.

- 815 — Է կանանչ կոնձակ բոլոր,
Անպակ գինով լըցած տըկճոր,
Կարմիր մեղուք ի ներս աղվոր,
Եղբայր կեր դու քանց մեղր ի ծոր:

Ասէ մանուկ.

— Նուռ:

Ասէ աղչիկ.

- 820 — Փռթով արձակէ զնայ կապէ,
Գարին ի փորըն կու աճէ,
Դանակ ա՛ռ մորթըն շրջէ,
Բէ՛ չէ ելաւ միսն ի բանէ:

Ասէ մանուկ.

- 825 — Խիարն է:

Ասէ աղչիկ.

- 830 — Զուրն հըրոյ նման տեսայ,
Որ հանց պայծառ քանց լուսինկայ,
Քան ծիրանի ծով կու ծփայ,
Շատոց արինն հեղեալ է նայ:

Ասէ մանուկ.

— Դինին է:

Ասէ աղչիկ.

— Լսէ Եղբայր քաջ կարեւոր,

- 835 Առ քեզ նըշան՝ ինքն է բոլոր,
Նայ իւղ ունի, կեղեն ոսկոր,
Կառւեայ և կեր գտուլն է աղբոր:
Ասէ մանուկ.
— Ընկուպն:
- 840 Ասէ աղշիկ.
— Էրէց գործ և իմաստուն,
Հրաշից ծաղկանց շինէ իւր տուն,
Քաղցր բրխէ նորայ լեզուն,
Բընաւ շինկնի իւր աչքըն բուն:
- 845 Ասէ մանուկ.
— Մեղսն է:
Ասէ աղշիկ.
— Մայր ըզիւր արզանդն իբաց,
Զորդիքն ի յառ ինքըն կոշեաց,
850 Անհաց որդունքն կերան մսաց,
Զողորմեցաւ իւր զատեկաց:
Ասէ մանուկ.
— Գերեզման:
Ասէ աղշիկ.
— Սրբած էր զեռ հալելի,
Ունի զձե սուրբ նշանի,
Մէկին զէտ եղբայր հասնի,
Մէկալին կինն առնէ զերի:
Ասէ մանուկ.
860 — Թուրն է:
Ասէ աղշիկ.
— Որպէս կին ուշիկ գնաց,
Պարանն յետին ի քարշ կուգայ,
Բազմի ոսկի բարձի վերայ,
865 Որսիկ առնէ իւր զբաղայ:
Ասէ մանուկ.
— Կատու:
Ասէր աղշիկ ցմանուկ.
— Շատ աշխատեցար, աւրս տարժամեալ է, երթ հանդիր,
870 վաղն արեկ, որ հեռ քեզ հարց[ա]րննութիւն անենք:

Յորժամ ել մանուկ զնայց, բազում կտլին թագաւորի դուռն.
վարմանային, թէ որպէ՞ս զերծաւ ի ձեռանց աղչիկան:

Մանուկ ննջեաց տուն պառաւին, ել՝ երբ լուսացաւ, օրհնեց
դաստուած եւ եկ ի դարպասի դուռ, բարեւ Երեւ: Եւ դրին ոսկ աթոռ,

875 նստաւ ի վերան:

Ասէ աղչիկ.

— Օձ մի կայր զունով կապուտ,
Հետ գայր ու հետ առնէր պըտուտ,
Իւր փորն կար անպար կուտ,
880 Ելնէ ցամաք, մեռնի նայ շուտ:

Ասէ մանուկ.

— Գետ:

Ասէ աղչիկն.

— Զէտ զաղեղան լար՝ է՝ բարակ,
885 Հէնց հնարաւոր զէտ աղվեսուակ,
Ի յամէն շօրս եղանակ,
Նայ նորանայ քանց զարծուակ:

Ասէ մանուկն.

— Աւձն:

890 Ասէ աղչիկ.

— Քան խաշափար ոտվի ունի,
Ընդ որ երթայ՝ հետն երեւի,
Նայ ի մազմէ կարմունճ անցնի,
Թէեւ թընտայ՝ հողըն շթափի:

895 Ասէ մանուկ.

— Մկրատն է:

Ասէ աղչիկ.

— Ոմն էիցս էր անկենդան,
Ձայնիւ գոջէր ահեղական,
900 Ընթրիս կոչէր զազգս մարդկան,
Եւ զիւր փսխածն առնէր սեղան:

Ասէ մանուկ.

— Զաղացքն:

Ասէ աղչիկ.

905 — Շնորհալից մին աղիւտակ,
Ունէր հազար լեռոն սղիտակ,
Իւրեանց մաքիթն են զէտ թանաք,

Այնոց հովիւքն են զէտ հրեշտակ:
Ասէ մանուկ.

910

— Գիրք:

Ասէ աղչիկ.

— Տուն մի տեսայ սպիտակ փռած,
Ու սև հաւեր ի ներս թառած,
Ձուս ածէին ցեղք ու ցեղաց,
Լեզուով խաւսին բանականաց:

915

Ասէ մանուկ.

— Գիրք:

Ասէ աղչիկ.

— Հաւ մի տեսայ ես անկենդան,
Որ կուտէ ձեռք մարդկան,
Էթէ զաշխարհս ամէն տան,
Ուտէ, չասէ՝ Չե՞մ բաւական:

920

Ասէ մանուկ.

— Գրիչն:

925

Ասէ աղչիկն.

— Ութ մախախ ես ունէի,
էր ամէն մէկ ութ քսակի,
Եւ զոր պիտէր զայն բանայի,
Նայ ինձ բուրէր հոտըն խնկի:

930

Ասէ մանուկ.

— Սաղմոսարան է:

Ասէ աղչիկ.

— Տեսայ դադան մի անկենդան,
Ժանիքն սուր՝ որպէս զշան,
Անխեղճ ուտէ զմիսն մարդկան,
Եւ պատառէ զամէն կենդան:

935

Ասէ մանուկ.

— Դանակ:

Ասէ աղչիկ.

940

— Աւձըն փայտ էր թևաւոր,
Տուտն երկաթ էր թիւնաւոր,
Նայ թռչելով խոցէր խորով,
Ձով հարկանէր մեռնէր բոլոր:

Ասէ մանուկն.

- 945 — Նետն է:
Ասէ աղչիկ.
- Կաղմարն անթուրծ էր ի կալոյ,
Թանաք ի ներս առանց զունոյ,
Գրիչն շունչ է կենդանոյ,
950 Առնու գրէ վերայ հողոյ:
Ասէ մանուկ.
- Ծովն:
Ասէ աղչիկն.
- Թագվոր մի կար, աշվին էր խաժ,
955 Ժամ մի ժանիք ունէր լ բաշ,
Սինաւ ունէր մինչ ի Մարաշ,
Ամէնքդ ասէք իւրեան վաշ:
Ասէ մանուկ.
- Տրտաղ է:
960 Ասէ աղչիկ.
- Ոմն ընտրեցաւ աղամորդոց,
Որ բնակեցաւ ի մէջ սողնոց,
Կիրակրեցաւ ի յամարմնոց,
Եւ լուսաւորու եղև հոգոց:
965 Ասէ մանուկ.
- Լուսաւորիչ է:
Ասէ աղչիկն.
- Ոմն շնորհաց հայկազածին,
Յալտնում առնէր կենաց բանին,
970 Թէպէտ չէհաս աւարտ նմին,
Յոյժ գեղեցիկ են բանք նորին:
Ասէ մանուկ.
- Ներսէս է:
Ասէ աղչիկն.
- Չորեքժուի ինքն է կանկուն,
975 Ով նայ շունի գիտեմ չէ տուն,
Չմարդ անհոգս առնէ ի քուն,
Ով գիտենայ՝ ինք իմաստուն:
Ասէ մանուկն.
- Դուռն է:
980 Ասէ աղչիկ.

- Մայրն Վէմն էր քարեղէն,
Ըստինքն շոր էր փայտեղէն,
Արգանտըն ջուր էր հրեղէն,
985 Մանուկ ծընանէր զէտ մոմեղէն:
Ասէ մանուկն.
— Ծնկեղեցին:
Ասէ աղչիկ.
— Դիշերատիպ և ըստուերային,
990 Քաշօղն ի մէնջ զմասն օղային,
Գող է թագուն հանգոյն չարին,
Ի հուրն աչրի նըման նըմին:
Ասէ մանուկ.
— Լու:
995 Ասէ աղչիկ
— Մեռանիմ 'ւ անմահանամ,
Դարձեալ առնում կենդանանամ,
Ձաշս ի յերկինս համբառնամ,
Բազմաստեղօք ևս զաւրանամ:
1000 Ասէ մանուկն.
— Յորեան է:
Ասէ աղչիկ.
— Ե՛կ, մի՛տ դիր, ո՛վ սիրելի,
Բան մի ասեմ դարմանալի,
1005 Մէկ մի ունի մաքիլք ի հաւի,
Վազէ յերես բըռնաւորի:
Ասէ մանուկն.
— Սանտրն է:
Ասէ աղչիկն.
1010 — Մորուր ունի ինք զէտ զրոց,
Եւ ի զլիւխ ունի կարմիր սղոց,
Կանաչք ունի տասնուհինկոց,
Ձայնէ՝ ընկեր ուղէ ալնոց:
Ասէ մանուկ.
1015 — Խորոզն է:
Ասէ աղչիկ.
— Զէտ զվաղար խիստ է յայար,
Սիրէ զմորթն, ատէ բանջար,

1020

Ի՞նչ կարդամ իւրմէ քեզ ճառ,
 Խեղօք է՛ ծով քան զԽիկար:

Ասէ մանուկ.

— Աղվես:

Ասէ աղչիկն.

1025

— Երկուս ընդ յիրար կռուին,
 Մէկ մէկի իսկի շինմանին,
 Մէկ մ'այլ իւրեանց միջին՝
 Էր մեռած ՚ւ անկած ի տեղին:
 Այնոք զկռին արին,
 Շատ արին ի վայր թափեցին,
 Ի յայն անկելոյ ցաւդին,
 Շունչ հտուր յանկարծ մեռելին:

1030

Ասէ մանուկ.

— Հրահանքն է:

Ասէ աղչիկ.

1035

— Ծեր մի բարէխօս բերին,
 Որ էպագ զերեսըն նորին,
 Ի հանքուրել ծերին,
 Լոյս ծագեաց մըթան գիշերին:

Ասէ մանուկ.

1040

— Քուկուրդն է:

Ասէ աղչիկն.

— Ելանելն է փրփրակ,
 Երբեմ լինի փոշէտեսակ,
 Նայ զիղանայ որպէս բանբակ,
 Երկրի սերմանց է՛ յօժանդակ:

1045

Ասէ մանուկ.

— Զիւն է:

Ասէ աղչիկն.

1050

— Ի ծովէն նայ վերասցի,
 Եւ ամփոփեալ իրր զտկի,
 Քաղցրիկ մաղէ որտեղ պիտի,
 Երբ աստուծոյ կամքն լինի:

Ասէ մանուկ.

— Անձրեն է:

1055

Ասէ աղչիկն.

— Նոյ բարձրանալ այրէն ի քէն,
Եւ խոնարհի դարձեալ անդրէն.
Ամեն զրի հինգ ար յիւրմէն,
Գնալ զվեց ամիսն ամէն:

1060 Ասէ մանուկն.

— Արեղակն է:

Ասէ աղշիկն.

— Արս տարալժամ է, շատ աշխատեցար, արի զնայ ննջէ ի
յալթեանս քո, վաղն արեկ, որ քեզ քո մուրատին հասուցանեմ:

1065 Ասէ մանուկ.

— Այն աստուած, որ այսար քո ձեռացն ազատեց, վաղիւն
ալ կարող է ազատէ զիս ի քո ձեռաց:

Յայնժամ բարե երևտ ու ել գնաց տուն պառաւին, ննջեաց
գիշերն: Երբ լուսացաւ, արհնեաց զաստուած և ել գնաց ի դուն
1070 դարպասին, ետ բարե դստեր թաղաւորին: Եւ զրին ոսկի ամրո:
Նստաւ ի վերան: Եւ ասէ մանուկ ցդստեր թաղաւորին, թէ՝

— Այս երեք օր է, դու յիս բան հարցար, եւ ճուաղ տվի:
Այսար մէկ բան եւ այլ քեզ հարցանեմ, ճուաղ տուր ինձ: Թէ
կարող ես պատասխանես, կտրէ զգլխիս իմ, ու թէ չէ՝ զքեզ տռնեմ

1075 ի կնութիւն:

Ասէ աղշիկ.

— Այոյ:

Յետոյ կոշեց զհայր և զմայրն, վաղիրին, զիշխանն, մեծա-
մեծքն: Եկան յատեռն: Եւ ասէ մանուկն ցթաղաւորն և իշխանքն.

1080 — Քանի օր է յիս բան հարցաւ, ճուաղ տվի, մէկ բան այլ եւ
հարցանեմ, թէ ճուաղ տայ, թող կտրէ զգլխիս իմ, թէ որ չաղթեմ,
ինձ լայկիս տեսնեք, առնեմ ի կնութիւն:

Ամենեքեան վկայ եղեն և ասեն.

— Բարի է ասացեր և յերաւի:

1085 Հարցին ի դուստր թաղաւորին.

— Այդ խօսացող զի՞նչ ասես, հաւանի՞ս:

Եւ նոյ ասէ.

— Բարի, թող հարցանէ:

Ասէ մանուկն.

1090 — Այն ո՞վ էք, հարուստ էր՝ աղքատացաւ, իւր աղքատու-
թեամբ զհայրն հեծաւ և զմայրն հաղաւ, զնաց՝ թէ զիւր ապրանքն
գտանի, մահ ի վերայ հասաւ: Մահովն ջուր խմեաց և խմցուց

ձիուն: Իւր գիտութեամբ և իմաստութեամբ զինքն ի մահվանէ ա-
զատեաց:

1095 Զայն աղչիկն ոչ կարաց ճուսպ տվեր: Ասէ.

— Գնայ հանգիր քո յօթեանքն, վաղն արե՛կ, որ քեզ ճուսպ տամ:

Եւ ել զնաց մանուկ ի տուն պառաւին:

Ասէ աղչիկ ընդ թարգմանն իւր.

1100 — Զի՞նչ արասցուք և հնար առնիցու[ք], որ յաղթեսցուք զմանուկ:

Ասէ աղչիկ ցժառայս իւր.

— Գնա՛, զարգարէ մէկ սեղան և զիր իսպիտակ հաց, և առ գէր սագ մի և գէր հաւ, խորվեցէք և փորլից արէք. և առ դռումի

1105 գինի:

Գնացին ծառայք և կատարեցին զհրաման դստեր թագաւորին: Եւ բերին առաջի նորայ զեղեցիկ սեղան զարդարած:

Աղչիկն ելաւ հագաւ բեհեզն և ծիրանին, զարդարեցաւ ոսկով և մարգարտով և անուշահոտեցաւ: Եւ ասէր ծառայից.

1110 — Ելէք իվերուցէք զսեղանս, որ երթանք ի դուռն մանկանն, միթէ՞ հնար լինի, որ բան աւերինք ի նմանէ և զինք յաղթեմք:

Եւ ելեալ զնացին իջեանն մանկանն և զարկին զդուռն: Եկաւ պառաւն ի դուրս: Ասէ.

— Զի՞նչ խնդրէք:

1115 Ասեն.

— Բաց զդուռ, որ զանք ի ներս, հետ քո զարիսլ մանկանն աս և լիս անինք:

Եւ նայ ասէ.

— Երթամ հարցանեմ:

1120 Եւ զնաց ի ներս: Ասէ.

— Երեք հոգի դուռն եկեր են, ուղեն հետ քեզ զան ուրախութիւն անին:

Ասէ մանուկ.

— Գիշերս պէժամ է, իրքե՞՛ շունիմք պատրաստութիւն, դո՛ւ

1125 գիտես:

Գնաց պառաւ դուրս և ասէ.

— Պէ՛վախտ է, իրքե՛՛ կիրակուր շունինք, ոչ պատրաստութիւն: Ասէ աղչիկ.

— Ես կիրակուր, գինի ալ ունիմ, բաց զգուտա, որ զանք ի
1130 ներս:

Երաց զգուտն և մտան ի ներս: Եւ տեսաւ զմանուկն, խիստ
ուրախացաւ և նստաւ: Ասէր մանկան.

— Գինի, կերակուր բեր, ուտինք և խմենք:

Ասէ մանուկ.

1135 — Ես իրբմ՝ պատրաստութիւն շունիմ, անմեղադիր լեր:
Եւ ասէր աղչիկ.

— Ես քնդ քեզ ուրախ եմ: Գինի և կերակուր ալ ունիմ: Հետ
քեզ ուտեմք և խմենք և ուրխանամք:

Յայնժամ հրամայեաց աղչիկն: Բերին ծառայքն սեղանովն
1140 զկերակուր և զգինին և լցին ալախն, հառն ի մանուկն: Եւ նայ արբ
զնայ, խիստ ուրխացաւ: Եւ աղչիկ քաղցրիկ-քաղցրիկ զրոյց տայր
մանկան և ասէր թէ՝

— Մէկ տիլակ կայնեմ ի քէնէ, որ եկեր եմ հետ քեզ ուտեմք
և խմեմք, ապայ զիմ խնդիրքս պիտի կատարես:

1145 Ասէ մանուկն.

— Զի՞նչն խնդիրք քո:

Ասէ աղչիկն.

— Զայն բանն, որ յերեկ զստեր թագաւորին հարցար, որ
ճուտայ զէրէտ, բաղումք զարմացան, զայն կու խնդրեմ ի քեզանէ,

1150 որ ինձ ասես զպատասխանիքն:

Յայնժամ արտմեցաւ մանուկն և ասէ.

— Քո ձայնտ զստեր թագաւորին կու լմանի, ապայ զերեստ
չեմ տեսեր:

Երդուաւ աղչիկ.

1155 — Բնաւ ես դուտար թագաւորին չեմ տեսեր, ոչ խաղար կու
տամ:

Յայնժամ հարբեցուցին զմանուկն, և զնաց խելաց: Եւ ձեռք
ձգեց աղչիկն ի պարանոցն մանկանն և պակշտէր, թէ՝ «Ասայ»:

1160 Յայնժամ ի սիրուն մայլեցաւ, ի զեղեցկութենէն զնաց խելի ի զըլ-

— Եկ, որ պառկինք:

Եւ ասէ աղչիկ.

— Մինչ որ շասես, ոչ կատարեմ զկամս քո:

Եւ ասէ մանուկ.

- 1165 — Վախեմ թէ, որ ասեմ, զրուց դուրս ելնէ, ես մեռանիմ:
Նայ կրկին երգուաւ:
- Թէ զխրատ ոչ լսեմ ի քէն, ոչ կատարեմ զկամս քո:
Եւ սկսեալ խաղալ ընդ նոսա և մանուկն թորթոքեցաւ ի սիրոյն
և յաղթեցաւ ի գինոյն և ասէ ընդ աղշիկ.
- 1170 — Արի, որ պառկինք, ասիմ որ զխորհուրդս իմ:
Եւ աղշիկն ի գիրկ, հանեց զհալաւ և ձգեց զթեւն ի վիզն և
պակշտէր: Եւ սկսեալ մեկնէր զզլիւս եկած բաներն: Եւ թմրեցաւ
ի գինոյն և աղշիկան ոչինչ կարաց առնել. քունն էաւ: Եւ աղշիկն
խնդաց ի միտս իւր և սահեցաւ յանկողնուն և եւ ի ծոցոյն, և մնաց
- 1175 մէկ շապիթ ի ներքե բարձին: Խնդալով ելան և զնացին: Ուրախա-
նայր, թէ «Սովրեցայ զհարցմունք և ոչինչ արար մեզ, և ընդ լու-
սանալ մեկնեմ զբանն ասացեալն իւր և սպանանել տամ զնայ»:
Վաղնէն զարթեաւ մանուկն և եկ խելք ի վերան և իմացաւ, որ
խաբած էր զինքն և տրտմեցաւ: Եւ ապա՛յ տեսաւ զհալաւն, զոհա-
- 1180 ցաւ զաստուծոյ և առ պահեաց:
- Եւ ելեալ զնաց վաղնէն ի դարպասի դուռն և մտաւ ի ներս
և ետ բարե, և նստաւ ոսկի աթոռն: Եւ զրկեց աղշիկ զթաղաւորն
և զիշխանքն մեծամեծքն: Եւ բազմութեան զարտաց հաւաքեցան: Եւ
մանուկ, ծունոր էած թաղաւորին և նստան:
- 1185 Ասէ աղշիկ.
- Այն երեկի բանն, որ հարցար ինձ, պատասխանիքն տամ
քեզ: — Եւ սկսաւ կարգաւ ասել իրինկիւն սովորած բաներն մի
առ միօջէ զմանկան զլիւս եկած անցանք: Եւ ամենեքեան զար-
մանալին, թէ՛ «Որպէ՛ս գիտաց զմանկան զլիւս եկած բաներ»:
- 1190 Ասէ մանուկ ընդ թաղաւորն և ընդ իշխանք, թէ՛
- Երեք արբ քո դուտոր ինձ բան կու հարցանէ, ես ճուաղ
կու տամ: Ես մէկ բան հարցայ, նայ ճուաղ երեստ, տալայ մէկ բան
այլ հարցանեմ, թէ՛ ճուաղ տայ, դուք վկայ եղիք, կարեցէք զզը-
լիւսն իմ, ու թէ շիկարէ՛ յաղղեմ, առնեմ ի կնութիւն:
- 1195 Եւ հարցանէին դստեր թաղաւորին, թէ՛
- Զի՞նչ կասես այտ բանիտ:
Եւ նայ ասէ.
- Թող հարցանէ, որ ոչ կարեմ պատասխաներ, թող հանց
լինայ: Դուք վկայ կացէք մեծ և փոքր, իշխանք և հաւասար զօրա-
- 1200 կանք, ամենեքին ի միասին ունի գրէք:
Եւ ասէ մանուկն.

— Տեսայ ես գիշերս յերազիս, եկան առ իս երեք թռչուն.
մէկն գեղեցիկ էր, քան զերկուան. և ունէին սեղան և մէջն իսպի-
տակ հաց, գեր սադ մի փորլից և դգումի զինի: Կերաք և խմեցաք,
1205 և առի զմիւս գեղեցիկ թռչուն ի ծոցս, կամէի ուտել զնայ և ոչ
կարացի, զերծաւ ի ձեռանէս և մնաց մէկ ոսկի թեփուր ի մէջ երկու
ձեռինս:

Երբ աղչիկ զայն լսեց, յոյժ վախեցաւ, իմացաւ որ իրինկվան
եղած բաներն երազ էր թարգմաներ. թէ որ լինայ՝ ըստոյզ ասէ,
1210 խալտառակ կու լինայ, թէ չասէ՝ կու խաբի: Միտք արաւ՝ «Խա-
բիլն լաւ է, քան թէ աշխարքի զրուց լինենամ»:

Ասէ աղչիկ.

— Այտ դիժար բան է, շեմ կարեր հաներ, յաղթեցայ, յաղթե-
ցայ:

1215 Յայնժամ մեծ ու փոքր վկայեցին, թէ՝ «Աղչիկ մահալ է ման-
կանն»:

Հաւանեցաւ աղչիկն մանկանն և արարին հարսանիք հաւթ օր,
հաւթ գիշեր, պսակեցին ընդ իւրար, բազում ուրախութիւն եղև,
և հո թագաւորն կէս թագաւորութեան մանկան, բազում ոսկի, ար-
1220 ծաթ, եղև խիստ սիրական:

Եւ յետոյ մանուկ ուղարկեց բազում զօրականք, ոսկի, ար-
ծաթ, որ գնացին ի կղզի ի Հռոմաց թագաւոր, աղատեցին զհայրն
և մայրն և բերին որդուն քով, տեսան զիրար և օրհնեցին զաս-
տուած և զիրեանց մանուկ, բազում ամօք ուրախութեամբ կեցան
1225 և առ աստուած փոխեցան:

**ՊԵՏՐՈՒԹԻՒՆ ՅԱԳԱԳՍ
ՓԱՀԼՈՒԼ ԹԱԳԱԻՈՐԻՆ**

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՓԱՀԼՈՒԼ ԹԱԳԱՒՈՐԻՆ(1)*

էր սա մեծ թագաւոր և տէր արեւելեան աշխարհի, էր իմաստուն և առաքինի, սիրէր զաղքատութիւն և ատէր զմեծութիւն, ատէր զայս կեանքս և հոգայր զմահն, և տսէր այսպէս.

— Փառք աստուծոյ կենդանոյն, որ կայ և մնայ յաւիտեանս:—

5 . Եւ ասաց ընդ իւր շնծինն կաֆայս զայս.

Զաժէ գէմ զայս կեանքս քամոյ, որ վերնայ շատ մարդոյ
վռաղ,

է՞ր կամիս սիրել զայն իրքերն, որ կենայ հետ քեզ զէտ ի
վաղ,

Ժողովէ դու զանանց բարին և արա զինքն քեզ ի սաղ,
Որ յօրն ի մահուն հողիդ ու մարմինդ շառնուն մաղ ի մաղ:

10 Եւ ի ժամ աղօթիցն հանէր զամէնն ի դուրս և ինքն միայն մնայր, և աղօթէր ի վերայ ոսկի աթոռոյն, և դարձեալ ասէր յիւր անձինն կաֆայս զայս.

Յաղօթից ծոյլ մի՛ կենար, դի՛ր ուղարդ հետ աստուծոյ սէր.

Յիշէ զիւր ահեղ անունն, որ հըրոյն նա ըղքեզ փրկէր,

15 Յիւր ձեռքն է երկինք և երկիր, է՛ մմէն ստեղծուածոց տէր,
Ջանա՛ւ և խնդրէ յիւրմէն զԱզամայ փառքն զոր ունէր:

Աւուր միում զիւր սովորական աղօթքն կատարէր, հայեցաւ յիւր դարպասին տանիսն և տեսաւ մէկ մի ի ձե ըզտապանի, և ասէ.

20 — Ո՞վ ես՝ ի հոտ ելար:

Ասէ.

— Ես ըզտապան եմ և զուղտերս կորուսեր եմ, ասա կամիմ
դտանիկ:

Ասէ թագաւորն.

* Առաջին խմբագրութիւն, Լոնտիպ.

25 — Զի՞նչ կառնէ ուղտն ի վերայ դարպասի տներոյն, որ հոտ
կամիս գտանել:

Ասէ այրն.

— Ապա դու որպէ՞ս կարես դաստուած գտանել ի վերայ ոսկի
աթոռոյդ և ի վերայ փետրալից բարձիդ, և ի մարդարաշար թախ-
30 տիդ: Այդ աղօթքդ չէ ընդունելի աստուծոյ. այլ տրի էջ չափոտիւ
ի վերայ մոխրին և երկիր պաղ աստուծոյ, և ապա գտանես ողոր-
մութիւն:

Եւ ասաց ըզտապանն կաֆայս զայս.

Երկիր պաղ անմահ բանին, թառալէ վերեսդ ի հողին,
35 Որ այն մոխրէն զքեզ ստեղծեաց և նման արար իւր
պատկերին.

Զայս կեանքս ամ քանի՞ սիրես, պիտ երթաս դու ներքե
հողին,

Մի՛ անշահ կենօք կենար, մի՛ փոխեր. զոսկիդ պղնձին:

Զայս ասաց և անշատ եղև այն մարդն: Եւ ապա իմացաւ
թաղաւորն, որ հրեշտակ էր մարդն այն, և անկաւ զեղջ չիւր միտքն,
40 և ելաց դառնապէս. իջաւ յաթոռոյն իւրմէ ի գետինն և երկիր եպաղ
աստուծոյ: Եւ թէպէտ կատէր զիւր կեանքն, այլ աւելի չտնեաց
զաշխարհս և զմեծութիւն և ասաց զայս կաֆայս.

Զանամ թէ զհողիս սիրեմ, նա մարմինս ինձ կու տայ ի
խաւփ,

Զինչ որ խոշանայ բաղան ի կաքան և առնու ի յափ:
45 Կուտեցաւ առ իս շատ մեղք՝ յան նման, որ երբ զայ շառափ,
նոցեր եմ մահու վախովն ու եղեր սիրտս զէտ շաղափ:

Եւ ապա կռեաց զիւր մեծամեծքն և զիշխանքն, և երբեր զոր-
դին և հատուց յաթոռն: Եւ նոքա ոչ կամեցան: Եւ նա ուժով և խե-
լօքն հաւանեցուց զիշխանքն և զիւր զօրքն: Եւ ինքն զաղտաբար
50 հաւանեցուց զանձն աղքատութեան, և ելաւ յաշխարհէն չիւրմէ,
և եթող զիւր մեծութիւնն վասն սիրոյն աստուծոյ: Եւ ասաց ընդ
անձինն կաֆայս.

Յիշեա՛լ զարարիչն աստուած, տո՛ւր հոգոյդ առնել

պատարազ,

Ընդ մութն է՞ր կամիս զնալ, երբ աստէն ունիս քեզ ճարակ,
55 Զմարմինըդ քանի՞ սիրես և հետ իւր երթաս դու երազ,

Ընկերքդ ղնացին՝ քեզ մնան, դու նոցա հասնիս մէն
մենակ:

60 Եւ ապա ղնաց յաշխարհէ յաշխարհ եւ եհաս ի Պաղտատ, եւ մուս ի քաղաքն եւ կամեցաւ կենալ անդ ի կերպ աղքատի, եւ մուս ի քաղաքն: Եւ մարմինն նեղէր ղինքն վասն ուտելոյ եւ հագնելոյ, ղի սովոր էր ի սէր աշխարհիս եւ կացեալ ի տուն արքունի: Ապա էած հնաք. երթայր ի շուկայն եւ լինէր սուտ խն: Եւ մարդիկն ծիծաղէին ղինքն, եւ տղայքն ի հետն երթային եւ նեղէին: Վայէր ի մէջ մարդկան եւ ասէր կաֆայս.

65 Մարդիկ՛, մի՛ անհոգ կենայք, ղձեր մեղաց աղտն լուացէ՛ք, Ողորմեցէք աղքատաց ու այնով ձեր մեղքն քաւեցէք, Դարձիք ի մեղաց ճանփէն ու անղէն ձեզ տուն շինեցէք, Զմարմինքդ ի կամաց հանէք, մի թողուք ի կենաց՝ նեղեցէք:

Եւ եղեգն հեծնոյր եւ վաղէր ի փողոցն ի վայր եւ ի վեր, եւ ասէր բան զարմանալի:

70 Ասէին մարդիկն, որ ի հետն երթային, թէ՛ «Մարգարիտ կու թափի ի բերնէն, եւ չգիտէ թէ ղինչ կու խօսի. հաղար աւաղ ղխն-լօք խումարս»: Եւ ապա ղրին անունն Փահլու:

Եւ եղև ջրկիր եւ ջուր կրէր ի շուկանին. եւ տային իւրն հաց եւ փող: Նա զամէնն տայր աղքատաց եւ ասէր կաֆայս.

75 Աղքատսիրութիւնն եւ պահքն ու աղօթքն ընկերք են հիտրաց, Սիրէ՛ զայդ երեք բարիքդ, որ փրկիս ի մեծ տանջանաց, Մի՛ զմարմինդ ի ձեռքդ առնուլ, կու գնան օրերդ ի ձեռաց, Զայս օրերս որ մեք ունիմք, կու հատնին ու կերթան ի բաց:

80 Օր մի կերթայր շուկայն ի վայր, մէկ մարդ մի խեաց զփակեղն ի գլխոյն եւ փախեաւ: Եւ գնաց Փահլուլն ի հողվարքն կու փնտռէր զայն մարդն: Մէկ մի տեսաւ եւ ասաց.

— Զի՞նչ կու փնտռես այդր. գնա ի շուկան փնտռէ:

Ասաց Փահլուլն.

85 — Ա՛յ եղբայր, թէ վաղ, թէ անազան պիտի աստ. գայ այն մարդն: — Եւ տեսց կաֆայս զայս.

Թէ շատ եւ թէ քիչ ղրկես ու վալլես ղերկիր խնդալով, Շուտով ես յասկից ի գնալ եւ մարմինդ ծածկի հողով,

Կարծիր ու բարիս զործէ, զիտ բժիշկ ու զեղ քեզ շուտով,
Որ յաճեալ ու մեծ առեանն շինիրս ա՛ռով և ամօթսո՛ւ:

90 Ընդհեղացաւ ընդ բաղարացեացն և ճանաչեցին զինքն ամէնքն:
Այն օրն միս երես մարդ մի ի յինք և ասաց.

— Ի մեր տունն տար:

Նա էառ՝ ի հոգվարքն տարաւ: Եկաւ այն մարդն ի տունն. Եւ
զմիսն շէր տարեր: Եւ զնաց զտաւ զՓաճուլն ի շուկայն և ասաց.

95 — Ո՞ւր է միսն, զի՞նչ արիր:

Ասէ Փաճուլն.

— Ի քո տունն տարայ:

Ասաց այն մարդն.

— Արի ցո՛յց զիմ տունն:

100 Եկաւ Փաճուլն և էառ զայն մարդն և զնաց ի հոգվարքն, և
ասաց.

— Հո՞ս բերի:

Ասէ մարդն.

— Ա՞յս է իմ տունն:

105 Ասէ Փաճուլն.

— Այս է քո տունն, այն չէ՞ մնացեալն, որ հիմի կենաս,
չեսոյ հոս պիտի գաս: — Եւ ասաց կափալս գայս.

110 Աշխարհիս սահմանն է հանց՝ հետ լցուի ու հետ թերանայ,
Կու թեթեցնէ զիւր բեռն, որ ով գայ շալկել կարենայ,
Մաիկ հիւսանն արէք, որ թապոստ ու որոց շինն նայ,
Մէկըն գայ ու մէկըն զնայ՝ իւրեան բան պաթալ շմնայ:

Զարմացաւ այն մարդն ընդ Փաճուլին խօսքն, թէ՛ «Զդա յի-
մար զիտէաք, նա մեզ վարդապետ եղաւ»:

115 Եւ սովորութիւն ունէր Փաճուլն, որ երթալը ի հոգվարքն կե-
նար և անդ պառկէր: Օր մի հեծեալ էր խալիֆայն՝ շատ հեծելօք,
և եկեալ ի հոգվարքն անցանէր, և տեսեալ զՓաճուլն և ասաց.

— Է՞ Փաճուլ, հոտ ի՞նչ կառնես:

Ասէ Փաճուլն.

120 — Է՞տիեղերակալ խալիֆայ, զայս ամէն մեռեալքս կու
նդովեմ:

Ասէ խալիֆայն.

— Է՞ր:

Ասէ ֓Փա՛հլուլն կա՛ֆայս զայս.

125 Թէ շատ և թէ քիչ զրկէ մարդ՝ ի հետ իւր տանել չկարէ,
Մարդըն պիտի հանց ջանայ, որ ի յայն կեանքն չամաշէ.
Որ ի հոս տայ՝ հոն առնու, ստեղծողէն պարգև դատանէ,
Որ տեղս զրկանք առնէ, նա ի յայն կեանքն վճարէ:

Զարմացաւ խալիֆայն և ասէ.

130 — Փա՛ռք աստուծոյ կենդանոյն, որ կայ և մնայ յաւիտեան,
Թէ խումար մարդ այնչափ խելօք խոսք կու խօսի: — Եւ ասաց թէ՝
«Այս մարդս խելօք է և վասն մեղաց զայն տոնէ. զի թէ դա խու-
մար էր՝ հանց բան չասէր»:

Դարձաւ խալիֆայն ի քաղաքն: Եւ օր մի հեծել էր և անցանէր
ի հողվարքն, զի այն էր ճանապարհն: Տեսաւ զՓա՛հլուլն և ասէ.
135 — Զի՛նչ կատնես ի հողվարքդ:

Ասէ ֓Փա՛հլուլն.

— Բազում տուրք աստ ևմ և կու չափեմ զիմ գերեզմանն և
դրոյն. իսկի աւելի չէ քո գերեզմանն՝ քան զիմն. և դու խալիֆայ
ես, և ես աղքատ մուրացիկ, և քո հողն և զիմն մէկ չափով է: — Եւ
140 ասաց կա՛ֆայս զայս:

է՛ մարդ, մի զհոգիդ դատեր ու զմարմինդ առնելը սիրելի.
Դարձիր ի մեղաց ճամփուղ, որ չլինիս ողորմ ու լալի,
Ջանա ու զբարին դործէ, զի քարւանն քեզ կու նայի,
Ու յայս հողոյս հանց զնա, որ հոգիդ հրոյն չլինի:

145 Եւ ասաց խալիֆայն ընդ մեծամեծացն իւրոց.

— Տեսէք զի՛նչ իմաստուն է դորա խօսքն, և համարձակ կու
տայ պատասխան. ո՛չ պարտ է զդա մեղանէ ի դատ թողումք:

Եւ ապա հրամայեաց կոչել զնա ի դարպասն: Եւ յորժամ
զնաց, նայ խալիֆայն յաթոռոյն ելեալ էր: Եւ զնաց Փա՛հլուլն նըս-
150 տաւ յաթոռն: Եւ եկան ճորտերն և սկսան ծեծել զնա և անարգել:
Եւ նա ճըշէր պինտ: Կսեց խալիֆայն և եկն բարկացաւ ծառա-
ւիցն և ասէ ցՓա՛հլուլն.

— Է՞ր կու ծեծեն զրեզ:

Ասէ ֓Փա՛հլուլն.

155 — Քիչ մի նստայ աթոռդ:

Ասէ խալիֆայն.

— Է՞ր նստար:

Ասէ՛ ֓ Փահլուլն.

160 — Ո՛վ մեծ խալիֆայ, երբ որ զիս մէկ պահուն համար նրա-
տելոյն հանց կու ծեծեն, ապա քեզ զի՞նչ պիտի առնեն, որ հանա-
պազ կու նստիս: — Եւ ասաց կաֆայս զայս.

Մարդիկք, մի՛ ծեծէք դուք զիս՝ չեմ ցանկար փառաց ամի-
սոյ,

165 Զիմն քակեցի ՚ւ ելայ, այլ շունիմ սրտիկ շինելոյ,
Իմ կեանքս է յաշիցս ելեր՝ չէ մնացեր ինձ տեղ խնդալոյ,
Զմարմինս ես ի մահ դրի, զի շունիմ հողի տանջելոյ:

Եւ դարձեալ ասաց կաֆայս զայս.

է՛ մարդ, որ փառաց հասար, տէր երկրի եղար ՚ւ ամիսոյ,
Դու հանց մեծացար ի քեզ, որ չես տալ մարդութիւն
մարդոյ,

170 Ահ ի մահուանէ շունիս, չես ճարեր պաշար զնալոյ,
Պահ մ'այլ դու թողուս զամէնն ե լինիս տէր ափ մի հողոյ:

Լուաւ խալիֆայն զայն իմաստուն բանքն ե հարցանէր շատ
բան Փահլուլին, ե նա հնարիւք տայր պատասխանի:

Եւ այն օրն եհարց խալիֆայն ե ասէ.

175 — Է՛ Փահլուլ, ասա՛ ինձ, թէ այսօր զի՞նչ կու զործէ աստուած:
Ասէ՛ ֓ Փահլուլն.

— Այդ դժուար հարցումն է, այսօր համբերեա, ես վաղն ա-
սեմ քեզ:

Եւ վաղին հեծաւ սե էշ մի ե զնաց առ խալիֆայն:

Ասէ խալիֆայն.

180 — Ասա՛ ինձ, զի՞նչ եկար:

Ասէ Փահլուլն.

— Եկայ, որ երեկի բանն ասեմ քեզ:

Ասէ խալիֆայն.

— Զի՞նչ կառնէ:

185 Ասէ Փահլուլն.

— Հրամայեա՛, որ ամէնքն ի դուրս ելնեն, ե ես ասեմ քեզ:
Եւ հրամայեաց խալիֆայն ե մնացին երկոքին: Եւ ասէ խա-
լիֆայն.

— Զի՞նչ կառնէ աստուած ի յայս ժամս:

190 Ասէ Փահլուլն.

— Է՛ր խալիֆայ, թէ պահ՛ մի նստիս չիմ էշն, և ես՝ ի քո թախտն, նայ ասեմ:

Եւ հայեցաւ խալիֆայն, որ մտրդ չէր երեւիլ, և ելաւ նստաւ ի լէշն, և Փահլուլն ի յաթոռն խալիֆային նստաւ: Ասէ խալիֆայն.

195 — Է՞ր շէս խօսիր, զի՞նչ կառնէ աստուած:

Ասէ Փահլուլն.

— Զի՞նչ խօսիմ. շէ՞ս գիտեր ինչ կառնէ աստուած: Զայս արար աստուած ի ժամս յայս. դու, որ խալիֆայդ ես, չիմ էշն նստոյց զբեղ, և գիս, որ Փահլուլս եմ, ի քո աթոռն:

200 Եւ զարմացաւ խալիֆայն և ոչ կարէր խօսիլ:

Եւ ասաց Փահլուլն կաֆայս զայս.

Դու գանձնին է՞ր բնեւ, երբ որ միտրդ իւրըն շհասնի,
Զաստուած ո՞վ կարէ տեսնուլ, կամ իմանալ զնա մարդ
կենդանի,

Երբ շէս քո կենացդ տէր՝ մնաս վաղն ալլ դու յաշընչի,

205 Ալլ տէր հայրենեացս է նա, որ երկինք ու երկիր շտանի:
Ծիծաղեցաւ խալիֆայն և ասէ.

— Փա՛ռք աստուծոյ կենդանւոյն և բարձրելոյն յաւիտեան, զի ալյսեղ խնս զարմանալի պատասխան կու տայ: Բայց թախ ինձ, թէ չէ դա խե, ալլ խեթք է:

210 Եւ զնաց Փահլուլն, և յետ քանի մի աւուր կոշեաց խալիֆայն զՓահլուլն: Եւ հեծաւ յէշն և Լկն առ խալիֆայն: Ծիծաղեցաւ խալիֆայն և ասէ.

— Բան մի կամիմ հարցանել քեզ, և դու ինձ ուղղորդն ասա:
Ասէ Փահլուլն.

215 — Հրամայեա՛:

Ասէ խալիֆայն.

— Քանի՞ ասող կա յերկինքն:

Ասէ Փահլուլն.

— Ես լաւ գիտեմ:

220 Ասէ խալիֆայն.

— Քանի՞ է:

Ասէ Փահլուլն.

— Որքան մազ կա իմ իշոյս վրայ, այնքան ասող կայ յերկինքն, թէ շէս աւտոր՝ Լկ համրէ:

225 Եւ իշաւ խալիֆայն յաթոռոյն և սկսաւ համրել զիշոյն մազն:
Ասէ Փահլուլն.

— Յառաջ զագին համրէ:

Եւ սկսաւ զագին համրել և ոչ կարէր: Ծիծաղեցաւ Փահլուլն և ասաց կաֆայս զայս:

230

Ամ երբ չգիտես հիմայ, թէ զլսոյդ մազն քանի՞ է,
Կամ քանի՞ զրկանք դեկանի և սպիտակ առ քեզ մտեալ է,
Զերթ զիս Փահլուլ է՞ր լինիս՝ թէ երկնից ասաղն քանի է,
Հաշուեց թէ գիտեմ՝ կասեմ, ո՞վ գիտէ որ զիս սուտ առնէ:

235

Անաշենց խալիֆայն և եթող զիշոյն տգին և ելաւ յաթուն
նստաւ, և ասաց.

— Փա՛ռք աստուծոյ, որ այսպէս գիտութեամբ պատուէ գտի-
րելիս իւր և տալ իմաստութիւն ում և կամի, զի ոչ ոք կարէ տալ
նմա պատասխանի ի բանս և ի հարցմունս:

240

Եւ այսպիսի վարուք փոխեցաւ Փահլուլն ի Քրիստոս Յիսուս,
որում փառք յաւիտեանս, ամէն:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՓԱՀԼՈՒԼ ԹԱԳԱՒՈՐԻՆ (2)*

էր սա մեծ թագաւոր և տէր յարեւելեան աշխարհին, և էր իմաստուն և առաքինի, սիրէր զաղքատութիւն և ատեայր զայս կեանքս և ասէր.

5 — Փառք աստուծոյ կենդանւոյն, որ կայ և մնայ յաւիտեան: Եւ ասաց ընդ իւր անձինն զերգս զայս.

Եւ ոչ մի ինչ աստի կենաց արժէ զմէն մի մաղ անտի
կենացն,

Իբրև բաժանի հոգին՝ բաղմաց ի մարդկանէ կայ մնայ
կրել պատուհաս,

Հնդէ՞ր կամիս սիրել զայն, ինչ որ զոյգ ընդ կենաց քոց
անցանէ,

10 Ժողովեա զու զանանց բարին և արա անտի քեզ դարմանս,
Բարիս զործեա և բաշխեա զինչս քո աղքատաց,

Զի մի՞ յաւուր մահուան քո հոգի և մարմին քո տապնա-
պեցցին:

Եւ ի ժամու աղօթիցն հանէր զամենեսին արտաքս և ինքն
միայն մնայր և աղօթս առնէր ի վերայ ոսկի աթոռոյ, և դարձեալ
ասէր առանձին զերգս զայս.

15 Մի՛ լինիր ծոյլ յաղօթել, կա՛լ յանձին և զսէրն աստուծոյ,
Յիշեա՛ զահաւոր անուն նորա, զի փրկեցցիս ողպէս
Աղամն էր,

Ի ձեռս նորա են երկինք և երկիր, նա արարիչ է ամենայնի,
Զանա՛ զու զբարիս խնդրել, զի սպրեցցիս ի հրոյն գեհնի:

20 Զամենայն օր զսովորական աղօթս իւր առնէր. և յաւուր միում
հայեցաւ ընդ ապարանսն ի վեր և ետես զոմն ի կերպարանս ուղ-
տապանին իւրոյ և ասաց.

* Երկրորդ խմբադրություն, տպագրւած.

— Ո՞վ ետ քեզ հրաման ելանել այդր:

Ասաց այրն.

25 — Ես ուղտապան եմ և կորուսի զուղտսն իմ, աստ կամիմ
դտանել զնոսա:

Ասէ թագաւորն.

— Մի՞թէ բնակիցի ուղտ յապարտնս, զի ասես թէ անդ կամիս
դտանել զնա:

Ասէ ուղտապանն.

30 — Եւ դու զիա՞րդ խորհիս գտանել զաստուած ի վերայ ոսկի ա-
թոռոյ, ի վերայ փետրալից բարձի և ի վերայ մարգարտաշեռ զա-
հու: Այդ աղօթք չեն ընդունելի աստուծոյ, այլ արի է՞ջ յաթոռոյդ
և եկ ի վերայ մօխրոյ և այնպէս երկրապագեա աստուծոյ, և ապա
գտանես զողորմութիւն:

35 Եւ ասաց ուղտապանն, որ ի կերպարանս մարդոյ երեւցաւ,
զերզս զայս.

Երկրապագեա անմահ բանին, թաւալեցոյ վերեսս քս ի վե-
րայ հողոյ,

Ձի ի հողոյ անտի արար զքեզ, և ի նմանութիւն պատկերի
իւրոյ արար զքեզ,

Յորշափ սիրեա զու վկեանս զայս, անդարման զնա աստի
ի հող,

40 Մի՛ անշահ կենօք կեայր, մի՛ փոխէր զոսկին ի պղինձ:

Չայս ասաց և անյայտ եղև այրն այն, որ ի կերպարանս ուղ-
տապանի էր: Ապա իմացաւ թագաւորն, եթէ հրեշտակ էր այրն
այն, և անկաւ զեղջ ի միտս իւր և հաջ գառնապէս, և էջ յաթոռոյն
ի գետին և երկիր եղազ աստուծոյ: Եւ թէպէտ ատէր զիւր կեանս,
45 այլ առաւել ատեաց այնուհետև զաշխարհս և զմեծութիւն և ասաց
ի վերայ անձին իւրոյ զերզս զայս.

Ջանամ սիրել զհոգիս, այլ մարմինս խաբէ զիս,

Որպէս մինչ բազէ խոյանայ, կաքաւք անկտնին ի բուռն,

Կուտեցան առ իս մեղք բազում, նման հեղեղաց անձրևոյ,

50 Սրով մահու խոցեալ եմ և լեալ եմ որպէս վիրաւոր:

Եւ ապա կոշեաց զիւր մեծամեծսն և զիշխանս, և երբ զիւր
որդին և նստոյց առաջի նոցա յաթոռն իւր, և նոքա ոչ կամեցան,
և նա ուժով և իմաստութեամբ հաւանեցոյց զիշխանսն և զզօրսն:
Եւ ինքն գաղտաբար ելեալ՝ ետ զանձն իւր յաղբատութիւն և ել

55 յաշխարհէն իւրմէ, և եթող զթագաւորութիւնն վասն սիրոյն աս-
տուծոյ: Եւ ասաց վասն անձին իւրոյ զերգս զայս.

Յիշեա՛ զարարիչն աստուած, տո՛ւր հոգւոյդ առնել
պատարագ,

Ընդ մութն է՞ր կամիս գնալ, երբ յաստիս լիցի քեզ

դարման,

60 Զմարմինդ մինչև ցե՞րբ սիրես և լինիս նմա կամակից,
Ընկերք քո գնացին աստի, բնակեցան ի տունս անշափըս,
Ես քեզ հանապաղ ասեմ, հասիր արագ դու նոցա,
Ապա թէ ոչ հէք անձնդ առաքի ի հուր և ի կրակ:

Ապա գնաց յաշխարհէ յաշխարհ, հհաս ի Բաբելոն, հմուտ ի
քաղաքն և կամեցաւ կալ անդ ի կերպարանս մուրացիկ աղքատի:
65 Եւ մարմինն նեղէր զնա վասն ուտելոյ և ըմպելոյ և ագանեւոյ, զի
սովոր էր ի սէր աշխարհիս և կեցեալ ի տունս արքունի: Ապա ի-
մացաւ հնարս, և երթալը ի շուկայն և լինէր սուտ յիմար: Եւ մար-
դիքն ծեծէին զնա, և տղայք ընդ նմա երթալին և նեղէին զնա: Վա-
րէր և ասէր ի մէջ մարդկան զերգս զայս.

70 Մարդիկ, մի՛ կայք անհոգ, զաղտ մեղաց ձերոց լուացէք,
Ողորմեցարուք աղքատաց և աշնու զմեղս ձեր քաւեսչիք,
Դարձարուք ի ճանապարհէ մեղաց, անդ շինեցէք ձեզ տունս,
Զկամս մարմնոյ մի՛ կատարէք, և մի՛ թողուք նեղել նմա
ըզձեզ:

Եւ հեծնոյր յեղէգն և ընթանալը ի վեր և ի վայր և ասէր բանս
75 զարմանալիս: Ասէին մարդիկն, որ ընդ նմա երթալին, թէ՛ «Ի բե-
րանոյ դուրս հեղուն մարգարիտք, և ո՛չ գիտէ զինչ ասէ, վա՛հ, յի-
մար մտօք»:

Եւ ապա ևզին նմա անուն Փահլու: Եւ նա եղև ջրկիր և կրէր
ջուր ի շուկային, և տալին նմա հաց և դրամ, այլ նա զամենայն
80 տալը աղքատաց: Եւ ասաց զերգս զայս.

Աղքատսիրութիւն և պահք և աղօթք իրերաց են ընկերք,
Սիրեա՛ զայդ երիս բարիս, զի փրկիս ի մեծ տանջանաց,
Մի՛ զմարմինդ ի ձեռաց առնուր, գնան ատուրք ի ձեռաց,
Այս ատուրք զոր մեք ունիմք, երթան և ի բաց մեկնին:

85 Յաւուր միում երթալը ի շուկայն ի վայր և ահա ոմն խլեաց

զփակեղն նորա ի վլխոյն և փախեաւ: Եւ զնաց Փաճլուլն ի գերեզ-
մանս և խնդրէր զայրն, որ զփակեղն էառ և փախեաւ: Ետես զնա
ոմն և ասաց.

— Է՞ ֓ Փաճլուլ, աստ զի՞ որոնես զայրն, զնա՞ ի շուկայն խընդ-
90 րեա:

Ասաց Փաճլուլն.

— Ո՞վ եղբայր, ուր և երթայ, վաղ կամ անագան աչսր պի-
տի գալ: Եւ ասաց զերզս զայս.

Եթէ շատ զրկիցես և եթէ սակաւ, և վայելեսցես զերկիր
խնդալով,
95 Քեզ չիք հնար, հարկ է աստի երթալ և բլմարմինդ
ծածկել ընդ հողով,
Դարձիր և զբարիս գործեա՞, զի՞ տ վաղվազակի բժիշկ
և զեղ,
Ձի մի՞ յահաւոր ատենին մեծի ահիւ և ամօթով
լինիցիս:

Ընտելացաւ ընդ բաղաքացիսն, և ճանաչէին զնա ամենեքին:
Յաւուր միտմ աչր ոմն ետ նմա միս, թէ՛ «Տար զդա ի մեր տուն»:
100 Նա էառ և տարաւ եդ ի գերեզմանս: Դարձաւ և եկն աչրն այն ի
տուն իւր և ետես զի չէր բերեալ աչրն զմիսն ի տուն: Չորաւ ելիտ
զՓաճլուլն ի վաճառանոցին և ասէ.

— Ո՞ւր է միսն, զի՞ արարեր:

Ասէ Փաճլուլն.

— Ի քո տուն տարայ զնա:

Ասէ աչրն այն.

— Արի-ցոյց ինձ զիմ տուն:

Եւ Փաճլուլն և առեալ զայրն ած զնա ի գերեզման: Ասէ աչրն.

— Ա՞յս իցէ իմ տուն:

110 Ասէ Փաճլուլն.

— Այո՞, ա՛յս է տուն քո: Տունն, յորում աշժմ կաս, չէ՞ միա-
ցական, զի յետոյ ուրեմն աչսր ունիս գալ: Եւ ասաց զերզս զայս.

Աշխարհիս սահմանքն այսպէս են, մերթ ընուն, մերթ
թերանան,
նա, որ բառնալ ի թիկունս կարող է՝ թեթևացուցանէ
զիւր բեռն,

145 քատ մուրացիկ եմ, և քո հողն և իմն միտվ շափով է: Եւ ասաց զերգս զայս:

է՛ մարդ, մի՛ զհոգիդ դատիր և զմարմինդ առնել
սիրելի,
Դարձի՛ր ի մեղաց ճանապարհէ, զի մի լինիցիս ողորմ
և լալի,

Ջանա՛ և զբարիս գործեա՛, զի շուն ընդ քեզ հայի,
150 Յայսմ հողոյ դու այնպէ՛ս գնայ, զի մի՛ հոգի քո
մատնեսցի ի հուր:

Եւ ասաց խալիֆայն ընդ իւր մեծամեծսն.

— Տեսէ՛ք զիարդ իմաստունն են դորա խօսքն, և համարձա-
կապէս խօսի, չէ՛ պարտ, զի դա ի մէնջ թողուցուք երթալ: — Եվ
ապա հրամայեաց կոչել զնա յիւր ապարանս:

155 Եւ յաւուր միում խալիֆայն ի յաթոռոյն ելեալ-գնացեալ էր, և
զնաց Փահլուլն նստաւ յաթոռն խալիֆային: Եւ եկին սպասաւորքն
սկսան ծեծել զնա: Եւ նա ճշեաց ուժգին: Լուաւ խալիֆայն, եկն և
բարկացաւ ծառայից իւրոց և ասէ.

— Է՛ Փահլուլ, ընդէ՛ր ծեծեն զքեզ:

160 Ասաց Փահլուլն.

— Է՛. տիեզերակալ խալիֆայ, եթէ զիս դան հարկանեն, զի
ժամ մի նստայ յաթոռդ, ապա զքեզ զի՛նչ ոչ առնիցեն ի դատաս-
տանիդ: — Եւ ասաց զերգս զայս.

Մարդիկ, մի՛ հարկանէք դուք զիս, ես ոչ ցանկամ
փառաց աթոռոյդ,

165 Զիմն քակեցի և ելի և ոչ ոնիմ միտս շինելոյ,
իմ կեանքս չե՛ն յաշս իմ, և ոչ ոնիմ պատճառս ուրախ
լինելոյ,
Եզի զիմ մարմինս ի մահ, զի շունիմ հոգի տանջելոյ:

է՛ մարդ, որ փառացդ հասեր, տէր երկրի եղեր և
աթոռոյ,

Դու այնպէս խնայեցեր ի քեզ, որպէս չէ հնար մարդոյ,
170 Ոչ ոնիս երկիրդ ի մահուանէ և ոչ պատրաստես պաշար
զնալոյ,
Զփառս աշխարհիս այլոց թողուս և լինիս դու ափ մի
հող[ոյ]:

Լուաւ խալիֆայն զայն իմաստուն բանս և հարցանէր բազում
ինչ փաճլուին, և նա հնարիւր տալիս զպատասխանին: Եւ յառաջ
միում յալլ և հարց խալիֆայն ցփաճլուին և ասէ.

175 — Փաճլու՛ւ, ասա՞ ինձ, ալսօր զի՞նչ առնէ աստուած:
Ասէ փաճլուին.

— Հարցումնդ ալդ դժուարին է, ալսօր համբերեալ ինձ, վա-
ղին ասեմ:

Եկն վաղին, և հեծեալ էր ի սեաւ էշ մի: Ասէ խալիֆայն.

180 — Ասա՞ ինձ, զի՞նչ առնէ աստուած:
Ասէ փաճլուին.

— Հրամայեալ, զի ամենայն ծառայքդ ելցեն արտաքս և ես
տամ զպատասխանին:

185 Եւ հրամայեաց խալիֆայն ծառայիցն ելանել արտաքս, և մնաց
ինքն փաճլուին միայն: Եւ ասէ խալիֆայն.

— Զի՞նչ առնէ աստուած ի ժամուս աստ յայսմիկ:
Ասէ փաճլուին.

— Է՛, խալիֆայ, արի պահ մի նիստ յիմ էշն, և ես ի քո յա-
թող նստիմ, յայնժամ ասեմ քեզ, թէ զինչ առնէ աստուած:

190 Եւ հայեցաւ խալիֆայն, զի մարդ ոչ երևէր ի սրահին, եւ ընս-
տաւ յէշն, և փաճլուին ի խալիֆային աթոռն նստաւ, և ոչ խօսէր:
Ասէ խալիֆայն.

— Է՞ր ոչ խօսիս. զի՞նչ առնէ աստուած:
Ասէ փաճլուին.

195 — Զի՞ պիտոյ իցէ խօսիլ, ո՞չ գիտես զի՞նչ առնէ աստուած.
զքեզ, որ խալիֆայդ ես, յէշն իմ նստոյց, զիս՝ որ փաճլուլս եմ, ի
քո աթոռդ նստոյց. ահա զայս արար ի ժամուս յայսմիկ:

Եւ խալիֆայն զարմացաւ և ոչ կարէր խօսել: Եւ ասաց փաճ-
լուին զերզս զայս.

200 Դու պանքնին բնդէ՞ր բննես, այնու զի ոչ կարես նմա
հասու լինել մտօք,
Զաստուած ո՞վ կարէ տեսանել կամ իմանալ զնա մարդ
կենդանի,

Դու շեւ տէր կենաց քոց և մնաս յերկրի անշունչ,

Այլ նա տէր է տիեզերաց և բառնայ-կրէ զերկինս և

զերկիր միանդամայն:

Միծաղեցաւ խալիֆայն և ասէ.

205 — Փա՛ռք աստուծոյ կենդանւոյն և բարձրելոյն յաւիտեան, զի այս ազգ յիմարք զարմանալի պատասխանիս տան, բայց թուի ինձ, թէ չէ դա յիմար, այլ իմաստուն է:

Եւ զնաց Փահլուլն: Եւ անցին աւուրք ինչ ի վերայ, և հրամայեաց խալիֆայն կոչել զնա: Եւ նա նստաւ յէջ մի և եկն առ խալիֆայն: Ծիծաղեցաւ խալիֆայն և ասէ.

210 — Փա՛ռք աստուծոյ կենդանւոյն և բարձրելոյն յաւիտեան: Եւ ասէ խալիֆայն.

— Իրս ինչ կամիմ հարցանել քեզ և զուգուգորդն ասա: Եւ նա ասէ.

215 — Հրամայեա՛, խալիֆայ.

Ասէ խալիֆայն.

— Քանի՞ աստեղք գոն յերկինս:

Ասէ Փահլուլն.

— Ես քաջ գիտեմ, զամենայն թուեալ եմ. որչափ յիշոյս վերայ մագք գոն, այնչափ աստեղք են յերկինս: Եթէ ոչ հաւատաս, էջ և թուեալ:

220 Եւ էջ խալիֆայն յաթոռոյն և սկսաւ համրել զհերս իշոյն: Ասէ Փահլուլն.

— Նախ զազին թուեալ:

225 Եւ սկսաւ խալիֆայն այնպէս առնել, և ոչ կարէր: Ծիծաղեցաւ խալիֆայն: Եւ ասաց Փահլուլն զերգս զայս.

Դու որ ոչ գիտես այժմ, թէ որչափ են հերքդ գլխոյդ,

Զի՞ հարցանես զիս, թէ աստեղք երկնից քանի՞ են,

Զոր ինչ ոք գործէ աստ՝ ընդ ամենայնի համարս

տալոց է անդ,

230 Որչափ զանձս ժողովէ՛ նա զրկելով, զամենայն աստ թողու, տանել ոչ կարէ:

Ամաչեաց խալիֆայն և ի բաց եկաց ի համրելոյ զազի իշոյն և ել նստաւ յաթոռն և ասէ.

— Փա՛ռք աստուծոյ, որ այսպէս գիտութեամբ պատուէ զսիրելիս իւր և տայ զիմաստութիւն ում կամի այնպէս, զի ոչ ոք կարէ տալ նմա պատասխանի ի բանս և ի հարցմունս նորա:

235 Այսպիսի վարուք կեցեալ Փահլուլն և երանելի կենօք փոխեցաւ յանվախճան թագաւորութիւնն:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՄԱՆԿԱՆՆ ԵՒ ԱՂԶԱՆՆ

Ձ ե ո ա գ ր ե ր

1. Ձեռ. № 33 (ց), էջ 174 բ.—վերնագիր՝ «Պատմութիւն մեծատան որդուն, որ զհայր և զմայր վաճառեաց և զնացեալ օտար աշխարհն հարցաքննութեան»։ Սա «Վասն մանկանն և աղջկանն» զրույցի ամենաբնդարձակ խմբագրութիւնն է, որին համապատասխանող տարբերակներ մեզ առայժմ հայտնի չեն։ Այս օրինակը ոչ միայն ընդարձակ է իր ծավալով՝ ըստ շարադրանքի, այլև ունի բովանդակութեան շեղումներ բոլոր մյուս ձևագրերից։ Կարևոր է առանձնապէս շեշտել զրույցի հեթանոսական շրջանից եկող աշխարհիկ ոգուն քրիստոնեական շունչ հաղորդելու և Պատմութիւնը հավելումներով հարստացնելու հեղինակի հակումը։ Նման հակում, որոշակի սահմաններում, դրսևորվում է և մյուս խմբագրութիւններում, սակայն այստեղ դա և՛ հատուկ ընդգծվում է, և՛ հասնում ավելի մեծ չափերի։

Այս ձեռագրում անհամեմատ ընդարձակ է և հարց ու պատասխանի շարքը։ Սրա մեջ կան չափածո հանելուկներ, որոնք գերազանցորեն պատկանում են ն. Շնորհալուն։ Կան և կրկնվող լուծումներ. երբեմն հանելուկը տարբեր է, պատասխանը՝ նույնը, երբեմն տարբեր հանելուկներ ստանում են միեւնոյն, ասենք՝ արեգակ, լուսին կամ լուսավորիչ մեկնութիւնները։

Ձրույցը զրված է ժողովրդական, խոսակցական լեզվով, երբեմն և բարբառային բառերի գործածումով, որով մոտենում է բանավոր պատմաների։ Օտար բառեր անհամեմատ հաճախ են օգտագործվում (ղաւիլ, փանճարայ, խազնատարապաշի, տաստուր և այլն), քան մյուս խմբագրութիւններում։ Շատ անգամ գրիչը մոռանում է նշել խոսքի ան-

ցումը մեկից մյուսին («Ասէ աղջիկն», «Ասէ մանուկն»), կամ սխալվում և փոխանակ «Ասէ աղջիկն» դրում է «Ասէ մանուկն» և հակառակը, երբեմն էլ ուղղում սխալ գրածը. ունի աւ-ի օ դրությունը (անցօոր), սլահում է մերթ աւ, մերթ օ ձեերը: Կան գրչության սխալներ (ցախեցի—ծախեցի, ելալ—ելալ) և այլն:

2. Ձեռ. № 697 (d), էջ 3 ա—վերնագիր՝ «Պատմութիւն... թաղաւորին նորա (sic) որ քանի իմաստու(ն) արար»: Պատկանում է ձեռագրերի 2 խմբին, ընդօրինակված է աղճատ կամ վնասված ձեռագրից, ուստի և ունի աղատ թողած տեղեր՝ անընթեռնելի բառերը լրացնելու համար, որ շի արվել: «Աղջիկ» բառը չ և ջ է գրում անհետեղականորեն, ունի դ-ի նաև տ գրություն, տառախալներ:

3. Ձեռ. № 1682 (e), էջ 5 բ,—վերնագիր՝ «Պատմութիւն զեղեցիկ որ կտրիճն զաղջիկն յաղթեց և էառ իւր ի կնութիւն և յետոյ եղև թագաւոր և եբեր իւր մօտն զհայրն և զմայրն և ուրախացան»: Սա առանձին խմբագրություն է, որ սույն աշխատության մեջ հիմք է հանդիսացել և խումբ կազմող ձեռագրերի երկրորդ խմբագրության համար: Հարցերի թիվը հասնում է 43-ի, որ քիչ բացառությամբ կայուն է այս խմբին պատկանող գրեթե բոլոր ձեռագրերում: Հարցմունքին հետևող վերջաբանը, որքան էլ համեմատելի 2 և 3 խմբի առաջին խմբագրության հետ, ունի մի էական տարբերություն, որով և առանձնանում է Պատմության գրեթե բոլոր օրինակներից: Բացառություն են կազմում № 6451 (Երևանի Մաշտոցյան մատենադարան) և № 671 ձեռագրերը (Վիեննայի Մխիթարյան մատենադարան): Սրանք ունեն արձակին ընդելուզված շափածո հավելումներ՝ քառատող կաֆաներ՝ հայրենի շափով, որ բնութագրական է հայկական և թարգմանական դրուցատիպ պատմություններին: Բխելով բովանդակությունից և զրույցի կառուցվածքային առանձնահատկություններից, այս կաֆաները ես բերվում են հարց ու պատասխանի ձևով և, ի տարբերություն մյուս «Պատմութիւն»-ներում եղածների, սիրային են:

«Ձեռագրում «աղջիկ» գրվում է չ և ջ անհետեղականորեն: Տե՛ս նաև ծնթ. № 10 և 35:

4. Ձեռ. № 2168 (i), էջ 71 բ—վերնագիր՝ «Պատմութիւն զեղջուկ ոճով և բանիւ»: Պատկանում է 2 խմբին, համեմատելի է լրիվ № 8953

¹ Տե՛ս Պատմութիւն Աղեկանդրի Մակեդոնացու, Պատմութիւն Պղնձէ բաղաբին, Պատմութիւն յաղագս Փաշուլ թագաւորին, Պատմութիւն Արղնաֆարի և Ճեմիլայի և այլն: Ստեղծագործական այս ոճը բնութագրական է նաև ժողովրդական հեքիաթներին:

ձեռագրին, նկատելի առանձնահատկություններ չունի: «Աղջիկ» միշտ գրում է ջ-ով:

5. Ձեռ. № 3081 (h), էջ 281 բ—վերնագիր՝ «Պատմութիւն վասն մանկանն և աղջկան, ասայ վասն ուրախութեան»: Պատկանում է ձ խմբին, գրեթե բացարձակ համընկնում է այդ խմբի համար հիմք հանդիսացող № 8968 ձեռագրին, նրա ընդօրինակությունն է (երբեմն կրկնում է նրա սխալները ևս) կամ երկուսը միասին բխում են միևնույն աղբյուրից: Սրա գրիչն ավելի գրագետ է:

6. Ձեռ. № 3237 (y), էջ 69 ա—վերնագիր՝ «Պատմութիւն գեղջուկ և ոճով բանիւ»: Պատկանում է ձ խմբին, լրիվ համեմատելի է բնագրի համար ընտրված № 8968 ձեռագրի հետ, ինչպես № 2168-ը: «Աղջիկ» միշտ գրվում է ջ-ով: Ունի նաև բառավերջի յ և դ-ի՝ տ գործածություն:

7. Ձեռ. № 5969 (y'), էջ 220 ա—Պահպանված է միայն մի պատահտուն էջ՝ հավանաբար այլ ձեռագրից միացած սրան: Այս ձեռագիրն ընդհանուր առմամբ տարբեր գրչություններով տարբեր նյութերի հավաքածու է՝ ի մի բերած և կազմած: Համեմատության համար ոչ մի արժեք չի ներկայացնում:

8. Ձեռ. № 5985 (c), էջ 130 ա—անվերնագիր: Պատկանում է ձ խմբին, գրեթե համընկնում է 8968-ին, երբեմն ունի ավելի ուղիղ ընթերցումներ, որով ճշտվում է բնագիրը, սակայն առհասարակ սխալաշատ ձեռագիր է՝ գրչության առումով (չքայր=չկայր, ինչն=ինքն, խընկց=խմկց, հաց=հանց), ջնջումներով, պատահում է օ-ի և՛ օ և աւ, երբեմն նաև՝ աւ-ի՝ օ գրություն, բառամիջում երբեմն՝ ը և յ: Ձեռագրում պակասում են էջեր, որոնք համընկնում են բնագրի 246—263 տողերին: Վերջում ունի մի ևտևառաջ կազմած էջ, 370—374 տողերը՝ չիք:

9. Ձեռ. № 6092 (i), էջ 1ա—անվերնագիր, պատկանում է Ե խմբին (առանց կաֆաների): Սկիզբը թերի՝ մինչև 443-րդ տողը, մինչև՝ «Ասէ աղջիկն» (թերթ է ընկած):

10. Ձեռ. № 6451 (é), էջ 178ա—վերնագիր՝ «Պատմութիւն գեղեցիկ որ կարիճ զաղջիկն յաղթեաց և էառ ի կնութիւն և հոգ թագաւոր և երբ իւր մօտն զհայրն և զմայրն և յետոյ շատ օր ուրախացան»: Պատկանում է Ե խմբին, սակայն հիմնականում համապատասխանում է № 1682 ձեռագրին, որ ունի սիրային կաֆաներ: Այստեղ կաֆաները փոքր-ինչ աղճատ են և թերի: Պատմությունը (ինչպես և ձեռագիրն ամբողջությամբ) պատկերազարդ է. բոլոր էջերում կան մեկ կամ երկու մանրանկար, որոնք արտացոլում են տվյալ հատվածի բովանդակությունը: Ձեռագրից թերթեր են ընկած, պակասում են 91—148 տողերը (նենգա-

բառաւանկից հետո): Հետևողականորեն պահպանում է «աղջիկ» բառի չ գրությունը, սակայն ունի նաև դ-ի՝ տ, ու-ի՝ վ, խոռավերջում՝ յ-ի խառը գործածություն: Տե՛ս նաև ծնթ. № 3 և 35:

11. Ձեռ. № 6686 (b), էջ 250 ա—անվերնագիր: Պատկանում է ձ խմբին, գրեթե 8968-ի ընդօրինակությունն է: Կան գրչական սխալներ, ուղղագրության մեջ անհետևողական է՝ օ-տ, դ-տ, բառամիջում՝ յ, ք և ալյն: Պարբերություններն ընդգծվում են կարմրատառով:

12. Ձեռ. № 7027 (j), էջ 72 ա—վերնագիր՝ «Պատմութիւն աղչկան մանկան»: Պատկանում է Ե խմբի առաջին խմբագրությանը: Համեմատելի է № 1682 ձեռագրի հետ, նկատելի տարբերություններով և կապաների բացակայությամբ: Ունի դ-ի նաև տ դործածություն, բառամիջում և վերջում երբեմն յ կիսաձայն, կան տառասխալներ: Այս խմբագրությանն են պատկանում նաև № 7723, 8483, 8963 ձեռագրերը: Տպագրությունների մասին տե՛ս ծնթ. № 36:

13. Ձեռ. № 7047 (k), էջ 96 բ—վերնագիր՝ «Պատմութիւն վասն մանկանն և աղչկանն և հարցաքննութեան ընդ միմեանս և միաբանութեան նոցա»: Պատկանում է ձ խմբին: Ունի օ-ի՝ աւ, վ-ի՝ ու, ջ-ի՝ չ խառը գործածություն, տառասխալներ: Ձեռագրից թերթեր են ընկած, պակասում են. միջից՝ 110—255 տողերը, վերջում՝ 282 տողի «և լից» բառից սկսած: 66-րդ տողից հետո սխալմամբ կրկնված են 75—81 տողերը («և էր»-ից սկսած), այլ շարագրությամբ:

14. Ձեռ. № 7050 (z), էջ 26 ա—վերնագիր՝ «Պատմութիւն վասն մանկանն և աղչկանն վասն ուրախութեան մարդկան»: Պատկանում է ձ խմբին, գրեթե նույնությամբ համընկնում է 8968-ին (ավելի, բայց № 3237 (y) ձեռագիրը), երբեմն ունի դ-ի՝ ք գրություն:

15. Ձեռ. № 7076 (l), էջ 30 ա—վերնագիր՝ «Պատմութիւն աղչկան մանկանց»: Պատկանում է Ե խմբի երրորդ խմբագրությանը: Պատմության վերջը՝ 227-րդ տողի «ևզ» բառից հետո՝ թերի, գրիչը չի շարունակել: 37 ր էջը մաքուր է մնացել, հետագայում նրա վրա այլ բան է գրված ուրիշ գրչությամբ: Հավանաբար նախադադափարը թերի է եղել: Ձեռագիրը գրեթե բացարձակ համընկնում է հիմք ընդունված բնագրին (ձեռ. № 8724): Այս օրինակի հետ է համընկնում նաև № 10107 ձեռագիրը (տե՛ս ծնթ. № 24 և 31): Զրույցի այս խմբագրությունը հրատարակված է 1834 և 1850 թթ. Կոստանդնուպոլսում, 1857, 1911 թթ. Ռիֆ-լիսում (ա՛ւս ծնթ. № 44—46, 48):

16. Ձեռ. № 7227 (x՝), էջ 67 ա—անվերնագիր՝ սկիզբը թերի մինչև 329 տողը: Պատկանում է ձ խմբին, գրեթե լիապես համընկնում է

8968-ին (չնչին տարընթերցումներով), ունի աւ-ի օ գրություն (շարօ):
17. Ձեռ. № 7709 (m), էջ 209 բ—վերնագիրն անընթեռնելի (ջընշ-ված): Պատկանում է Զ խմբին, 51—70 և 272 «խմցուց» բառից հետո մինչև 305 տողը թերթ է ընկած, ունի աւ-ի՝ օ, դ-ի՝ տ, ջ-ի՝ չ գրություն, բառավերջում յ կիսաձայն (նայ)—անհետևողականորեն, տառասխալներով, ունի երկու տարբեր գրչություն: 227-րդ տողին նախորդում է հետևյալ կրկնված հատվածը՝ այլ շարադրանքով. Այսար գնայ հանգիր, վաղն զբեզ քո ընկերտացտ հասցնեմ, այսար զերծար իննէն, գնայ, այս բեզ պաշխիշ, Ասէ մանուկն թէ՛ Այն աստուածն, որ այսօր փրկեաց, կարող է վաղին այլ փրկել: Ելեալ մանուկն ի դարպասէն և գնաց ի աթևանն, և ամենեքեան դարմանային ընդ ապրիլ ի ձեռաց աղչկան: Եւ պառան լայր անմխիթար, և որժամ տեսաւ մանուկն, նայ ուրախացաւ, ասէ: Ուրդեակ, բարով եկիր, որ ես քո խղճուտ կու մեռանեմ: Ասէ մանուկն. Աստուած փրկեաց զիս ի նմանէ: Երբ վաղին լուսացաւ, գնաց ի դարպասն, ետ բարե: Իմ պարոն, զիշերս բարով լուսացաւ քեզ: Հրամայեաց աղչիկն և զօրին ոսկի աթոռ, և նստաւ: Եւ սկսաւ աղչիկն հարցանել: Ասէ աղչիկն:

18. Ձեռ. № 7723 (n), էջ 78 ա—անվերնագիր: Պատկանում է Ե խմբի առաջին խմբագրությանը: Մինչև 242 տողը գրեթե բացարձակ համեմատելի է № 1682 ձեռագրի հետ, շարունակության մեջ՝ № 7027-ի: 241 տողին հաջորդում են 316—322, ապա 371—378 և նոր միայն 242-ով սկսվող տողերը: 246 տողի «որ» բառից հետո թերթի՝ թերթ է ընկած: Շարադրանքն ազատ, լեզուն և գրչությունը մոտ է աշխարհաբարին, հաճախ ունի օ-ի՝ ո, է-ի՝ ե, յ-ի՝ չ, վ-ի՝ ւ գրություն:

19. Ձեռ. № 8076 (o), էջ 43 բ—վերնագիր՝ «Պատմութիւն գեղջուկ և ոճով բանի»: Պատկանում է Զ խմբին՝ մասնավորապես համապատասխանում է № 2168, 3237, 8968 ձեռագրերին: «Աղջիկ» գրվում է չ և ջ, բառավերջում՝ յ, անհետևողականորեն, կան տառասխալներ:

20. Ձեռ. № 8443 (p), էջ 23 ա—վերնագիր՝ «Պատմութիւն մանկան և աղջկան»: Մտնում է Ե խմբի առաջին խմբագրությունից: Այլ ընթերցումները՝ շատ, որ առաջացել են բանահյուսական ճանապարհով: Հարցմունքը՝ միջին մասում խառը: Գրչությունը՝ լավ ու գրագետ, թեև պատահում են օ-ի՝ ո, դ-ի՝ տ գրություններ:

21. Ձեռ. № 8456 (q), էջ 309 ա—անվերնագիր: Վերնագիրը և ըսկըզբնատողը բաց է թողած ձեռավորման համար: Պատկանում է Զ խմբին, էական տարբերություններ չկան: Ունի ու-ի՝ վ գրություն, բառավերջում երբեմն յ կիսաձայն:

22. Ձեռ. № 8483 (r), էջ 124 ա—անվերնագիր: Վերնագիրը և քաղզքնատողը բաց է թողած՝ ձևավորման համար: Պատկանում է Ե խմբի առաջին խմբագրությանը, որի մեջ են № 7027, 7723 և 8963 ձևագրերը (տե՛ս ծնթ. № 12, 18, 25): Հարցմունքը խառը՝ համապատասխանում է № 7723 ձևագրին: 167-րդ տողի «որ» բառից սկսած թերի է մինչև 232 տողի սպի-(տակ) վանկը (թերթ է ընկած): Ունի օ-ի և աւ-ի, դ-ի և տ-ի, ջ-ի և չ-ի, բ-ի և պ-ի խառը գրություն:

23. Ձեռ. № 8708 (s), էջ 48 ա—վերնագիր՝ «Պատմութիւն դասեր թագաւորին և մանկանն իմաստնոյ»: Պատկանում է ա խմբին: Նկատելի առանձնահատկություններ չկան: Ունի ավելորդ յ-եր, դ-ի՝ տ, ջ-ի՝ չ, գ-ի՝ ք գործածություն:

24. Ձեռ. № 8724 (t'), էջ 25 ա—վերնագիր՝ «Պատմութիւն աղջկան և մանկան և հարցմունք նորա ընդ միմեանս»: Պատկանում է Ե խմբի երրորդ խմբագրությանը, որի մեջ են № 7076 և 10107 ձևագրերը, առաջինը՝ թերի: Հարցմունքից սկսած անհամեմատելի է թե՛ ա. և թե՛ Ե խմբի բոլոր օրինակների հետ, ունի լրացուցիչ հարցեր, հիմք է ընդունված այս խմբագրության համար: Հրատարակված է 1834, 1850 թթ. Պոլսում և 1857, 1911 թթ. Թիֆլիսում:

25. Ձեռ. № 8963 (t), էջ 70 ա—վերնագիր՝ «Պատմութիւն աղջկան և մանկան և հարցմունք նոցա ընդ միմեանս»: Պատկանում է Ե խմբի առաջին խմբագրությանը: Ընդօրինակություն է 1792 թ. Կ. Պոլսի համար հիմք հանդիսացած ձևագրի կամ տպագրի: Ունի դ-ի նաև տ գործածություն: Տե՛ս ծնթ. № 12 և 36:

26. Ձեռ. № 8968 (a), էջ 222 բ—վերնագիր՝ «Պատմութիւն վասն մանկանն և աղջկանն վասն ուրախութեան»: Պատկանում է ա խմբին, հանդիսանում է քննական բնագրի հիմքը: Ձեռագիրը պաշտփարված է ընտիր օրինակից, զրազեւ և զրեթե անսխալ, ուղղագրության կանոնների պահպանման հետևողականությամբ ու կետադրությամբ:

27. Ձեռ. № 9124 (u'), էջ 9 ա—վերնագիր՝ «Պատմութիւն աղջկան և կարճին», առաջին տողը բաց թողած՝ ձևավորման համար: Պատկանում է ա խմբին, սակայն ազատ շարադրանքով, մեծ շեղումներով ու անհամեմատելի: Ունի օ-ի՝ ս, ջ-ի՝ չ գրություն, առհասարակ սխալաշատ է, վերջը՝ թերի, ընդհատվում է 206-րդ տողի «կիպարի» բառով. զրիշը ազատ էջեր է թողել՝ ավարտելու համար, սակայն չի շարունակել:

28. Ձեռ. № 9265 (z'), էջ 66 ա—վրացատու հայերեն, ընդօրին-

նակված է 1869 թ.¹։ Պատկանում է Ե խմբին։ Երբեմն-երբեմն օդա-
դործված է Ռիֆլիտահայ խոսակցական լեզուն՝ քիզ, Թաքաուրովեան,
վնր, Քրիստուս և այլն։

29. Ձեռ. № 9428 (u), էջ 62 բ—վերնագիր՝ «Պատմութիւն աղջկան
և մանկան և հարցմունք նոցա ընդ միմեանս»։ Ծագում է Ե խմբի առա-
ջին խմբագրությունից. շեղումները բանահյուսական են։ № 9516 ձեռա-
գրի հետ հիմք ունեն միևնույն սկզբնաղբյուրը։ Սրանց է համընկնում
նաև № 10166 ձեռագիրը։

Երբեմն ունի օ-ի՝ ո, դ-ի՝ ա, ջ-ի՝ չ և յ-ի՝ հ գրություն։

30. Ձեռ. № 9516 (v), էջ 15 ա—վերնագիր՝ «Պատմութիւն աղջկան
և մանկան և հարցմունք նոցա ընդ միմեանս»։ Ծագում է Ե խմբի առաջին
խմբագրությունից։ Այս և № 9428 ձեռագիրը հիմք ունեն միևնույն նա-
խադադափարը և համապատասխանում են նաև № 10166-ին։ Ունի դ-ի՝
խ, թ-ի՝ տ, ւ-ի՝ վ գրություն։

31. Ձեռ. № 10107 (w), էջ 51 ա—պատկերազարդ, վերնագիր՝
«Պատմութիւն աղջկան և մանկան և հարցմունք նոցա ընդ միմեանս»։
Պատկանում է Ե խմբի երրորդ խմբագրությանը (ձեռ. № 7076, 8724),
ունի մասնակի ալլընթերցումներ № 8724 ձեռագրի համեմատությամբ։

Այս խմբագրության ապագրությունների մասին տե՛ս ծանոթագրու-
թյուն № 15, 24։

32. Ձեռ. № 10166 (w), էջ 27 բ—վերնագիր՝ «Պատմութիւն աղջկան
և մանկան և հարցմունք նոցա ընդ միմեանս»։ Ծագում է Ե խմբի առա-
ջին խմբագրությունից, համապատասխանում է № 9428 և 9516 ձեռա-
գրերին։ Ունի ջ, դ, ու տառերի նաև չ, տ, վ գրություն, բառավերջում
երբեմն և յ։

33. Ձեռ. № 10333 (x), էջ 27 ա—անվերնագիր։ Սկիզբը՝ մինչև
Հարցմունքը, անհամեմատելի թե՛ ա և թե՛ Ե խմբի հետ (որոշ տեղեր՝
բովանդակության թյուրումով և անիմաստությամբ)։ Հարցմունքը պատ-
կանում է ա խմբին, պակասում են 262—285 տողերը, մինչև «մանուկն»
(Թերթ է քնկած)։ Սրա բնագիրը բանահյուսական ճանապարհով առա-
ջացած աղատ պատում է։

Մ ա ն ր ա ժ ա պ ա վ ե ն ե ր

34. Մանրածապակեն № 504—Կ. Պոլիս, Պալարի Ս. Հրեշտակա-
պետ Եկեղեցու ձեռ. № 30 (S)—անբովակիւ, չէջակալված, վերնագիր՝

¹ Переписал из армянской книги 1869-го я, Александр Меликов, ձեռ. № 9265,
էջ 1։

«Պատմութիւն գեղջուկ բառով վասն կտըրճի և աղջկան միոյ»։ Պատկանում է ձ խմբին, Բանահայտական պատում է, բնագրի համար հիմք ընդունված № 8968 ձևագրից ունի նշանակալից շեղումներ։ Շարագրանքն ազատ է, մշակված և լավ կետագրությամբ. ունի օ-ի նաև ո գրություն (ծնօղ—ծնող), դ-ի՝ խ (թղթեր—թխտեր), ու-ի՝ վ (տուի—տվի, տվեալ), «աղջիկ» միշտ գրում է ջ-ով։

35. Մանրածապավեն № 707, Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձև. № 671, 1668 թ. առաջ, էջ 143ա—վերնագիր՝ «Պատմութիւն աղքատ թագաւորին»։ Անհամեմատելի խմբագրություն, բովանդակության որոշ փոփոխությամբ, շարագրված կաֆաներով, պահպանվել է 15 քառատող. ձևագրից թերթ է ընկած, որով աղջկա և տղայի փոխանակած սիրային հայրենները մնում են անալարտ։ Կաֆաների այս հատվածը ոչ միայն թերի է, այլև աղավաղ, որից երևում է, թե նախադադար օրինակը աղճատ կամ պատառոտուն է։ Ընդօրինակողն ստիպված պահպանել է իր ձևերի տակ եղած ընթերցումները։ Ի տարբերություն մյուս երկու ձևագրերի (№ 1682, 6451), որոնք ունեն միայն սիրային կաֆաներ՝ Հարցմունքի մեջ, վերջին հատվածում, այս ձևագրում բուն պատմությունը ևս հաճախ շարագրվում է կաֆաներով։ Սրանք հիմնականում խոհա-փրկիսոփայական, խրատական բնույթ ունեն և բխում են զրույցի սյուժեից։ Երբեմն օգտագործվում են նյութին համապատասխանող նաև հայտնի տողեր՝ բերված անհեղինակ կամ հեղինակային հայրեններից (Պլուզ Հովհ. Երզնկացի)։

Ձեռագիրն ունի Հարցմունքի յուրովի կարգ ու շարադրանք, համառոտած պատասխաններ, նոր՝ այլ ընդօրինակություններում տեղ չգտած հարցեր՝ գերադանցորեն աշխարհիկ հիմքով։ Լեզուն առհասարակ հակված է չափածոյի, թվում է առանձին հատվածներ նախադաս եղել են հանգավոր, ավելի մոտ է ժողովրդական խոսակցականին, երբեմն և բարբառային (տի, լինի, ճանշնալ, պոի, աշախ, ծարւած), ինչև պահպանում է և զբաբարջան ձևերը՝ ընթեռնուլ, կորուսանել և այլն։ Ուղղագրությունն անհետևողական է, օգտագործվում է վ-ի նաև ու և չ գրությունները, օ-ի՝ ո, աւ (տվի, տըւի, ծնօղ, ծնող, աւրհնեց), «Աղջիկ» գրում է և՛ ջ, և՛ շ։ Ձեռագիրն ունի Աղջկա Հարցմունքի 3-ի փոխարեն 2 օր տեղող յուրովի կարգ։

Այս ձևագրի ընդօրինակությունը բերվում է առանձին, որպես զրույցի նոր՝ անհամեմատելի խմբագրություն։

36. Առանց տխրոսաբերի, Լեւորդում է տպագրված Կ. Պոլսում, 1696—1710 թթ. միջև (A), էջ 49—վերնագիր՝ «Պատմութիւն աղջկան և մանկան հարցմունք»։ Պատկանում է Ե խմբին։ Սրա հետ են համընկնում 1731, 1749, 1792, 1807, 1809, 1814, 1820 թթ. և երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպանվող այն հնատիպը (Գ. Սունդուկյանի ֆոնդ, № 21803, առանց տխրոսաբերի), որ համապատասխանում է սույն հրատարակությանը։ Սա՝ վերոհիշյալների բաղդատությամբ, ունի մասնակի այլընթերցումներ, որոնք բնագրական կամ իմաստալին էական տարբերություններ չեն առաջացնում։ Այս հրատարակությունները նշված են A պայմանական նշանով։ Պահպանվում է երևանի ԱԼ Մյասնիկյանի անվան հանրային գրադարանում, 1084 համարի տակ (անձեռնմխելի ֆոնդ)։

37. Առանց տխրոսաբերի, Լեւորդում է Կ. Պոլս, 1731 (A), էջ 51: (=57) —վերնագիր՝ «Պատմութիւն աղջկան և մանկան հարցմունք»։ Ամբողջապես համընկնում է Հանրային գրադարանում 1084 համարի տակ պահպանվող անտիտոգոսաթերթ օրինակի հետ, որ համարվում է 1696—1710 թթ. միջև եղած հրատարակություն։ Այս հրատարակությունը նշվում է A պայմանական նշանով։ Տե՛ս ծնթ. № 36։

